Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված Գրքամոլ-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2015 © Grqamol. All Rights Reserved.

URL: *www.grqamol.am*, e-mail: *grqamol@gmail.com*

ՀԵՐՄԱՆ ԶՈՒԴԵՐՄԱՆ

ՀՈԳՍԻ

Հ. ԶՈՒԴԵՐՄԱՆ

ՀՈԳՍԸ

Գերմաներեն 115-րդ հրատարակությունից
թարգմանեց՝ ԿԻՎՈՐԳ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1958

ГЕРМАН ЗУДЕРМАН

ЗАБОТА

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1958

1

Ուղիղ այն ժամին, երբ Մայհյոֆերի կալվածքը աճուրդի էր հանվել, նրա երրորդ որդի Պաուլը աշխարհ եկավ։

Ծանր, դժվար ժամանակ էր դա։

Տիկին Էլսբեթը յուր տխրամած դեմքով և թախծոտ ժպիտով պառկել էր բարձր անկողնում, նրա կողքին տեղավորված էր նորածնի օրորոցը։ Նա անհանգիստ կերպով յուր աչքերը այս ու այն կողմ էր շուռ տալիս և ուշադրությամբ ականջ էր դնում ամեն մի ձայն, որ բակից ու մյուս օթևաններից յուր սենյակն էր հասնում։ Ամեն անգամ, երբ նրա ականջին մի կասկածելի ձայն էր դիպչում, նա վեր էր թռչում. կամ երբ օտար տղամարդու ձայն ու կառքի խուլ դղրդոց էր լսվում, յուր մահճակալի ճաղերից բռնելով, սաստիկ վախեցած բացականչում էր նա.

— Արդե՞ն, մի՞թե արդեն այստեղ հասավ։

Նրան ոչ ոք չէր պատասխանում։ Բժիշկը խստիվ պատվիրել էր ոչ մի կերպ չվրդովել նրան. բայց այդ միամիտը չէր մտածել, որ մշտական վախն ու երկյուղը, կասկածներն ու տարակուսը նրան հազար անգամ ավելի պիտի տանջեին, քան ամենատխրալի իրողության հայտնի լինելը։

Մի օր ճաշից առաջ— ծննդկանի հինգերորդ օրն էր դա— նա յուր ամուսնու ոտնաձայնը լսեց հարևան սենյակում. անիծելով ու հառաչելով քայլում էր նա։ Այն վատ օրից ի վեր ամուսինը հազիվ մի անգամ երևաց նրան։ Մի խուլ միայն

կարողացավ հասկանալ տիկին Էլսբեթը, մի հատիկ խոսք, որ նրա մարդը շարունակ կրկնում էր.

«անտունն» խոսքը։

Այն ժամանակ նա հասկացավ, որ արդեն ամեն ինչ վերջացել էր։ Նա յուր թույլ ձեռքը դրավ նորածնի փոքրիկ գլխին, որը լուրջ դեմքով և անձայն շորս կողմն էր նայում, և ցաց եղավ՝ երեսը բարձերի մեջ թաղելով։

Մի փոքր հետո նա դարձավ աղախնին, որը փոքրիկին էր նայում, ու ասաց.

— Հաղորդիր պարոնին, որ ես կուզեի նրա հետ խոսել։

Ու ամուսինը եկավ։ Նա յուր սպառնալից քայլերով մոտեցավ տղոցկանի անկողնին, նայեց նրան մի այնպիսի կերպարանքով, որը յուր շինծու անտարբերությամբ ավելի հուսահատական ու մաշված տեսք էր տալիս նրան։

— Մաքս,— ասաց կինը անհամարձակ, որովհետև միշտ վախենում էր նրանից,— Մաքս, ինձանից ոչինչ մի ծածկի. չէ՞ որ ես առանց այն էլ ամեն բանի պատրաստ եմ։

— Մի՞թե,— հարցրեց նա կասկածելով, որովհետև հիշում էր բժշկի պատվերը։

— Ե՞րբ պետք է դուրս գանք այստեղից։

Երբ նա տեսավ, որ յուր կինը հանգիստ կերպով խոսում է իրենց դժբախտության մասին, այլևս ավելորդ համարեց նրանից բան ծածկել և բարկացած ու որոտագին սկսեց.

— Այսօր, վաղը... ինչպես որ նոր պարոնը բարեհաճի։ Միայն նրա գթասրտությունն է, որ մեզ այստեղ պահում է. և եթե նա ցանկանա, կարող ենք այսօր փողոցում դիշերել։

— Բանն այդտեղ չի հասնի, Մաքս,— ասաց կինը իրեն դժվարությամբ պահելով,— երբ նա իմանա, որ հազիվ մի քանի օր է, ինչ փոքրիկը ծնվել է...

— Ահա՞, չլինի՞ կարծում ես թե պիտի գնամ նրանից ողորմություն խնդրեմ։

— Օ՞, ոչ, նա հենց ինքնաբերաբար կանի այդ։ Բայց ո՞վ է նա։

— Դուգլաս է կոչվում, Ինստերբուրգից է. շատ հպարտ մարդ է, շատ հպարտ. մեծ բավականությամբ նրան կքշեի այստեղից։

— Արդյոք մի բան մնացե՞լ է մեզ,— հարցրեց Էլսբեթը մեղմ ու վարանելով, միևնույն ժամանակ նայելով նորածին մանկանը. չէ՞ որ այդ հարցի պատասխանից կարող էր կախված լինել մանկան մատղաշ ու թույլ կյանքը։

Ամուսինը դառն կերպով հռհռաց. «Այո մնացել է, միայն մի չնչին բան, երկու հազար թալեր»։

Կինը թեթևացած շունչ քաշեց, որովհետև նրան թվում էր, թե ահա նրա շրթունքներից լսելու է ասկալի «ոչինչը»։

— Ի՞նչ օգուտ մեզ երկու հազար թալերից,—շարունակեց մարդը,— քանի որ հիսուն հազարն արդեն փչացրվել է ապարդյուն կերպով։ Մի՞թե ես այդ փողով քաղաքում հյուրանոց եմ բանալու կամ կոճակների ու ժապավենների խանութ։ Թերևս դու էլ ինձ օգնես հարուստ տները կար անելու գրնալով, իսկ մեր երեխաներն էլ փողոցներում յուցկի ծախեն... Հա, հա, հա։

Նա բռնեց յուր խիտ ու արդեն ճերմակող թանձր մազերից և բարկության բոպեին առանց նկատելու ոտքով այնպես ուժգին դիպավ մանկան օրորոցին, որ նա զորեղ կերպով տարուբերվեց։

— Ինչո՞ւ համար է այս որդը ծնվել,— մոմռաց նա մրոայլորեն. ապա շոքեց օրորոցի մոտ, յուր մեծ, կարմիր ձեռքերի մեջ առավ երեխայի փոքրիկ թաթիկներն ու ասաց։— Եթե դու գիտենայիր, տղա, թե ինչքան ստոր ու կեղտոտ է այս աշխարհը, թե ինչպես անամոթությունն այստեղ միշտ հաղթող է և արդարությունը շարունակ ոտնատակ է լինում, անշուշտ կմնայիր քո առաջվա տեղում։ Ի՞նչ պիտի լինի քո օրը. քո հայրը թափառաշրջիկի մեկն է, ամեն բան կորցրած մի կալվածատեր, որ թափառելու է յուր կնոջ և երեխաների հետ փողոցներում, մինչև որ մի տեղ գտնի, ուր կարողանա իրեն և յուրայիններին բոլորովին կորստի մատնել...

— Մաքս, մի կոտրի սիրտս այդպես խոսելով,— գոչեց տիկին Էլսբեթը լաց լինելով և ձեռքը մեկնեց, որ ամուսնու մեջքին դնի, բայց ձեռքն անզոր կերպով վայր ընկավ նախքան իր նպատակին հասնելը։

Մարդը վեր թռավ.

— Ճշմարիտ ես ասում, հերիք է ինչքան ողբացինք

Փհարկե, եթե ես այժմ մենակ լինեի, ամուրի՝ ինչպես առաջ, անշուշտ Ամերիկա կերթայի կամ ռուսական դաշտերը. այնտեղ կարելի է հարստանալ, այո՛, այնտեղ կարելի է հարստանալ. կամ թե ես գործ կսկսեի բորսայում, սպեկուլյացիայով կպարապեի։ Այն ժամանակ լավ փող կվաստակեի... Բայց այսպես կապված... ինչպես որ այժմ ես եմ...— Նա մի թեղճալի հայացք ձգեց կնոջ և երեխայի վրա, ապա ձեռքով ցույց տվավ բակի կողմը, որտեղից լսվում էին երկու ավելի մեծ երեխաների ծիծաղկոտ ձայները։

— Այո՛, ես լավ գիտեմ, որ մենք այժմ մի բեռ պետք է լինենք քեզ համար,— ասաց կինը խոնարհ կերպով։

— Մի՛ խոսիր այդպես,— ասաց մարդը հուզված,— դրանով քեզ չէի ուզում վշտացնել։ Ես ձեզ սիրում եմ և դա բավական է։ Հարցն հիմա այն է, թե ո՞ւր գնանք։ Եթե գոնե այս նորածինը չլիներ, անհավատի գոյության փոփոխությունները էլի մի առժամանակ կարելի կլիներ տանել։ Բայց այժմ դու այդպես հիվանդ, երեխան հոգացողության կարոտ, թերևս մեզ մնում է գյուղական մի կալվածք գնել և մեր երկու հազար թալերը կանխավճար տալ։ Հա՞ թե կյանք կունենանք, ա՜հ։ Ես՝ մուրացկանի տոպրակով, դու՝ ճանապարհորդական պայուսակով, ես՝ բահով, դու՝ կաթնադույլով...

— Դա դեռ այնքան էլ վատ չէր լինի,— ասաց կինը սարսռալով։

— Չէ՞,— դառնությամբ ծիծաղեց մարդը։— Կարելի է գեռևս մի բան անել։ Այ, օրինակ ծախվում է Մուսենենը— այն ողորմելի ճահճային վետինը դրսում, դաշտի միջին։

— Բայց ինչո՞ւ հենց դա,— ասաց կինը սարսռալով։

Մարդուն դուր եկան իսկույն յուր մտքերը։

— Այո, դա կնշանակեր դառնության բաժակը մինչև վերջին կաթիլը դատարկել։ Առաջներիս միշտ ունենալ անցած փառքի հուշարձանը, որովհետև դու պիտի գիտենաս, որ Հելենինթալի կալվածատունը հիանալի կերպով երևում է այն տեղի պատուհաններից. մեր չորս բոլորը՝ ճահիճ և խոպան դաշտ, երկուհարյուր օրավար. թերևս կարելի լինի դեռ շատ բան մշակել. կուլտուրայի ռահվիրա դառնալ։ Եվ ի՞նչ կասեին մարդիկ այդ տեսնելով։ Անշուշտ այն, թե Մայհոֆերը կորցնե

մարդ է. նա չի ամաչում իր դժբախտությունից, նույնիսկ արհամարհանքով է նայում դրա վրա։ Ճիշտ որ, մարդ պիտի արհամարհի յուր անբախտությունը. դա է միակ բարձր փիլիսոփայությունը կյանքի նկատմամբ. մարդ պիտի արհամարհի, ծաղրի...— և նա այնպես տուր ձայնով սուլեց, որ հիվանդ կինը ցնցվեց յուր անկողնի մեջ։

— Ներիր սիրելիս,— խնդրեց ամուսինը, շոյելով կնոջ ձեռքերը ու հանկարծ զվարթ տրամադրության գալով։— Բայց մի՞թե ճիշտ չեմ ասում, պետք է արհամարհել դժբախտությունը։ Քանի մարդ գիտակցում է, որ ինքը շիտակ ու ազնիվ է, կարող է բախտի յուրաքանչյուր հարված հաճույքով տանել։ Այն կալվածքը, որի մասին ասացի, կարելի է ամեն օր գնել, որովհետև նրա տերը մոտիկ օրերս ամուսնացել է մի հարուստ կնոջ հետ և յուր հին, անպետք կալվածքը բոլորովին կթողնի։

— Առաջ մի լավ մտածիր, Մաքս,— աղաչեց կինը սաստիկ վախեցած։

— Ավելորդ է երկար ու բարակ տատանվելը,— ասաց նա խստորեն,— մենք իրավունք չունենք ծանրաբեռնելու այս նոր պարոն Դուգլասին և մեր խղճալի երկու հազարովն էլ ուրիշ ավելի լավ բան չենք կարող անել. ուրեմն հարկավոր է քաջությամբ գործի կպչել...

Եվ առանց յուր հիվանդ կնոջը ցտեսություն ասելու շտապով հեռացավ այդտեղից։

Մի քանի րոպեից հետո լսելի եղավ, թե ինչպես նրա միաձի կառքը դարբասի դռնով դուրս սահեց։

Նույն օրը ճաշից հետո իմաց արին տիկին Էլսբեթին, որ մի օտար կին նրան այցելության է եկել։ Մի գեղեցիկ, վայելչատես կին հարուստ, փայլուն կառքով եկել էր բակը և ցանկանում էր հիվանդ ծննդկանին այցելել։

Ով էր արդյոք, որ չէր ցանկացել յուր անունն ասել։

— Ինչքան տարօրինակ է,— մտածեց տիկին Էլսբեթը, բայց որովհետև նա յուր վշտի մեջ սկսել էր երկնային առաքյալներին հավատալ, ուստի չմերժեց այցելությունն ընդունել։

Դուռը բացվեց։ Մի բարձրահասակ, նրբակազմ կին, մեղմ ազնիվ դիմագծերով, սահուն քայլերով մոտեցավ տղոց-

կանի անկողնին։ Առանց այլևայլության նա վերցրեց նրա ձեռքերից մեկը և հեզ, մեղմությամբ քողարկված ձայնով ասաց։

— Ես իմ անունս ծածկեցի, սիրելի տիկին Մայհյոֆեր, որովհետև վախենում էի, թե չեմ ընդունվի, եթե սուտ ասեի։ Սիրով կուզեի նաև այժմ անծանոթ մնալ։ Դժբախտաբար ես ստիպված եմ ենթադրելու, որ եթե իմանաք, թե ով եմ ես, այլևս բարյացակամությամբ չեք նայի ինձ։

— Աշխարհիս երեսին ոչ մի մարդու չեմ ատում ես,— պատասխանեց տիկին Էլսբեթը,— ո՞ւր մնաց, թե մի անուն ատեմ։

— Իմ անունը Հելենե Դուգլաս է,— ասաց կինը մեղմությամբ և ավելի ամուր սեղմեց հիվանդի ձեռքը։

Տիկին Էլսբեթն իսկույն սկսեց լաց լինել, իսկ այցի եկող կինը ձեռքը նրա վզով ձգեց, կարծես նրա հին ընկերուհին լիներ. համբուրեց նրա ճակատը և ասաց իր մեղմ, մխիթարիչ ձայնով։

— Մի՛ նեղանաք և չկարծեք, թե ես ձեր թշնամին եմ. բախտը ցանկացավ, որ ես ձեզ այս տան միջից դուրս հանեմ, բայց ես մեղավոր չեմ։ Իմ մարդը կամեցել է ինձ մի անակնկալ հաճույք պատճառել, գնելով այս կալվածքը, որովհետև կալվածքի անունն էլ նույնն է, ինչ որ իմը։ Իմ տուրախությունն իսկույն անհետացավ, երբ ես իմացա, թե նա ինչ հանգամանքների մեջ է գնել այն և թե դուք, սիրելի տիկին Մայհյոֆեր, այս կրկնակի ծանր ժամանակում ինչքան պետք է տանջվեք։ Սիրտս թեթևացնելու համար իմ պարտքս համարեցի գալ, անձամբ ներողություն խնդրել ձեզանից այն վշտի համար, որ ես ձեզ պատճառել եմ, որովհետև ձեր տանջանքի ժամը դեռ չէ անցել։

Տիկին Էլսբեթը իր գլուխը դրել էր օտարուհու ուսերին, կարծես հենց այդպես էլ պետք է լիներ, և մեղմ կերպով լաց էր լինում ինքն իրեն։

— Եվ թերևս ես կարողանամ ձեզ մի փոքր օգտակար լինել,— շարունակեց օտարուհին,— հենց թեկուզ նրանով, որ դատության մի մասը վերցնեմ ձեր սրտից։ Մենք կանայք իրար ավելի լավ ենք հասկանում, քան բիրտ ու խստասիրտ

տղամարդիկ։ Ընդհանուր տանջանքը, որ ծանրանում է մեզ՝ կանանց վրա, մեզ ավելի է մոտեցնում իրար։ Բայց ամենից առաջ ահա թե ինչ. ես արդեն մարդուս հետ խոսել եմ և նրա ու իմ անունից խնդրում եմ ձեզ այս տունը սեփականություն համարել այնքան ժամանակ, որքան դուք ցանկանաք։ Ձմեռը մեծ մասամբ մենք քաղաքումն ենք անցկացնում. և բացի այդ ունենք նաև մի ուրիշ կալվածք, որ մենք ցանկանում ենք մի կառավարչի հանձնել։ Տեսնում եք ուրեմն, որ դուք մեզ ոչ մի կերպ չեք խանգարի և մեծ հաճույք պատճառած կլինեք, եթե մի կես տարի էլ և դեռ դրանից էլ ավելի այստեղ մնաք և կառավարվեք, ինչպես մինչև այժմ։

Տիկին Էլսբեթը շնորհակալություն չհայտնեց. բայց օտարուհուն ուղղած իր արտասվաթոր հայացքը շնորհակալություն էր արդեն։

— Այժմ դարձյալ զվարթացեք, սիրելի տիկին,— շարունակեց օտարուհին,— և եթե ապագայում խորհրդի և օգնության կարիք զգաք, հիշեցեք, որ այստեղ մեկը կա, որ պետք է ձեզ շատ բանով օգնի։ Ինչ սիրուն երեխա է,— դարձավ նա դեպի օրորոցը,— տղա՞ է, թե աղջիկ։

— Տղա,— ասաց տիկին Էլսբեթը թույլ ժպիտով։

— Էլ ուրիշ քույր կամ եղբայր ունի՞, բայց ի՞նչ եմ հարցնում. երկու կտրիճ տղաները դրսում չէ՞ որ ինձ ընդունեցին կառքի առաջ։ Գուցե կարելի կլիներ, որ ես նրանց ավելի մոտ ծանոթանայի... Ոչ, այդպես չէ,— պատասխանեց նա ինքն իրեն։— Դուք ավելի կհուզվեք դրանից։ Հետո, հետո, իսկ առայժմ մեզ հետաքրքրում է այս փոքրիկ աշխարհաքաղաքացին։

Նա կռացավ օրորոցի վրա և կարգի բերեց երեխայի խանձարուրը։

— Ինչ խելոք արտահայտություն ունի. կարծես ծեր լինի,— ասաց նա հանաքով։

— Հոգսը կանգնած է եղել նրա օրորոցում,— պատասխանեց տիկին Էլսբեթը մեղմ ու տխրագին,— դրանից է, որ նրա դեմքը ծերացած է երևում։

— Օ, թողեք սնոտիապաշտությունը, իմ թանկագին տիկին,— ասաց քնքշությամբ օտարուհին։— Ես ուզեցի ասել, որ

նորածինները շատ անգամ զառամյալի գծեր են ունենում իրենց երեսին, բայց դա շուտով կանհայտանա։

— Դո՛ւք էլ անշուշտ երեխաներ ունեք,— հարցրեց տիկին Էլսբեթը։

— Ախ, ես դեռ բոլորովին ջահել կին եմ,— պատասխանեց օտարուհին կարմրելով.— հազիվ վեց ամիս է, որ ամուսնացած եմ. բայց...— ու նա ավելի կարմրեց։

— Աստված թող օգնի ձեզ ձեր դժվար ժամին,— ասաց տիկին Էլսբեթը,— ես կաղոթեմ ձեզ համար։

Օտար կնոջ աչքը թրջվեց։

— Շնորհակալություն, հազար շնորհակալություն,— ասաց նա։— Արիք ընկերուհիներ լինենք, ի սրտե խնդրում եմ ձեզ։ Գիտե՞ք ինչ, թույլ տվեք ես կնքամայր լինեմ ձեր փոքրիկի համար և նույնը եղեք ինձ համար, երբ երկինքը ինձ օրհնի...

Երկու կանայք համբուրվեցին։ Նրանց ընկերական դաշնը կապված էր...

Երբ այցելուն հեռացել էր արդեն, տիկին Էլսբեթը դուրս նայեց դեպի հեռուն, յուր երկչոտ տխուր հայացքով։— Դեռ նոր այնպես լույս էր ու պայծառ, այնպես արևոտ,— ասաց նա մեղմորեն,— այժմ նորից մռայլը պատել է։

Մի փոքր հետո ներս վազեցին երկու երեխանները իրենց մոր սենյակը, չնայած, որ հիվանդապահ աղջիկը չէր թողնում նրանց։ Նրանցից յուրաքանչյուրը յուր ձեռքում շաքարեղենի մի տոպրակ ուներ։

— Օտար կինը տվեց մեզ,— ցնծագին հայտնեցին նրանք։

Տիկին Էլսբեթը ժպտաց։

— Լուռ կացեք, երեխեք,— ասաց նա,— մի հրեշտակ է եկել մեզ մոտ։

Երկու փոքրիկ երեխաները երկյուղոտ աչքերով դես ու դեն նայեցին ու հարցրին.

— Հրեշտա՞կ, մամա։

2

Այսպիսով, տիկին Դուգլասը Պաուլի կնքամայրը դարձավ։ Հասկանալի էր, որ Մայհյոֆերը դժկամությամբ էր նայում

այս նոր բարեկամության վրա, որովհետև նա ասում էր շարունակ.

— Ես չեմ ուզում բախտավորների կարեկցությունը։— Բայց երբ հեզ ու բարեհամբույր կինը երկրորդ անգամ նրանց տունը եկավ և նրան համոզեց, նա չկարողացավ այլևս մերժել։

Ցուրտ հին օթևանում երկար մնալուն էլ նա համաձայնեց, թեև իհարկե դժվարությամբ։ Մուսենեն կալվածքը, որ նա իրոք նույն օրը փողով գնել էր, այնպիսի քայքայված վիճակի մեջ էր, որ խիստ վտանգավոր էր նրա կնոջ և երեխայի համար աշնան ցուրտ օրերին այնտեղ բնակություն հաստատելը։ Ամենից առաջ անհրաժեշտ էր հարկավոր վերանորոգությունը կատարել, և նախքան տեղափոխվելը, հարկավոր էր հյուսն, որմնադիր և բրուտ կանչել։

Բայց, չնայած այդ բոլորին, տիկին Էլսբեթն ստիպված էր յուր մարդու համառության պատճառով նոր բնակարանը տեղափոխվել վերանորոգությունը վերջանալուց շատ ավելի առաջ։ Դա հետևյալ կերպ պատահեց, երբ մի օր նոր տիրոջ վերատեսուչներից մեկը մի քանի բանվորների հետ բակը եկավ և յուր տիրոջ անունից համեստ կերպով օթևան խնդրեց նրանից, նա այդ բանը համարեց իր դեմ գիտակցաբար ուղղված անարգանք և վճռեց այլևս ոչ մի օր չմնալ այդ հողի վրա, որ երբեմն նրա սեփականությունն էր...

Նոյեմբերյան մի սառը, մշուշային օր էր. տիկին Էլսբեթը յուր երեխաների հետ վերջին բարևն էր ասում հին սիրելի տանը։ Բարակ անձրևը մաղմղում էր վերևից։ Դատարկ դաշտը ընկած էր նրա հայացքների առաջ գորշ մշուշի տակ, ամայի ու անմխիթար։

Ծծկեր երեխան կրծքին, մյուս երկուսը չորս կողմը լաց լինելիս... այսպես բարձրացավ նա կառքը, որ գնալու էր դեպի նոր, ավա՜ղ, ավելի մռայլ մի բախտի հանդեպ։

Երբ նրանք դարբասի դռնով դուրս եկան և դաշտի չոր քարին սառուցային ճիպոտներով նրանց երեսը ծեծկել սկսեց, լաց եղավ նաև փոքրիկը, որ մինչ այդ հանգիստ ու խաղաղ պառկել էր։ Մայրն ավելի ամուր փաթաթեց նրան յուր վերարկուի մեջ և խոր կռացավ նրա փոքրիկ դողդոջուն գլխի

վրա, որպեսզի ցույց չտա յուր արտասուքները, որոնք անդադար գլորվում էին այտերի վրայով։

Անձրևից փափկացած և կավային ճանապարհով կես ժամից հետո կառքը հասավ յուր նպատակին։ Քիչ էր մնացել, որ տիկին Էլսբեթը բարձրաձայն աղաղակեր, երբ նրա աչքին երևաց նոր բնակատեղին յուր ամբողջ անմխիթար ու անակընկալ վիճակով։

Կավից ու վայրի խոտերից շինված երկարաձիգ կացարաններ, մի ճահճոտ բակ. ցածլիկ, եղեգնով ծածկված մի բնակարան, որի պատերից կիրը տեղ-տեղ պոկ էր եկել. մի խոպանացած պարտեզ, որի մեջ ամառվա վերջին տխուր մնացորդները՝ աստղածաղիկներն ու արևածաղիկները վայրի խոտերի հետ բուսել էին. շուրջը նոր ներկած ցանկապատը—ահա սա էր այն տեղը, որ լինելու էր այնուհետև կալվածատիրոջ օթևանը։

Սա էր այն տեղը, որտեղ փոքրիկ Պաուլը մեծացավ և որի հետ նա կապվեց յուր մանկության սիրով և յուր կես կյանքի հոգսերով։

Առաջին տարիները նա չափազանց նրբակազմ և հիվանդոտ մի արարած էր. շատ գիշերներ դողում էր նրա մայրը, թե միգուցե նրա կյանքի աղոտ ճրագիկը հանդչի նախքան լույսը բացվելը, ապա նստում էր խավար, ցածլիկ ննջարանում, արմունկներն հենած որդու մահճակալի եզրին և այրվող աչքերով նայում էր նրա նիհար մարմնիկին, որ երբեմնակի ջղաձգությունից ցավագնորեն կուչ էր գալիս։

Բայց նա հաղթահարեց յուր առաջին մանկության բոլոր ճգնաժամերը և հինգ տարեկան հասակում արդեն առողջ երեխա էր, որի մեծանալու վրա կարելի էր հույս դնել, թեև դարձյալ թուլակազմ էր ու գունատ, համարյա թառամած դեմքով. նրա հին դիմագծերը մնացել էին։

Նրա ամենավաղ հիշողություններն այդ ժամանակվանից են սկիզբ առնում։

Առաջին հիշողությունը, որ նա յուր հետագա տարիներում շատ անգամ վերարտադրում էր, հետևյալն էր.

Կիսախավար մի սենյակ. լուսամուտներում ծաղկում են բյուրեղածաղիկներ և վերջալույսի կարմրավուն շողքը ներս է

ընկնում վարագույրների արանքից։ Մեծ եղբայրները գնացել են շմուշկ խաղալու. իսկ ինքը պառկած է յուր տեղում, որովհետև նա պիտի ավելի վաղ քնի. նրա կողքին նստած է մայրիկը, մի ձեռքը նրա վզով ձգած, մյուսը՝ օրորոցին դրած, որի մեջ քնած էին երկու փոքրիկ քույրիկները, որոնց արադիլն էր բերել մի տարի առաջ, երկուսին էլ միևնույն օրում։

— Մամա, մի բան պատմիր ինձ,— խնդրում է նա։

Եվ մայրը պատմում է։ Ինչի՞ մասին, ինքը աղոտ կերպով է հիշում այդ, բայց մոր պատմության մեջ խոսք կար մի սպիտակահեր կնոջ մասին, որը բոլոր տխուր ժամերին մայրիկին այցելել էր, մի կին, գունատ, նիհար դեմքով և պղտոր լացակոծ աչքերով։ Նա ստվերի պես էր եկել ու գնացել, ձեռքերը տարածել էր մայրիկի գլխի վրա, հայտնի չէ նրան օրհնելու, թե անիծելու համար. և շատ տեսակ խոսքեր էր ասել, որոնք փոքրիկ Պաուլին էին վերաբերում։ Նրա ասածների մեջ խոսք էր եղել մի զոհի և ինչ-որ փրկության մասին. բայց այն խոսքերը նա մոռացել էր, հավանորեն այն պատճառով, որ նա դեռ այդ խոսքերն հասկանալու համար բավականին տհաս էր։ Մի բան միայն հիշում էր շատ լավ, երբ նա երկյուղից ու սպասումից համարյա բոլորովին շնչարգել՝ մոր խոսքերին էր ականջ դնում, տեսավ հանկարծ այն սպիտակահեր կերպարանքը դռան առաջ կանգնած, որի մասին մայրը պատմում էր. բոլորովին նույն պատկերը՝ բարձրացրած ձեռքերով և գժգույն, տխուր դեմքով։ Նա ծածկեց յուր երեսը մոր թևի տակ։ Նրա սիրտն արագորեն զարկեց, շունչն սկսեց նվազել և մահվան տագնապի մեջ նա ակամա բղավեց.

— Մամա, տես նա այստեղ է, նա այստեղ է։

— Ո՞վ, Հո՞գսը,— հարցրեց մայրը։

Նա չպատասխանեց ու լաց եղավ։

— Ո՞ւր է հապա,— շարունակեց հարցնել մայրը։

— Այնտեղ, դռան առաջ,— ասաց երեխան, ուշքի գալով և մոր վզով ընկնելով, որովհետև սաստիկ վախենում էր։

— Օ, դու իմ փոքրիկ հիմարիկս,— ասաց մայրը,— դա պապայի ճանապարհորդական երկար վերարկուն է,— և նա մոտ բերեց ու ցույց տվեց նրան վերարկուի աստառն ու օձիքը, որպեսզի Պաուլը բոլորովին հավաստիանա ու նա հա-

մոռվեց։ Բայց ներքուստ ավելի քան աներկբա էր, որ նա սպիտակահեր կնոջը երեսս առ երեսս տեսել էր։ Այժմ նա գիտեր, թե կինը ինչպես է կոչվում։

Նա կոչվում էր «Հոգս»։

Բայց մայրը մտածկոտ էր դարձել և ոչ մի կերպ չէր համաձայնում յուր պատմությունը վերջացնել։ Նույնիսկ հետո էլ չէր պատմել, ինչքան էլ որ որդին նրան աղաչել էր այդ մասին։

Իր հոր մասին նա շատ աղոտ հիշողություն ուներ այն տարիներից։ Բարձր կոշիկներով մի մարդ, որ մայրիկի վրա բարկանում էր, եղբայրներին ծեծում, իսկ իրեն, արհամարհում։ Միայն երբեմն նկատում էր հոր ծուռ հայացքը, որ նրա համար բարի բան չէր գուշակում։ Շատ անգամ, մանավանդ երբ նա քաղաքից էր վերադարձած լինում՝ նրա երեսը մութ կարմրավուն գույն էր ստանում՝ կրակից բորբոքված պղնձի նման և նրա քայլերը ծուռ ու մուռ ընթացք էին ստանում։ Այդպիսի ժամանակներում միշտ հետևյալ տեսարանն էր կատարվում։

Ամենից առաջ նա փայփայում էր երկվորյակներին, որոնց նա առանձնապես սիրում էր և օրորում էր նրանց իր բազուկների վրա, մինչդեռ մայրիկը կանգնում էր նրան բոլորտվին մոտ և երկյուղոտ հայացքով հետևում էր նրա բոլոր շարժումներին։ Ապա նստում էր ուտելու. այս ու այն կողմ էր դարձնում ափսեի մեջ եղածը և ապա մի կողմ հրում. անվանելով «կերը» անհամ և խղճուկ, մի քանի անգամ մտրակով հասցրնում էր Մաքսի կամ Գոտֆրիդի մեջքին, շարանում էր մայրիկի վրա և վերջապես, դուրս էր գնում ծառաների հետ կրռիվ ակսելու։ Այնուհետև նրա գոռգոռոցը հնչում էր բակից դուրս, այնպես, որ նույնիսկ Կառոն, որը շղթայված էր, պոչը քաշում էր երկու ոտների արանքը և յուր բնի ամենավերջին անկյունն էր կծկվում։ Եվ երբ մի փոքր հետո սենյակն էր դառնում, նրա բարկությունը սովորաբար հուսահատության էր փոխված լինում։ Նա կոտրատում էր ձեռքերը, գանգատվում էր այն թշվառության համար, որի մեջ նա այստեղ ստիպված էր ապրել, և ինքն իրեն խոսում էր ամեն տեսակ մեծ գործերի մասին, որ նա կձեռնարկեր, եթե այս կամ այն

հանգամանքը նրան չխանգարեր և եթե երկինքն ու երկիրը միասին խոսք կապած չլինեին նրան կորստյան անդունդը տանելու։ Ահա մոտենում էր պատուհանին և թափահարում էր յուր բռունցքը «Սպիտակ տան» ուղղությամբ, որը հեռվից այնպես սիրալիրությամբ այս կողմն էր նայում։

Այո՜, այդ «Սպիտակ տունը»։

Հայրը հայհոյում էր միշտ ու անիծում այդ տունը և հոնքերը կիտում, երբ նրա հայացքն այն ուղղությամբ էր ընկնում։ Իսկ ինքը՝ Պաուլը, չափազանց սիրում էր, երբ յուր մրտքերը թռչում էին դեպի «Սպիտակ տունը», կարծես հոգու մի մասը այնտեղ էր մնացել։ Ինչո՞ւ համար. նա ինքն էլ չգիտեր. թերևս նրա համար, որովհետև մայրիկն էր սիրում։ Նրա մայրն էլ էր հաճախ կանգնում պատուհանի առաջ և նայում էր այն կողմը. բայց նա չէր կիտում հոնքերը, օ՜, ո՜չ. նրա երեսը փափկանում էր ու թախծոտվում. և նրա աչքերում այնպիսի մի տենչանք էր փայլում, այնքան բուռն ու ջերմ, որ նրա կողքին խաղաղ կանգնած Պաուլի մարմնով սարսուռ էր անցնում։

Չէ՞ որ նրա փոքրիկ սիրտն էլ բոլորովին նույն տենչանքով լի էր։ Չէ՞ որ նրա համար այն տունը գեղեցկի ու շքեղության բովանդակումն էր ամբողջապես։ Այդ տունը Պաուլի աչքի առաջն էր նաև այն ժամանակ, երբ սա յուր կոպերը պինդ ծածկում էր, նույնիսկ երազի պես անբաժան էր Պաուլն այն տանից։

— Իսկի մի անգամ եղե՞լ ես «Սպիտակ տան» մեջ,— հարցրեց նա մի օր յուր մայրիկին, երբ որ նա այլևս չկարողացավ յուր հետաքրքրությունը զսպել։

— Օ՜, այո, զավակս,— ասաց մայրը. և նրա ձայնը հնչեց տխուր և անհաստատ կերպով։

— Հաճա՞խ, մամա։

— Շատ հաճախ, որդիս. քո ծնողներն այնտեղ ապրել են մի ժամանակ և դու այնտեղ ես աշխարհ եկել։

Այդ օրից «Սպիտակ տունը» նրա համար այն էր, ինչ որ մարդկային սեռի համար կորսված դրախտը։

— Այժմ ո՞վ է ապրում այն «Սպիտակ տան» մեջ,— հարցրեց նա մի ուրիշ անգամ։

— Մի գեղեցիկ սիրալիր կին, որ բոլոր մարդկանց սիրում է և առանձնապես քեզ, որովհետև դու նրա սանիկն ես։

Նրան այնպես թվաց, թե երջանկության մի անվերջ հոսանք թափվեց գլխին, այնպես հուզված էր, որ դողում էր։

— Հապա ինչո՞ւ չենք գնում այն գեղեցիկ, շնորհալի կընոջ մոտ,— հարցրեց նա մի փոքր անց։

— Պապան չէ կամենում,— պատասխանեց մայրը, և նրա ձայնը հնչեց առանձնապես սուր կերպով, այնպես, որ սա էլ նկատեց։

Նա այլևս բան չհարցրեց, որովհետև հոր կամքը օրենք էր, որ ոչ ոք իրավունք չուներ քննադատելու։ Բայց այդ օրը «Սպիտակ տան» գաղտնիքը մի նոր կապ հաստատեց մոր և որդու մեջ։ Հրապարակով դրա մասին չպիտի խոսք լիներ։ Հայրը կատաղում էր, հենց որ խոսում էին դրա մասին. և նույնիսկ եղբայրներն էլ չէին ուզում փոքրիկի հետ սիրով խոսել. հավանորեն վախենում էին, թե միգուցե հիմարաբար ամեն բան հետո ուրիշին պատմի։ Բայց մայրը, մայրը վստահում էր նրան ամեն բան։

Երբ նրանք միասին մենակ էին լինում— դպրոցական պարապմունքների ժամանակ համարյա միշտ մենակ էին— այն ժամանակ բացվում էր մայրիկի բերանը, բերանի հետ նաև սիրտը և նրա պատմվածների միջից ավելի ու ավելի բարձր ու պայծառ էր փայլում «Սպիտակ տունը»։ Նա արդեն գիտեր ամեն մի սենյակը, յուրաքանչյուր սաղարթը պարտիզում, կանաչ թփապատ փոքրիկ ձկնավազանը և պսպղուն ապակյա գնդակը նրա առաջ. ապա ճեմելիքի վրա արևի ժամացույցը։ Ի՞նչ հրաշալիք պիտի լիներ այդ ժամացույցը, որի վրա սիրուն արևը ինքը ցույց էր տալիս ժամերը։

Նա կարող էր Հելենինթալում փակ աչքերով շրջել առանց մոլորվելու։ Եվ երբ նա փայտի փոքրիկ կտորներով խաղ էր անում, յուր համար մի ճերմակ տուն էր շինում ճեմելիքներով և արևի ժամացույցներով— երկու տասնյակ միանգամից. ավազի մեջ ջրավազան էր փորում. մարմարիոնի նման քարերը ամրացնում էր ձողերի վրա— ցանկանալով ապակյա գնդակը պատկերացնել։ Բայց իհարկե նրանք չէին փայլում։

Այդ ժամանակներն էր, որ նա մի ծրագիր կազմեց «Սպիտակ տանը» այցելություն անելու։ Բոլորովին անկախ, իրա գլխու։ Նա յուր մտադրությունը հետաձգեց դարնանը. բայց երբ գարունը եկավ, նա չունեցավ հարկավոր քաջությունը և նորից հետաձգեց մինչև ամառ. բայց հենց այդ ժամանակն էլ՝ զանազան հանգամանքներ խանգարեցին նրան։ Մի օր նա տեսել էր մի մեծ շուն մարգագետնում թափառելիս. ո՞վ է իմանում, կարելի է կատաղած շուն էր. մի ուրիշ անգամ նրա վրա հարձակվել էր յուր պոզերը պարզած մի ցուլ։

«Այո, երբ ես եղբայրներիս պես մեծանամ,— այդպես էր մխիթարում նա ինքն իրեն,— և դպրոց գնամ, այն ժամանակ մի մահակ կվերցնեմ և կսպանեմ կատաղի շանը և ցուլի էլ պոզերից այնպես կբռնեմ, որ նա ոչինչ չկարողանա անել»։

Եվ նա հետաձգեց մյուս տարվան, որովհետև այն ժամանակ դպրոց պիտի գնար, ինչպես նրա մեծ եղբայրները։

Մեծ եղբայրները նրա պաշտամունքի առարկան էին։ Նրանց նման լինելը թվում էր նրան մարդկային ցանկությունների վերջին կետը։ Ձի նստել, մեծ, իսկական ձի և ոչ թե փայտյա, շմուշկ տահել, առանց փուչիկի լողալ, վերնաշապիկ հագնել, որ կապիչներով մարմնի վրա ամրացրած լիներ— ա՜խ, ինչքա՜ն լավ էր այդ ամենը։

Բայց դրա համար նախ հարկավոր էր մեծ լինել, մխիթարում էր նա ինքն իրեն։ Այս մտքերը պահում էր նա բոլորովին առանձին, միայն յուր համար. մորը չէր հաղորդում, ոչ էլ եղբայրներին, օ՜, արանք շատ քիչ էին հետաքրքրվում նրանով։ Նա մի դաճաճ էր նրանց աչքերում։ Եվ երբ մայրը պատվիրում էր նրանց որևէ տեղ գնալիս նրան էլ վերցնել, նրանք մռայլվում էին ու դժկամանում, որովհետև այդ դեպքում նրանք ստիպված էին ուշադրություն դարձնել նրա վրա և նրա հիմարության պատճառով լավագույն շարաճճիությունները հեռից բաց թողնել։ Պաուլը շատ լավ զգում էր այդ և նրանց յուր երեսներից, և ավելի շար բոթբոթոցներից խուսա տալու համար շատ անգամ գերադասում էր տանը նստել, թեկուզ դրանից նրա սիրտը շատ էլ ցավեր։ Այնուհետև նստում էր նա

ջրհան լծակի վրա և այս ու այն կողմ օրորվելով՝ երազում էր այն ժամանակի մասին, երբ ինքն էլ եղբայրների պես մեծ կլինի և նույն բաները կանի։

Նույնը սովորելու մեջ. և դա այնքան էլ հեշտ չէր, որովհետև երկուսն էլ, թե Մաքսը և թե Գոտֆրիդը առաջինն էին իրենց դասարաններում և տոն օրերին միշտ ամենալավ վկայականներն էին տուն բերում։ Նրանց շատ լավ լինելն երևում էր հենց նրանից, որ հայրը յուրաքանչյուրին մի-մի արծաթյա դրամ էր տալիս, իսկ մայրիկը՝ մի-մի մեղրահաց։

Ուրախության այդպիսի օրերին նա լսում էր հոր հետևյալ խոսքերը. «Այո, եթե ես կարողանայի երկու մեծ որդուս մի լավ դպրոց տալ, անշուշտ մի բան կդառնային, որովհետև նրանք բոլորովին իմ տուր ու ընդունակ միտքն ունին. բայց ի՞նչ կարող ենք անել մենք՝ մուրացկաններս. նրանք էլ ստիպված են մուրացկանների պես կրթվել, մեծանալ»։

Պաուլն այդ մասին շատ էր մտածում, որովհետև նա արդեն գիտեր, որ Մաքսը ծնված է ֆելդմարշալ դառնալու, իսկ Գոտֆրիդը՝ թնդանոթաձիգ գնդի զորապետ։ Երբ մի օր նրանց ձեռքն անցավ ավստրիական զորքի համազգեստների գունավոր պատկերագիրքը, երկու եղբայրներն իրար մեջ էին բաժանել ավստրիական գեներալիտետի ամենաբարձր պաշտոնները, իսկ իրենց կրտսեր եղբորը ենթասպայի պաշտոնն էին թողել միայն։ Այնուհետև նրանցից մեկն իրեն զգում էր հեծյալ զինվոր, իսկ մյուսը՝ հնդիկների գլխավոր։ Բայց Պաուլը մտածում էր միշտ այն տակեկար համազգեստների մասին, որոնց մոտ չնչին էին այդ փայտյա նիզակներն ու գնցոտինների շինված սանդալները, որ եղբայրները իրենց ֆնաղի ժամանակ գործ էին ածում։ Եվ թե ինչու նրանք հետո ցանկանում էին բնագետ ու տուպերինտենդանտ դառնալ, Պաուլի համար դարձյալ անհասկանալի էր մնում. պատկերագրքի նկարները նրա համար ամենալավ բանն էին։

Այդ ժամանակներն էր, որ երկվորյակները քայլել սկսեցին։ Կետեն, որ մեծն էր—նա երեք քառորդ ժամ ավելի շուտ էր աշխարհ եկել—ավելի շուտ սկսեց, իսկ Գրետեն երեք օրից հետո հետևեց նրան։

Դա նշանակալից մի դեպք էր Պաուլի կյանքի համար։

Հանկարծ նա իրեն շղթայված տեսավ պարտականությունների մի ամբողջ շրջանի մեջ, որից նա այնուհետև այնքան էլ շուտ չէր ազատվելու։

Ոչ ոք նրան չէր հանձնարարել փոքրիկ քույրերի առաջին քայլերին հսկել. բայց ինչպես որ միշտ բոլորովին հասկանալի էր եղել, որ նա իր կոշիկները երեկոները մաքրում էր, եղբայրների կոշիկներն էլ դեռ հետը, և որ նա իր շորերը զգուշությամբ ծալում և անկողնի գլխավերևն էր դարսում և դրանց վրա երկու գուլպաները դնում խաչաձև, որ նա երբեք ոչ մի բիծ չէր թողնում սեղանի ծածկոցի վրա, և որ նա հայրիկից միշտ հանդիմանություն էր ստանում, երբ եղբայրներից որևէ մեկին մի բան էր պատահում, նույն կերպ և այժմ հասկանալի էր, որ նա այնուհետև փոքր քույրերին յուր խնամքի տակ առավ և խելահաս մարդու հոգացողությամբ սկսեց հետևել նրանց շարաճճի ու խենթ արարմունքներին, նրանց մանդալուն ու կանգնելուն։

Նա այնքան մեծ կարևորություն էր տալիս յուր այս նոր պաշտոնին, որ նրա դպրոց գնալու տենչանքը նույնիսկ նվազեց. և եթե նա դրանից զատ սուլել էլ կարողանար, էլ ուրիշ բան չէր ցանկանա։

Այո, սուլել կարողանար, ինչպես մշակ Յոնսը կամ թեկուզ ինչպես յուր մեծ եղբայրները. դա էր այժմ նրա երազների նպատակը, նրա անընդհատ փորձերի առարկան։ Բայց ինչքան էլ որ նա բերանը արացնում էր ու շրթունքները թացացնում, միևնույն է, ոչ մի ձայն չէր կարողանում դուրս բերել։ Այո, երբ նա օդը ներս էր քաշում՝ էլի մի բան լինում էր. և մի անգամ նույնիսկ հաջողվեց նրան «Մի հրեա ջուրն է ընկել» երգի առաջին չորս ձայները սուլել. բայց յուրաքանչյուր լավ սուլող գիտի, որ օդը հարկավոր է բերանից դուրս հրել և հենց այդ էր, որ նա չէր կարող սովորել։

Բայց հենց այստեղ էլ նա իրեն մխիթարում էր մտածելով՝ «Երբ մեծանամ»...

Այդ տարվա Ծննդյան տոները մի ուրախալի բան բերին իրենց հետ։ Քաղաքում ապրող «բարի մորաքույրը» մի արկղ էր ուղարկել՝ մեջը ամեն տեսակ գեղեցիկ և օգտակար իրեր, եղբայրների համար գրքեր և շապիկներ, քույրերի համար հա-

գուստեղեն, իսկ նրա համար թավշյա մի բաճկոնակ, հուսարի ժապավեններով և մեծ, փայլուն կոճակներով։ Ուրախանալու բան էր։ Բայց դեռ ամենամեծ պարգևը նամակի մեջ էր, որ մայրիկը սաստիկ հուզմունքից արտասուքն աչքերին կարդում էր։ Բարի մորաքույրը գրում էր, թե նա «էլսբեթի» վերջին նամակից իմացել էր, որ նրա մարդու ամենաջերմ ցանկությունն է մեծ որդիներին ավելի լավ ուսումի տալ և թե նա այժմ վճռել է նրանց որդիներին յուր մոտ վերցնել և յուր սեփական ծախքով նրանց գիմնազիա տալ։ Եղբայրներն ուրախությունից իրենց կորցրել էին, մայրը լաց էր լինում, հայրը արագորեն ման էր գալիս սենյակում, ձեռքերով մազերն էր քաշքշում և հուզված խոսքեր էր մռմռում։

Իսկ նա այդ միջոցին բոլորովին հանգիստ նստել էր քույրերի անկողնի վրա և ներքուստ ուրախանում էր ինքն իրեն։

Ապա մայրը մոտեցավ նրան, ծածկեց յուր երեսը նրա մազերի մեջ և ասաց. «Դու էլ արդյոք կարժանանա՞ս այդ բախտին, զավակս»։

— Դա՞,— ասաց հայրը,— դա հո ոչինչ չի հասկանում։

— Նա դեռ շատ փոքր է,— վրա բերավ մայրը, շոյելով նրա այտերը. ապա հագցրեց նրա նոր թավշյա բաճկոնակը. նա կարող էր այդ բաճկոնակը ամբողջ օրը մինչև երեկո հագին պահել, որովհետև տոն էր։ Նույնիսկ եղբայրներն էլ մոտ եկան և սկսեցին գուրգուրել նրան, մասամբ նրա համար, որ այդպես ուրախ էին, մասամբ էլ նրա գեղեցիկ բաճկոնակի համար։ Նրանք երբեք այդքան բարի չէին եղած դեպի նա։

Այո։ Իսկապես Ծննդյան տոներն էին։

Եվ երբ գարունը մոտեցավ, նրանց տանն սկսվեց կարելու և ձեռագործելու շրջանը։ Պատուը պետք է չափսի ժամանակ ներկա լիներ, որ օգներ, արմուկը բռներ, մկրատը տար. իսկ երկվորյակները ընկած էին գետնին ու վժվժում էին ճերմակ քաթանի մեջ։ Այսպես պատրաստություն էին տեսնում եղբայրներին իշխանի պես ճանապարհ դնել։ Ոչինչ չմոռացվեց։ Նույնիսկ փողկապ ստացան նրանք, որ մայրը պատրաստել էր մի հին դիպակյա թիկնոցից։

Եղբայրները սարսափելի հպարտացել էին այդ օրերին։ նրանք արդեն պարոններ էին երևակայում իրենց, յուրաքան-

ջյուրն իր գիտցածի պես։ Մաքսը հոր ծխախոտատուփից ծխախոտ էր վերցնում և բերանում շուռ ու մուռ տալիս, իսկ Գոտֆրիդը մի ակնոց էր դնում աչքերին, որ նա ձեռք էր բերել դպրոցում վարտիքի վեց կոճակ տալով։

«Դո՞ւր եմ գալիս քեզ»— հարցնում էր նա Պաուլին, նրա առաջ հպարտորեն այս ու այն կողմ քայլելով. և որովհետև սա միշտ «այո» էր ասում, եղբայրը Պաուլին մի լավ հայհոյում էր. իսկ եթե «ոչ» ասեր՝ եղբայրը գլխին կտար։

Ջատկից անմիջապես հետո երկու եղբայրները մեկնեցին։ Տանը շատ արտասուքի պատճառ եղավ դա։ Բայց երբ կառքը բակի դռնով դուրս գնաց հեռացավ, մայրը սեղմեց իր լալագին երեսը Պաուլի այտերին ու շշնջաց.

— Բավական ժամանակ է, դու անտես ես թողնված, իմ խեղճ երեխա, այժմ մենք դարձյալ միասին ենք երկուսով ինչպես առաջ։

— Մա՛մա-ա՛, ի...— բղավեց Կետեն թևիկները տարածելով, նրա քույրն էլ հետևեց նրան։

— Հա՞, դուք էլ կաք,— բացականչեց մայրը և արևի պայծառ շողքը լուսավորեց նրա դունատ երեսը։

Եվ ապա վերցրեց նրանցից յուրաքանչյուրին յուր մի ձեռքում, մոտեցավ լուսամուտին և երկար նայում էր դեպի «Սպիտակ տունը»։

Պաուլը իր գլուխը կոխեց նրա շորերի ծալքերի մեջ և նույնն արավ։

Մայրը հայացքը դարձրեց նրան և երբ նա Պաուլի երեխայական խելահաս աչքերին հանդիպեց, կարմրեց մի փոքր և ժպտաց։ Բայց նրանցից ոչ ոք ոչինչ չխոսեց։

Եվ երբ հայրը քաղաքից վերադարձավ, ցանկություն հայտնեց, որ Պաուլը դպրոց գնալ սկսի։

Մայրը շատ տխրեց և խնդրեց մի կես տարի էլ դեռ տանը թողնել, որպեսզի մոր համար շատ զգալի չլինի երկու որդոց բացակայությունը. նա ինքը դաս կտա նրան և ավելի առաջ կտանի, քան թե այդ կարող էր անել նրա ուսուցիչը։

Բայց հայրը չէր ուզում ոչինչ լսել այդ մասին և բարկանալով նրան լալկան էր անվանում։

Պաուլը տարսափեց։ Այն տենչանքը, որ նա առաջ ուներ

դպրոց գնալու մասին, բոլորովին անհայտացել էր։ Իհարկե եղբայրներն էլ այժմ նրա մոտ չէին, որպեսզի նրանց շարունակ հետևեր ու հասնելու ձգտեր։

Հետևյալ օրը հայրը բռնեց նրա ձեռքից ու տարավ գյուղ, որի առաջին տները Մայրմոֆերների կալվածքից մոտ երկու հազար քայլ հեռու էին։ Ճանապարհը այնուամենայնիվ բավական երկար էր այդքան փոքր տղայի համար։

Բայց Պաուլը իրեն քաջ պահեց. նա այնպես վախենում էր, թե հորից ծեծ կստանա, որ պատրաստ էր մինչև աշխարհի վերջը գնալ։

Դպրոցը մի ցածրիկ, հարդածածկ շինություն էր, քիչ էր տարբերվում մյուս գյուղական տներից, բայց նրա առաջ կային ամեն տեսակ բարձր ձողեր՝ սանդուղքներով ու ամեն տեսակ վերելակներով։

— Դրանց վրա կախում են ծռյալ երեխաներին,— բացատրեց հայրը։

Պաուլի վախն ավելի մեծացավ. բայց երբ ուսուցիչը, որ մի բարի ծեր մարդ էր, սպիտակ մորուքով, յուղոտ բաճկոնով, նրան մոտ կանչեց, ծնկին առավ ու մի գունդգունդ, պատկերազարդ գիրք ցույց տվեց, Պաուլը նորից հանգստացավ։ Միայն թե այն բազմաթիվ անծանոթ դեմքերը, որ նստարաններից նրա վրա էին ուղղված, նրան այնքան էլ լավ բան չէին գուշակում։

Նա ստացավ վերջին տեղը և ստիպված էր երկու ամբողջ ժամ գրատախտակի վրա գծեր նկարել։

Դասամիջոցին նրան մոտեցան մեծ աշակերտները, հարցեր տվին նրան նախաճաշիկի մասին, և երբ իմացան, որ Պաուլը հետը երշիկ է բերել, խլեցին նրանից։ Նա ոչինչ չասաց, որովհետև կարծում էր, որ այդպես էլ պետք է լիներ։ Տուն գնալիս նրան մի լավ ծեծեցին և նրանցից մեկը եղինջ կոխեց նրա օձիքի մեջ։ Նա կարծում էր, որ այս էլ այդպես պետք է լիներ, քանի որ նա ամենափոքրն էր։ Բայց երբ նա գյուղի տներից հեռացավ և միայնակ անցավ արևկոխ դաշտերով, սկսեց լաց լինել։ Մի թփի տակ վայր ընկավ և ակնապիշ նայեց կապույտ երկնքին, որտեղ ծիծեռնակներն այս ու այն կողմն էին սլանում։

«Ա՜խ, եթե դու էլ կարողանայիր գոնե այդպես թռչել»,— անցավ նրա մտքով։ Հանկարծ հիշեց «Սպիտակ տունը»։

Նա վեր ելավ ու սկսեց աչքերով որոնել տունը։ Ինչպես մի կախարդական դղյակ, որի մասին մայրը պատմել էր յուր հեքիաթների մեջ, փայլում էր հեռվում «Սպիտակ տունը»։ Պատուհանները փայլփլում էին կարմիր հակինթի պես և կանաչ թփերը կարմրաշող բարձրացել էին շուրջը — ու ամբողջը թվում էր, թե կարմրաշող մի հարյուրամյա թփաստան լիներ։

Նրա վշտին խառնվեց հպարտության և ինքնագիտակցության զգացմունքը։ «Դու մեծ ես այժմ»,— ասում էր նա ինքն իրեն, «որովհետև դու այժմ ուսումնարան ես գնում։ Եվ եթե դու այժմ ճանապարհորդություն անելիս լինես, ոչ ոք քեզ չի կարող դրա համար բան ասել»։ Ապա նորից վախը պատեց նրան։ Չար ցուլը և կատաղած շնե՞րը — չէ՞ որ դժվար է իմանալ։ Նա վճռեց խնդիրը մինչև առաջիկա կիրակի օրը հետաձգել և լավ մտածել։

Բայց «Սպիտակ տունը» այնուհետև նրան հանգիստ չէր տալիս։ Ամեն անգամ, երբ նա դաշտով անցնում էր, հարցնում էր ինքն իրեն, թե ինչ մի ավելի վատ բան պետք է լինի այս դաշտի ճանապարհին, քան այն ճանապարհին, որ տանում է դեպի դպրոց։ Իհարկե կառքերի ճանապարհը վտանգավոր էր. նա անցնում էր մոայլ եղևնիների անտառի միջով. այդ տեսակ անտառների մեջ բուն են դնում ամեն տեսակ գազաններ ու կախարդներ, սակավ չեն պատահում նաև գայլերը, ինչպես ցույց է տալիս կարմիր գլխարկի պատմությունը։ Բայց երբ նա մարգագետինը ուղղակի կտրում անցնում էր, իրենց տունը աչքից բաց չէր թողնում և վերադարձի ճանապարհը նրան միշտ ապահով էր երևում։

Այնտեղ գնալը նրան թվում էր իբրև մի պատվո պարտք, որ նա այժմ պիտի որ կատարեր, քանի որ նա այժմ «մեծ» էր. և երբ երկյուղը նրան նորից էր պատում, նա բարկանալով վախկոտ էր անվանում իրեն։ Այդ խոսքը դպրոցում համարվում էր մեծ վիրավորանք։

Երբ կիրակի օրը եկավ, նա հաստատ վճռեց ճանապարհորդությունն անել։ Նա կամացուկ անցավ ցանկապատի հետևը

և ինչքան կարող էր արագ վազեց հայրական մարգագետնի վրայով «Սպիտակ տան» ուղղությամբ։

Ճանապարհին պատահեց նա մի ուրիշ ցանկապատի, որի վրայով կարելի էր հեշտությամբ անցնել, ապա մի կոտոր ուրիշ մարգագետնի, որի վրա նա դեռ երբեք չէր եղել։ Այստեղ էլ սակայն մի վտանգավոր բան չկար։ Դաշտի խոտը արևի շողերի տակ փայլում էր. թորշոմած կատվաթաթերը ճրթճրթում էին նրա ոտքերի տակ. մի տաք քամի փչում էր նրա դիմաց։ Նա փորձեց սուլել, բայց դեռ ստիպված էր օդը ներս քաշել, որ մի հնչյուն հաներ։ Դրա համար ամաչեց ինքն իրեն և մի փոքրագի զգացմունք լցրեց նրա սիրտը։

Ապա պատահեց նա մի ճահճոտ մարգի, որ նույնպես նրա հորն էր պատկանում։ Հայրը դրա մասին շատ էր խոսում. նա մտածում էր նրա միջի տորֆը շահագործել, բայց նա ուզում էր գործը հիմնավորապես ու մեծ ծավալով սկսել, իսկ դրա համար նրան փող էր պակասում։

Պաուլը խրվեց ճահճի մեջ մինչև իր թաթերը և միայն այժմ գլխի ընկավ, որ նա կարող էր յուր նոր կոշիկները կեղտոտել։ Նա վախեցավ, որովհետև հիշեց մոր խոսքերը. «հնազիր,— ասել էր մայրը,— լավ պահիր կոշիկներդ, որ ես կաթի խնայած փողով եմ գնել»։ Նա հագել էր նույնպես յուր գեղեցիկ թավշյա բաճկոնակը. որովհետև կիրակի էր։ Նա մեկ էլ նայեց փայլուն մետաքսյա ժապավեններին ու մի բոպե անվճռականորեն մտածեց. լավ չէ՞ր լինի արդյոք ետ դառնալ. ոչ թե թավշյա բաճկոնակի համար, ոչ, այլ միմիայն նրա համար, որպեսզի մորը չտխրեցնի։

«Բայց կարելի է, որ ես բոլորովին անվտանգ անցնեմ այն կողմը»— այսպես մխիթարեց ինքն իրեն և շարունակեց առաջ երթալ։ Գետինը ծփում էր նրա ոտքերի տակ և յուրաքանչյուր քայլափոխին հնչում էր մի ճփճփան ձայն։

Ապա նա հասավ մի կանգնած ջրի, որի ափին ճերմակահեր բոճոճներ էին բուսել. զգուշությամբ հեռացավ այդտեղից և թեև ճահիճն ընկավ, բայց շուտով դարձյալ ցամաքը ելավ։ Նրա կոշիկները թեև կեղտոտվել էին, բայց նա հույս ուներ հետո ծածուկ լվանալ։

Նա առաջ գնաց։ Արդեն կորցրել էր սուլելու ցանկությու-

նը. և քանի մեծանում էր «Սպիտակ տունը» թփերի միջից և նրա առաջ կանգնում, այնքան ճմլվում էր նրա սիրտը։ Նա կարողացավ արդեն պատի պես մի բան զգնաղանել, որ շրջապատել էր ծառերը, և սաղարթների միջով նա տեսավ մի երկար ցածրիկ շինություն, որ նա հեռվից չէր նկատել երբեք։ Նրա հետևում նա տեսավ մի ուրիշ շինություն էլ և մի սև փոսի մեջ բարձր մի բոց, որ այս ու այն կողմ էր բարձրանում։ Անշուշտ դարբնոցն էր. բայց մի՞թե կիրակի օրով էլ մարդ այդտեղ աշխատում էր։

Լաց լինելու մի անհասկանալի ցանկություն եկավ նրա վրա. և երբ նա կուրորեն առաջ էր վազում, արտասուքները հոսում էին նրա աչքերից։

Հանկարծ նա տեսավ իր առաջին մի լայն փոս՝ մինչև բերանը լիքը ջրով։ Նա շատ լավ գիտեր, որ չպիտի կարողանար այն կողմն անցել, բայց համառությունը ստիպեց նրան, որ թռչի։ Հետևյալ վայրկյանին թանձր, կեղտոտ ջուրը ծածկել էր նրան ամբողջովին։

Մինչև ոսկորները թրջված, ճահճային խոտերով ծածկված, նա վերջապես ցամաքն ելավ։

Փորձեց յուր շորերը չորացնել։ Նստեց կանաչ խոտի վրա և նայեց դեպի «Սպիտակ տունը»։ Նա կորցրել էր բոլորովին յուր քաջությունը։ Եվ երբ մրսել սկսեց, տխուր ու տրտում, դանդաղորեն տուն վերադարձավ։

4

Ամառը Մայհյոֆերների տան համար շատ վիշտ ու նեղություն բերավ։ Կալվածքի նախկին տերը գրավ դնել տվավ կալվածքը Մայհյոֆերի պարտքի դիմաց և ոչ մի կողմից հույս չկար հարկավոր գումարը գտնելու։

Մայհյոֆերը շաբաթական երեք չորս անգամ քաղաք էր գնում կառքով և ուշ երեկոյան տուն էր վերադառնում բոլորովին հարբած։ Շատ անգամ էլ ամբողջ գիշերը դուրսն էր մնում։

Այդպիսի ժամանակները տիկին Էլսբեթը նստում էր յուր

անկողնի մեջ և ակնապիշ նայում էր դեպի դրսի մռայլը։ Հաճախ զարթնում էր նաև Պաուլը՝ լսելով նրա կամացուկ հեծկլտոցը։ Ապա անշշուկ պառկում էր յուր տեղում, որովհետև չէր ուզում ցույց տալ, որ ինքն արթուն է. բայց վերջը նա էլ էր սկսում լաց լինել։

Ապա մայրը նորից էր սուս անում. և երբ Պաուլը չէր դադարում լաց լինելուց, նա վեր էր կենում, համբուրում էր նրան, շոյում նրա այտերը կամ ասում էր նրան.

— Ինձ մոտ արի, զավակս։

Նա իսկույն վեր էր թռչում, մտնում էր նրա ծոցը և նրա պարանոցով փարված նորից քնում էր։

Նա հաճախ ծեծ էր ուտում հորից. շատ սակավ անգամ գիտեր պատճառը, սակայն լուռ ընդունում էր հարվածները, որպես մի բան, որ այդպես էլ պետք է լիներ։

Մի օր նա լսեց, թե ինչպես հայրը մայրիկի վրա բարկանում էր.

— Հերիք է լաց լինես, արտասուքի տոպրակ,— ասում էր նա,— կարծես հենց նրա համար ես ստեղծված, որ թշվառությունս ավելի մեծացնես։

— Բայց Մաքս,— մեղմորեն պատասխանում էր մայրը,— մի՞թե դու կուզես արգելել քոյիններին, որ քո թշվառության կեսն էլ նրանք վերցնեն։ Մի՞թե դժբախտության բոպեին ավելի սերտ կերպով չպիտի իրար օգնենք։

Հայրը փոփկանում էր, նրան քաջ կին էր անվանում և ինքն իրեն մեղադրում, հայհոյում էր։

Տիկին Էլսբեթն աշխատում էր նրան հանգստացնել, խրնդրում էր նրան վստահություն ունենալ և քաջ լինել։

— Հա՛ քաջ լինել... քաջ լինել,— բղավում էր նա, նորից բարկանալով.— դուք, կանայքդ, գիտեք խելոք խելոք խոսել, նստում եք տանն ու խոնարհ կերպով գոգնոցներդ մեկնում, որ ձեր գոգը բախտ կամ անբախտություն ընկնի, ինչպես որ բարի երկինքը կցանկանա։ Իսկ մենք, տղամարդիկս, ստիպված ենք դուրս գալ դեպի թշնամական կյանք, մենք ստիպված ենք կռվել և ձգտել և ամեն տեսակ մարդկանց հետ գործ ունենալ։ Ա՜խ, կորեք դուք ձեր հորդորներով։ Քա՜ջ լինել, հա քա՜ջ լինել։

Ապա նա սպառնական քայլերով սենյակից դիմեց դեպի դուրս և պատվիրեց կառքը լծել յուր տովորական ճանապարհորդությունը կատարելու։

Երբ նա նորից վերադարձավ, փուքը մի փոքր նստել էր. նա ասաց.

— Այդպես, այժմ վերջին հույսն էլ ջուրն ընկավ։ Անիծված հրեան, որ կամենում էր ինձ 25 տոկոսով փող տալ, հայտնում է, որ այլևս չի ուզում ինձ հետ գործ ունենալ։ Ոչինչ, թող այդպես լինի. թքել եմ նրա վրա, շուտով ստիպված կլինենք փակական մուրացկան դառնալ, որովհետև այս անգամ արդեն իսպառ բան չի մնա։ Բայց ահա ասում եմ քեզ, այս անգամ ես չեմ կարողանա այս հարվածը տանել։ Պատիվ ունեցող մարդը իրեն պահել պետք է գիտենա։ Եվ եթե դուք մի գեղեցիկ առավոտ ինձ տան կտուրից ճոճվելիս տեսնեք, չզարմանաք։

Մայրը վախից սոսկալի բղավեց և թևերով բռնեց նրա վիզը։

— Դե, լավ, լավ,—հանգստացրեց նա մորը.—այդ աստիճան էլ վատ չէր ասածս։ Դուք կանայքդ շատ խղճալի արարածներ եք. մի հասարակ խոսքն անգամ բավական է ձեզ տեղահան անելու։

Երկչոտ քայլերով հեռացավ նրանից մայրը. բայց երբ նա արդեն դուրս էր գնացել, մայրը նստեց պատուհանի մոտ ու երկյուղը սրտին նայում էր նրա հետևից, վախենալով, թե միգուցե նա իրեն վնասի։

Ժամանակ առ ժամանակ սարսուռ էր անցնում նրա մարմնով, կարծես մրսելիս լիներ։

Նույն գիշեր քնից արթնանալով նկատեց Պաուլը, թե ինչպես մայրը վեր կացավ անկողնից, հագավ ներքնազգեստը և մոտեցավ պատուհանին, որտեղից կարելի էր տեսնել «Սպիտակ տունը»։ Պայծառ լուսնկա գիշեր էր, նա գուցե իսկապես այն կոչմն էր նայում։ Մոտ երկու ժամ նստեց նա այնտեղ, առանց ետ դառնալու՝ միշտ դեպի դուրս նայելով։ Պաուլը չէր շարժվում։ Եվ երբ նա լույսը բացվելուն պես պատուհանից հեռացավ և զավակների տեղերին մոտեցավ, Պաուլն իրեն քնած ձևացնելու համար աչքերը պինդ փակեց։ Առաջ համբու-

ռեց նա երկվորյակներին, որոնք իրար փաթաթված հանգստանում էին, ապա մոտեցավ նրան և կռանալով նրա վրա, հետևյալ խոսքերը շշնջաց. «Ասված իմ ուժ տուր ինձ, տրիշ ելք չկա»։ Պաուլը կռահեց, որ մի արտասովոր բան է պատրաստվում։

Երբ նա հետևյալ օրը դպրոցից տուն էր դառնում, տեսավ յուր մայրիկին կիրակնօրյա զգեստով— գլխարկով ու հովանոցով— սաղարթապատ հովանոցում նստած։ Նրա այտերը ավելի գունատ էին, քան երբևիցե։ Ձեռները, որ նա գոգն էր դրել, դողում էին։

Երևում էր, որ մայրը նրան էր սպասում, որովհետև հենց որ նրան տեսավ մոտենալիս, թեթևությամբ շունչ քաշեց։

— Ուզում ես որևէ տե՞ղ գնալ, հա՞, մամա,— զարմացած հարցրեց Պաուլը։

— Այո՛, զավակս,— պատասխանեց մայրը,— դու էլ պետք է ինձ հետ գաս։

— Գյո՞ւղ ենք գնալու, մամա։

— Ոչ, զավակս,— նրա ձայնը դողում էր։— Գյուղ չենք գնում. կիրակնօրյա շորերդ հագիր, թավշյա բաճկոնակդ, իհարկե, փչացել է, բայց գորշագույն խալաթի բծերը մաքրել եմ, էլի դա կարելի է մի կերպ հագնել. կոշիկներդ էլ պիտի մաքրես. բայց շուտ արա...

— Բայց ո՞ւր ենք գնալու, մամա։

Մայրը նրան յուր գիրկն առավ ու մեղմությամբ ասաց.

— Դեպի «Սպիտակ տունը»։

Պաուլն զգաց, որ սարսափ անցավ յուր մարմնով։ Նա ուզում էր ուրախությունից աղաղակել, բայց նրա ցնծությունը կոկորդում մնաց. նա թռավ մոր գիրկը և ագահորեն համբուրեց նրան։

— Բայց դու ոչ ոքի չպիտի ասես,— շշնջաց մայրը,— ոչ ոքի, հասկանո՞ւմ ես։

Տղան լրջորեն գլխով նշան արավ. նա չէ՞ որ արդեն խելոք մարդ էր. նա հասկանում էր բանի էությունը։

— Դե, ուրեմն շուտ հագնվիր։

Պաուլը վազեց սանդուղքներով դեպի հագուստների սենյակը և հանկարծ ինքն էլ չիմացավ որ աստիճանի վրա մի

երկար, զիլ հնչյուն դուրս եկավ նրա բերանից. ոչ մի կասկած այլևս, նա շվացնում էր. նա փորձեց երկրորդ, երրորդ անգամ. հիանալի կերպով հաջողվում էր։

Երբ նա կազմ ու պատրաստ վերադարձավ, ցնծությամբ կանչեց մորը.

— Մամա, ես կարող եմ սուլել,— և զարմանում էր, որ մայրն այնքան քիչ հետաքրքրություն էր ցույց տալիս դեպի նրա արվեստը։ Մայրը մի փոքր կարգի բերեց նրա օձիքն ու ասաց.

— Ինչքան բախտավոր եք երեխաներդ։— Ապա բռնեց նրա ձեռքից ու ճանապարհորդությունն սկսվեց։

Երբ նրանք մոայլ եղևնիների անտառը հասան, Պաուլը նոր էր վերջացրել մի երգ շվացնելը, և երբ նորից նրանք մի բաց դաշտ դուրս եկան, նա կարող էր ապահով ինել, որ յուր արվեստը հսկա քայլերով կատարելագործվում էր։

Մայրը նայում էր նրան յուր տխուր ժպիտով, յուրաքանչյուր սուր հնչյուն նրան սարսռեցնում էր, բայց ոչինչ չէր ասում։

«Սպիտակ տունը» բոլորովին մոտ էր այժմ. նա չէր մոռանում այլևս նոր արվեստի մասին. ամբողջովին նայվածք էր դարձել այժմ։

Սկզբում տեսան նրանք մի բարձր կարմիր աղյուսե պարիսպ՝ մի մեծ դարբասի դռնով, որի սյուների գլուխներին երկու քարե գնդեր էին դրած, ապա մի ընդարձակ, կանաչազարդ բակ, որտեղ երկար շարքով կառքեր էին կանգնած և որը չորս կողմից շրջապատված էր տնտեսատներով։ Մեջտեղում ճահճի պես մի բան կար, որը շրջապատված էր սպիտակ փշաբույսերով և որի մեջ ճվճվան բադերի մի ահագին խումբ կար։

— Բայց ո՞ւր է «Սպիտակ տունը», մամա,— հարցրեց Պաուլը, որին այդ բոլորը ամենևին դուր չեկան։

— Պարտեզի հետևում,— պատասխանեց մայրը։ Նրա ձայնը առանձնապես մի տաք հնչյուն ուներ և նա յուր ձեռքի մեջ այնպես ուժգնությամբ էր սեղմում Պաուլի ձեռքը, որ սա քիչ էր մնում, որ բղավեր։

Ապա նրանք ծռվեցին դեպի պարտեզի ցանկապատի ան-

կյունը և Պաուլի հայացքի առաջ բացվեց մի պարզ, երկհարկանի տուն, որը չորս կողմից շրջապատված էր լորիների խիտ շարքերով և որը շատ քիչ, կամ ոչինչ աչքի ընկնող բան ուներ. և նույնիսկ բնավ այնպես ապիտակ չէր, ինչպես հեռվից թվում էր։

— Ա՞յս է բոլորը,— հարցրեց Պաուլը երկարացնելով։

— Այո՛, այս է,— պատասխանեց մայրը։

— Եվ ո՞ւր են ապակյա գնդերը, ո՞ւր է արևի ժամացույցը,— հարցրեց կրկին նա և հանկարծ լաց լինել ուզեց. նա հազար անգամ ավելի լավ էր պատկերացրել այդ բոլորը։

Այդ միջոցին էր, որ նրանց վրա հարձակվեցին երկու՝ ածուխի պես սև նյուֆաունդլենդյան շներ. նա փախավ մոր շորերի տակ և սկսեց բղավել։

— Կառո՛, Նեռո,— կանչեց մանկական մի բարակ ձայն տան դռնից. և երկու աժդահաները իսկույն ետ դարձան դեպի կանչի կողմը, ուրախ-ուրախ մռմռալով։

Շուտով երևան եկավ մի փոքրիկ աղջիկ, ավելի փոքր, քան Պաուլը, կարմրավուն շապիկով, որի վրա շոտլանդական ժապավենի նման մի բան էր կապված։ Երկար, տսկու նման դեղին խոպոպներ ուներ, որոնք կիսակամարաձև մի սանրով ճակատից ետ էին պահվում. նա ուներ մի նուրբ բարակ քիթ, որ մի փոքր բարձր էր պահում։

— Երևի ցանկանում եք մամային տեսնել,— ասաց նա նուրբ բարակ ձայնով ու հետն էլ ժպտաց։

— Անունդ Էլսբե՞թ է, զավակս,— հարցրեց մայրը։

— Այո, Էլսբեթ է։

Մայրը մի շարժում արավ, կարծես ուզում էր այդ օտար երեխային գիրկն առնել, բայց զսպեց իրեն և ասաց.

— Տար մեզ քո մայրիկի մոտ։

— Մաման պարտեզումն է. նա հենց նոր տուրճ էր խրմում,— ասաց փոքրիկը առանձին կարևորությամբ։— Ես ձեզ կտանեմ տան առջևով, որովհետև եթե արևի կողմից սենյակի դուռը բաց անեք, ճանճերն իսկույն ներս կմտնեն։

Մայրը ժպտաց։ Պաուլը զարմանում էր, որ մինչև այժմ այդ մասին երբեք գլխի չէր ընկել տանը։

«Նա շատ ավելի խելացի է, քան դու»— մտածեց նա։

Այժմ նրանք պարտեզ մտան, որ շատ ավելի գեղեցիկ ու ընդարձակ էր, քան Մուսենենի պարտեզը, բայց արևի ժամացույցը ոչ մի տեղ չէր երևում։ Պաուլը նրա մասին մի անորոշ գաղափար ուներ. նա երևակայում էր, որ այդ ժամացույցը ոսկյա մի մեծ աշտարակ է, որի վրա արևի պսպղուն կլոր սկավառակը ժամացույցի ցիֆերբլատի տեղ էր ծառայում։

— Հապա ո՞ւր է արևի ժամացույցը, մամա,— հարցրեց նա։

— Քեզ շուտով ցույց կտամ,— պատասխանեց փոքրիկ աղջիկը եռանդով։

Հովանոցի տակից դուրս եկավ մի բարձրահասակ, նրբակազմ կին, դժգույն, հիվանդոտ դեմքով, որի վրա նշմարելի էր վերին աստիճանի նուրբ ժպտի փայլը։

Մայրը բարձր աղաղակեց ու հեկեկալով ընկավ նրա կրծքին։

— Փառք աստծո, որ ես ձեզ վերջապես ինձ մոտ եմ տեսնում,— ասաց օտար կինը և համբուրեց մայրիկի ճակատն ու այտերը։— Հավատացեք, այժմ ամեն բան դարձյալ կլավանա։ Ասացեք ինձ, ինչ որ ձեզ ճնշում է. և տարօրինակ կլիներ, եթե ես չկարողանայի օգնել ձեր ցավին։

Մայրիկը սրբեց աչքերը և ժպտաց։

— Օ, ոչինչ, ուրախությունից է, որ ես լաց եմ լինում,— ասաց նա։— Ձեր ներկայությամբ ես ինձ դարձյալ այնպես թեթև ու ազատ եմ զգում. ես ձեզ շատ էի կարոտել։

— Եվ դուք իսկապե՞ս չէիք կարող գալ։

Մայրը տխրությամբ թափ տվեց գլուխը։

— Խեղճ կին,— ասաց նա և երկուսով նայեցին իրար աչքի մեջ մի երկար, տպավորիչ հայացքով։

— Նա երևի իմ սանիկը կլինի,— բացականչեց կինը, ցույց տալով Պաուլին, որը մոր շորերն էր ջարդոտում և բութն էր ծծում։

— Ֆու, Պաուլ, հեռացրու մատդ բերանից դ,— ասաց մայրը. իսկ գեղեցիկ շնորհալի տիկինը նրան յուր գիրկն առավ թեյի գդալով լիքը մեղր տվեց նրան.

— Առայժմ համը տեսնելու համար,— ասաց նա և հարցրեց նրան փոքրիկ քույրերի մասին, դպրոցի և ուրիշ շատ բա-

ների մասին, որոնց պատասխանը ամենևին դժվար չէր, այնպես, որ Պաուլը նրա գրկում վերջն իրեն շատ լավ էր զգում։

— Պատմիր տեսնենք, իսկի ի՞նչ ես սովորել, դու, փոքրիկ տղամարդ,— հարցրեց նա վերջում։

— Ես կարող եմ սուլել,— ասաց նա հպարտորեն. շնորհալի տիկինը բարձրաձայն ծիծաղեց ու ասաց.

— Դեհ, սուլիր տեսնենք։

Նա սրացրեց յուր պռոշները և փորձեց շվացնել, բայց նրան չհաջողվեց. նա մոռացել էր կրկին։

Բոլորը ծիծաղեցին. գեղեցիկ տիկինը, փոքրիկ աղջիկը և նույնիսկ մայրը. նա ամոթից լացակալվեց, ուժգնությամբ ձեռքերն ու ոտքերը շարժեց, այնպես, որ տիկինը նրան մեղմությամբ գրկից բաց թողեց. իսկ մայրը կշտամբելով ասաց նրան.

— Ինչ անկիրթն ես, Պաուլ։

Իսկ նա անցավ սաղարթների հետևն ու լաց եղավ, մինչև որ փոքրիկ աղջիկը նրան մոտեցավ ու ասաց. «Ա՞խ, դա լավ չի, դու լաց ես լինում. բարի աստվածը չար ուղայք չի սիրում»։ Նա էլի ամաչեց և ձեռքերով չորացրեց աչքերը։

— Այժմ արի քեզ ցույց տամ արևի ժամացույցը,— շարունակեց փոքրիկը։

— Ախ, հա, ապակյա գունդերն էլ,— ասաց նա։

— Նրանք վաղուց կոտրվել են,— ասաց աղջիկը,— անցած գարնանը մեկին քար դիպավ, իսկ մյուսն էլ քամին թոցրեց։— Ապա նա ցույց տվեց այն տեղերը, որտեղ դրված էին գնդերը։

— Այս էլ արևի ժամացույցն է,— շարունակեց նա։

— Ո՞ւր է,— հարցրեց սա ապշած չորս կողմը նայելով։ Նրանք կանգնած էին մի գորշագույն անփայլ ձողի առաջ, որին փայտյա տախտակի նման մի բան էր կպցրած։ Երեխան ծիծաղում ու ասում էր, թե հենց դա է։

— Ախ, թյո՛ւ,— բարկացած ասաց Պաուլը,— դու ինձ ձեռ ես առել։

— Ինչո՞ւ պիտի քեզ ձեռ առնեմ,— հարցրեց աղջիկը,— դու ինձ հո ոչինչ չես արել։— Եվ ապա մի անգամ էլ կրկնեց, թե արևի ժամացույցը հենց դա է, որ կա։ Նա ցույց տվեց նույնիսկ ստվերացույցը, որ ժանգոտած թիթեղի կտոր էր, որ

ցցված էր տախտակի միջում և յուր ստվերը ձգել էր ուղիղ վեցի վրա։

— Ախ, դա շատ հիմար բան է,— ասաց նա ու դարձավ։

«Սպիտակ տան» պարտեզի արևի ժամացույցը նրա կյանքի առաջին մեծ հուսախաբությունն էր...

Երբ նա իր նոր ընկերուհու հետ նորից սաղարթանոցը վերադարձավ, տեսավ այնտեղ մի մեծ ու թիկնավետ մարդու, մորուքի ներկու մեծ սուր ծայրերով, նա հագել էր մի մուգ կանաչավուն որսորդական պիջակ. աչքերից կարծես կայծեր էին ելնում։

— Դա ո՞վ է,— հարցրեց վախվխելով Պաուլը, ծածկվելով յուր ընկերուհու հետևում։

Սա ծիծաղելով բացատրեց.

— Դա իմ պապան է. բայց գիտես, նրանից չվախենաս։

Եվ նա բարձր քրքիջով թռավ դեպի հոր գիրկը։

Պաուլը մտածում էր, թե ինքն էլ արդյոք կարո՞ղ էր երբեվիցե համարձակվել հոր գիրկը թռչել ու դրանից եղրակացրեց, որ բոլոր հայրերը միատեսակ չեն։ Որսորդական հագուստով մարդը շոյում էր յուր երեխային, համբուրեց նրա ներկու թշերը և թույլ տվեց, որ նա հոր ծնկներին ելնի։

— Լսիր, էլսբեթը մի խաղակից է գտել,— ասաց օտար բարեհամբույր կինը և ցույց տվեց Պաուլին, որը սաղարթների հետևում թաքնված, վախկոտությամբ նեռս էր նայում։

— Միշտ առա՞ջ, տղաս,— ուրախ կերպով կանչեց մարդը և մատները խաղացրեց։

— Արի, մյուսի վրա էլ քեզ համար տեղ կա,— կանչեց երեխան, և երբ Պաուլը մորն ուղղած հարցական հայացքով վախկոտությամբ մոտ էր սահում, օտար մարդը բռնեց նրան, դրեց յուր մյուս ծնկին։ Ու նոր տխվեց մի հանդուգն մրցություն ձի քշելու մեջ։

Նա արդեն մոռացել էր վախն ու երկյուղը. երբ նոր եփած ձվածեղը բերին սեղանի վրա դրին, համարձակ ինքնպով վրա ընկավ։

Մայրը շոյում էր նրա մազերը և հորդորում շատ չուտել, որ ստամոքսը չփչանա։ Մայրը շատ մեղմ էր խոսում և միշտ

գետնին էր նայում, գլուխը կախ։ Ապա երկու երեխաներն իրավունք առան թփաստանը գնալու և հաղարջ քաղելու։

— Իսկապես Էլսբե՞թ է անունդ,— հարցրեց նա յուր ընկերուհուն. և երբ սա դրական պատասխան տվեց, նա զարմանք հայտնեց, որ նրա անունն էլ նույնն է, ինչ որ յուր մայրիկինը։

—Ես հո նրանից հետո եմ կնքված,— ասաց աղջիկը,— ախր նա իմ կնքամայրն է։

— Հապա ինչո՞ւ քեզ չհամբուրեց,— հարցրեց Պաուլը։

— Չգիտեմ,— ասաց Էլսբեթը տխրությամբ.— կարելի է ինձ չի սիրում։

Բայց որ մայրը սիրտ չէր արել, այդ մասին ոչ ոք ոչինչ չէր մտածում նրանցից։

Սկսել էր մթնել արդեն, երբ երեխաներին կանչեցին։

— Տուն պիտի գնանք,— ասաց մայրը։

Նա շատ տխրեց, որովհետև հենց նոր էր նա սկսել իրեն լավ զգալ։

Մայրը կարգի բերեց նրա օձիքն ու ասաց. «այժմ համբուրիր ձեռքն ու շնորհակալություն հայտնիր»։

Նա վարվեց պատվերի համաձայն. շնորհալի տիկինը համբուրեց նրա ճակատը, տղամարդը բարձրացրեց նրան վերև. այնպես որ նրան թվաց, թե նա կարող է թռչել։

Այժմ մայրիկը վերցրեց Էլսբեթի ձեռքից, մի քանի անգամ համբուրեց նրա բերանն ու թշերը և ասաց. «թող աստված մի օր հատուցանե այն բոլորի փոխարեն, ինչ որ քո ծնողներն են քո կնքամոր համար»։

Նրան թվաց, թե մի ծանր բեռ վայր ընկավ սրտից. նա ավելի ազատ շունչ քաշեց և նրա աչքերը փայլում էին։

Էլսբեթն ու նրա ծնողները ճանապարհ դրին նրանց մինչև դարբասի դուռը. երբ մայրիկը մի անգամ էլ հրաժեշտ տվեց ու ամեն տեսակ երկնային օրհնության և հատուցման մասին թոթովեց, տղամարդը ծիծաղելով կտրեց նրա խոսքը և ասաց, որ դրա համար չարժե խոսել, ոչ էլ շնորհակալություն հայտնել։

Շնորհալի տիկինը մեկ էլ համբուրեց նրան և խնդրեց ըստ

կարելուն շուտ-շուտ գալ կամ գոնե երեխաներին ուղարկել։

Մայրը թախծալի կերպով ժպտաց ու լռեց։

Էլսբեթն իրավունք ստացավ մի քանի քայլ էլ ուղեկցել, ապա քաղաքավարությամբ հրաժեշտ տվեց ու հեռացավ։

Պաուլի սիրտը տխրեց. նա զգում էր, որ նրան էլի մի բան ունի ասելու, ուստի վազեց նրա հետևից, հասավ նրան ու փսփսաց ականջին.

— Լսիր, էհ, բայց և այնպես ես էլի կարող եմ սուլել։

Երբ մայր ու որդի անտառին հասան, գիշերը վրա հասավ։ Սարսափելի սևը պատել էր շորս կողմը. բայց Պաուլը ամենևին չէր վախենում։ Եթե այժմ մի գայլ գար նրանց ճանապարհին, նա ցույց կտար նրան։

Մայրը ոչինչ չէր խոսում, նրա այն ձեռքը, որով Պաուլի ձեռքից էր բռնել, կարծես վառվում էր. նրա շունչն այնպես բարձր էր դուրս գալիս կրծքից, կարծես հառաչանք լիներ։

Երբ նրանք երկուսով դարձյալ դաշտ դուրս եկան, լուսինը գունատ ու մեծ՝ բարձրացավ հորիզոնի վրա։ Կապտավուն մի քող պատել էր հեռուն։ Խնկալի անուշահոտությունը լցվել էր շորս կողմը։ Տեղ-տեղ ճռռողում էին թռչունները։

Մայրը նստեց փոսի բերանին ու տխրությամբ նայում էր իրենց տանը, որ նրա բոլոր հոգսերի պատճառն էր։ Շինությունների ուրվագծերը մռայլ կերպով երևում էին գիշերվա մթության մեջ։ Խոհանոցից փայլում էր միայնակ մի լույս։

Հանկարծ նա տարածեց յուր ձեռքերը և բացականչեց խաղաղ ու հանգիստ դաշտում. «Ա՜խ, ինչքան բախտավոր եմ ես»։

Պաուլը վախկոտ կերպով ավելի սեղմվեց մորը, որովհետև նա երբեք չէր լսել, որ մայրն այդպես բացականչեր։ Նա այնպես սովորել էր նրա արտաստքներին ու վշտին, որ այժմ նրա այս ուրախությունը տարօրինակ էր թվում նրան։

Եվ հետո նա մտածեց. ինչ կասեր հայրը, եթե այս այցելության մասին լսեր. նա չէ՞ր բարկանա մոր վրա, չէ՞ր շարանա առաջվանից ավելի։ Մի խուլ վճռականություն եկավ նրա վրա. կրճատացրեց ատամները ու փայփայեց մոր ձեռքը, համբուրեց նրան ու մրմնջաց.

— Նա ոչ մի իրավունք չունի քեզ բան ասելու։

— Ո՞վ,— հարցրեց մայրը։

— Հայրիկը,— ասաց նա կամացուկ և վարանած։

Խոր ախ քաշեց նա. բայց բան չասաց և լուռ ու վշտալի առաջ գնացին երկուսով։

Սպիտակահեր կինը նրա ճանապարհին երևալել էր և ուրախության ոտքին փչացրել։ Եվ այդ ոտքն միակն էր, որ բախտը ընծայում էր տիկին Էլսբեթին...

Հետևյալ օրը նրա և մարդու մեջ մի անախորժ տեսարան տեղի ունեցավ։ Մարդը բարկացավ կնոջ վրա, անվանեց նրան պատիվն ու պարտքը մոռացող։ Յուր այդ մուրացկանությամբ նա իրենց աղքատությանը իբր թե խայտառակություն էր ավելացնում։

Բայց փողը վերցրեց։

5

Տարիներն անցնում էին։

Պաուլը մեծանում էր ու հետզհետե պատանի դառնում, առանց պահանջների, առանց հավակնությունների, ծանրաբարո շարժումներով։

Նա մեծ մասամբ մենակ էր ինքն իրեն. և նույնիսկ այն ժամանակները, երբ նա հոգ էր տանում երկվորյակների վրա, ժամերով կարողանում էր նստած մնալ մի տեղում, փայտյա քանդակներով պարապած, առանց ծպտուն հանելու։ Մի խաղաղ հոգի էր նա՝ հակված դեպի փոքր բաները, լերին աստիճանի հոգատար, լուռ, ինքն իրեն մտածող։

Նա յուր հասակակիցներից ոչ մեկի հետ հարաբերություն չուներ, ոչ էլ դպրոցում։ Ոչ թե նրա համար, որ նա դիտավորյալ կերպով խուսափ էր տալիս նրանցից, ընդհակառակը, նրանց օգնում էր նա շատ սիրով. նրանցից մի քանիսը նույնիսկ առավոտները աղոթքից առաջ լավ արտադրում էին նրա թվաբանությունը կամ գերմաներեն շարադրությունը. բայց նրանք բոլորովին այլ շահեր ունեին. այդ էր պատճառը, որ նա չէր կարող նրանց հետ ընկեր դառնալ։

Լավ էլ ծեծ էր ուտում նա։ Մանավանդ Էրդման Արկու եղ-

բայրներից, որոնք շատ հանդուգն ու համարձակ, վայրի աչքերով պատանիներ էին։ Նրանք դպրոցում ամենից ուժեղներն ու սրտոտներն էին, դրա համար էլ սիրված։ Պաուլը շատ էր տանջվում նրանց ձեռքից։ Անդադրում էին նրանք չարությունները նյութելու մեջ, տրոնք և նրա կյանքը դառնացնում էին։ Նրա տետրակները նետում էին վառարանը, ավազ էին լցնում նրա պայուսակը կամ հագցնում էին մի փայտի վրա ու ամրացնում թելով ու ջուրը ձգում, որը լաստի նման լողում էր։ Այդ չարությունները մեծ մասամբ նա տանում էր համբերությամբ, միայն մի թե երկու անգամ զայրույթից սարսափելի կատաղեց։ Նա իրեն կծոտում ու չանգռում էր խելագարի պես, այնպես, որ նրա ուժեղ դասընկերներն անգամ խոհեմություն համարեցին հեռանալ։ Առաջին անգամ նրա բարկանալու պատճառն այն էր, որ նրանք նրա հորն «հարբեցող» էին անվանել, իսկ երկրորդ անգամ մի փոքրիկ աղջկա հետ նրան ուզում էին փակել մի մութ ախոռի մեջ։

Բայց կատաղությունից հետո ինքն իրեն ամաչել էր ու եկել ներողություն խնդրել ընկերներից, իսկ սրանք էլ հիմա ավելի լավ ծիծաղեցին նրա վրա և այն հարգանքը, որ նա ձեռք բերելու վրա էր արդեն, բոլորովին կորավ գնաց։

Նրա ուսումը շատ դժվարությամբ էր առաջ գնում. այն, որ նրա ընկերները 15 դասերումն էին անում, մի կամ երկու ժամվա ընթացքում հազիվ էր կարողանում նա պլուխ բերել։ Բայց նրա ձեռագիրը շատ տիրուն էր և նրա թվաբանության տետրակում երբեք չէր կարելի սխալ գտնել։

Բայց և այնպես նա շարունակ աշխատում էր։ Շատ անգամ գիշերը տեղից վեր էր կենում ոտանավորը մի անգամ էլ կրկնելու, որովհետև վախենում էր, թե միգուցե արդեն բերանացի սովորածը փախչի նրա հիշողությունից։

Իհարկե ավելորդ էր այն մասին մտածել, թե նա էլ յուր եղբայրների պես միջնակարգ դպրոց կհաճախի։ Մայրն իսկապես մի ժամանակ հույս էր տածում նրան միևնույն ճանապարհով ուղարկել տալ, հենց որ նրանք հասարակության քննությունը տան, որովհետև սիրտը ցավում էր, որ սա նրանցից ետ է մնալու։ Բայց ինչ արած, նա էլ համակերպվեց։ Հենց լավն էլ այդ էր։ Ինքը Պաուլը ուրիշ կերպ չէր էլ սպասել եր-

բեք։ Նա իրեն համարում էր եղբայրների դիմաց մի բոլորովին երկրորդական արարած և վաղուց դադարել էր իրեն նրանց հետ համեմատել։ Երբ նրանք արձակուրդներին տուն եկան թավշյա գլխարկները խուճուճ մազերին, գունդգունդ ժապավենները թեք կրծքերին ձգած, որովհետև նրանք պատկանում էին դպրոցական արգելված ընկերություններին— Պաուլը նրանց վրա նայում էր, կարծես նրանք ուրիշ աշխարհից լինեին։ Ագահությամբ ականջ էր դնում նա, երբ նրանք իրար մեջ խոսում էին Սալլուստի կամ Կիկերոնի և կամ Էսքիլեսի դրամաների մասին. և խոսում էին դրա մասին մեծ սիրով, նրան ցույց տալու և նրա վրա տպավորություն թողնելու համար։ Բայց նրա ամենամեծ հիացմունքի առարկան մի հաստ գիրք էր, որի կողքին գրված էր «Լոգարիթմների աղյուսակ» և որ առաջին երեսից մինչև վերջինը լի էր թվերով։ Երկար, խիտ շարքերով թվեր, որոնց միայն տեսքը նրա գլուխն էր պտտեցնում։ Ինչքան ուսումնական պիտի լինի մարդ, որ այդ բոլորն անգիր գիտենա— ասում էր նա ինքն իրեն, շոյելով գրքի ծածկոցը, որովհետև նա կարծում էր, թե անպատճառ պետք է թվերն անգիր անել։

Եղբայրներն ընդհանրապես շատ սիրալիր և բարձրահոն էին նրա նկատմամբ, եթե նրանք տնտեսության մեջ որևէ ցանկություն ունենային, օրինակ թամբած մի ձի կամ մի բաժակ առանձնապես թունդ գրոգ, վստահությամբ դիմում էին նրան և նա իրեն շատ բախտավոր էր զգում նրանց որևէ օգնություն ցույց տալու իրավունք ունենալու համար։

Տնտեսության մեջ նա շատ տեղյակ էր, կարծես տանտերն ինքը լիներ. նրա բոլոր ձգտումներն ու երկյուղները տնտեսության հետ էին կապված։

Ի՞նչն էր պատճառը, որ նա այդպես վաղաժամ հասունացել էր։ Թերևս նրա մոր անօգնականությունը, չէ՞ որ մայրը շատ վաղ էր սկսել նրան մասնակից անել ու հաղորդել յուր բոլոր վշտերը։ Կամ թե գուցե խորհող, ձգտող, ապագային նայող հոգին, որ նրան հատուկ էր։

Շատ անգամ, երբ նա մտախոհ նստած էր լինում արմունկները սեղանին հենած— յուր շարժումների մեջ էլ նա հասակավորի տպավորություն էր թողնում— մայրը իր կոշ-

տացած, աշխատանքի սովոր ձեռքով շոյում էր նրա ճակատն ու այտերը ու ասում. «Մի փոքր բացվիր, սիրելիս. ուրախ կաց, որ ոչ մի հոգս չունես»։

Օ՜, նա շատ հոգս ուներ։ Հոգսերը նրանն էին, ինչպես նրա միսն ու արյունը։ Արդյոք հավը, որ այսօր չի երևում, վաղը գտնվելո՞ւ է, արդյոք ձիու փորկապի յուղը պիտանի՞ է, որ հայրը քաղաքից բերել էր, արդյոք խոտը բավարար չափով չորացե՞լ էր նախքան շուտ տալը։

Այս բոլոր բանների մասին նա մտածում էր, հոգ էր տանում, հոգսը նրան բնածին էր. միայն յուր համար չէր մտածում ամենևին։

Քանի նա մեծանում էր և խելահաս էր դառնում, այնքան ավելի խոր կերպով տեսնում էր հոր վատ տնտեսությունը և նորից լսվում էին նրա կրծքից դուրս եկած հառաչները. «Ա՜խ, ե՞րբ պիտի շուտով մեծանամ»։ Իհարկե նա յուր կասկածները չէր կարող բարձր արտահայտել, որովհետև վախենում էր հոր քարկուության բռնկումներից և եթե երբևէ համարձակվում էր դրանց մասին մորը հայտնել, մայրը վախեցած աչքերով նայում էր սենյակում չորս կողմն ու ճմլված ոտտով ասում. «սո՜ւս կաց»։

Բայց և այնպես հայրը նկատում էր որդու մաքերը. նա անվանում էր սրան «կոտրած գդալ» և ծաղրում էր այդ խոսքով, հենց որ նրան տեսներ։ Թե յուր վատ և թե լավ ժամերին ծեծում էր նրան՝ փայտով, մտրակով, կաշվով, ինչ որ ընկներ ձեռքը։ Բայց ամենից շատ վախենում էր Պաուլը նրա հենց ձեռքերից, որի հարվածներն ավելի էին ցավ տալիս, քան աշխարհի բոլոր փայտերը։ Հայրը մի տարօրինակ եղանակ ուներ ապտակ տալու։ Նա փայտով էր տալիս նրա երեսին, միևնույն ժամանակ ձեռքով չանգռոտում, այնպես, որ արյան հետքեր էին երևան գալիս տղի երեսին։ Այդ եղանակը նա անվանում էր «Ոուշ մխիթարող» և երբ նա մտադրություն ունենար Պաուլին ջարդելու, ամենասիրալիր կերպով կանչում էր նրան. «Արի այստեղ, զավակս, քեզ մի փոքր մխիթարեմ»։

Ծեծն ուտելուց հետո, ամոթից ու ցավից դողալով, նա դուրս էր գնում դաշտ. և արտասուքները կուլ տալու համար

զանազան ծամածռություններ էր անում, բռունցքով թմբուկ էր ածում և հետն էլ սուլում էր։

Նա սուլելով էր իմաց տալիս ինչպես յուր բոլոր տենչանքները, յուր մանկական երազանքը, նույնպես էլ յուր բարկությունն ու զայրույթը։ Այն զգացմունքները, որոնց համար նրա անճարպիկ հոգին արտահայտություն չէր գտնում, որոնց համար նա ոչ խոսք, ոչ էլ նույնիսկ գաղափարներ էր գտնում, յուր մենակության մեջ նա համարձակ ու խիզախ հոսեցնում էր յուր անապատ սուլոցի մեջ։ Այդպիսով, նրա ճնշված երկչոտ հոգին մի փոքր թեթևանում էր։ Ամբողջ համերգներ էր ներկայացնում, սկզբում աղաղակող ու.սուր, ապա հետզհետե մեղմ ու կամացուկ, վերջում արդեն ամբողջապես թախիծ ու վիշտ։

Ոչ ոք չէր հասկանում, թե նա մենակության մեջ ինչ արվեստ է զարդացնում, ինչքան թեթևություն ու մխիթարություն է գտնում դրա մեջ, նույնիսկ մայրն էլ չէ։ Այն օրից, երբ նա մի ձմեռային երեկո առանց մորը նկատելու իր համար մեղմ սուլում էր ու երբ հանկարծ մորը տեսավ արտասվելիս, այն օրվանից նա դադարեց նրա ներկայությամբ սուլել։ Նա կարծում էր, թե նրան վշտացնում է այդ, թե ինչ զորություն էր դրված այդ հնչյունների մեջ, նա այդ չէր գիտակցում։

Միայն երբեմն նա հպարտանում էր, երբ «Սպիտակ տան» կողմն էր նայում, հպարտ էր, որ համենայն դեպս էլի ստվորել էր սուլելը և երբ նրան տրևէ մի երևակայություն առանձնապես հաջող էր թվում, ինքն իրեն մտածում էր. «ո՞վ գիտի, արդյոք ինձ չե՞ք ծաղրի, եթե ինձ լսեք»։

Բայց նրանցից ոչ մեկին չպատահեց նա այլևս։

6

Մի քանի ժամանակներից ի վեր պարոն Մայհյոֆերը մեծ ծրագրերով էր զբաղված։ Նա գտել էր, որ իրենց ագարակն ամեն կողմից շրջապատող ճահիճը, որ լի էր տորֆով, կարող է իրենց մեծ օգուտ տալ։ Արդեն երկու-երեք անգամ, երբ դանակը տակորին էր հանել, ծայրահեղ կարիքից սոխալված նա

պատվիրել էր տորֆ կտրել և հինգ միաձի կառքերով քաղաք էր ուղարկել ծախելու։ Բայց բոլորովին ծածուկ էր արել նա այդ, որովհետև նրա հպարտությունը չէր տանի, որ նրան մի սովորական «տորֆգյուղացի» անվանեին։ Նրա ծառաները յուրաքանչյուր անգամ 20—25 մարդ գուտ օգուտ էին տուն բերել և պատմել էին, որ դեռ ավելի շատ կարելի էր վաստակել, որովհետև սև պինդ տորֆը հրապարակում շատ ցանկալի առարկաներից է։

Բայց Մայհյոֆերն այն մարդը չէր, որ ճահիճն այդ եղանակով շահագործել ցանկանար։ «Փոքրիկ բանկրով զբաղվելն իմ գործը չէ»,— ասում էր նա. «ավելի շատ կուզեմ մեծ բանների մեջ կորցնեմ, քան փոքրերի մեջ վաստակեմ»,— ու այդ ասելիս հերոսի նման կրծքին էր նայում։

Բայց ճահիճը նրան հանգիստ չէր տալիս։ Սեպտեմբեր ամիսն էր, հազվագյուտ հաջող մի հունձքից հետո, երբ Լեոբ Լևին՝ պարտապան կալվածատերերի մշտական բարեկամը շաբաթական երկու-երեք անգամ ագարակ էր գալիս և նրա հետ երկար խոսակցում էր։ Տիկին էլսբեթը երկյուղից դողում էր, հենց որ հրեան յուր յուղոտ կափտանով դարբասի դռնով ներս էր մտնում, նա նստում էր պատուհանի առաջ և անընդհատ հետևում էր խոսողների բոլոր շարժումներին։ Երբ նա նկատում էր, որ յուր մարդը մտախոհ դեմք էր ստանում, մեջքը ծածկվում էր սառը քրտինքով ու երբ նա ժպտար կամ ծիծաղեր, ինքն էլ մի փոքր թեթևացած շունչ էր քաշում։

Նա բարի բան չէր կռահում դրանից, բայց չէր էլ վստահում յուր ամուսնուն հարցուփորձ անել այդ գործերի մասին, որ նա այդ կաշի քերթողի հետ բռնել էր։

Բայց նա շուտով իմանալու էր։ Մի օր կեսօրից հետո Պաուլը նկատեց, որ հեռվից քաղաքի ճանապարհով մի տարօրինակ ածգահա բան գլորվելով դեպի իրենց է շարժվում, որը կարծես թե անիվների վրա դրված մի հսկայական սև լվացքի կաթսա լինի։ Ծխնելուզի նման մի բան նրա միջից վեր էր բարձրանում և քաղաքավարությամբ ողջունող մարդու պես աջ ու ձախ էր թեքվում, երբ անիվներն ընկնում էին խորդ ու բորդ տեղ։

Երկար նայում էր նա ապշած այդ հրաշքին, ապա վազեց մոր մոտ, քաշեց նրան դեպի դուռը ու ցույց տվեց։

Մայրը ձեռքն աչքին դրած նայեց հեռուն։

— Դա մի լոքոմոբիլ է,— ասաց նա վերջապես։

Պաուլը բան չհասկացավ.

— Լոքոմոբիլն ի՞նչ է,— հարցրեց նա։

— Լոքոմոբիլը շոգեշարժ մի մեքենա է, որ կարող է ամեն կողմ տարվել և, որ համարյա բոլոր մեծ կալվածատերերի մոտ կա, որոնք գործ են ածում իրենց կալսելու մեքենաները բանեցնելու համար։ Կարելի է դրանով տափանել ու հերկել, որովհետև դա տասը ձիու ուժից ավելի ունի։

— Հապա ինչո՞ւ ձիով է քաշվում, որ այդքան ուժեղ է,— հարցրեց Պաուլը։

— Որովհետև ինքն իրեն ոչ մի կողմ չի կարող շարժվել,— եղավ պատասխանը։

Պաուլը չհասկացավ դա. «համենայն դեպս,— մտածեց նա,— մեծ բախտավորություն պիտի լինի այդպիսի մի բան ունենալ, այդպիսի օտարոտի անունով։ Եվ երբ մենք էլ մի օր հարստանանք...»։

Այդ րոպեին դուրս թռավ տանից հայրը սաստիկ հուզված. նրա մի ոտին հողաթափ էր, մյուսին՝ կոշիկ. փողկապն էլ մեջքով էր կախ ընկել։

«Գալի՞ս են, գալի՞ս են,— բացականչեց նա ձեռքերն իրար խփելով, ապա բռնեց մայրիկին ու դուրսը փողոցի մեջտեղում սկսեց պար գալ։

Մայրը նայեց նրան մեծ, երկյուղոտ աչքերով, կարծես թե հարցնել ուզենար. «էլի ի՞նչ հիմարություն ես սկսել»— բայց նա չէր ուզում արան բաց թողնել. և միայն այն ժամանակ, երբ երկվորյակներն հևալով դուրս թռան պարտեզից իրենց վարդագույն շորերով ու մազերի հյուսքերով, մոտեցավ նրանց, առավ յուր գիրկը, յուր ուսերի վրա պար ածեց նրանց և ուզեց նույնիսկ փոսից այն կոմը նետել նրանց, եթե մայրը նրա գիժ արարմունքներին յուր աղաչական խնդրանքներով վերջ չդներ։

— Վերջապես,— բացականչեց նա,— այժմ կարող եք ցնծալ և պար գալ. մեր բոլոր նեղություններն այժմ վերջ կունենան. եկող գարունը ոսկին տոպրակներով կչափենք։

Մայրը նայեց նրան ծուռ կերպով, բայց բան չասաց։

Անճոռնի առարկան մոտենում էր ու մոտենում։ Պաուլն անշարժ կանգնել էր, ամբողջապես նայվածք դարձած։ Հանկարծ նա մայրիկին նայեց, որը հոգատար դեմքով կանգնած էր նրա մոտ ու մի անբացատրելի վախ պատեց նրան, կարծես շար սատանան էր, որ նրանց տունն էր մտնելու այժմ. բայց իսկույն հիշեց, որ յուր առաջվա ցանկությունն է, որ այժմ կատարելու վրա է ու որոշեց վստահությամբ դիմավորել սև հյուրին։

Ծառաներն ու աղախիններն էլ էին արդեն դուրս եկել ախոռից և խոհանոցից։ Ագարակի ամբողջ բնակչությունը վազուց կանգնել էր ցանկապատի առաջ շարքով և զարմանքով նայում էր մոտեցող հրաշքին։

— Բայց մի ասա, դրանով ի՞նչ ես անելու,— հարցրեց վերջապես տիկին Էլսբեթը յուր ամուսնուն։

Սա չափեց նրան մի կարեկցող հայացքով, ապա կարճ կերպով ծիծաղեց ու բացականչեց.

— Ման գալու պիտի գնամ։

Տիկին Էլսբեթը էլ բան չհարցրեց։ Նրա մարդը դառնալով ավագ ծառային բացատրել սկսեց յուր ծրագիրը. նա պետք է այժմ մեծ ծավալով սկսի տորֆ կտրել, ճանապարհին են նաև մի կտրող և մի ճնշող մեքենա, վաղն արդեն կարելի է աշխատանքն սկսել։ Ապա նա պատվիրեց նրան գյուղ գնալ և հարկավոր եղած աշխատավոր ձեռքեր գտնել։ Սկզբում տասը մարդը բավական կլինի. բայց նա հույս ունի շուտով դրանց թիվը քանի, նույնիսկ երեսունի հասցնել։

Տիկին Էլսբեթը համր կերպով թափ տվեց գլուխն ու տուն գնաց։ Հենց այն ժամանակ, երբ լոքոմոբիլը դարբասի դռան մոտեցավ. Պաուլը չէր կշտանում նայելուց ու զարմանալուց։ Այդ դեղին պտուտակների և մեխերի հետևում ով է իմանում գաղտնիքների ինչ աշխարհ էր թաքնված, մեքենան տաքացնելու ամբողջ եղանակը կրակարանով ու դրա տակի մոխրակալով, այն բոցակեզ հնոցի մուտքը, որի մեջ երեք մանուկներն երբեմն իրենց օրհնաբանությունն էին արել. հապա ծրխնելո՞ւյզը, որ սպառնագին կերպով էր վեր բարձրանում յուր մրոտ երեսով ու անդնդախոր բերանով...

Պատուն ուշադրություն չէր դարձնում փոքրիկ կողովակառքի վրա, որ ածդահայի հետևից գլորվելով գալիս էր, և որի մեջ նստած էր Լեոբ Լևին յուր կարմրագույն թավ մորուքով և ուրախ շարժուն աչքերով, նա ուշադրություն չէր դարձնում, թե ինչպես լղավում, ճղավում էին քշողները և թե ինչպես երկու փոքրիկ քույրերը կախարդվածների նման անիվների շուրջը պար էին գալիս։ Զարմանքից ապշած կանգնել էր նա այնտեղ և կարծես դեռ էլի չէր հասկանում, ինչ որ յուր շուրջը կատարվում էր։

Երբ նա հետո մոր սենյակը մտավ, տեսավ, որ մայրը քաշված դիվանի մի անկյունում լաց էր լինում։

Նա ձեռքը ձգեց նրա վզովն ու քնքշությամբ սկսեց շոյել նրան, բայց մայրը մեղմությամբ դեն վանեց նրան ու ասաց.

— Գնա տես փոքրիկներն անիվների տակ չընկնեն։

— Բայց ինչո՞ւ ես լաց լինում, մամա։

— Շուտով կտեսնես, զավակս,— ասաց նա նրա մազերը շոյելով,— Լեոբ Լևին էլ է եկել, դու կտեսնես շուտով։

Այդ լսելով, նա բոլորովին բարկացավ յուր մոր վրա. երբ բոլորը ուրախանում էին, ինչո՞ւ պիտի նա մի անկյունում նստեր ու լար։ Բայց նրա ուրախությունն էլ գնաց և երբ նա դուրս գալով տեսավ Լեոբ Լևին երկար ու սև բարձր հողաթափերով, որ բակում աջ ու ձախ էր անում և ձեռքերով, ոտքերով շարունակ շարժումներ անում, նրան թվաց թե այդ բոպեին ավելի շուտ կուզենար Կատոյին մի նշան տալ՝ բռնելու հրեայի ոտներից։

Երկվորյակներն ուրախությունից կորցրել էին իրենց խելքը։ Մի պարան առած թռչկոտում էին նրանք պարտեզում աջ ու ձախ։ Նրանցից մեկը լոկոմոբիլն էր, մյուսը՝ ձին, բայց երկուսն էլ ուզում էին լոկոմոբիլ լինել, որովհետև այդ դեպքում կատանային հայրիկի սև գլխարկը իբրև ծխնելույզ։

Քնելուց առաջ նրանք նույնիսկ մի նոր անունով կնքեցին այդ հրեշին։

Նրանք պնդում էին, որ դա շատ նման է այն երկարավիզ հատ աղախնին, որ յուր անմաքրության համար կարճ ժամանակ առաջ արձակվել էր և նրա անունով սրան կնքել են «սև Զուզե»։

Մայհյոֆերների տան մեջ այդ անունն ընդհանուր և մշտական դարձավ լոկոմոբիլի համար։

Հետևյալ առավոտ աղմուկն ու աղաղակը նորից սկսվեց։ Վարձված տասը բանվորներն արդեն բակումն էին և չէին իմանում ինչ պիտի անեին։ Մայհյոֆերը ցանկանում էր մեքենան տաքացնել տալ, բայց Լեոբ Լևին, որ այդ գիշերը հարդանոցումն էր անցկացրել, որպեսզի առավոտ կանուխ փոկույն գործի կանգնի, հայտնեց, որ ցանկանում է նախ մեքենայի գինն ստանալ, ինչպես որ պայմանագիրն է որամադրում, որովհետև հացահատիկը ճաշին արդեն քաղաքում հանձնված պիտի լինի։

«Ի՞նչ հացահատիկ»,— հարցրեց մայրը գունաթափվելով։

Այո, էլ ծածկել չէր լինի։ Մայհյոֆերը յուր բոլոր հունձքը, թե կալսածը և թե դեռ չկալսածը ծախել էր հրեային այդ ջարդոտած մեքենայի համար։ Գեղեցիկ տոպած հակերով հեռացավ հրեան հաղթանակը տարած։ Եվ դա վճարի մի մասն էր։ Մննդյան տոներին գալու էր նա մնացածը տանելու։

Մի քանի քիչ մնաց թեթևամիտ Մայհյոֆերն էլ արիությունը կորցներ, երբ անտառի հետևում լիքը բարձված սայլերն անհայտանալիս տեսավ, բայց շուտով համառարար ձեռքերը անդրավարտիքի գրպանները կոխեց, պատվիրեց ծառաներին մեքենան անհապաղ պատրաստել։

Մեքենայի հետ միաժամանակ մի մարդ երևաց բակում կապույտ բլուզով և կարմիր քթով, որ փրեն «վառարան վառող» էր անվանում և նրանով էր աչքի ընկնում, որ շարունակ սոխ էր ուտում։ Ստամոքսի համար լավ է,— ասում էր նա։ Այդ մարդը օրվա հերոսն էր։ Նա կանգնում էր ոտքերը լայն պարզած մեքենայի կողքին, յուր հոգեզավակն էր անվանում դրան և յուր սևացած, ոսկրոտ ձեռքերով շոյում էր մեքենայի ժանգոտ երկաթապատերը։ Ու դրանից այնպես ձայն էր դուրս գալիս, կարծես երկու երկաթներ իրար էին քսվում։ Բոլորին, ով մոտենում էր, ահագին քանակությամբ օտար բառեր գործածելով, նա բացատրում էր «ռուքմանքիլի» կազմը, ինչպես որ նա յուր հոգեզավակին անվանում էր. լսողները, սակայն, պետք է նրան խմելու փող տային, եթե ոչ հայհոյում էր նրանց։ Իսկ եթե գինի ստանար նրանցից, ինչպես որ ինքը ցան-

կանում էր, հուզվում էր ու հավատացնում, որ ավելի շուտ յուր ձեռքերն ու տոքերը կտրել կտա, քան թե երբևիցե յուր հոգեզավակից կբաժանվի։ Նա սիրել է նրան յուր սեփական մոր և արյունի պես և նրան հաղար անգամ ավելի բարձր է համարում աշխարհի բոլոր մարդկանցից։

Մայհյոֆերն հպարտությամբ ման էր գալիս նրա շուրջը, որովհետև այդ մարգարիտն էլ այժմ նրա սեփականությունն էր և բոլորին բացատրում էր, թե այս օրինակը բավական է տեսնելու համար, թե ինչ ասել է գերմանական հավատարմություն։

Բայց երբ մեքենան տաքացնելու ժամանակը եկավ, հավատարիմ մարդը չերևաց յուր տեղում, նա ոտով գլխով անհայտացել էր, վերջապես գտան նրան խոտանոցում քնած։ Երբ նրան զարթեցրին, նա բարկացած անվանեց մարդկանց այդ վարմունքը ղզվելի արարք և մեծ դժկամությամբ դուրս եկավ յուր անկյունից։

Մեքենան տաքացնելը մի նոր տոն էր։ Պատուը կանգնել էր կրակարանի առաջ և երազող աչքերով նայում էր այդ բորբոքվող անդունդին, որ լայնաբերան բացված թվում էր, թե կուլ տալ էր ուզում ամեն բան։ Նա հիշեց հեթանոսական հին աստծուն՝ Մոլոխին, որի մասին նա հին կտակարանից էր սովորել և կարծում էր, թե ամեն բոպե կարող են նրա միջից երկու շիկացած ձեռքեր դուրս մեկնվել։ Ապա այդ հրեշի ներսում սկսվեց լսվել մի խորհրդավոր երգ, երբեմն խուլ ու անորոշ՝ ինչպես անտառի շաչյունը, երբեմն էլ նուրբ ու բարձր՝ ինչպես հրեշտակների մեղմ մեղեդիները։ Կափարիչների տակ ինչ-որ սուլոց սկսվեց. դոլորշու ճառագայթներ էին դուրս թռչում, երկաթյա թիակները ճարճատում էին և քարածուխների նոր կտորները շառաչերով ներս էին գլորվում բոցերի մեջ։ Շուրջը անտանելի աղմուկ էր տիրում, այնպես, որ դժվար էր յուր սեփական խոսքն անգամ հասկանալ։ Վառողը կանգնել էր այնտեղ յուր կարմիր քթով որպես մի թագավոր, խմում էր անդադար մի նեղափոր շշից ու ժամանակ առ ժամանակ կափարիչներն էր շարժում, հետն էլ շարունակ հրամանատարի մի աղաղակ բարձրացնելով, կարծես գազան զսպող լիներ։ Ապա մեծ անիվը շարժվել սկսեց— սուռռ, սուռռ,

սուտ... միշտ արագ ու ավելի արագ։ Ներկա եղողներից մեկի խելքը պատեց լոկ նայելուց, ապա լավեց մի ճրթոց, ապա մի ճրթյուն... բայց մեծ անիվը անշարժ կանգնել, մնացել էր... մշտապես։

Սկզբում վառողն իհարկե շատ պարծենում էր և հավատացնում, որ կես ժամում կարելի է վնասված տեղը վերանորոգել, բայց երբ Մայհյոֆերն երկու օրվա աշխատանքից հետո ստիպեց նրան վերջապես այդ անծայր նորոգումներին մի վերջ տալ, սա բարկացավ, կոպտաբար հայտարարեց, որ այդ հին փտած, ջարդոտված մեքենան նորոգելու ոչ մի տեղ չունի. շատ լավ կլիներ, որ հին երկաթավաճառներին ծախվեր։

«Հոգեզավա՞կը»,— նա շնորհակալ է այդ տեսակ հոգեզավակից. նա հիմար հո չէր, որ այդ ժանգակուտի վրա հոգ տաներ։ Եվ բացի այդ, պարզվեց, որ Լեոբ Լևին գինետներից մեկում նրան իր մոտ էր կանչել ու հարցրել, թե արդյոք նա պատրաստ է մեկ շաբաթից հետո որոշ գործ հանձն առնելու համար, որովհետև միևնույն է, այդ կատակը շաբաթից ավելի չի տևելու։ Վառողը այդ վստահացումն ի նկատի ունենալով էր միայն եկել. որովհետև նա միևնույն տեղում տի՛ օրից ավելի չէր մնում. դա հակառակ էր նրա սկզբունքներին։

Այդ պատճառով նրան ագարակից քշեցին։

Հետևյալ օրը Մայհյոֆերը գյուղից դարբին կանչել տվեց, որ վնասված տեղերը նայի։ Սա ևս մի քանի օր աշխատեց մեքենայի վրա, երեք մարդու չափ կերավ, խմեց վերջն էլ հայտնեց, որ եթե մեքենան այժմ էլ չգնա, անշուշտ սատանի մատը մեջն է։ Նորից տաքացրին, բայց սև Ջուլեին չէր կարելի կյանքի կոչել, այնպես էլ մնաց։

Երբ Մենդյան տոներին Լեոբ Լևին ագարակ եկավ հացահատիկի մնացած մասը տանելու, Մայհյոֆերը յուր սեփական մտրակով նրան մի լավ ջարդեց. հրեան իշխանություն էր աղաղակում. նա իսկույն գլուխն առավ անհայտացավ։ Բայց իսկույն դատարանի սուրհանդակը երևաց մի մեծ կարմիր կնքված նամակով։

Մայհյոֆերը անիծում էր և խմում այժմ ավելի, քան երբևիցե և այդ կարգի վերջն այն եղավ, որ նա դատապարտվեց

բոլոր ծախքերը և դրա հետ էլ տուգանք վճարելու, հաղիվ ազատվեց բանտարկությունից։

Այդ օրվանից նա չուզեց այլևս սև Ջուզեին տեսնել, նրան տարան սայլատան ամենահետին անկյունում ձգեցին ու մնաց այնտեղ շատ երկար՝ ծածկված ու մոռացված, առանց մարդկանց հայացքի։

Միայն Պաուլն էր՝ որ ժամանակ առ ժամանակ ծածուկ վերցնում էր սայլատան բանալին ու կամացուկ մոտենում սև հրեշին, որը նրան գնալով սիրելի էր դառնում և վերջը մի համբ, չգնահատված լարեկամ թվաց նրան։ Նա շոշափում էր նրա պտուտակները ու կափարիչները, մագլցելով բարձրանում էր ծխնելույզի կողմը և նստում էր կաթսայի վրա, ոտքերն այս ու այն կողմ քաշ ձգած, կամ թե կախ էր ընկնում անիվից ու փորձում յուր բազուկների ուժով շարժել այդ ածղահան։ Բայց դիակի պես անշարժ, կանգնած էր նա խաղաղ։

Եվ երբ աշխատելուց հոգնած ձեռքերը ծալում էր ու կանգնում, տխրությամբ նայում էր անկենդան անիվին ու շշնջում. «ո՞վ քեզ արդյոք դարձյալ կյանք կտա»։

7

Երբ Պաուլը տասնհինգ տարեկան դարձավ, հայրը վճռեց նրան ուղարկել քահանայի մոտ կրոնի դասեր վերցնելու, որպեսզի կոնֆերմացիայի համար պատրաստվի։

— Միևնույն է, դպրոցում նա մի կարգին բան չի սովորելու,— ասում էր նա,— փողն ու ժամանակն ափսոս են նրա համար։ Ուստի հարկավոր է նրան շուտով օրհնել տալ, որպեսզի կարողանա տնտեսության մեջ պիտանի լինել։ Առանց այն էլ նա մի մեծ մարդ չի դառնալու. շատ-շատ մի գյուղացի, ոչ ավելի։ Սակայն Պաուլը գոհ էր այդ վճռից, որովհետև նա ցանկանում էր մոր ճնշող հոգսերի մի մասն յուր ուսերին վերցնել։ Նա մտածում էր վերակացուի պես մի բան լինել, որ բացակայող տանտիրոջը կարողանար ամեն ժամանակ փոխարինել և անձամբ գործի կպչել, ուր ծառայողները մի լավ օրինակի կարիքը զգային։ Նա ինքն իրեն խոստանում էր,

որ յուր գործունեությունը սկիզբ կլինի մի նոր օրհնաբեր շրջանի և երբ գիշերները անկողնում պառկած էր լինում, երազում էր ցորենի ալեծածան արտերի և լիքը, մաքուր շտեմարանների մասին։ Ավելի և ավելի համոզմունք էր դարձնում նա յուր մեջ, որ հարկավոր է յուր բոլոր ուժերը գործ դնել այդ քայքայված տնտեսությունը փրկելու համար։ Կգա մի ժամանակ, երբ եղբայրները նրա մասին կկարողանան ասել «Թեև նա մեզ չկարողացավ հետևել մեր փայլուն ճանապարհով, բայց էլի մի բանի պետք եկավ»։

Հա, այդ եղբայրները. նրանք այնպես մեծացել ու վայել չացել էին։ Մեկը լեզվաբանություն էր ուսումնասիրում, մյուսը մի ականավոր բանկի մեջ ծառայող էր։ Երկուսն էլ ահագին փողի կարիք ունեին, չնայած որ բարի մորաքույրն ուղարկում էր. բայց նրանք շատ, շատ ավելի պետք ունեին, քան որ հայրը նրանց ուղարկել կարողանար։ Նրանց համար էլ այժմ Պաուլն ինքն իրեն խոստանում էր հենց որ տնտեսության մեջ մտնի, նրանց ժամանակը հաճելի դարձնի ու հոգսերից ազատի։ Ավելի մնացած ամբողջ փողը նրանց պիտի ուղարկեր. և նա պիտի խնայեր ու հոգ տաներ, որ նրանք անհոգ ու առանց նեղության քայլել կարողանային միշտ դեպի առաջ, դեպի իրենց բարձր նպատակները։

Ահա այս համեստ ու բարեպաշտ մտքերով էր, որ Պաուլն սկսեց յուր առաջին կրոնադասը։ Դարնան գեղեցիկ առավոտներից մեկն էր, ապրիլ ամսի սկիզբը։

Մատղաշ կանաչը փռվել էր դաշտի վրա ու փայլում էր յուր գույնզգույն ծաղիկներով ու մանուշակներով. անտառի ծայրերին ծաղկել էին քարղանկոտրուկներն ու գորտնուկները։ Դաշտի վրայով փչում էր մի տաք քամի, նա ուրախությամբ բարձր վեր-վեր կթռչեր ցնծությունից. համակ հրճվանքից նրա սիրտը ծանրացավ։

«Սրա վերջը մի տխուր բան կլինի,— ասաց նա ինքն իրեն,— որովհետև աշխարհիս վրա մարդ այսքան ուրախ լինելու իրավունք չունի իսկապես»։

Քահանայի պարտեզի առաջ ամբողջ շարքով տայլեր էին կանգնած, որոնց փոքր մասն էր նա ճանաչում։ Կային երևելի կառքեր էլ։ Հպարտ ժպիտներով նստել էին մաքուր խալաթ-

ներն հագներին կառապաններն իրենց կառանստարանների վրա ու արհամարհանքով շորս կողմերն էին նայում։

Պարտիզում երեխաների ահագին խումբ էր հավաքվել արդեն. աղջիկներն առանձին, տղաներն առանձին։ Տղաների մեջ էին այն երկու եղբայրները, որոնք նրան այնքան շարչարել էին առաջ և որոնք տարուց ավել էր, որ այլևս դպրոց չէին հաճախում։ Նրանք շատ սիրալիրությամբ մոտեցան նրան և մինչդեռ մեկը ձեռը երկարացրեց բարևելու, մյուսն հետևից ոտքով հրեց նրան։

Աղջիկներից մի քանիսը թևանցուկ ման էին գալիս։ Իրար մեջքից բռնած քրքջում էին իրար հետ։ Շատերը նրան անծանոթ էին. մի քանիսն առանձնապես մեծաշուք էին երևում հագած ունեին անձրևանոցներ և փեսրավոր գլխարկներ՝ էին դրել։ Շքեղ կառքերն անշուշտ նրանցը կլինեին։

Նա նայեց յուր բլուզին՝ հավաստիանալու համար, թե հոամաչելու բան չունի։ Ուսանողի հին ֆրակի սև կտորից էր պատրաստված դա և համարյա նոր էր երևում, միայն թե կարերը մի փոքր փայլում էին։ Բայց այնուամենայնիվ նա ամաչելու տեղիք չուներ։

Զանգը տվին. կոնֆերմանդները ժամ հրավիրվեցին։ Պաուլը, երբ իրեն եկեղեցու հանդիսավոր մթնոլորտի մեջ գտավ, ազատ ու ջերմեռանդ զգաց։ Նա չէր էլ մտածում յուր կուրտիկի մասին։ Նրա շորս կողմի երեխաների երեսները ստվերների պես էին երևում նրան։

Սեղանի երկու կողմերը նստարաններ էին դրված։ Տղաներն աջ կողմը պիտի նստեին, աղջիկները՝ ձախ։

Պաուլին մղեցին դեպի ամենավերջին շարքերը, որտեղ փոքրերն ու աղքատներն էին նստած. նա նստեց երկու ոտաբոբիկ երեխաների միջև, որոնց շորերը ծակծկոտված ու կոպիտ էին։ Յուր առաջ նստած երեխաների ուսերով նա տեսնում էր աղջիկներին, որոնք կարգով տեղավորվել էին՝ նախ երևելիները, ապա՝ աղքատ հագնվածները։

Նա մտածում էր, թե արդյոք երկնքո՞ւմն էլ այդպես պետք է լինի դասավորությունը և հիշեց ավետարանի խոսքը. «Ով իրեն խոնարհեցնի, կբարձրանա»։

Քահանան եկավ։

Նա մի գիրտվ մարդ էր, շիկահեր մորուքով։ Նրա վերին շրթունքը հաճախ ածիլվելուց փայլում էր։ Նա հագել էր ոչ թե յուր պաշտոնական պարեզոտը, այլ մի հասարակ սև բաճկոն, բայց և այնպես շատ հանդիսավոր և պատվավոր տեսք ուներ։

Նա մի երկար աղոթք կարդաց «թողեք մանուկներին ինձ մոտ գան» բնարանի վրա, ապա դիտել տվեց երեխաներին այդ եկող տարին իբրև մի նվիրական տարի նկատել, գժություններ չանել և չպարել, որովհետև դա կհակասեր կրոնի աշակերտի արժանիքին։

«Ես ամենևին գժություններ չեմ արել և ոչ էլ պարել եմ», մտածեց Պաուլը և այդ բոպեին բոլորովին հպարտ էր յուր աստվածահաճո կենցաղի համար. «Բայց ափսոս. որ չեմ արել»— մտածեց նա անմիջապես հետո։

Ապա քահանան գովեց քրիստոնեական ամենամեծ առաքինությունը՝ խոնարհությունը։ Մանուկների այդ խմբի մեջ ոչ ոք չպիտի իրեն բարձր համարեր մյուսներից, թե ինչ է. նրա ծնողները թերևս ավելի հարուստ ու երևելի են, քան նրա ընկերների ու ընկերուհիների ծնողները։ Աստծո դահի առաջ բոլորն հավասար են։

«Ահա՞, տեսա՞ք»— մտածեց Պաուլը և սիրալիր կերպով բռնեց յուր ցնցոտիապատ հարևանի թևը, սա կարծեց, թե նա կամթել է ուզում, բղավեց. «թող, փ՞նչ ես անում»։

Ապա քահանան գրպանից մի կտոր թուղթ հանեց ու ասաց. «Այժմ կկարդամ ես այն կարգը, որով դուք նստելու եք այսուհետև»։

«Էլ ի՞նչ նստելու կարգ,— մտածեց Պաուլը,— եթե որ աստծու դահի առաջ ամենքը հավասար են»։

Քահանան ասաց. «Նախ գալիս են աղջիկները և ապա տղայքը» և սկսեց կարդալ։

Հենց առաջին անունը լսելիս ապշեց Պաուլը, որովհետև էլսբեթ Դուգլասինն էր դա։ Նա տեսավ, թե ինչպես մի գունատ աղջիկ երկար հասակով ու ջերմեռանդ տեսքով, մաքուր ետ սանրած խարտյաշ մազերով, տեղից վեր կացավ ու մոտեցավ առաջին տեղին։

«Ա՜հ, ուրեմն դո՞ւ ես,— մտածեց Պաուլը,— մենք միասին ենք օրհնվելու ուրեմն»։ Ուրախությունից և վախից արագորեն

սաբախում էր նրա սիրտը, որովհետև նա երկյուղ էր կրում, որ ինքը նրան շատ չնչին պիտի երևա։ «Կարելի է նա այլևս քեզ չի էլ հիշում»— մտածում էր նա։

Նա նկատեց, ինչպես Էլսբեթը կախ ձգած աչքերով նստեց յուր տեղը և ուրախությամբ ինքն իրեն ժպտում էր։

«Չէ, նա հպարտ չէ»,— ասաց Պաուլը մեղմությամբ, բայց ապահովության համար մեկ էլ ոնտղեց յուր բլուզը։

Հերթը հասավ տղաներին։ Ամենից առաջ կարդաց երկու երդման եղբայրների անունները։ Առանց այդ էլ նրանք արդեն առաջին տեղերումն էին նստել, ապա իր անունը լսեց։ Այդ բոպեին Էլսբեթ Դուգլասը ճիշտ հենց այնպես վարվեց, ինչպես որ մի փոքր առաջ ինքն էր վարվել։ Նա արագությամբ բարձրացրեց գլուխը և որոնող աչքերով տղաների շարքերն էր նայում։

Երբ Պաուլը նստեց յուր տեղը, սկսեց աչքերը վայր ձգած գետնին նայել, որովհետև ցանկանում էր յուր խոնարհությամբ Էլսբեթին հավասարվել. և երբ մեկ էլ վեր նայեց, նկատեց, որ նրա աչքերը հետաքրքրությամբ նրա կողմն են դարձած։ Պաուլը կարմրեց և յուր բլուզի թևի վրայից մի փետուր հեռացրեց։

Այնուհետև սկսվեց դասը։ Քահանան աստվածաշնչի կտորներ էր բացատրում և հոգևոր երգեր էր հարցնում։ Հերթն ամենից առաջ Էլսբեթինն էր։ Նա գլուխը մի փոքր բարձրացրեց և հանգիստ ու անվախ ասաց յուր բաժինը։ «Տեսեք, է՞, ինչքան քաջն է երևում»— մռմռաց կրտսեր Էրդմանը, որ Պաուլի ձախ կողմումն էր նստել։

Պաուլն զգաց, որ հանկարծ կատաղություն եկավ վրան։ Նա շատ կուզենար դրան հենց այնտեղ եկեղեցու մեջ մի լավ ջարդել։ «Եթե մի անգամ էլ նրա վրա խոսի, իսկույն կջարդեմ նրան»,— հանդիսավոր կերպով խոստացավ ինքն իրեն։ Բայց կրտսեր Էրդմանն այլևս Էլսբեթի մասին չէր մտածում. նա զբաղված էր նրանով, որ աշխատում էր յուր հետևում նստած տղաների սրունքները գնդասեղներ կոխել։

Երբ դասը վերջացավ, ամենից առաջ աղջիկները դուրս եկան զույգ-զույգ։ Երբ բոլորն արդեն եկեղեցուց դուրս ելան, նոր այն ժամանակ տղաներն իրավունք ստացան նրանց

հետևելու։ Եկեղեցու հրապարակում նա պատահեց Էլսբեթին, որը քայլում էր դեպի յուր կառքը։ Երկուսն էլ իրար կողքից նայեցին և իրար մոտով անցան։

Նրա կառքի մոտ մի ծեր կին էր կանգնել՝ սպիտակ խոպոպներով և մի պարսկական թիկնոցով. քահանայի տանը սպասել էր նա Էլսբեթին. նա համբուրեց Էլսբեթի ճակատը և երկուսով բարձրացան կառք։ Նրանց կառքն ամենագեղեցիկն էր. կառապանը սև մորթե գդակ էր դրել մի կարմիր փնջուկով. ձիքին ու թևերի ծայրերին էլ փայլուն ժապավեն էր կրում։

Ճիշտ այն ժամին, երբ նրանց կառքն հեռացավ, Պաուլի վրա հարձակվեցին էրդման եղբայրները ու մի փոքր ծեծեցին նրան։

— Թյո՛ւ, ամաչեցեք. երկուսով մեկի դեմ,— ասաց նա. ապա թողին նրան ու հեռացան։

Գոհ սրտով նա տան ճանապարհը բռնեց։ Կեսօրի արևը փայլում էր ընդարձակ հարթավայրում և մշուշապատ հեռվում սահում էր նրանց կառքը, ավելի ու ավելի փոքրանում էր և վերջապես անհայտացավ եղևնիների անտառում սև կետի նման։

Երբ նա տուն հասավ, մայրն համբուրեց նրա երկու թշերը և հարցրեց.

— Հը, ինչպե՞ս էր։

— Շատ լավ,— պատասխանեց սա,— մամա, գիտե՞ս ինչ, «Սպիտակ տնից» Էլսբեթն էլ էր այնտեղ։

Մայրը ուրախությունից բոլորովին կարմրեց ու շատ հարցեր տվեց, թե նա ինչպես էր, արդյոք մեծացել, սիրունացել էր և թե ինչ է խոսել նրա հետ։

— Իսկի, ոչինչ,— ամաչած պատասխանեց նա, և երբ մայրն այդ լսելով զարմացած նրան նայեց, սա իսկույն վրա բերեց.

— Բայց չկարծես, թե նա հպարտ է...

Հետևյալ առավոտ եկեղեցի մտնելիս Պաուլը նրան գտավ արդեն յուր տեղում նստած. Աստվածաշունչը դրել էր ծնկներին և դաան էր սերտում։

Տղաներից շատերը դեռ չէին երևում, և երբ սա գնաց նրա դիմաց նստեց ու նա մի կես շարժում արեց, կարծես թե ու-

գում էր վեր կենալ ու նրան մոտենալ, բայց էլի նստեց ու շարունակեց սովորել։

Մայրը գնալուց առաջ նրան պատվիրել էր ուղղակի գնալ ու խոսել էլսբեթի հետ։ Նա շատ բարևներ էր տվարկել նրա մորը, բացի այդ Պաուլին պատվիրել էր հարցնել էլսբեթի մասին։ Սա ճանապարհին մի ամբողջ ճառ էր պատրաստել, միայն թե դեռ յուր համար պարզ չէր, թե արդյոք «դու»-ով թե «դուք»-ով պիտի խոսի նրա հետ։ «Դուս»-ն շատ պարզ ու լավ կլիներ։ Մայրը բնական էր համարում այդպես. բայց «դուքը», ինչ խոսք որ ավելի վայելուչ էր հնչում, գեղեցկացնում, մեծացնում էր։ Եվ որովհետև մի հաստատ վճռի չհանգավ, ուստի և յուր ճառը բոլորովին թողեց։ Նա էլ վերցրեց այժմ յուր Աստվածաշունչը. և երկուսով ալմունկներն հենած ծնկներին մրցում էին իրար հետ, սերտելով իրենց դասերը։

Բայց նրան շատ օգուտ չտվեց սերտելը, որովհետև երբ բահանան նրան դաս հարցրեց, նրա միտքը բան չէր մնացել։

Տիրեց մի անտանելի լռություն. էրդմանները չարախնդաց կերպով ծիծաղում էին. ամոթից շիկնած, նա ստիպված էր էլի տեղում նստել։ Նա այլևս չէր համարձակվում վեր նայել, և երբ եկեղեցուց դուրս գալիս դռանն էլսբեթին տեսավ, որ կարծես թե մի բանի էր սպասում, աչքերը քաշ ձգեց և ուզում էր արագ կերպով անցնել նրա մոտով։ Բայց սա մոտեցավ ու ասաց.

— Մամաս պատվիրեց, որ քեզ հարցնեմ, ինչպես է քո մայրիկի դրությունը։

Նա պատասխանեց, որ լավ է։

— Բացի դրանից, նա շատ բարևում է,— շարունակեց էլսբեթը։

— Իմ մայրիկն էլ քո մայրիկին է բարևում,— ասաց Պաուլը, Աստվածաշունչն ու երգարանը մատների մեջ շուռ ու մուռ տալով,— ու ինձ պատվիրել է քեզ հարցնեմ, ինչպե՞ս է քո մայրիկը։

— Մամաս ասում է,— պատասխանեց էլսբեթն այնպես, որ կարծես անգիր արած էր ասում,— որ ինքը շատ հիվանդոտ ու թույլ է և ստիպված է հաճախ սենյակից դուրս չգալ. բայց

այժմ գարնանը մի փոքր լավ է. հետո նա ասում էր, թե դու արդյոք չե՞ս ցանկանա մեր կառքով գնալու մինչև ձեր տունը։

— Սը՞ս, Մայհյոֆերը սիրաբանություններ է անում այստեղ,— բացականչեց ավագ էրդմանը, որը թաքնվել էր եկեղեցու դռան հետևում, որ յուր ընկերներին դռան արանքից եղեգով խտխտացնի։

Էլսբեթն ու Պաուլը ապշած իրար նայեցին, որովհետև նրանք չհասկացան այդ խոսքերի միտքը, բայց որովհետև զգում էին, որ շատ վատ բան պետք է լինի, կարմրեցին ու բաժանվեցին։

Պաուլը նայում էր, թե ինչպես նա գնաց ու կառք նստելով հեռացավ։ Այս անգամ ծերունի կինը չկար։ Նա էլսբեթի դաստիարակուհին էր, ինչպես նա լսեց։ Այո, նա այնքան երևելի էր, որ սեփական դաստիարակուհի ուներ...

«Էրդմաններին հարկավոր է անպայման ծեծել»,— այդպես վերջացրեց Պաուլն իր խորհրդածությունները։

Հետևյալ շաբաթներում Պաուլն ու Էլսբեթը չխոսեցին ամենևին, երբ նա եկեղեցի էր մտնում, հաճախ տեսնում էր աղջկան յուր տեղում նստած։ Նա սիրալիր կերպով ողջունում էր Պաուլին, բայց հենց դրանով էլ վերջանում էր բանը։

Բայց մի երկուշաբթի օր Պաուլը նկատեց, որ Էլսբեթի կառքը չկա և ազատորեն շունչ քաշեց, որովհետև այն հպարտ կառապանը, որ նույնիսկ ամառ ժամանակ մորթե դլխարկ էր կրում, նրան միշտ մի ճնշող զգացմունք էր պատճառում։ Էլսբեթի հանդեպ նստած ժամանակ բավական էր, որ նա կառապանի մասին մտածեր, որ Էլսբեթը նրան թվար ոչ այս աշխարհից։

Այդ օրը նա վստահ կերպով մոտեցավ բարևելու. և նրան թվաց, որ կարծես թե նա էլ մի առանձին սիրալիրությամբ պատասխանեց բարևին։

Եվ երբ դասը վերջացավ. Էլսբեթն ազատ կերպով մոտեցավ ու ասաց նրան.

— Ես ոտքով պիտի այսօր տուն գնամ, որովհետև մեր կառքերը բոլորը դաշտ են դուրս գնացել։ Մամաս կարծում էր, թե դու երևի մի փոքր ինձ կուղեկցես, որովհետև մենք երկուսով նույն ճանապարհն ունենք։

Նա իրեն շատ բախտավոր էր զգում, բայց սիրտ չէր անում նրա կողքով երթալ, քանի որ նրանք գյուղի մեջ էին։ Բացի այդ, երբեմն-երբեմն վախեցած շորս բոլորն էր նայում, թե միգուցե պատահի երկու էրդմաններին, որոնք թերևս իրենց կծու լեզվով որևէ տեղ դարան մտած լինեին։

Բայց երբ գյուղից ազատ դաշտ դուրս եկան, երկուսով կողք կողքի էին քայլում։

Հունիսյան գեղեցիկ օրերից մեկն էր. ճանապարհի սպիտակ ավազը փայլում էր արևի ճառագայթների տակ... Շուրջը ծաղկում էին ծիրանի կատվաթաթերը և մարգագետինների բարակ խոտը մեղմիվ տատանվում էր տաք քամուց։ Գյուղից հնչում էր միջօրեի զանգը. ահագին տարածության վրա ոչ մի մարդ չէր տեսնվում... Դաշտը կարծես մեռել էր։

Էլսբեթը արևի ճառագայթների դեմ պաշտպանվելու համար մի լայն հարդյա գլխարկ էր կրում. վայր առավ այժմ և սեղմեց թելից բռնած՝ խաղացնում էր այս ու այն կողմ։

— Երևի քեզ համար շատ շոգ կլինի,— ասաց Պաուլը, բայց որովհետև Էլսբեթը նրա վրա մի փոքր ծիծաղեց, ուստի նա էլ այժմ վեր առավ յուր գդակը և օդի մեջ էր ճգում։

— Ինչ ուրախ տղա ես եղել,— ասաց նրան Էլսբեթը գոհ վելով։

Սա թափ տվեց գլուխը. նա ճակատին հավաքեց էլի յուր սուրջ ծալքերը, որոնք նրան միշտ ավելի մեծ էին երևացնում

— Ա՜խ, ոչ,— ասաց նա,— ես ուրախ տղա չեմ։

— Ինչո՞ւ չէ։

— Ես այնքա՜ն բան ունեմ մտածելու,— պատասխանեց նա,— և երբ մի անգամ իրոք ուրախանալ եմ ուզում էլի միշտ մի բան մեջ է գալիս ու խանգարում։

— Բայց ինչի՞ մասին ես մտածում այդքան,— հարցրեց Էլսբեթը։

Պաուլը մի փոքր մտածեց, բայց մի բան չկարողացավ գտնել։

— Ա՜խ, այդ բոլորն հիմար բաներ են,— ասաց նա.— խելացի մտքերն ինձ ընդհանրապես չեն գալիս։

Եվ ապա պատմեց նրան յուր եղբայրների, հատ գրքերի մասին, որոնք լիքն էին թվերով— անուանը մոռացել էր,— և

որ եղբայրներն անգիր գիտեին բոլորը դեռ այն ժամանակ երբ նրանք յուր հասակումն էին։

— Եթե դա քեզ բավականություն է պատճառում, հապա ինչո՞ւ դու էլ չես սովորում,— հարցրեց նա։

— Չէ, դա ինձ բավականություն չի պատճառում,— պատասխանեց Պաուլը,— իմ ղլուխս դրա համար շատ ծանր է։

— Բայց իհարկե որևէ բան կգիտենաս անշուշտ,— հարց նում էր շարունակ Էլսբեթը։

— Ուղղակի ոչինչ չգիտեմ,— ասաց նա տխրությամբ,- հայրիկն ասում է, որ ես հիմար եմ։

— Դե՞հ, դու չպիտի ուշադրություն դարձնես դրա վրա,— մխիթարում էր նա Պաուլին. «իմ օրիորդ Ռատմայերն էլ իմ մասին ամեն տեսակ բան ասում էր. բայց ես, պա՞հ, ես...— Նա լռեց ու մի թթվաշ թրթնջուկ պոկեց և սկսեց կրծել։

— Քո հայրն էլի՞ այնպես փայլատակող աչքեր ունի,— հարցրեց Պաուլը։

Էլսբեթը գլխով արավ և նրա երեսը պայծառացավ։

— Դու անշուշտ նրան շատ կսիրես... քո հայրիկին։

Աղջիկը այժմ միայն ապշած նայեց նրան, կարծես թե նրա հարցը չէր հասկանում, ապա բացատրեց, որ այո, շատ էր սիրում։

— Նա էլ քե՞զ երևի։

— Իհարկե։

Հիմա էլ Պաուլը մի թրթնջուկ քաղեց, հետո էլ հառաչեց

— Ինչո՞ւ համար ես հառաչում,— հարցրեց աղջիկը։

Հանկարծ միտքը մի բան եկավ, բացատրեց Պաուլը և ապա ծիծաղելով հարցրեց, թե նրա հայրիկն էլի նրան առնո՞ւմ է գոգը, ինչպես այն ժամանակ, երբ նա նրանց մոտ էր «Սպիտակ տան» մեջ։

Էլսբեթն էլ ծիծաղեց և ասաց, որ ինքն արդեն մեծ աղջիկ է և որ նա այդպես հիմար բաներ չպիտի հարցնի, բայց հետո պարզվեց, որ նա էլի հոր գոգը բարձրանում է,— իհարկե, ոչ առաջվա նման ձի խաղալու համար,— ավելացրեց նա։

— Ինչքա՞ն գեղեցիկ էր այն օրը,— ասաց Պաուլը,— ես էլ նրա մյուս ծնկին էի նստել, մինչքան փոքր պիտի եղած լի նեինք մենք այն ժամանակ։

— Եվ ինչ հիմարնե՞րը,— պատասխանեց էլսբեթը,— երբ որ մտածում եմ այն մասին, թե դու ինչպես սուլել էիր ցանկանում և չէիր կարողանում...

— Դեռ չե՞ս մոռացել այդ,— հարցրեց Պաուլը և նրա աչքերը փայլատակեցին նրա այժմեան արվեստի գիտակցությամբ։

— Իհարկե չէ և երբ դու հեռացար, մի փոքր հետո էլի մոտ վազեցիր ու գիտե՞ս ինչ...

Նա լավ գիտեր։

— Հիմա երևի կկարողանաս սուլել,— ծիծաղեց նա,— մեր հասակում մի մեծ հերոսություն չէ այլևս. նույնիսկ ես կարող եմ,— այս ասելով նա սրացրեց յուր պռոշները շատ ծիծաղելի կերպով։

Պաուլին ցավ պատճառեց, որ էլսբեթը նրա արվեստն այնքան քիչ էր գնահատում և մտածեց այն մասին, թե արդյոք լավ չի՞ անի սուլելը բոլորովին թողնի։

— Ինչո՞ւ այդպես լռեցիր,— հարցրեց աղջիկը,— հո դու էլ չհոգնեցի՞ր։

— Ախ, ոչ, բայց դո՞ւ երևի։

Այո, ավազոտ ու շոգ ճանապարհը նրան հոգնեցրել էր։

— Արի ուրեմն միասին մեր տուն գնանք, մի փոքր հանգըստացիր,— ասաց նա փայլուն աչքերով, որովհետև նա պատկերացրեց այն ուրախությունը, որ նրա մայրն զգալու էր էլսբեթին տեսնելով։

Բայց նա շնորհակալությամբ մերժեց.

— Քո հայրը մեր մասին լավ չի խոսում, մաման է ասում, այդ պատճառով էլ ձեզ իրավունք չի տալիս Հելենինթալում մեզ այցելության գալ։ Հայրդ կարելի է ինձ դուրս անի տանից։

Կաս-կարմիր՝ Պաուլը պատասխանեց.

— Դժվար թե հայրիկն այդպես բան անի...— ու շատ ամաչեց։

Էլսբեթը մի հայացք ձգեց Պաուլենց ագարակը, որ հազիվ երեք հարյուր քայլ հեռու էր նրանց ճանապարհից։ Կարմիր ցանկապատը պսպղում էր արևի փայլի տակ և նույնիսկ իար-

խով, հին շտեմարաններն ավելի գեղեցիկ էին երևում, քան երբևիցե։

— Ձեզ մոտ շատ լավ է անշուշտ,— ասաց Էլսբեթը, ձախ ձեռքը հովանոցի տեղ աջքին բռնելով։

— Օ՜, այո,— պատասխանեց սա հպարտությունից ուռած պրտով,— շտեմարաններից մեկի դռանը մի բու է մեխված... Բայց մեզ մոտ դեռ ավելի, շատ ավելի լավ կլինի,— ավելացրեց նա մի փոքր հետո լուրջ կերպով։— Թող մի դեռ ես գործ մտնեմ։— Ապա սկսեց յուր ապագայի ծրագրերն ասել նրան։ Էլսբեթը լսում էր ուշադրությամբ, բայց երբ սա վերջացրեց, նա մեկ էլ կրկնեց.

— Հոգնած եմ, մի փոքր պիտի հանգստանամ։— Եվ նա ուզում էր փոսի ափին նստել։

— Այդտեղ մի նստի, արևի շոգի տակ,— զգուշացրեց Պաուլը,— արի մի լավ թուփ գտնենք։

Էլսբեթը մեկնեց յուր ձեռքը նրան ու հոգնած կախ ընկած նրանից, քաշ էր գալիս դաշտի կանաչի վրայով։ Դաշտն ամբողջապես ծածկված էր համարյա խլուրդի բլուրներով և ալեծածան ծովի էր նմանում։ Վերջապես անտառի ծայրում թփեր գտան նրանք և հենց առաջին թփի տակ նստեց Էլսբեթը, այդ կերպ պատսպարելով յուր քնքուշ, բարակ մարմինը արևի տապից։

— Այստեղ քո գլխիդ համար էլ տեղ կա,— ասաց նա գույց տալով մի խլուրդաբլուր, որը ստվերի տակ էր ընկնում։

Պաուլը երկարությամբ տարածվեց խոտի վրա, գլուխը տեղավորելով բլուրի վրա, ճակատը Էլսբեթի շորի փեշերով ծածկած։

Աղջիկը հոգնած հենվել էր թփի թավուտքին։

— Փշերն խակի չեն ծակում,— ասում էր նա,— ինչպես երևում է մեզ հետ լավ են. ես կարծում եմ, մենք կարող ենք գնալ նաև վարդի փշուտքների միջով, ապահով ու անվնաս։

— Դու հա՛. բայց ո՛չ ես,— ասաց Պաուլը պառկած տեղից աչքերը նրա վրա բարձրացնելով։— Մինչև այժմ յուրաքանչյուր փուշ խայթել է ինձ, ես հեքիաթների իշխանը չեմ, ոչ էլ նույնիսկ «բախտավոր Հանսը»։

— Սպասիր, շուտով կփոխվի,—մխիթարում էր նրան աղջի

կը,— հարկավոր չէ միշտ այդպիսի տխուր մտքեր ունենալ։

Նա ցանկանում էր մի բան առարկել Էլսբեթին, բայց խոսքեր չէր գտնում և երբ աչքերը մտախոհ կերպով վեր բարձրացրեց, նկատեց որ երկնքի երեսով մի ծիծեռնակ էր թռչում։ Այդ ժամանակ ակամա կերպով մի սուլոց դուրս թռավ նրա բերանից, կարծես դրանով ուզում էր թռչունին մոտ կանչել. ու երբ նա չեկավ, երկրորդ, երրորդ, անգամ շը վայրեց։

Էլսբեթը ծիծաղում էր, բայց նա սուլում էր շարունակ առանց գիտենալու ինչպե՞ս և առանց մտածելու թե ինչո՞ւ, բայց երբ ձայներն իրար հետևից դուրս էին հոսում նրա շրթունքներից, նրան թվաց, որ նա հանկարծ շատ ճարտարախոս դարձավ և որ նա այդ եղանակով կարող է ասել ամեն բան ինչ որ նրա սիրտը ճնշում է և որ խոսքով երբեք չէր կարողացել ասել։ Նրա սուլոցի մեջ էր ամեն բան, նրա տխրության ու հոգսերի պատճառը։ Աչքերը փակած, նա լսում էր, ինչպես ձայները յուր փոխարեն խոսում են։ Նրան թվում էր, թե յուր փոխարեն բարի աստվածն էր խոսում երկնքից, նա պատմում էր ամեն բան, ինչ որ իրեն էր վերաբերվում, նույնիսկ այնպիսի բաներ, որ նա երբեք դեռ կարդին չէր հասկացել։

Երբ աչքերը բաց արավ, չէր իմանում ինչքան ժամանակ է նա այդպես պառկած սուլել, բայց նա տեսավ, որ Էլսբեթը լաց է լինում։

— Ինչո՞ւ ես լաց լինում,— հարցրեց նա։

Սա պատասխան չտվեց, թաշկինակով աչքերը սրբեց ու վեր ելավ։

Լուռ քայլում էին մի առժամանակ իրար կողքի։ Երբ Ռոանք անտառին հասան, որ թավ ու մռայլ տարածվում էր Ռոանց առաջ, Էլսբեթը կանգ առավ ու հարցրեց.

— Ումի՞ց ես դու սովորել։

— Ոչ ոքից,— պատասխանեց սա,— ինքն իրեն է եկել։

— Մրինգ ածել էլ գիտե՞ս,— հարցրեց կրկին աղջիկը։

Ոչ, նա չէր իմանում, չէր լսել ամենևին, նա գիտեր միայն որ սիրելի Ֆրիցի սիրած գործիքն էր սրինգը։

— Անպատճառ պիտի սովորես,— ասաց նա։

Պաուլը կարծիք հայտնեց, թերևս դժվար լինի իր համար։

— Բայց փորձիր մի անգամ,— համոզում էր նա,— դու արվեստավոր ես դառնալու, մեծ արվեստավոր։

Սա վախեցավ, երբ լսեց այդ խոսքերը։ Նա հազիվ էր կարողանում մտքերի թելը պահել։

Երբ անտառի մյուս ափը հասան, իրարից բաժանվեցին։ Էլսբեթը քայլեց դեպի «Սպիտակ տունը», իսկ նա ետ դարձավ։ Երբ նա տեսավ այն թուփը, որի տակ միասին նստել էին, ամբողջ անցածը երազ թվաց նրան և երազ էլ մնաց այնուհետև...

Երկու-երեք օր անցան, մինչև որ նա սիրտ առավ յուր արկածից մի բան ասել մորը, բայց սկսելիս էլ իրեն չկարողացավ պահել և ամեն բան խոստովանեց։

Մայրը երկար նայեց որդուն ու դուրս գնաց, բայց այդ օրվանից նա միշտ ծածուկ ականջ էր դնում, մի ձայն գոնե լսելու նրա սուլոցից։

Պաուլն ու Էլսբեթը հաճախ էին միասին գնում տուն, բայց այն օրվա նման օր չպատահեց նրանց։

Երբ նրանք այն թփի մոտով անցնում էին, իրար էին նայում ու ժպտում, բայց ոչ մեկը սիրտ չէր անում առաջարկել մի փոքր նստել այդտեղ։

Սրնգի մասին էլ խոսք չէր ընկնում նրանց մեջ այլևս, բայց Պաուլը ծածուկ կերպով շատ անգամ մտածում էր այդ մասին։ Նրան թվում էր, թե դա մի ինչ-որ երկնային, անլուր բան է, նման այն գիտությանը, որ լոգարիֆմների աղյուսակն էր սովորեցնում։ Այո՛, եթե նա էլ յուր երկու եղբայրների պես խելոք և ձիրքով լիներ... բայց նա լոկ հիմար պարզամիտ տղա էր, որ ուրախ պիտի լիներ, որ իրեն թույլ էին տալիս ուրիշների մասին հոգ տանել...

Շատ հաճախ ինքն իրեն հարցնում էր, թե արդյոք ինչպես կհնչեր այդպիսի մի սրնգի ձայնը, և թե ինչպիսի մարդիկ պիտի լինեին նրանք, որոնք այդ ձայներն հասկանում են։ Նա շատ մեծ կարծիքի էր նրանց մասին և հավատում էր, որ նրանք անշուշտ միշտ բարձր և ազնիվ մտքեր ունեն, որոնց նրանը շատ քիչ էր իրեն պատահում... այն էլ հատկապես այն ժամանակ, երբ նա սուզվում էր սուլելու մեջ։

Վերջապես մի օր եկավ, երբ նա երես առ երես մի սրնգահարի պիտի տեսներ։

Նոյեմբեր ամսի մռայլ, փոթորկոտ օրերից մեկն էր։ Արդեն սկսել էր մթնել, երբ նա դուրս եկավ դպրոցից ու դանդաղ կերպով քայլում էր գյուղի փողոցով տուն դառնալու։ Հանկարծ շատ տարօրինակ ձայներ հասան նրա ականջին մոտակա օղեստներից, ուր ստվոր էին այդ կողմերի «պարապորդները» հավաքվել։ Նա այդոսեսակ բան երբեք չէր լսել, բայց իսկույն հասկացավ, դա մի սրնգահար պիտի լիներ անպատճառ։ Օղեստան դռան առաջ կանգ առավ ականջ դնելու։ Սիրտը բաբախում էր բոլորովին բարձր, անդամները դողում էին։ Հնչյունները նման էին յուր սուլոցին, բայց շատ ավելի լիքը և փափուկ։ «Հրեշտակներն էլ աստծո գահի առաջ այդպես կներդաշնակեն անշուշտ»— մտածում էր ինքն իրեն։

Միայն մի բան լավ չէր հասկանում, ինչպես էր ընկել այդ անիծված տեղում այդ վշտահար ու կարոտակեզ սրինգը։ Նրա սիրտը ցավում էր, լսելով ներսի աղմուկն ու աղաղակը, բաժակների բախումը, հանկարծ մի զայրույթ պատեց նրան, եթե նա մեծ և ուժեղ լիներ, ներս կթռչեր ու այդ հարբեցողներին ու աղմկարարներին մեկ-մեկ փողոց կշպրտեր, որ չսրբապղծեին այդ նվիրական հնչյունները։

Հենց այդ րոպեին դուռը արագությամբ բացվեց, մի հարբած բանվոր երերում էր նրա վրա... Ներսի գարշահոտ գոլորշին զարկեց նրա երեսին... Աղաղակն ավելի էր բարձրանում... հազիվ լսելի էր սրնգի ձայնը։

Վերջապես նա սիրտ առավ և նախքան դուռը նորից ծածկելը, նրա նեղ ճեղքից ներս ընկավ օղեստուն։ Դատարկ օղու տակառի հետևում կուչ եկած կանգնած էր այնտեղ... Ոչ ոք ուշ չէր դարձնում նրա վրա։

Առաջին րոպեները նա բան չէր նկատում... աղմուկն ու գոլորշին նրա ուշքը տարել էին... սրնգի հնչյունները նրան թվում էին ստոր, ճչացող և տաններդաշնակ, այնպես, որ նրա ականջները ցավեցնում էին։

Այդ խաժամուժ ամբոխի դոռում-գոչումի միջով նա տեսավ ցնցոտիապատ մի մարդու, ուռած, պտավոր երեսով, կարմրած քթով, սև յուղոտ մազերով— մի պատկեր, որի տես

քը միայն Պաուլի մարմնով սարսուռ անցկացրեց։ Նա նստել էր շուռ տված մի տակառի վրա... ու սրինգ էր ածում։

Սարսափից քարացած կանգնել էր այնտեղ։ Նրան թվում էր, թե ահա երկինքը փուլ է գալու, աշխարհը կործանվելու է։ Ածողը սրինգը վայր դրեց, յուր կոլոր ու կերկերուն ձայնով մի քանի կեղտոտ խոսքեր ասաց, ագահաբար կուլ տվեց օդին, որ մոտիները տվին նրան և սկսեց մի դեռհիկ երգ ածել— ոտքերով էլ չափ էր տալիս— լսողներն իրենց բոռբոռոցով հետևում էին նրան։

Հանկարծ դուրս փախավ Պաուլն օդեռնից ու վազում էր, հա վազում, առանց կարողանալու մի բան լսել կամ տեսնել, կարծես նա վախենում էր ուշքի գալ։

Երբ նա մենակ զգաց իրեն դաշտում, ուր մոնչում էր փոթորիկը և որի ծայրում երեկոյան լույսի ծծումբի գեղնավուն մի աղոտ նշույլ էր փայլփլում... կանգ առավ, ձեռքերով երեսը ծածկեց ու դառը կերպով լաց եղավ...

Զմռանը Պաուլը թողեց բոլորովին տալլելը, սրինգ ածելն էլ ավելի ատելի դարձավ նրան։ Երբ այդ մասին մտածում էր, նրա առաջ պատկերանում էր այն ապականված մարդու տեսքը, որ նրա նվիրական տենչանքը սրբապղծեց։

Էլսբեթին էլ չէր տեսնում։ Զմեռն սկսվելուն պես կրոնի դասը եկեղեցուց քահանայի տունը տեղափոխվեց և որովհետև դա շատ մեծ չէր, որ բոլոր կոնֆերմանդները տեղավորվեին, ուստի աղջիկներն ու տղաները առանձին-առանձին էին դաս առնում։ Երբեմն տեսնում էր նա Էլսբեթի կառքը մոտով անցնելիս, բայց Էլսբեթն ինքը այնպես մորթերի ու շալերի մեջ ծածկված էր լինում, որ դժվար էր լինում նրա երեսը ճանաչել։ Նա չէր էլ իմանում, Էլսբեթը նրան նկատո՞ւմ է արդյոք։

Այդ ժամանակները նա շատ էր տանջվում Էրդման եղբայրների ձեռքից։ Նա բոլորովին անզեն էր նրանց առաջ, որովհետև նրանցից ամեն մեկը կրկնակի ուժեղ էր նրանից։ Բայց և այնպես նրանք միշտ երկուսով էին հարձակվում նրա վրա և մինչդեռ մեկը պինդ բռնում էր նրան, մյուսը շարշարում էր։ Չէր կարելի ասել, որ նրանք բնականից չարախնդաց տղաներ լինեին. ընդհակառակը, ուրիշների նկատմամբ բար-

լացակամ ու նույնիսկ մեծահոգի էին, բայց Պաուլի խաղաղ ինքնամփոփ բնությունն էր, որ նրանք ատում էին։ Նրան անվանում էին «կեղծ բարեպաշտ» ու լավ ծեծելուց հետո ասում էին նրան. «դեհ հիմա գնա իմաց արա, դա իսկը քո բանն է»։

Նրա վայրույթն հետզհետե աճում էր նրանց դեմ։ Հաճախ նա իրեն կշտամբում էր, որ իրեն այդպես վախկոտ ու անպատիվ է ցույց տալիս և մեղադրում էր, ցած, ստրկական հոգու տեր անվանելով իրեն։ Մի օր, երբ նա ձյունածածկ բակում ման էր գալիս, ինքն իրեն այնքան բարկացավ, որ հաստատապես վճռեց ազատվել այդ չար եղբայրներից, թեկուզ յուր կյանքի գնով։ Վազեց ախոռը, վերցրեց հեսանաքարը, գանակը կոխեց սառած ջրի մեջ ու սկսեց հեսանի վրա սրել, այնքան սրեց, որ նույնիսկ մետաքսի ամենաբարակ թուղթն անգամ կկտրեր։ Բայց երբ նա հետևյալ օրը դարձյալ ծեծ կերավ, սիրտ չարավ, որ գրպանից դանակն հաներ և ստիպված էր յուր վախկոտության համար ելի իրեն կշտամբել։ Հետևյալ անգամվա հետաձգեց— բայց այդպես էլ մնաց։

Նա յուր հոր կողմից էլ շատ տանջանք էր կրում։ Սա նորերս դարձյալ մեծ ծրագրերի հետևից էր ընկել և երբ դրանց մասին մտածում էր, իրեն միշտ բարձր ու երևելի էր զգում և այդպիսի բոպեներին միշտ բարկանում էր Պաուլի վրա, նրա փոքր բաներին հակված մտքի համար։

«Ինչո՞ւ սրա վրա չէ անցել իմ հանճարի գոնե մի աննշան կայծը,— ասում էր հայրը,— ինչպե՞ս գեղեցիկ կերպով կարող էի նրան այն ժամանակ իմ ծրագրերիս համար գործածել։ Բայց դրա վրա ամեն աշխատանք կորած է»։

Նա մտադրություն ուներ այժմ յուր ճահիճը շահագործելու համար մի ակցիոներական ընկերություն հիմնել, մեծ դրամագլուխ գտնել, իրեն էլ տեսուչ նշանակել տար այդ ընկերությանը, իհարկե ռոճիկն էլ հազարներով լիներ։ Ամեն շաբաթ երեք-չորս անգամ քաղաք էր գնում և հաճախ միայն երկրորդ օրն էր տուն վերադառնում։

— Գործս դժվարությամբ է գլուխ գալու,— ասում էր նա երբ արդեն քնել էր ու հարբածությունն անցել,— բայց այդ ժլատները ձեռքիցս չեն պրծնի։

Հենց այդ Դուգլասն էլ, այդ հպարտը, դա էլ պիտի տուժի։ Ա՜խ, եթե գիտենայի, թե ինչպես կարող կլինեի նրան մի անգամ ձեռք ձգել։ Էլ ոտք չեմ կոխելու Հելենինթալ, չտեսնելու համար այնտեղ տիրող ավերն ու խանգարմունքը, որովհետև անպատճառ այդ վիճակին հասցրած կլինի նա կալվածքը։ Դժբախտաբար քաղաքումն էլ ամենևին չեմ պատահում նրան։ Բայց նա պիտի տուժի, տուժի անպատճառ, նրա սիրտը պիտի կսկծի։ Սատանան տանի նրան, եթե նա չմասնակցի ակցիային։

Տիկին Էլսբեթը լսում էր տխրությամբ այս բոլորն՝ առանց մի խոսք ասելու։ Իսկ Պաուլը սովորություն էր դարձրել սայլատան բանալին վերցնել գաղտուկ ու սայլատուն մտնել։ Նա «սև Զուլեի» հետ խոսակցության էր մտնում։ Նրան չէր թողնում այն միտքը, թե փրկությունը դրանից է գալու...

Զատկի տոներն անցնելուն պես կրոնի դասերը դարձյալ եկեղեցում վերսկսվեցին։ Տղաներն ու աղջիկները կես տարվա բացակայությունից հետո էլի իրար տեսան։

Էլսբեթը ամեռվա ընթացքում շատ էր փոխվել։ Նա այժմ համարյա թե հասած կին էր դարձել։ Կես երկայն հագուստներ այժմ, մազերն էլ ճակատի վրա խոպոպներ էր շինել։

Պաուլը բարևեց նրան շատ կոտրված սրտով։ Նրան թվում էր, որ ինքն այլևս սազ չի գա նրան, բայց նա վեր կացավ տեղից, երեք քայլ մոտեցավ դեպի նա և բոլորի առաջ շատ սիրալիր կերպով սեղմեց Պաուլի ձեռքը։

Դրանից անմիջապես հետո, դասի ժամանակ տղաների մեջ մի թուղթ էր ձեռք-ձեռք անցնում, որը մեծ զվարճություն պատճառեց։ Թղթի վրա գրված էին հետևյալ խոսքերը՝ զարդարված զանազան պոզերով ու գծերով.

«Պատիվ ունեն ներկայանալու իբրև նշանվածներ.

Պաուլ Մայրյոֆեր.

Էլսբեթ Դուգլաս»։

Կրտսեր Էրդմանի գործն էր դա։ Պաուլի ձեռքը դանակն էր փնտրում, մի բոպե թվաց նրան, թե նա կարող է հենց այդտեղ, եկեղեցու մեջ յուր հարևանին կտոր-կտոր անել, նա կատաղած դուրս պոկեց նրա ձեռքից թուղթը և բզիկ-բզիկ արավ։

Էլսբեթը ապշած նրան նայեց, իսկ քահանան կարգի հրավիրեց։ Պաուլը յուր սեփական հանդգնության համար վախեցավ այժմ։ Էրդմանները անշուշտ նկատած կլինեին, որ Պաուլի հետ այդ կետում չէր կարելի հանաք անել և էլ չփորձեցին նրան ձեռ առնել Էլսբեթի հետ։

Հոգեգալստից առաջ վերջին կիրակին նրանց օրհնությունն էր։ Պաուլը չէր քնել գիշերը. արևածագից առաջ դեռ վեր կացավ մեղմությամբ, հագավ յուր նոր սև շորերը, որ նրան ընծա էր ուղարկել բարի մորաքույրը այդ տոնի առթիվ և մի զբոսանք կատարեց ագարակի և ցողապատ դաշտերի վրա մինչև ճահիճը, որ յուր գույնզգույն ծածկոցովը շատ հանդիսավոր էր երևում։ Ծագող արևի դիմաց կանգնած նա ծալեց յուր ձեռքերը և մի ջերմեռանդ աղոթք ասաց։ Այդ օրվանից նա ուզում էր մի նոր, ավելի լավ կյանք սկսել, թողնել ամեն հակառակություն, սիրել յուր թշնամիներին, ինչպես Հիսուս Քրիստոսն էր պատվիրում... Հանկարծ միտն եկավ դանակը, որ նա երբեմն Էրդմանների համար էր սրել, դուրս քաշեց գրպանից ու նետեց մինչև ճահճի մեջ։ Տաք արցունքները թափվում էին նրա աչքերից։ Նա իրեն վատ ու անարակ էր համարում և բոլորովին անարժան աստծո սեղանին մոտենալու համար... հազիվ էր սիրտ անում նորից ագարակ դառնալ, նրա սիրտը մի փոքր թեթևացավ ու ազատություն զգաց, երկվորյակներն իրենց թեթև շորերով ցնծալով նրա դիմաց դուրս պրծան։ Պաուլը գրկեց քույրերին և խոստացավ լուռ կերպով՝ նրանց հավատարիմ բարեկամ ու օգնական լինել։

Ապա մոտեցավ նրան մայրը, որ հագած ուներ կիսամաշ մետաքսյա շոր, համբուրեց նրա ճակատն ու թշերը և նրա երեսը երկար ժամանակ յուր ձեռքերի մեջ պահեց ու ամբողջ ժամանակը նրա աչքերի մեջ էր նայում։ Նա ցանկանում էր մի բան ասել, բայց ոչինչ չկարողացավ արտասանել, բացի. «տղաս, իմ սիրելի տղաս»։

Նույնիսկ հայրն այսօր շատ լավ տրամադրության էր։ Նա բռնեց նրա երկու ձեռքերը և մի երկար ճառ կարդաց, թե ինչպես է նա սովորելու, ինչպես մարդկային կյանքի մեջ յուր աչքերը միշտ մեծ բաներին պիտի հառած պահի և նրան, յուր հորը հետևի, որը թեև շարունակ անբախտության մեջ է ու

մարդկանց վատության պատճառով շարունակ հարստահարվում է, բայց երբեք չի հուսահատվել և արիությունը չի կորցրել մինչև աստղերը ելնել բարձրանալ նույնիսկ այս թշվառական բնից, որի մեջ նրա բախտը նրան խորասուզել է։ Ապա նա իրար քաշեց հոնքերը ու արիացած ու հպարտ տակն ու վրա արավ մազերը։

Պաուլն համբուրեց նրա երկու ձեռքերն ու խոստացավ նրա ասածի պես վարվել։

Ժամը ութին նա տեսավ ճանապարհին մի կառք սահելիս, որի արծաթյա զարդերը պսպղում էին արշալույսի ճառագայթների տակ։

Երկար նայում էր նա կառքի հետևից։ Նրա համար կարծես երազ լիներ... նա իրեն անսահմանորեն լավ էր զգում ու հենց այդ բախտավորությունից նրա սիրտը ճմլվեց։ «Ինչո՞վ արժանի եմ սրան»— հարցնում էր նա ինքն իրեն ու այնուհետև սկսեց մտածմունքների մեջ ընկնել։ Երբ երկվորյակներն իմացրին նրան, որ կառքն արդեն պատրաստ է նրան եկեղեցի տանելու, նա տխրեց ու իրեն ճնշված զգաց։

Քահանայի պարտիզում, որտեղ թանթրվենիներն ու հասմիկները ծաղկում էին անուշ բուրմունքով, մարդկային երկու խմբեր էին կանգնել զատ-զատ. մեկը սպիտակ, մյուսը՝ սև։ Առաջինը աղջիկներն էին, երկրորդը՝ տղաները։

Էլսբեթը յուր ձյունափայլ հագուստով բարակ մի շալ էլ կրծքին ձգել սպիտակ ու դուրալի՝ շուշանի էր նմանվում։

Նրա այտերը շատ գունատ էին. նա աչքերը շարունակ վայր կախած էր պահում և երբեմն երգարանի հետ էր խաղ անում, երբեմն էլ թանթրվենու ոստով, որ ձեռքին ուներ։

Պաուլը երկար ժամանակ նրան էր նայում, բայց նա այդ չէր նկատում։ Նա անշուշտ ջերմեռանդ ժամին չէր ուզենա երկրային որևէ մտքից խանգարվել։

Ապա երևաց և քահանան. զանգերը ղողանջում էին և երգեհոնը տրոտում էր, և դանդաղորեն շարժվել սկսեց գնացքը դեպի սեղան, զույգ-զույգ։

Պաուլը գնում էր երկու էրգմաններից անմիջապես հետո. սրանք իրենց երկար ու սև զգեստներով շատ լուրջ և պատկառելի էին երևում։ Հանկարծ նա հիշեց յուր մեղքը, նա մի փոքր

կռացավ դեպի առաջ թեթևությամբ հրեց նրանց մեջքից ու թաց աչքերով շշնջաց.

— Ներեցեք ինձ, ես ձեզ շատ եմ նեղացրել։

Սրանք արմունկներով իրար բոթթեցին ու շարաճճի կերպով քմծիծաղ տվին։ Նրանցից մեկը կես ետ դառնալու պես արավ, տանջվածի կերպարանքով լցված, չճանաչված ու անարգված անմեղությամբ ասաց Պաուլին. «Զավակս, մենք ներում ենք քեզ»։

Պաուլը շատ լավ էր հասկանում, որ նրանք ծաղրում են, բայց նրա սիրտն այնպես լիքն էր ջերմեռանդությամբ ու սիրով, որ աշխարհքում ոչ մի ծաղր նրան չէր կարող վիրավորել։

Երեխաների խմբերը շարժվեցին սեղանի երկու կողմերը։

Պաուլը մի վախկոտ հայացք ձգեց դեպի առաջին շարքերը, ուր մարդիկ խռնված սպասում էին, բայց ոչ ոքի չկարողացավ ճանաչել։

Քարոզի ժամն անցավ. նա ապշած ցած էր նայում, ամեն բան նրան երազ էր թվում։

Մի փոքր հետո նա զգաց, որ յուր ծնկները մի փափուկ բարձի վրա են հանգչում և քահանայի ձեռքն էլ յուր գլխին... Թե նա ինչ ասաց, Պաուլը չլսեց։ Նա տեսավ այն կողմում Էլսբեթին, որ կանգնել էր ու թաշկինակը ձեռքին խափաղ լաց էր լինում ու մտածեց.

«Լաց եղիր, լաց եղիր, շուտով էլի կծիծաղես»։

Եվ ապա ինքն իրեն հարցրեց, թե ինչու մարդիկ այդքան շատ են ծիծաղում, քանի որ երկրի վրա շատ քիչ բան կա ծիծաղելու։

Երգեհոնը սկսեց երգել. «փառք տիրոջը, փառքերի զորավոր թագավորին», համայնքը բարձրաձայն ձայնակցում էր. հանկարծ նրա հայացքը արևին դարձավ, որը եկեղեցու նկարում պատուհանների ծիրանագույն ապակիների միջով ներս էր ընկել։

Եվ երբ գույների այդ խաղին ապշած նայում էր, հանկարծ սարսափեց։ Հենց այնտեղ, սեղանի գլխին դրած խաչի հետևում կանգնել էր մռայլ, սև հագնված, սպիտակահեր մի կին՝ ահագին մեծությամբ ու յուր մեծ, բաց արած, փոս ընկած

աչքերով նրան էր նայում... Ապաշխարող Մագդալինան էր դա։

Նա զգաց, ինչպես պաղ քրտինքը պատեց իրեն։

«Հոդան» է, մրմնջաց նա և կռացրեց գլուխը, կարծես կամենալով խոնարհությամբ ստանալ նրանից, ինչ որ նա սրան ընծայելու էր կյանքի համար։

Եվ երբ նա աչքերը նորից բարձրացրեց, արևն ավելի պերճորեն էր փայլում, քան առաջ։

Բոցերը, հրաշեկ ու զմրուխտյա՝ փայլում ու վառվում էին. և ճառագայթներից փառքի մի պսակ էին կազմել սպիտակահեր կնոջ գլխին։

Իսկ նա կանգնած էր տխուր ու տրտում, գեղածիծաղ գույների պերճության մեջ ու համառաբար նայում էր նրա վրա յուր մեծ, փոս ընկած աչքերից...

Իբրև վերջաբան, երգեհոնը նորից մռնչաց մի ակորդ. ուրախ դող անցավ համայնքի միջով. երեխաների խումբն շտապում էր յուրայինների գիրկն ընկնել շուտով... Եվ Էլսբեթի արտասվաթոր աչքերից նրան մի ուրախ, տոչունող հայացք դիպավ։

8

Պաուլն այժմ իրեն ամբողջովին տնտեսության հանձնեց։ Այն երդումը, որ նա յուր օրհնվելու առավոտն էր արել, հավատարիմ պահեց։ Նա աշխատում էր, ինչպես իրենց ամենավերջին մշակը և երբ մայրը խնդրում էր նրան խնայել իրեն, համբուրում էր նրա ձեռքերն ու մեղմությամբ ասում. «Դու գիտես, մայրիկ, ինչքան բան կա անելու»։

Երեկոներ, երբ մշակները հանգստանալու էին գնում և երկվորյակներն էլ քնում, մայր ու որդի նստում էին հաճախ ժամերով ապագայի համար ծրագրեր էին կազմում, հաշիվներ անում և երբ որևէ որոշման էին մոտենում կամ երբ հուսո մի նշույլ էր ճառագայթում նրանց աչքերում, պատահում էր հաճախ, որ այդտեսակ բոպեներին հանկարծ սարսափում էին և հառաչելով գլուխները կախում, բայց ոչ ոք

նրանցից չէր ասում, ինչն էր, որ նրանց սիրտն այդպես ճընշում էր...

Այդ ժամանակները տիկին Էլսբեթն սկսել էր արագորեն ծերանալ։ Նրա այտերին երևան էին եկել երկար, բարակ ակոսներ, ծնոտը առաջ էր ցցվել և նրա մազերը արծաթյա փայլ էին ստանում։ Նրա տխրամած ու վշտահար աչքերի մեջ ինչ խորքից կարելի էր իմանալ, ինչքան դեղեցիկ է եղել երբեմն այդ կինը։

—Տեսնո՞ւմ ես, այժմ ես ծեր կին եմ արդեն,— ասաց նա մի օր յուր որդուն, երբ հայելու առաջին յուր մազերն էր սանրում,— իսկ բախտը դեռ չի գալիս։

— Ախ, սուս կաց, մայրիկ, բա ինչի՞ համար եմ ես,— ասաց որդին, թեև մի հուսալի բան չկար նրա սրտում։

Մայրը տխրությամբ ժպտաց, շոյեց նրա այտերը և ճակատը ու ասաց.

— Այո՛, այնպես ես խոսում, կարծես բախտի թևերից բռնել ես... բայց թողնենք այդ... ի՞նչ կլիներ իմ ճարը, եթե ես քեզ չունենայի...

Սիրո զեղումների այսպիսի բոպեներ հաճախ չէին պատահում, որովհետև ամիսներ էին անցնում, որ մայր ու որդի սրտի ճմլությունից ուրիշ բան չունեին ու սիրտ չէին անում մի քնքուշ խոսք ասել իրար։

Երկվորյակները աճում էին հսկա քայլերով։ Նրանք կարմրաթուշ գիժ աղջիկներ էին դարձել, որոնց համար ոչ մի ծառ բարձր չէր թվում, ոչ մի փոս խոր չէր։ Գանգուր, թուխ մազերը հազար պտույտներով ընկել էին նրանց քունքերի վրայով ու նրանց տակից դուրս էին նայում երկու զույգ աչքեր լի շարաճճիությամբ, որոնք փայլատակում էին երկյուղով ու հանդգնությամբ միաժամանակ, կարծես արևի մոլորված ճառագայթներ լինեին սև անտառից դուրս ժպտալիս։

Վաղ առավոտվանից մինչև ուշ երեկո հնչում էր երկուսի քրքիջը մենակ ագարակում ու երբ նրանք դպրոց էին գնում կամ դուրսը ընդարձակ դաշտում խաղում էին, բակում տիրող խաղաղությունն ավելի ճնշող էր լինում։

Երկվորյակների համար ամեն բան մեկ էր։ Թեկուզ արև լիներ տանը կամ թե փոթորիկ. նրանց գլուխները միշտ լի էր

չարաճճիությամբ և երբ պատահում էր, որ հայրիկի բարկությունը սաստիկ էր լինում ու երկյուղալի, նրանք բարվոք էին համարում քաշվել վառարանի հետևը և նրանով էին իրենց կորցրած ուրախությունը փոխարինում, որ ծածուկ կերպով իրար կսմթում էին։

Պաուլին անսահման կերպով սիրում էին նրանք, բայց դա նրանց չէր խանգարում, որ նրա ափսեից լավ կտորները վերցնեին, նրա գրասեղանի վրայից սպիտակ թղթերը թռցնեին ու նրա անդրավարտիքի սիրուն կոճակները պոկեին ու իրենց սեփականությունը հայտարարեին. կաշաղակի պես գողանալ գիտեին։

Նա շատ էր մտածում նրանց մասին, որովհետև երկյուղ էր կրում, թե միգուցե գնալով ավելի վայրենանան, մանավանդ որ մայրիկն էլ ավելի ու ավելի հոգնում էր ու արիությունը կորցնում և այլևս առաջվա նման չէր հետևում իրերի ընթացքին, բայց Պաուլը յուր դաստիարակության փորձերը լավ չկսեց։ Նրա հորդորները երկվորյակների համար նշանակություն չունեին և մի անգամ, երբ նա մի գեղեցիկ քարող էր կարդում նրանց գլխին պատժի մասին, քույրերից մեկն հանկարծակի թռավ նրա գոգն ընկավ, բռնեց նրա քիթը ու մյուսին կանչեց. «Էհ, դու, տես, մորուք է բուսնում»։

Ապա սա էլ յուր քրոջն հետևեց և այժմ արդեն երկուսով մրցում էին իրար հետ ձգձգելով նրա պոչներից։ Բայց երբ նա արդեն լուրջ կերպով բարկացավ, այծի պես թռչկոտեցին ու բացականչեցին.

«Այ ֆու, էլ քեզ հետ չենք խոսի»։

Պաուլը յուր օրհնության օրից ի վեր Էլսբեթին դեռ չէր տեսել, թեև մի ամբողջ տարի էր անցել այն օրից։

Նա լսում էր, որ նրան քաղաք են ուղարկել, որպեսզի այնտեղ ընկերական կրթություն ստանա։ Այդ խոսքը շատ էր խոցել նրա սիրտը, թեև նա հաղիվ էր հասկանում դրա իմաստը, բայց մութ կերպով զգում էր, որ նա ավելի հեռանում էր իրենից։

Զատկվա ժամանակներին պատահեց մի օր, որ Պաուլը դուրս եկավ մի կտոր հող մշակելու, որ առանձին ընկած էր անտառի ծայրին— բոլորովին անջատված իրենց կալվածքից։

Նա ինքը ցանում էր, իսկ մի մշակ երկու ձիերով գնում էր նրա հետևից՝ ցանածը տափանելով։

Պաուլը ուսերին ձգել էր սպիտակ քաթանե ծածկոց, որ հետևում կոճկված էր և բավականությամբ դիտում էր, թե ինչպես հացահատիկները վայր ընկնելիս տսկյա բյուրեղների նման փայլատակում էին։ Նրան թվում էր, թե նա անտառի մրոայլ բների մեջ մի լուսավոր բան է տեսնում, որ ճոճվելով տարուբերվում է, կարծես ճոճանակ լինի, որ օդում կախված է։ Բայց նա հաղիվ ժամանակ ուներ այդպիսի մտքերի անձնատուր լինելու, որովհետև ցանքը ուշադրություն պահանջող մի աշխատանք է։

Վրա հասավ նախաճաշի ժամը։ Մշակը նստեց հացահատիկների պարկի վրա, իսկ նա անտառ մտավ՝ մի ստվերոտ տեղ գտնելու, որովհետև շոգել էր։

Նա մի թեթև հայացք նետեց դեպի տատանվող ճոճանակը ու մտածեց. «անշուշտ մի ճոճարան կա այնտեղ», բայց նա չհետաքրքրվեց, թե ով էր նրա միջինը։

Ապա նրան հանկարծ թվաց, թե յուր անունն է լսում։

— Պաուլ, Պաուլ։— Ձայնը հնչում էր շատ սիրալիր և մոտերմաբար— մի բարձր, փափուկ ձայն էր դա, որ նրան լավ ծանոթ էր թվում։

Վախեցած վեր նայեց։

— Պաուլ, դե՛հ արի,— մեկ էլ կանչեց ձայնը։ Պաղ ու տաք քրտինքը պատեց նրա մեջքը, որովհետև նա այժմ շատ լավ գիտեր, ումն էր այդ ձայնը։

Ամոթխած մի հայացք ձգեց յուր աշխատանքի շորերին ու ուզեց յուր քաթանե ծածկոցի կապերն արձակել, բայց նրանք թիկունքն էին անցել, այնպես, որ իզուր էր շարշարվում Պաուլը։

— Դեհ արի, ինչպես որ կաս,— կանչեց կրկին ձայնը. այժմ Պաուլը տեսավ, թե ինչպես արոտների միջից նրա մարմնի վերին մասը ուղղվեց, բարձրացավ, մինչդեռ նրա ձեռքից մի ոսկեկազմ ու կարմիր գիրք սահեց, վայր ընկավ։

Վարանելով մոտեցավ, աշխատելով ծածուկ կերպով յուր կոշիկները, որոնք խոնավ հողից կեղտոտվել էին, մոտակա ճահուտքի մեջ մի փոքր մաքրել։

Աղջիկն էլ յուր կողմից վերջին բոպեին նկատել էր, որ յուր ոտքերը սպիտակ գուլպաներով հագուստի տակից երևվում էին և շտապով ուզեց ուսերին ձգած շալով ծածկել։ Բայց նրան չհաջողվեց շալը դուրս քաշել թևի տակից և որովհետև չէր իմանում ինչ աներ, թխսկան հավի նման կծկվեց նստած տեղում, մինչդեռ ճոճանակը ուժգին կերպով ետ ու առաջ էր տատանվում։

Թերևս նրա մտադրությունն այն էր, որ յուր վստահությամբ ու նոր սովորած ընկերային կրթությամբ մի փոքր զարմացնի Պաուլին, բայց բախտն այնպես բերեց, որ նա ևս ոչ պակաս կարմրած ու շփոթված ստիպված էր աչքերը հառել նրա վրա, ինչպես սա նրան։

Պաուլը յուր կողմից ոչինչ չնկատեց նրա հոգեկան դրության մասին. նա գտավ միայն, որ նա շատ գեղեցկացել էր, որ նրա մազերը մի սիրուն հյուսք էին կազմել, և որ նրա կրծքի քողը կլոր կիսակամարի վրայով մեղմությամբ թրթռում էր։ Վերջին հանգամանքը նրան վերջնականապես պարզեց, որ նա իսկական կին էր դարձել արդեն։

Ահագին միջոց անցավ, մինչև որ նրանցից մեկը մի խոսք ասաց։

— Բարև... դու,— ասաց աղջիկը մեղմությամբ ժպտալով և մեկնեց նրան իր աջ ձեռքը, որովհետև նկատեց, որ վերջ ի վերջո ինքն էր սկսելու։

Տղան լուռ էր ու ժպտում էր նրան։

— Օգնիր մի փոքր, շալս բարձրացնեմ,— շարունակեց նա։

Պաուլը օգնեց։— Դե՜հ, այժմ ներեսդ շուռ տուր։— Այդ էլ արավ։— Այժմ լավ է։— Աղջիկը արագությամբ շալը ոտքերին էր ձգել ու դարձյալ յուր տեղում պառկել ու այժմ ճոճքի օդերի միջով շարաճճի կերպով դուրս էր նայում։

— Ճիշտ եմ ասում, շատ ուրախ եմ, որ դարձյալ քեզ մոտ եմ,— ասաց նա,— դու էլի բոլորից լավն ես։ Դու էլ ինձ կարոտե՞լ էիր։

— Ոչ,— պատասխանեց Պաուլը ճշմարտապատում կերպով։

— Ախ, հեռացիր... դու,— ասաց աղջիկը և փորձեց խոռ-

ված կերպով մյուս կողմը դառնալ, բայց որովհետև նրա ճոճքը սկսել էր դարձյալ ուժեղ կերպով տատանվել, յուր տեղում մնաց ու ծիծաղեց։

Պաուլը ներքուստ զարմանում էր, որ նա այնքան ուրախ էր։ Նա դեռ ոչ ոքի չէր տեսել այդպես ծիծաղելիս, բացի երկվորյակներից. սրանք էլ երեխաներ էին։

Բայց հենց այդ ծիծաղն էր, որ նրան դարձյալ աղատություն տվեց. որովհետև նա բնազդորեն զգաց, որ ինքը նրա նկատմամբ շատ է մեծացել։

— Իհարկե, շատ լավ անցկացրած կլինես դու այս ամբողջ ժամանակը,— հարցրեց Պաուլը։

— Փառք աստծո, այո,— պատասխանեց սա։— Մաման մի փոքր թույլ է, հենց այդ է ամբողջ ցավը։— Մի ստվեր անցավ նրա երեսով, բայց շուտով դարձյալ անհայտացավ, ապա կրկին շարունակեց,— քաղաքումն էի, ա՜խ, ի՜նչ բաներ տեսա, ինչե՜ր արի ես այնտեղ. մի հարմար առիթով բոլորը կպատմեմ քեզ։ Պարի դասեր էի առնում։ Հարգո՛ղներ էլ ունեցա. կարող ես հավատալ։ Պատուհանիս առջևումն զբոսանքներ էին անում, անանուն ծաղկեփնջեր էին ուղարկում, տատանվորներ էին տալիս, սեփական տատանվորներ։ Նրանց մեջ մի ուսանող կար, կանաչ-սպիտակ-կարմիր գլխարկով, նա լավ էր հասկանում յուր բանը։ Վերջն էլ Բերտի Ջեռմախերի հետ նշանվեց, իմ ընկերուհիներից մեկի հետ, բոլորովին ծածուկ, բացի ինձանից ոչ ոք չգիտե դա։

Պաուլն աղատ կերպով շունչ քաշեց, որովհետև այն ուսանողը սրա գլուխն սկսել էր արդեն տաքացնել։

— Դու չբարկացա՞ր հապա,— հարցրեց նա։

— Ինչի՞ համար։

— Որ նա քեզ անհավատարիմ եղավ։

— Ոչ, այդ տեսակ բաները մեզ չի բարկացնի,— ասաց նա ու ուսերը թոթվեց։— Գիտես, դրանք բոլորը անփորձ, տհաս տղերք են քե՞զ հետ համեմատած։— Մի տաք սարսուռ անցավ նրա մարմնով, երբ լսեց, թե ուսանողին տհաս կարելի է անվանել և հետո էլ իրեն հետ համեմատել։

— Իմ եղբայրը տհաս տղա չէ,— ասաց նա։

— Քո եղբորը ես չեմ ճանաչում,— փիլիսոփայի սառնա-

սրտությամբ վրա բերեց նա,—կարելի է թե նա տհաս չէ։ Այո, ես շա՜տ շա՜տ բան տեսա ու փորձվեցի։ Գրականության դասեր էլ եմ վերցրել ու այս բաժնում շատ գեղեցիկ բաներ սովորեցի։

Նրա մեջ մի տանջող նախանձ շարժվեց։

— Վերցրու մի այդ գիրքը։— Նա վերցրեց։— Գիտե՞ս ինչ գիրք է։

Նա կարդաց կարմիր կողի վրա ոսկեզօծ տառերով. «Հայնե, Երգերի գիրք» ու տխրությամբ թափահարեց գլուխը։

— Ախ, ուրեմն բան չգիտես։ Ինչե՞ր չկան դրա մեջ։ Գիտես, այդ գիրքը վերցրու ինձանից, կարդա՛, շատ բան կարելի է դրանից սովորել ու երբ մարդ մի փոքր կարդում է, լացն է գալիս։

— Մի՞թե այդքան տխուր գիրք է,— հարցրեց նա ու ճնշված հետաքրքրությամբ տնտղեց նրա կարմիր կողը։

— Այո, շատ տխուր է, այնպես գեղեցիկ ու այնպես տրխուր, ինչպես... ինչպես... միայն սիրո մասին խոսք կա այդտեղ, էլ ուրիշ ոչ մի բանի ու մարդ զգում է, ինչպես տենչանքը թև է տալիս մարդու, թռչել է ուզում մարդ դեպի Գանգես, ուր ծաղկում են լոտոսի ծաղիկները, ուր...

Նա կանգ առավ, ապա զվարթությամբ ծիծաղեց ու ասաց.

— Ա՜խ, ի՜նչ հիմար բաներ են։

— Ի՞նչը։

— Որ ես այսպես շատախոսում եմ։

— Ախ, ոչ, ամբողջ կյանքիս ընթացքում կուզեի քեզ այդպես խոսելիս լսել։

— Հա՜, կուզեի՞ր։ Ա՜խ, դու... այստեղ ինչքա՜ն լավ է։ Ինձ թվում է, թե ես թաքնվել եմ, երբ դու կողքիս ես։— Ու այս ասելով, նա տարածվեց ցանցի միջով, կարծես ուզում էր նրա ուսերին թռչել։

Բախտավորության ու խաղաղության մի օտարոտի զգացմունք եկավ նրա վրա, որի նմանը Պառվը երկար ժամանակ չէր զգացել։

— Ինչո՞ւ ես այդպես հեռուն նայում,— հարցրեց աղջիկը։

— Ես հեռուն չեմ նայում։

— Այո... Դու ինձ պիտի նայես։ Ինձ շատ դուր է գալիս

այդ... Քո աչքերն այնպես լուրջ են, այնպես հավատարիմ... Ահա, այժմ իմացա, ինչի հետ կարող եմ այդ երգերը համեմատել։

— Ինչի՞ հետ։

— Քո սուլոցի հետ։ Սա էլ այնպես... այնպես... դեհ դու գիտես արդեն... էլի սուլո՞ւմ ես հաճախակի։

— Շատ քիչ։

— Երևի չես էլ սովորել դեռ սրինգ ածել։

— Ոչ։

— Օ, ֆո՛ւ, եթե ինձ սիրում ես, կսովորես... հետևյալ անգամ ես քեզ մի սիրուն սրինգ կնվիրեմ։

— Բայց ես ոչինչ չունեմ քեզ փոխարենը նվիրելու։

— Ո՛չ, ունիս, դու կնվիրես ինձ այն բոլոր երգերը, որ դու կածես։ Եվ երբ շատ տխուր լինես... կարդա այս գիրքը... ամեն բան կա այնտեղ։

Պատուը նորից տնտղեց գիրքն ամեն կողմից. «Ի՞նչ զարմանալի գիրք պետք է լինի սա»— մտածում էր նա։

— Այժմ քո մասին պատմիր մի փոքր,— ասաց աղջիկը,— ի՞նչ ես անում, ինչո՞վ զբաղվում, ինչպե՞ս է քո սիրելի մաման։

Պատուը շնորհակալությամբ նրան նայեց։ Նա զգում էր որ այսօր կարող է խոսել, ինչպես որ սիրտը տալիս էր, բայց հանկարծ միտքն ընկավ, որ նախաճաշի ժամն արդեն վաղուց անցել է և, որ այժմ մշակն ու ձիերը նրան են սպասում։ Մինչև ճաշ նա պիտի գործը վերջացներ, որովհետև ճաշից հետո նա տորֆ պիտի ուղարկեր քաղաք, որ ծածուկ կերպով կտրել էր տվել։

— Ես պիտի աշխատելու գնամ,— թոթովեց նա։

— Ա՜խ, ափսո՛ս, և երբ կպրծնե՞ս։

— Կեսօրին։

— Այդքան երկար չեմ կարող քեզ սպասել, եթե ոչ մամաս կվախենա։ Բայց իհարկե այս օրերս էլի մի անգամ դուրս կըգաս այս կողմերը, կարելի է դարձյալ ինձ գտնես։ Այժմ մի ժամ էլ այստեղ կպառկեմ և քեզ կնայեմ։ Հիանալի ես երևում դու հեռվից քո ձյունի պես ճերմակ ծածկոցովդ, երբ վեր ու վար ես քայլում ու չորս կողմդ հատիկներ ցանում։

Պաուլն անխոս նրան ձեռք տվեց ու հեռացավ։

— Գիրքն այստեղ կթողնեմ,— կանչեց աղջիկը նրա հետևից,— երբ գործդ վերջացնես, արի տար...

Մշակը խորամանկ կերպով ժպտաց, երբ նրան տեսավ մոտենալիս, իսկ Պաուլն հաղիվ էր սիրտ անում նրան նայել։

Յուրաքանչյուր անգամ, երբ նա աշխատանքի միջոցին այնտեղ էր գալիս, որտեղից երևում էր անտառի ճոճքը, էլաբեթն ուղղվում էր յուր տեղում ու թաշկինակով նրան էր անում նրան։ Տասներկուսի մոտերքը նա հավաքեց յուր ճոճքը, անտառի ծայրին մոտեցավ ու մնաս բարև կանչեց յուր ձեռքով։

Նա գդակը վերցրեց շնորհակալ լինելու, իսկ մշակն այդ միջոցին մյուս կողմն էր նայում ու յուր համար շվացնում էր, իբր թե ոչինչ չի նկատում։

Այդ օրը ճաշի ժամանակ մոր աչքը շարունակ տղի երեսին էր և երբ նա մենակ մնաց նրա հետ, մոտեցավ նրան, նրա գլուխն առավ յուր երկու ձեռքերի մեջ ու ասաց.

— Ի՞նչ է պատահել քեզ, զավակս։

— Ինչո՞ւ որ,— հարցրեց սա շփոթված։

— Քո աչքը այնպես տարօրինակ կերպով փայլում է։

Նա բարձրաձայն ծիծաղեց ու հեռացավ, բայց երբ երեկոյան՝ ընթրիքի ժամանակ մայրը նրան շարունակում էր դեռ այնպես նայել, հարցական ու տխուր, նրա սիրտը ցավեց, որ յուր մորը հավատ չի ընծայում, մոտեցավ նրան ու ամեն բան պատմեց, ինչ որ յուր հետ պատահել էր։

Արևի շողքի պես մի բան անցկացավ մոր տխրագին երեսով և երբ տղան ամոթխած թշներով կամացուկ հեռացավ մոր մոտից, սա թաց աչքերով երկար նայեց նրա հետևից ու ձեռքերը ծալեց, կարծես աղոթել էր ուզում։

Պաուլը մինչև կեսգիշեր նստել էր յուր առանձնասենյակում, գլուխը ձեռներին հենած։ Խորհրդավոր գիրքը ծնկների վրա էր, բայց կարդալ չէր կարող, որովհետև հայրը արգելել էր նրան երեկոները ճրագ պահել։ Նա ստիպված էր մինչև կիրակի սպասել։

Նա մտածում էր այն մասին, թե ինչպես փոխվել էր էլաբեթը։ Ինչու այդքան ծիծաղում էր նա, նրա կենսուրախութու-

նը օտարացնում էր նրան սրանից ու այն լիակատար, փարթամ կյանքը, որով փայլում էր նա, նրան հեռացնում, տանում էր շատ հեռու, դեպի այն աշխարհը, ուր բախտավորներն էին ապրում։ Եվ թեև սիրո և բարության կողմից նա նույնն էր մնացել, բայց շուտով պիտի սկսեր նրան արհամարհել, անտես առնել, չէ՞ որ ինքը լոկ գյուղական մի տղա էր, հիմար ու անճար և դրա վրա էլ դեռ միշտ տխուր։

Նրա գլուխը լի էր բախտի, ամոթի, ինքնակշտամբանքների խառնիխուռն զգացմունքներով, որովհետև նա կարծում էր, որ նա իրեն ավելի լավ ու արժանավայել կերպով կարող էր պահել։ Մի խորհրդավոր երկյուղի զգացմունք էլ էր գալիս, որ քիչ էր մնում նրա կոկորդը բռներ ու շատ էր մտածում, քրքրում, փորփրում, թե դա ինչ վախ էր, չէր կարողանում իմանալ։

Հետևյալ օրը ճաշից առաջ նա տեսավ իրենց բակից, որտեղ նա ձողեր էր տնկում, որ անտառի ծայրում մի ինչ-որ ճերմակ բան է շարժվում։ Տխրությամբ ու զայրույթով կրծոտեց ատամները, բայց սիրտ չարավ աշխատանքը թողնել։

Ճերմակ բանը դրանից հետո երկու օր էլ երևաց, ապա անհայտացավ։

Կիրակի ճաշից առաջ, առաջ բերեց նա յուր արկղից երգերի գիրքը ու գնաց անտառ զբոսնելու, ճաշին էլ տուն չեկավ, երեկոյան երկվորյակները, որոնք այնտեղ խաղ անելու էին դուրս եկել, նրան գտան մի թփի տակ պառկած սուզելիս, մինչդեռ արտասուքները վազում էին նրա թշերով։

Այդ կերպ էր թարգմանում նա «Երգերի գիրքը» յուր լեզվով։

Քիչ ժամանակ անց նա լսեց, որ բժիշկները պատվիրել էին տիկին Դուգլասին՝ առողջությունը վերականգնելու համար երկար ժամանակով հարավ գնալ և որ Էլսբեթն էլ ուղեկցելու էր նրան։

«Այդպես շատ լավ է,— ասում էր նա ինքն իրեն,— էլ իմ մտքերը տակն ու վրա չի անի»։ Երկար ժամանակ չէր իմանում փոխ առած գիրքը վերադարձնի՞, թե չէ, ուրախությամբ կպահեր, բայց խիղճը թույլ չէր տալիս։ Մի հարմար առիթի էր սպասում, մինչև որ իմացավ, որ նրանք արդեն մեկնել են։ Նա բավական մնաց ու հանգստացավ։

9

Անցան հինգ երկար ու ձիգ հոգսերով ու չարչարանքներով լի տարիներ։ Պաուլն յուր կյանքն ավելի էր դժվարացնում, վաղ առավոտից մինչև ուշ գիշեր աշխատում ու ստեղծում էր, նրա աշխատասեր ձեռքը ամեն բանի կպչում ու ղեկավարում էր, ինչի որ նա ձեռք էր տալիս, աճում, առաջ էր գալիս։ Բայց ինքը հազիվ էր նկատում դա, որովհետև ամեն ժամ նրա մտքերը դեպի ապագան էին թռչում։

Նրա ճակատը ծածկված էր միշտ միևնույն ծալքերով, նրա աչքը միշտ նույն մտախոհ, հետազոտող հայացքն ուներ և հաճախ օրեր էին անցնում, որ նա աշխատանքի ժամերին, նաև ճաշի ժամանակ մի հատիկ խոսք չէր արտասանում։

Նա այն համոզումն ուներ, որ իսկապես վերցրած նրա աշխատանքն անօգուտ էր։ Հոր շնորհակալությանը նա երբեք հույս չուներ. արդեն սովորել էլ էր նրան տանել մի կերպ, բայց այն, ինչ որ նա դժվարությամբ էր սովորում, հորը համբերությամբ հնազանդվելն էր, երբ նա քմահաճ կերպով մի ժամում ոչնչացնում էր, ինչ որ նա շաբաթների չարքաշ աշխատանքով էր ձեռք բերում։

Երբ հայրը յուր ճանապարհորդությունից տուն էր վերադառնում, քիչ չէր պատահում, որ մշակների մոտ նրան տհաս ու հիմար անվաներ, դառն կերպով գանգատվում էր, որ ստիպված էր յուր տնտեսությունը այդպիսի անընդունակ ձեռքերի հանձնել, երբ պարտքը նրան հեռուն էր կանչում— ու ոչ ոք չէր իմանում, ինչ պարտք էր դա։

Այդպիսի ժամանակները լռում էր Պաուլը, որովհետև նրա սրտի խորքում կենդանի էր հետևյալ պատվիրանը. «Պատվիր քո հորն ու մորը». պատվիր քո հորը՝ մորդ սիրուն— փոխել էր նա, բայց հետազոտող աչքով նայում էր նա մշակների դեմքերին և երբ մեկին ծիծաղելիս, չարախնդաց կերպով ժպտալիս կամ թևով հարևանի կողքը բոթելիս տեսներ, հետևյալ օրն անմիջապես արձակում էր։

Մշակների մեջ մեկը կար, որ ամբողջ ժամանակն ագարակումն էր աշխատել, նա կոչվում էր Միխել Ռատուդցուս և լիտվական ծագում ուներ, նա դաշտում, Հելենինթալից շատ հե-

ռու մի խրճիթ ուներ, աղքատիկ ու խարխուլ, որի պատերը տորֆով ծեփել էր, որպեսզի փոթորիկը չվնասի։ Ուներ նաև մի անառակ կին, որ երկու անգամ արդեն բանտումն էր եղել և յուր երեխաներին մուրացկանության էր ղրկում։

Մի լռակյաց, մռայլ տղա էր, որ յուր աշխատանքը օրինակելի կերպով կատարում էր ու առանց տրտնջալու, առանց մի խոսք ասելու հեռանում էր, երբ այլևս պետք չէր, բայց և ճշտապահ կերպով գործի էր կպչում, երբ նորից աշխատանքի էին կանչում։

Սկզբում Պաուլը նրան չէր սիրում, որովհետև նրա խոսքի ժլատությունը, լռակյացությունը, նրա երկչոտ ու մռայլ շարժումները նրա վրա անտանելի տպավորություն էին թողնում, բայց հետո նա մտածեց, որ ինքն էլ շատ բանով չի տարբերվում նրանից ու այդ ժամից սիրեց նրան։

Նույնիսկ Պաուլի հայրն էլ դեպի այդ մշակը որոշ հարգանք էր տածում, որովհետև, թեև նա հարբած ժամանակը մշակներին ծեծ էր տալիս, նրան դեռ ամենևին չէր կպել, կարծես թե նրա թավ հոնքերի տակից դուրս նայող հայացքը նրան սանձահարում էր։

Այդ մշակը Պաուլի ամենահավատարիմ օգնականն էր։ Պաուլն աղատ կերպով վստահում էր նույնիսկ հացահատիկները քաղաքում ծախելու և նա միշտ ամենաբարձր գնով էր ծախում։

Այդ հինգ տարվա ընթացքում շատ բան էր փոխվել խաղաղ ագարակում՝ փոփոխությունը կատարվել էր խաղաղ ու աննկատելի կերպով։ Հետզհետե անհայտացել էին աղքատության հետքերը, կարիքը շատ սակավ էր նկատվում սեղանի վրա։ Պարտիզում երևան էին եկել գույնզգույն ծաղկանոցներ, երկար շարքերով աճում էին պատիճի ու ծնեբեկի թփիկները և խարխուլ տախտակյա ցանկապատը վաղուց փոխարինվել էր մի նոր ցանկապատով։ Նախիրը ամեն տարի ավելանում էր երկու-երեք թանկագին կովով և կաթնակառքը, որ ամեն առավոտ քաղաք էր գնում, ամսի մեկին բավականին փող էր տուն բերում։

Բայց եթե, չնայած այս բոլորին, բարեկեցության մասին ոչ մի խոսք չէր կարելի անել, դրա միակ պատճառը հայրն էր

Միայն, որը եկամուտների ահագին մասը կամ անհասկացող կերպով վատնում էր և կամ կոկորդը լցնում։

Նրանից ծածուկ Պաուլը կարողացել էր գոնե յուր քույրերի համար ամսական մի քանի թալեր ետ ձգել։

Նրա եղբայրներն այժմ ավելի էին փողի կարիք զգում, քան երբևիցե։ Մաքսը պետական քննություն էր տվել ու այժմ ձրիաբար յուր փորձնական դասն էր տալիս մի գիմնազիայի մեջ։ Գոտֆրիդը, որ գրասենյակի աշխատող էր, տարեկան մի քանի ամիս անպաշտոն էր։ Երկուսն էլ աղաչական նամակներ էին գրում Պաուլին՝ ամեն տեսակ պահանջներ անելով սրանից. «Շուտով ինձ 30 թալեր ուղարկիր»— սրտամորմոք կերպով աղաչում էր մեկը։ «Եթե չես ցանկանում, որ ես կորչեմ, խղճա ինձ...»։

Պաուլը շատ անքուն գիշերներ էր անցկացնում ու մտածում, ինչպես անի, որ նրանց օգնել կարողանա և քիչ չէր պատահում, որ նա յուր սեփական անձից էր կտրում ու նրանց ուղարկում։

Գոտֆրիդը մի անգամ նրան գրել էր, որ շորերը բոլորովին քրքրվել են և անհրաժեշտորեն ամառային մի զգեստի կարիք ունի։ Հենց այդ ժամանակները Պաուլը ցանկանում էր իրեն մի կիրակնօրյա շոր կարել տալ, որովհետև նրա հինը բոլորովին անպետքացել էր. հառաչելով վերցրեց փողը, որ այդ նպատակի համար էր պահել, մի ծրարի մեջ դրեց ու եղբորն ուղարկեց, բայց հետն ուղարկած նամակի մեջ էլ դգալ տվեց, որ յուր սեփական շորերն էլ ավելի լավ դրության մեջ չեն։ Եղբայրը մեծահոգի գտնվեց, 14 օրից հետո նրան հին շորերով լեցուն մի փաթթոց ուղարկեց, հետն էլ մի նամակ, որի մեջ գրված էր՝ «ուղարկում եմ իմ հին շորերից մեկը, դու քո անպաճույճ ու պարզ դիրքի մեջ երևի կարող կլինես օգուտ քաղել դրանից»։

Երկվորյակների համար էլ Պաուլը կարողացել էր ավելի փառավոր մի ապագա պատրաստել, քան այդ թույլ էին տալիս տան սուղ միջոցները։ Նա հաջողացրել էր, որ քահանայի կինը, որ առաջ դաստիարակուհի էր, նրանց յուր մասնավոր դպրոցն ընդունի, որ նա բաց էր արել շրջակա ունևոր կալվածատերերի աղջիկների համար։

Դժվարն ուսումի փողը չէր, գրքերն ու տետրակներն էլ դեռ ոչինչ, բայց դժվար, շատ դժվար էր հարկավոր եղած շորերը հագցնել նրանց, որովհետև նրա հպարտությունը թույլ չէր տալիս, որ յուր քույրերը ընկերուհիներից ետ մնան և մուրացկանի զավակների տեղ դրվին։ Նա ինքը շատ լավ գիտեր՝ ինչ ասել է արհամարհված լինել և այժմ թույլ չէր կարող տալ, որ քույրերն էլ դրա ճաշակն առնեին։

Նույնիսկ նրա մայրը այս կանացի հոգսերի համար ոչ մի նեցուկ չէր Պաուլի համար։ Յուր մարդու հաճախակի հայհոյանքների ու բարկության պատճառով խեղճ կինն այնքան վախկոտ էր դարձել, որ սիրտ չէր անում յուր պատասխանատվությամբ մի լաթի կտոր անգամ գնելու։

— Ինչ որ դու անում ես, որդիս, արդեն լավ կլինի,— ասում էր նա. և Պաուլը քաղաք էր գնում և մանուֆակտուրիստներից ու դերձակներից լավ խաբվում, կողոպտվում էր։

Երկվորյակներն անհոգ ու ինքնավստահ աճում էին, առանց հեռավոր գաղափար անգամ ունենալու այն ողբերգության մասին, որ նրանց քթի տակին կատարվում էր։

Տասը տարեկան հասակում ծեծկվում էին նրանք գյուղի տղաների հետ, տասներկուսի մեջ՝ գնում էին նրանց հետ տանձ գողանալու և տասնհինգ տարեկան հասակում մանուշակի փնջեր էին ընդունում նրանցից...

Նրանք այժմ ամեն տեղ հայտնի էին իբրև այդ կողմերի ամենադեղեցիկ աղջիկները։ Պաուլն այդ շատ լավ գիտեր և քիչ չէր հպարտանում դրանով, բայց այն, ինչ որ նա չգիտեր, այդ այն էր, որ նրանք պարտիզի ցանկապատի հետևում ժամադրություններ էին անում և որ իրենց կոնֆիրմացիայի եղբայրներից կեսից ավելին պարծենալ կարող էր, որ նրանց կարմիր ու քաղցր պռոշներից համբույրներ է քաղել...

10

Հունիս ամիսն էր, մի արևոտ կիրակի, կեսօրից հետո։

Անտառից մեղմ կերպով լսվում էր փողի ձայնը։ Այսօր այնտեղ մեծ տոն էր կատարվում։ Մի թափառաշրջիկ երաժշտ-

տախտամբ համերգ էր տալու այդտեղ։ Շրջակա բնակիչներն ամեն կողմից հավաքվել էին, նույնիսկ ասպետ կալվածատերերը չէին արհամարհել մասնակցել այդ հանդեսին, որովհետև այդ խաղաղ, մենակյաց անտառավայրում այդպիսակ բաներ շատ քիչ էին պատահում։

Դեռ կեսօրից սկսած կառքերի երկար շարքը անցնում էր ագարակի կողքով և Մայհյոֆերը, որը սովորաբար այնքան էլ սիրով տանը չէր նստում, եթե որևէ տեղ մի բան էր պատահում, հանկարծակի իրեն շատ բարի ցույց տվեց ու պատվիրեց կանանցը շուտով պատրաստվել, նա ցանկանում էր այսօր զոհաբերություն անել, իրեն զոհել ու նրանց տանել տունի։

Երկվորյակները, որոնք վաղուց պատուհանից դուրս էին նայում ապշած ու հետաքրքրությունից փայլող աչքերով, ուրախությունից բարձրաձայն աղաղակեցին, տիկին Էլսբեթը հեզիկ կերպով նրանց ժպտաց ու ապա դարձավ Պաուլին, որը մի անկյունում նստած հանգիստ կերպով ծաղիկների համար ձողիկներ էր կտրտում, կարծես այդ բոլորը նրան ամենևին չէր վերաբերում։

— Դու էլ չե՞ս ցանկանում գալ։

— Պաուլը կարող է կառապանություն անել,— ասաց հայրը անհոգությամբ։

Նա շնորհակալ եղավ, բացատրելով, որ յուր շորերը մաշված են, բացի այդ նա ցանկանում է վերահասու լինել մշակներին, որոնք երեկոյան վերջացնելու էին իրենց գործը։ Առավոտ խոտհունձքն էր սկսվելու։

Երկվորյակները նրան նայեցին, գլուխներն իրար մոտեցրին ու քրքջացին, ապա, երբ նա դռանը մոտեցավ, վազեցին նրա մոտ, քաշքշեցին նրան ու Կետեն ասաց.

— Մի բան գիտենք։

— Ի՞նչ է ձեր գիտցածը։

— Մի լավ բան,— ասաց Գրետեն խորհրդավոր կերպով։

— Դեհ, շուտ ասեք։

— Էլսբեթ Դուգլասը արդեն վերադարձել է։

Ու բարձրաձայն հռհռալով դուրս փախան։

Պաուլն սկզբում շատ բարկացավ, որ նրանք համարձակ-

վում էին իրեն ծաղրել, ապա ախ քաշեց ու ժպտաց ու զարմացավ, որ յուր սիրտն հանկարծակի այդպես արագ խփել սկսեց։

Կես ժամից հետո նրանք գնացին։

— Դու էլ շուտով արի,— կանչեց նրան մայրը կառքից, իսկ Կետեն էլ կառք բարձրանալիս փսփսաց նրա ականջին.

— Ես կարծում եմ, նրանք էլ այնտեղ կլինեն։

Ամայի ագարակում մենակ էր նա այժմ... Աղախինները արոտատեղին էին գնացել կով կթելու... Ոչ մի շնչավոր չկար ամբողջ շրջակայքում...

Բաղերն իրենց ջրավազանի մեջ գլուխները թևերի տակ կոխած հանգստանում էին, շղթայի զարկած շունը հոգնած ու քնած կերպով ճանճորսությամբ էր պարապում։

Պաուլը նստեց պարտիզի ցանկապատի վրա ու ապշած անտառն էր նայում, որի ծայրում փայլուն շորերի շողքերը պսպղում էին, այստեղ-այնտեղ կարծես լուսավոր կրակներ էին պեծին տալիս, երբ արևի ճառագայթները ընկնում էին այնտեղ կիտված կառքերի մետաղյա սարքերի վրա։

Վրա հասավ երեկոն։ Նա դեռ չէր վճռել՝ արդյոք սիրտ անի գնա, թե չէ։

Հազարավոր հիմքեր կային, որ նրա չգնալը անհրաժեշտ էին դարձնում, բայց երբ նա բոլորովին պարզորեն զգաց, որ ինքն էլ իրենց տանն է պատկանում, հագավ յուր կիրակնօրյա զգեստը և դիմեց դեպի հանդեսը։

Արդեն սկսել էր մթնել, երբ նա անցնում էր անուշաբույր դաշտով։ Նրա սիրտը սեղմվում էր մի ինչ-որ սաստիկ երկյուղից։ Նա չէր համարձակվում դրա պատճառները փնտրել, բայց երբ անցնում էր այն թփի մոտով, որտեղ նա մի օր Էլսբեթին յուր ամենագեղեցիկ երգն էր սուլել, հանկարծակի նրա սիրտը մի խորին ցավ զգաց, կարծես մի ծակոց լիներ։

Կանգ առավ ու մտածում էր, թե արդյոք լավ չէ՞ր լինի ավելի շուտ ետ դառնալ... «Հագածս շորը չափազանց վատն է»— ասում էր նա ինքն իրեն։ «Մի կարգին հասարակության մեջ անկարելի է այսպես երևալ»։ Ապա հանեց վերնազգեստն ու ամեն կողմից լավ տնտղեց։ Մեջքի կարերն արդեն հլզել

էին, արմոնկներին նստել էր մուգ արծաթագույն մի փայլ ու առաջին կողմը նույնիսկ փոքրիկ ծակեր ուներ։

«Ինչքան էլ գնալ ուզենամ, անկարելի է սրանով»,— ասաց նա ու ապա նստեց այդ թփի տակ ու սկսեց երազել, թե ինչքան լավ կլիներ, ինչքան գեղեցիկ ու շնորհալի կարող էր երևալ, եթե կարողացած լիներ մի վերնազգեստ գնած լինել։ «Բայց դեռ շուտով չի լինի»,— շարունակում էր նա։ «Նախ Մաքսն ու Գոտֆրիդը դեռ պետք է իրենց տեղում լավ հաստատվեն, ապա Գրետեն ու Կետեն պիտի իրենց պարահանդեսի շորերն ունենան, որ այդքան ցանկանում են, ապա մայրիկի բազկաթոռը պիտի նորոգել տալ»... ու քանի նա մտածում էր, այնքան նոր-նոր բաներ էին նրա միտքը գալիս, որ ավելի գերադասելի էին։

Ապա նորից իրեն երևակայեց հագած մի բոլորովին նոր զգեստ, լաք կոշիկները ոտքին, մի նորաձև փողկապը վզով ձգած հպարտ, գլուխը բարձր պահած, աղնվական անփութությամբ ներս էր մտնում պարահանդեսի դահլիճը, մինչդեռ էլսբեթը խորին հարգանքով նրան ժպտում է...

Հանկարծ նա վեր թռավ յուր երազներից։ «Թո՛ւ, ինչ թեթևամիտն եմ դարձել,— նախատեց իրեն։ — Ես ի՞նչ գործ ունեմ լաք կոշիկների ու նորաձև փողկապների հետ։ Հենց ուղղակի այս հին վերնազգեստով եմ գնալու այժմ անտառ... Բացի այդ, այժմ համարյա արդեն մութ է բոլորովին»,— ավելացրեց նա զգուշությամբ։

Բարձրաձայն հնչում էին շեփորի ելևէջները։ Նրա ականջին հասնում էին եղևնիների սաղարթների միջով ծիծաղ ու քրքիջի աղմկարար աղաղակները։

Տոնի համար հատկացված էր անտառի մեջ մի կլոր մարգագետին՝ մեջտեղում մի պատվանդան էին շինել երաժիշտների համար, աջ կողմը գյուղացի կապալառու խմիչքավաճառի խանութն էր՝ նա ծախում էր թթու գարեջուր և քաղցր կարկանդակներ, իսկ ձախ կողմում պատրաստված էր ցանկապատավոր մի պարտեզ, որի մուտքը տասը պֆենիգ արժեր, ինչպես այդ կարելի էր տեսնել մեծ սպիտակ տախտակի վրա գրված։

Սեղաններն ու նստարանները շարված էին հեռվում կա-

մարաձև, ընտանիքներն այդտեղ բաց էին արել հետները բերած իրենց ընթրիքներն ու սեղան էին բոլորել, մինչդեռ շուրջը խռնվել էր ցնծացող, հոհոացող բերանաբաց ամբոխը, որ ծարավի էր սիրո կամ տուրուդմբոցի։

Նվագահանդեսը վերջանալու վրա էր արդեն, պարերն սկսվել էին. կոխկրտած արոտի վրա զույգերը դառնում էին հևալով ու սայթելով։

Տոնատեղը յուր կրակներով փայլում էր անտառում, մինչդեռ անտառի մյուս մասերն արդեն ծածկվել էին խավարի մեջ։ Այստեղ հավաքվել էին շրջակայքի մշակներն ու աղախինները։ Նույնիսկ կառապաններն իրենց կառքերը թողել էին, որովհետև նրանք էլ չէին կարողացել համբերել այդ տեսարանից հեռու մնալ։ Տափաստանի ամեն մի թուփը կարծես շունչ էր առել ու գիշերվա խորքից հնչում էր մեղմ, սիրահարի շշուկը։

Երկյուղը սրտին, եղեռնագործի պես կամացուկ, առաջ սահեց Պաուլը դեպի տոնատեղը։ Հենց բնականից նրա մեջ մի տեսակ վախ կար օտար մարդկանցից, բայց նրա սիրտը երբեք այնպես չէր ճնշվել սաստիկ անձուկից, ինչպես այդ րոպեին։

«Արդյոք Էլսբեթն այնտե՞ղ է»։ Այդ ժխորի մեջ ոչ մի հետք չկար «Մպիտակ տան» բնակիչներից, յուրայիններն էլ անհետ կորած էին երևում։ Մի անգամ նրան թվաց, թե լսում է երկվորյակների հնչուն ծիծաղը, բայց հաջորդ րոպեին դարձյալ կորել էր աղմուկի մեջ։

Երկու անգամ արդեն նա պտույտ էր արել շրջանում, մեկ էլ հանկարծ նրա սիրտը երանությունից ու վախից քիչ էր մնում կանգ առնի, իրենից բոլորովին մոտ տեսավ իր հայրիկին ու մայրիկին, որոնք Դուգլաս ընտանիքի հետ բարեկամական կերպով սեղանի շուրջը բոլորած խոսակցում էին։

Հայրն արմունկները սեղանի վրա էր հենել և եռանդով խոսում էր պարոն Դուգլասի հետ, աշխատելով նրան համոզել մի ինչ-որ բանի։ Թիկնավետ հսկան, գանգուր ու ճերմակավուն մորուքով լուռ լսում էր նրան։ Երբեմն գլխով նշան էր անում և քթի տակ ժպտում էր։ Այնտեղ էր նրա կնքամայրը, նիհար, հիվանդոտ կերպարանքով, դուրս ցցված այտերով ու

աչքերի շուրջը կապույտ խազերով։ Նա յուր գլուխը հոգնած կերպով մի ծառաբնի էր հենել ու իր վտիտ, սպիտակ մատներով մայրիկի ձեռքն էր բռնել։ Նա, այդ կինը, Պաուլին միշտ մյուս աշխարհի պատգամաբերն էր թվացել։ Բայց նրա կողքին... նրա կողքին նստած այն կինը իր պարզ, անպաճույճ, գորշ զգեստով, մաքուր ետ սանրված խարտյաշ մազերով...

«Էլսբե՞թը, Էլսբե՞թը»,— ցնծում էր նրա մեջ մի ձայն. և ապա հանկարծ կարծես մի ամպե պատ իջավ նրա և իր մեջ ու սառը կերպով պատեց նրա հոգին ու սքողեց նրա աչքը խոնավ մի շղարշով։

Նրա դիմաց նստել էր մի պարոն, սրաձև ու խարտյաշ մորուքով, համարձակ կապտավուն աչքերով. նա մտերմաբար նրան էր կռացել, մինչդեռ Էլսբեթի խաղաղ երեսով մի հեզիկ ժպիտ էր խաղում։

«Նրա հետ կամուսնանա»— ասաց նա մի այնպիսի որոշությամբ, որն ավելի խանդոտ դուշակումի էր նմանվում։ Միրոն կանխատեսությամբ նա հասկացել էր, որ այդ երկու բնությունները իրար փոխադարձապես լրացնում են, ուստի և իրար պիտի փնտրեն... Եվ թերևս, թերևս արդեն գտել են իրար, մինչդեռ նա յուր օրերը դատարկ երազներով է վատնում։

Քարացածի պես կանգնել էր նա այնտեղ ու տնտղում էր այն մարդուն, որը նրան հանկարծակի զգալ տվեց, թե ինչ է կորցրել.... կորցրել առանց երբեք ունեցած լինելու։

Ինչպե՞ս կարող կլիներ ինքը ևս այդ պարոնի հետ չափվել... Այսպես... բոլոր կետերում... Տղամարդու իդեալը հո այդպես էր, որի մասին նա երազել էր շարունակ։

Հանդուգն, եռանդուն, հաղթական — նա էլ էր ցանկանում մի ժամանակ լինել ճիշտ այնպես, ինչպես այդ օտար պարոնը, որ թեթևամիտ ժպիտով Էլսբեթին էր նայում։ Նա էլ լաք կոշիկներ ուներ, կապել էր նորաձև փողկապ ու նրա հագուստը սև, ամենանուրբ կտորից էր։

Մի ժամ կլիներ, որ կանգնել էր Պաուլն այնտեղ, առանց սիրտ անելու տեղից շարժվել, յուր աչքերով Էլսբեթին ու նրա դիմացը նստածին կուլ տալով։

Արդեն գիշեր էր լինում, նա հազիվ էր այդ նկատում։

Լապտերների երկար շարքերը վառվել սկսեցին ու մի անորոշ փայլ տվեցին խաժամուժ բազմությանը։

«Ինչ լավ եմ թաքնվել» — մտածում էր Պաուլը, ուրախանալով, որ մութ է և իրեն տեսնող չի լինի։ Նա չէր նկատում, ինչպես երկու մարդ իրեն մոտեցան և մի ինչ-որ բան էին անում այնտեղ։ Ու հանկարծ, իրենից հազիվ երեք քայլ հեռու բոցավառվեց ծիրանագույն բենգալյան մի կրակ, որ շուրջը շլացուցիչ փայլով լուսավառվեց։

Արագությամբ ուզում էր նա ծառի ստվերի տակ թաք կենալ, բայց արդեն ուշ էր։

— Պաուլը չէ՞ այնտեղ կանգնած,— բացականչեց մայրը։

— Որտե՞ղ,— հարցրեց Էլսբեթը հետաքրքրությամբ ետ դառնալով։

— Այ տղա՛, ի՞նչ ես թափառում այդ խավարների մեջ,— բղավեց հայրը։

Լավ թե վատ, Պաուլն ստիպված էր դուրս գալ ու ամոթից կաս-կարմիր, գլխարկը ձեռքին կանգնեց նա Էլսբեթի առաջ, որը գլուխը ձեռքերին հենած՝ նայում էր նրան ժպտալով։

— Այո, նա միշտ այդպես է, իսկական ծածկագնաց,— ասաց հայրը, նրա ուսին խփելով, իսկ օտար երիտասարդ պարոնը շոյում էր յուր մազերը ճակատից հեռացնելով ու կես բարի, կես հեգնական կերպով ժպտում էր։

Ապա վեր կացավ ծեր Դուգլասը, մոտեցավ նրան, բռնեց նրա երկու ձեռքերն ու յուր առյուծի ձայնով բացականչեց.

— Գլուխդ բարձր, երիտասարդ բարեկամս, ու կուրծքդ դուրս։ Դուք ոչ մի պատճառ չունեք աչքերդ ցած պահելու։ Ամենից ավելի դուք, ամբողջ աշխարհի մեջ։ Ով քսան տարեկան հասակում կանի այն, ինչ որ դուք եք անում — իսկական տղամարդ է ու կարիք չունի ոչ ոքից քաշվելու։ Ես չեմ ուզում ձեզ ավելորդ տեղը գոված լինել, բայց մի հարցրե՛ք՝ ո՞վ կարող էր ձեզ նմանվել։ Գուցե դո՞ւ, Լեո,— դարձավ նա երիտասարդ պճնասեր պարոնին, որ ուրախ ժպիտով պատասխանեց։

— Ի՞նչ է, հո ուժասպառ չե՞մ լինելու, մորեղբայր։

— Երանի ուժասպառ լինելու մի բան լիներ վրադ, դո՛ւ,

դատարկապորտ,— ասաց Դուգլասը։— Սա իմ քրոջ որդին է, Լեո Հելեր, մի պճնասեր դատարկապորտ։

— Մորեղբայր, ես քեզ կկանչեմ։

— Հանգի՛ստ կաց, դու խեղկատակ։

— Մորեղբայր, քսան բաժակ... ով որ առաջին անգամ սեղանի տակ ձգի...

— Այդպե՞ս ես հասկանում հարգանքը...

— Մորեղբայր, կամթում ես։

— Հանգիստ կաց, մի նայի՞ր այդ երիտասարդ գյուղատնտեսին, քսան տարեկան է, բայց ամբողջ տնտեսությունն յուր ձեռքում ունի։

— Դե՞հ, պարոն Դուգլաս, չէ՞ որ ես էլ կամ,— բացականչեց Մայհյոֆերը երկարացրած դեմքով։

— Առանց ցանկանալու ձեզ վիրավորել,— ասաց Դուգլասը։— Բայց չէ՞ որ դուք ահագին գործ ունեք ձեր ակցիոներական ընկերության հետ... Դուք, իհարկե, չեք կարող այդպես դատարկ բաներով զբաղվել։

Մայհյոֆերը շոյված կերպով խոնարհվեց, իսկ Պաուլը նրա փոխարեն ամաչեց, որովհետև նա լավ հասկացավ այդ խոսքերի հեգնանքը։

Տիկին Դուգլասը ժպտալով նրան յուր մոտ կանչեց, վերցրեց նրա ձեռքն ու փայփայեց.

— Ինչպե՞ս մեծացել ու գեղեցկացել եք,— ասաց նա յուր հեզհամբույր ու թույլ ձայնով,— ու մի սիրուն մորուք էլ ունեք...

— Բայց նրա հետ «դու»-ով խոսեցեք— վրա պրծավ մայրը, որն այսօր շատ ուրախ էր երևում։— Պաուլ, խնդրիր կնքամորդ...

— Այո, ես խնդրում եմ ձեզ...— ասաց Պաուլը թոթովելով ու նորից կարմրեց։

— Աստված քեզ օրհնելու է, որդիս,— ասաց տիկին Դուգլասը։— Դու արժանի ես դրան,— ու ապա նրա գլուխը հենվեց ծառի բնին։

Պաուլն այժմ կանգնել էր նստարանի հետևում և չէր իմանում ինչ աներ։ Առաջին անգամն էր, յուր մեծ հասակում, որ նա օտար հասարակության մեջ էր։ Նրա հայացքն ընկավ էլս-

քեթի վրա, որը գլուխը հենած արմունկներին՝ նրան էր նայում։

— Ինչպես երևում է, դու իսկի չե՞ս ուզում ինձ բարևել,— հարցրեց նա մեղմ չարաճճիությամբ։

Մտերմական «դու»-ն նրան սիրտ տվեց, նա ձեռքը մեկնեց նրան ու հարցրեց, թե ինչպես է անցկացրել նա այդ ամբողջ երկար ժամանակը։

Մի մռայլ փայլ անցավ Էլսբեթի երեսով.

— Վատ,— ասաց նա մեղմությամբ...— բայց դրա մասին մի այլ անգամ, երբ մենք մենակ լինենք։

Նա մի փոքր կողքի շարժվեց ու ասաց.

— Արի՛։— Ու երբ Պատլը նրա կողքին նստեց, նրա արմունկը Էլսբեթի մեջքին դիպավ։ Նրա մարմնով այնպիսի մի սարսուռ անցավ, որի նմանը նա յուր կյանքում չէր զգացել։

Լեո Հելերը սեղանի վրայով ձեռքը նրան մեկնեց ու ծիծաղելով ասաց.

— Բարով բարեկամանանք, դո՛ւք, տիպար տղա...

— Դժբախտաբար ես արժանի չեմ տիպար կոչվելու,— ասաց նա իրեն հատուկ անմեղությամբ։

— Դե՞հ, ուրեմն հանգիստ կացեք, ես էլ չեմ։ Ավելի զզվելի բան չկա ինձ համար, քան տիպար լինելը...

— Հապա ինչո՞ւ ինձ այդպես անվանեցիք։

Լեոն շվարեց ու դես ու դեն էր նայում.

— Ախ, դուք հանաքն էլ լուրջի տեղ եք ընդունում,— ասաց նա այնուհետև։

— Ներեցե՛ք, խնդրեմ։ Ես այնքան քիչ եմ սովոր հանաքների,— պատասխանեց սա և ամոթխածության կարմիրը ծածկեց նրա երեսը։ Երբ նա այնուհետև Էլսբեթին դարձավ, նկատեց, որ սա յուր լուրջ խոր հայացքով նրա աչքերին էր նայում։ Նրա հոգուն տիրեց մի հանկարծակի բախտավորության զգացում։ Նա զգաց, որ կար մեկը, որ նրան հիմար ու ծիծաղելի մարդու տեղ չէր դնում, որ հասկանում էր նրա բնությունը և այն օրենքը, որոնցով գործում էր այդ բնությունը։

Երբ երեքով էլ լռել էին, սեղանի մյուս կողմում հայրը շարունակում էր պարոն Դուգլասի առաջ բաց անել յուր ակցիոներական ընկերության ծրագրերը։

— Եվ եթե դուք ինձ վստահություն ունենաք, պարոն, բայց ոչ, դա հարկավոր չէ — ուզում եմ ասել, եթե դուք չեք ուզում ձեր սեփական բախտին աքացի տալ — մարդ պիտի յուր բախտի առաջը քար չձգի, եթե դուք ձեռներեցության մի փոքր նշույլ անգամ ունենաք, օ՜, այն ժամանակ, այո՛, այն ժամանակ... գիտեք, հարյուր հազարներ կարելի է այստեղ վաստակել, ճահիճը անսպառ է։ Ինչի՞ թողնեք, որ ուրիշները ձեր փոխարեն հարստանան, պարոն։ Առաջ, միշտ առաջ. գիշերվա միջով դեպի լույս— ահա իմ նշանաբանը։ Ես ուզում եմ ձգտել ու կռվել մինչև կյանքիս վերջին շունչը, իմ սեփական շահս չէ, որ այստեղ վտանգի մեջ է,— դա ինձ վերաբերում է իբրև մի հարց, որ ամբողջ մարդկությանն է վերաբերում։ Դա նշանակում է այս ամայի անապատները մշակել, այս ընդարձակ տարածություններին կյանքի արյուն ներշնչել, դա նշանակում է այս կողմերի աղքատությունը բարեկեցության փոխել... մարդկության բարերար լինել է նշանակում դա, պարո՛ն։

Եվ այդ եղանակով պոռոտախոսում էր նա դեռ։

Ապա հանկարծ շարժվեց դեպի Դուգլասը, կպավ նրան, կարծես ուզում էր ատրճանակը նրա կրծքին դնել, ու բղավել.

— Հը, ուզո՞ւմ եք ուրեմն մասնակցել, թե չէ, պարոն։

Դուգլասը նկատեց յուր կնոջ մի հայացքը, որով նա ծածուկ կերպով տիկին էլսբեթին էր մատնանշում ու յուր մարդուն խնդրական կերպով աչքով էր անում, ապա կես լուրջ, կես հանաքով ասաց.

— Խնդրեմ, պատրաստ եմ։

Պաուլը նորից ամաչեց, որովհետև նա Դուգլասի երեսին կարդաց, որ նա այս բոլորը հանաքի տեղ է դնում ու յուր համաձայնությամբ կամենում է գիտակցաբար մի քանի հարյուր թալեր դեն ձգել։ Նա ինքը շատ լավ գիտեր, որ ոչ մի խելքը գլխին մարդ լուրջ չի ընդունի հոր այդ ծրագրերը։

— Մեր աղջիկներին չե՞ս տեսել, Պաուլ,— հարցրեց մայրը, որ նրանից ոչ պակաս ճնշված արտով նստել էր այնտեղ։

Ո՛չ, նրանց ոչ մի տեղ չէր տեսել Պաուլը։

— Ուրեմն գնա, տես ինչ եղան. նրանք պարի կողմերն են գնացել. ասա նրանց, որ շատ չվազվզեն, կարող են մրսել։

Պաուլը վեր ելավ։

— Ես էլ կգամ քեզ հետ,— ասաց Էլսբեթը։

— Ես էլ, կարո՞ղ եմ գալ, կուզես,— հարցրեց հորաքրոջ որդի Լեոն։

— Չէ, դու մնա՛,— ասաց թեթևակի Էլսբեթը, որից հետո երիտասարդը հայտնեց, թե նա պարապմունքից ստիպված կլինի մահ որոնել։

— Ուրախ թռչուն,— նախանձի հառաչով ասաց Պաուլը, երբ նա Էլսբեթի հետ խառնվածքի միջով անցնում էր։

— Այո,— պատասխանեց Էլսբեթը,— բայց ոչ ավելի։

— Սիրո՞ւմ ես նրան։

— Իհարկե... շատ։

Նրա հետ կամուսնանա անշուշտ,— մտածում էր Պաուլը։

Շուրջը բղավում ու ճչում էր ամբոխը։ Լապտերներից մեկը բոցավառվել էր ու ջահել տղաների մի խումբ աշխատում էր լապտերը պարանից պոկել, դուրս բերել։ Այրվող թղթի կտորները թռչկոտում էին օդի մեջ ու հեղուկ ճրագուն ճաթճաթում էր։

Էլսբեթը թևն անց էր կացրել նրա թևի միջով ու գլուխը սեղմել նրա ուսին։ Նորից անցավ նրա մարմնով այն երանական սարսուռը, որը նա չէր կարող բացատրել։

— Այսպես, այժմ ես լավ ծածկված եմ,— ասաց Էլսբեթը շշնջալով։— Հետո արի անտառ, Պաուլ, ես շատ բան ունեմ քեզ պատմելու. այնտեղ մեզ ոչ ոք չի խանգարի։

Ու երբ նա այդ ասում էր, Պաուլն համակ ուրախությունից վախենում էր ամբողջովին։

Նրանք հասան վերջապես պարատեղին։ Փողերը փչում էին ու պարողները դառնում էին անվերջ շրջաններով։

— Ուզո՞ւմ ես, մենք էլ պարենք,— հարցրեց Էլսբեթը ժպտալով։

— Բայց ես չեմ իմանում,— առարկեց սա։

— Վնաս չունի,— ասաց աղջիկը.— այդ տեսակ դեպքերում Լեոն հո կա։

Նա հիշեց յուր անմիտ երազանքները, որ նա այդ օրը այն

թփի տակ ծառզել էր։ «Այդպես է վերջանում ամեն բան, ինչ որ ես երևակայում եմ», մտածեց նա։

— Էլսբեթ, քո մի գիրքը դեռ ինձ մոտ է,— ասաց նա մի փոքր անց։

— Գիտեմ, գիտեմ,— ասաց նա ժպտալով։

— Ներիր, որ ես...

— Ի՞նչ մանրավաճառն ես եղել դու,— ասաց հանգքով աղջիկը։ — Լեռն իմ ամբողջ գրադարանը փչացրեց և այժմ նորն է դեռ ցանկանում — ասելով, թե էլ կարդալու բան չունի։

Լեռ, և միշտ Լեռ...

— Կարողացա՞ր շատ բաներ գտնել նրա մեջ,— ասաց Էլսբեթը։

— Մի ժամանակ ամբողջն անգիր էի արել ես։

— Իսկ այժմ։

— Այժմ, աստված իմ, առօրյա հոգսերն այնքան շատ են, իմ գլխին հարմար չէ դա այլևս։

— Իմս էլ չէ, Պաուլ. նշանակում է, որ մենք շատ բան ենք ստացել կյանքից. պոեզիան կորել է մեզ համար։

— Քեզ համա՞ր էլ։

Նա հառաչեց.— խեղճ մայրս,— ասաց նա այնուհետև։

— Ի՞նչ կա որ։

— Մտածիր, հինգ տարուց ի վեր է հիվանդապահուհի եմ դարձել,— ասաց նա.— ա՜խ, ինչքան անտանելի ժամեր եմ ունեցել. երբ գիշերալամպը վառվում է, և մարդու աչքերը ցավում են անվերջ արթուն մնալուց, երբ դուրսը քամին ծեծկտում է ապակիները... կյանքի ու մահու մասին, սիրո և լքվածության մասին շատ մտքեր են գալիս մարդու վրա. վերջապես, կարճ ասեմ, այդպիսի օրերին մարդ յուր գլխում սեփական երգերի գիրքն է հյուսում և էլ ուրիշներինը չէ կարդում։ Բայց արի դուրս գնանք այս աղմուկից. այնքան բան ունեմ քեզ հարցնելու.—այստեղ դժվար է նույնիսկ սեփական խոսքերը հասկանալ։

— Իսկույն,— ասաց նա,— միայն թե նախ պետք է ես...

Նա որոնելով այս ու այն կողմն էր նայում. հանկարծ նա լսեց յուր հետևում մի այրական ձայն, որ ասում էր.— Դու,

մի տես այնտեղ այդ երկու տղամարդու պես գիժ փոքրիկ չարաճճիներին։

Ակամայից նա ետ դարձավ և էրդման եղբայրներին նկատեց, որոնց նա տարիներից ի վեր չէր տեսել։ Այդ երկար միջոցին նրանք գյուղատնտեսական դպրոցում էին եղել ու մեծ մարդիկ էին դարձել։

— Գնանք նրանց բռնենք մի փոքր խաղանք,— ասաց մյուսը։ Ապա ծիծաղելով մտան, անհայտացան պարողների շրջանների մեջ։

Դրանից հետո իսկույն նկատեց Պաուլը նաև յուր քույրերին։ Թուխ խոպոպների թավ անտառը վայրի կերպով նրանց երեսով էր ընկել, թշները վառվում էին. կրծքները ծածանվում ու նրանց աչքերը սիրահարի վայրի տեսք էին ընդունել։

— Ինչքան բախտավոր են երևում այդ շնորհալի արարածները,— ասաց էլսբեթը։

Պաուլը մի փոքր ճառ կարդաց նրանց գլխին. նրանք հազիվ էին լսում սրան, այլ չարաճճի քրքիջով նրա ուսերով այն կողմն էին նայում։ Եվ երբ Պաուլը ետ դարձավ, նոր նկատեց երկու էրդմաններին, որոնք երաժիշտների պատվանդանի հետևում թաքնված, զանազան նշաններ էին անում քույրերին։

Երկվորյակներն արդեն անհայտացել էին այդ միջոցին. անհայտացել էին նաև էրդմանները։

— Արի գնանք,— ասաց էլսբեթը։

Նա համաձայնվեց, բայց քարացածի նման անշարժ մնաց։

— Ի՞նչ կա,— հարցրեց էլսբեթը։

Նա ձեռքով ճակատը սրբեց ու մնաց. լսած չար խոսքը դուրս չէր գալիս նրա գլխից։

Քույրերը դեռ ջահել էին, ինքնավստահ, անփորձ. ոչ ոք հոգ չէր տանում նրանց վրա. եթե հանկարծ սխալվեին— եթե հանկարծ... սարսուռը պատեց նրան։

Եվ նա, որ երդվել էր նրանց հավատարիմ պահապանը լինել, այժմ յուր բավականության հետևից է ընկել, նա, որ...

— Արի անտառ գնանք,— խնդրեց նրան էլսբեթը կրկին անգամ։

— Չեմ կարող,— հազիվ արտասանեց նա...

Աղջիկն ապշած նայեց նրան։

— Ես պետք է... քույրերիս... ոչ ոք չկա նրանց մոտ... մի նեղանա...

— Ուղեկցիր ինձ դեպի սեղանը,— ասաց էլսբեթը։

Նա կատարեց. ոչ մի խոսք չխոսեցին երկուսն էլ։

Հինգ րոպե հետո հանկարծակիի բերեց քույրերին, որոնք էրդմանների հետ թևանցուկ անտառ էին ուզում մտնել, անհայտանալ։

— Ո՞ւր,— հարցրեց նա, նրանց մեջ մտնելով։

Շփոթված աչքերը ցած ձգեցին և կեսեն թոթովեց.

— Ուզում էինք մի փոքր ման գալու գնալ...

Էրդման եղբայրներն ազնիվ մարդու դեր ստանձնած, հաստատեցին նույնը. հանաքով թոթվեցին նրա ձեռքը ու ստիպողաբար խնդրում էին մանկական օրերի բարեկամությունը վերանորոգել։— Բայց հետևից բռունցք էին ցույց տալիս նրան։

— Դուք կերթաք այժմ մայրիկի մոտ,— ասաց նա երկվորյակներին, և երբ սրանք չէին ուզում, թևերից բռնած ձրգեց տարավ։

Սեղանը կիսով դատարկվել էր... Դուգլաս ընտանիքը հեռացել էր։

Ապա նա անտառ մտավ ու մտածում էր այն մասին, թե ինչեր կարող էր նա էլսբեթից լսել... Բայց դա չէ՞ որ լինելու բան չէր. միշտ մի բան մեջ էր ընկնում ու նրան խանգարում։

11

Հովհաննիսյան գիշերն էր։ Բեկտենին բուրում էր. լուսնի հեզիկ փայլը արծաթազօծել էր ամբողջ շրջակայքը։

Գյուղում մեծ ուրախություն կար։ Կպրատակառներ էին վառել և մշակներն ու աղախինները մարգերի վրա պարում էին։ Հեռվում կայծերն ու բոցերը շողշողում էին տափաստանի վրա և գեղջկական ջութակի կարկաչուն ձայները մելամաղձոտ կերպով անցնում էին գիշերվա միջով։

Պատուլը կանգնած էր պարտիզի ցանկապատի մոտ և հեռուն էր նայում։ Մշակները բոլորը գնացել էին Հովհաննիսյան կրակին. քույրերն էլ դեռ չէին վերադարձել։ Սրանք աղաչելով իրավունք էին առել այցելելու քահանայի Հեղվիգ աղջկան, որ իրենց ընկերուհին էր ու մի պարզ, խաղաղ աղջիկ էր, որի

ընկերությանը Պաուլը սիրով վստահում էր յուր քույրերին։

Նա սպասում էր միայն, մինչև բոլորը տուն դառնան։

Լուանի հեզիկ փայլը նրան դաշտ դուրս քաշեց։ Տափաստանը հանգստանում էր կեսգիշերային լռության մեջ։ Հավամրգի թփերի մեջ միայն շիկահավն էր երբեմն քնահար կերպով ճռռում... Շողավարդերը վայր էին կախել իրենց կարմրավուն գլուխները ու շնախաղողները պսպղում էին, կարծես ուզում էին լուսնի շողքի հետ մրցել։

Դանդաղ, թույլ քայլերով գնում էր նա առաջ, երբեմն գայթելով խլուրդների մի բլրի, կամ կանաչների մեջ խճողվելով։ Արծաթյա ցողը ցանվում էր նրա առաջ շողաղարդ կայծերի բաժանվելով։ Այդ կերպ մոտեցավ նա գիհիների թփուտքին, որոնք այդ օրը կարծես ավելի հողին կպած լինեին։

Սև պարսպի նման բարձրանում էր նրա առաջ անտառը, որի վրա լուսնի շողը կարծես նոր եկած ձյուն լիներ։ Նա գրտավ այն տեղը, ուր տարիներ առաջ ճռճքն էր կապված. սաղարթների միջով անտառի այդ փոքրիկ անծառ տեղը ուրվականի կիսախավարում փայլին էր տալիս։ Կարծես նրան քաշում էին առաջ ու միշտ առաջ։ Նրա հայացքի առաջ պսպղում, մարմարիոնի ապարանքի նման բարձրանում էր «Սպիտակ տունը» յուր դուրս ընկած պատշգամբներով ու բարձր կատարներով։ Խորին լռությունը տիրել էր ամբողջ կալվածքում, միայն երբեմն երբեմն շունն էր մի ձայն հանում ու ապա խկույն լռում։

Նա այժմ կանգնել էր վանդակի դռան առաջ, առանց իմանալու, ինչպես հասավ այստեղ։ Երկու ձեռքով բռնեց տախտակե ձողերից ու ներս էր նայում։ Լուանի փայլի մեջ կորել էր ամբողջ ագարակի բակը. սև ստվերագծերով նշմարվում էին մի կողմը տնտեսակառքերը, որոնք ախոռների դռների առաջ կարգով շարված էին ամբողջը խոր քնի մեջ ընկղմված, միայն մի սպիտակ կատու անցավ հանկարծ պարտիզի վանդակի մոտով։

Ցանկապատի երկարությամբ նա առաջ էր գնում։ Դարբնոցի հետևում մոխրակույտի մեջ մի քանի բորբոքուն ածուխներ կային, որոնք խավարի միջից վառվող աչքերի պես դուրս էին նայում։ Ապա սկսվեց պարտեզը։ Բարձր խոչերը

տարածել էին իրենց սաղարթները նրա վրա ու ոսկյա անձրևի ու վաղավարդերի անուշ բույրը վանդակների միջով նրան էր հասնում թմրեցնող ազդեցությամբ։ Սաղարթների միջով փայլում էին արծաթյա ժապավենների նման խիճածածկ ուղիները և արևի ժամացույցը։ Նրա մանկական երազների առարկան մոայլ կերպով բարձրանում էր հետևում։

«Սպիտակ տունը» ավելի ու ավելի մոտենում էր։ Այժմ նա կարող էր համարյա պատուհաններից ներս նայել. այստեղ էլ ամեն բան քնած էր երևում։

Այստեղ այնտեղ նա կարդացել էր— Երգերի գրքի մեջ էլ կար դրա մասին— որ սիրահարը լուսնկա գիշերներին յուր սիրուհուն serenadներ էր երգում, կիթառը կամ մանդոլինան ձեռքին։ Այսպես էր ասպետական այն գեղեցիկ ժամանակներում. և Սպանիայում կամ Իտալիայում թերևս այսօր էլ կա։ Ահա այդ է, որ նա հանկարծ հիշեց. ու երևակայեց իրեն այդ վիճակի մեջ ու մտածեց թե ինչ կանի ինքը, եթե նա՝ Պաուլը այդ հիմարը սկսի այստեղ լարերին խփել— սիրատենչ երգեր կանչելով։

Այդ միտքը նրան բարձր ծիծաղեցրեց, ապա նա հիշեց, որ յուր երաժշտական գործիքը չէ՞ որ միշտ հետն ունի։ Նա նստեց փոսի ծայրին, մեջքը դեմ տվեց վանդակի ձողերից մեկին ու սկսեց սուլել, սկզբում երկչոտ ու մեղմ, հետո ավելի համարձակ ու բարձր և վերջը մոռացավ ամեն բան, ինչպես միշտ, երբ անձնատուր էր լինում ամբողջովին յուր զգացմունքներին։

Կարծես խոր երազից զարթնեց, երբ վանդակի ներսի կողմից սաղարթների խշխշոցն ու կոտրատվելը լսեց։ Սարսափած ետ շրջվեց։

Այն կողմում կանգնած էր էլսբեթը սպիտակ գիշերազգեստով, գորշագույն անձրևանոցը թեթևակի ուսերին ձգած։

Առաջին վայրկյանին նրան թվաց, որ նա պիտի վեր կենա ու փախչի այդտեղից, բայց նրա անդամները հաշմացել էին կարծես։

— Էլսբեթ, ի՞նչ ես անում դու այստեղ,— կանչեց նա։

— Այո՛, ի՞նչ ես անում դո՛ւ այստեղ,— հարցրեց սա ժրպտալով։

— Ես... ես... սուլում էի մի փոքր։

— Եվ դրա համար այստե՞ղ ես եկել։

— Ինչո՞ւ չպիտի գայի։

— Շատ լա՛վ ես արել. ես քեզ չեմ արգելի դա։

Նա ճակատը սեղմել էր վանդակի ձողերին և Պաուլին էր նայում. երկուսով լուռ էին։

— Չե՞ս ուզում ավելի մոտենալ,— հարցրեց Էլսբեթը մի փոքր անց, հավանորեն լավ չհասկանալով յուր ասածը։

— Կարո՞ղ եմ վանդակապատի վրայով գալ,— հարցրեց սա բոլորովին անմեղ կերպով։

Էլսբեթը ժպտաց։— Ոչ,— ասաց նա— գլուխը բացասաբար թափահարելով.— պատուհանից կարող են մեզ տեսնել— և դա լավ չէ։— Բայց շատ եմ ուզում քեզ հետ խոսել. սպասիր ես կգամ քեզ մոտ և մի փոքր կուղեկցեմ քեզ։

Նա դուրս քաշեց թույլ ճաղերից մեկը ու դեն ձգեց ապա դաշտ դուրս գալով ձեռքը մեկնեց նրան ու ասաց.— Շատ լավ ես արել, որ եկել ես. հաճախ ցանկացել եմ քեզ հետ խոսել, բայց դու միշտ անհայտացել ես։— Այդ ասելով նա խոր հառաչեց, կարծես ծանր ժամերի հիշողության տակ չընկճվելու համար։

Պաուլն ամբողջ մարմնով դողում էր։ Կուսական արարածի մոտիկությունը, որ յուր գիշերային զգեստով ազատ ու անմեղ կանգնել էր նրա առաջ, համարյա նրան շնչարգելության էր հասցնում։ Կարծես մուրճով հարվածում էին նրա քունքերին, նրա հայացքը գետինն էր փնտրում։

— Ինչո՞ւ ինձ հետ չես խոսում,— հարցրեց Էլսբեթը։

Մի շփոթ ժպիտ անցավ նրա դեմքով։

— Մի նեղանա,— վերջապես ասաց նա։

— Ինչո՞ւ պիտի նեղանամ,— հարցրեց Էլսբեթը։— Ես շատ ուրախ եմ, որ քեզ գոնե մի անգամ ամբողջովին իմը կարող եմ համարել։ Բայց ինչքա՞ն տարօրինակ է այս ամենը— հեքիաթի նման զարմանալի։ Կանգնած պատուհանի առաջ լուռ նիստ եմ նայում. մաման հենց նոր քնեց. ու ես ինձ ուրախ զգում եմ, թե կարող եմ ես էլ սիրտ անել քնելու գնալ. բայց գլուխս այնքան անհանգիստ է ու ճակատս այրվում է. խաղաղությունը կարծես փախել է ինձանից։ Եվ հանկարծ լսում եմ

պարտիզի կողմից մեկի սուլոցը — այնքա՜ն գեղեցիկ, այնքա՜ն աղերսական, որ ես միմիայն մի անգամ եմ լսել կյանքիս մեջ ու դա բավական ժամանակ է. — դա միայն Պաուլը կարող է լինել, — ասում եմ ինքս ինձ. ու քանի ավելի եմ լսում, այնքան համոզվում եմ։ — Բայց նա ինչպե՞ս է եկել այստեղ, — հարցնում եմ ինձ — և բոլորովին ստուգելու համար վերցնում եմ վերարկուս ու կամացուկ ցած եմ սահում — այդպես... հիմա քեզ մոտ եմ... դեհ արի... անտառ գնանք — այնտեղ մեզ ոչ ոք չի կարող տեսնել։

Այս ասելով վերցրեց նրա թևը։ Լուռ քայլում էին լուսընկա մարգերի վրայով։

Ու ապա երկու ձեռքով ծածկեց նա երեսը և դառը կերպով լաց լինել սկսեց։

— Ի՞նչ պատահեց քեզ, Էլսբեթ, — կանչեց Պաուլը սարսափահար։

Էլսբեթը երերում էր, նրա նուրբ կազմվածքը դողդողում իր անձայն հեծկլտոցի մեջ։

— Էլսբեթ, ինչպե՞ս կարող եմ քեզ օգնել, ասա՛, — խնդրում էր Պաուլը։

Նա ուժեղությամբ թափահարում էր գլուխը.

— Թող, ինձ հանգիստ թող, — ասաց վերջապես, — շուտով կանցնի։

Փորձեց առաջ գնալ, բայց նրա ուժերը դավաճանեցին։ Բարձր հառաչելով նստավ նա խոնավ դալարի վրա, մի փոսի եզրին։

Պաուլը կանգնած մնաց նրա առաջ ու վերևից նրան էր նայում։ «Թույլ տալ լավ լաց լինելու», — դա էր Պաուլի կանոնը, որ յուր կյանքում այնքան հաճախ փորձել էր։ Բոլոր վշտերն ու ցավերը կխուսափեն դրա առաջ. այստեղ մխիթարելու պետք կար և մխիթարելու մեջ լավ վարպետ էր Պաուլը։

Երբ Էլսբեթը մի փոքր հանգստացավ, Պաուլը նստեց նրա կողքին և մեղմությամբ ասաց.

— Էլսբեթ, չե՞ս ուզում քո սիրտդ թեթևացնել։

— Այո՛, ուզում եմ, — բացականչեց նա. — չէ՞ որ դրան էի սպասում երեք ամբողջ տարիներ։ Այդքան ժամանակ ցավս ինձ հետ եմ ման ածել, Պաուլ, և քիչ էր մնում խեղդվեի դրա

ծանրության տակ և ոչ մի մարդ չէի գտնում, որին կարողանայի սիրտս բաց անել։ Իտալական երկնքի տակ, չքնաղ Կապրիում, ուր ամեն ինչ ծիծաղում ու ցնծում է, այնտեղ շատ հաճախ կնեգիշերին ծովափ եմ գնացել ու տանջանքիցս բարձրաձայն աղաղակել և առավոտը դարձյալ տուն եմ դարձել ու ծիծաղել, ուրախացել, ուրիշներից ավելի ծիծաղել, որովհետև մայրս... օ՜ մայրս... մայրս,— բացականչեց նա, նորից բարձրաձայն հեկեկալով։

— Հանգստացիր, չէ՞ որ այժմ ես քեզ մոտ եմ, որին կարող ես ամեն բան ասել,— շշնջաց Պաուլը նրա ականջին։

— Այո՛, դո՛ւ քոնն ես, դու ինձ մո՛տ ես,— հազիվ ասաց նա ու երեսը հենեց նրա ուսերին։— Տես, ես միշտ գիտեի այդ— բայց ի՞նչ օգուտ։ Դու շատ հեռու էիր. շատ անգամ նույնիսկ ուզում էի քեզ գրել, բայց վախենում էի, որ դու օտարացած լինես ինձանից և ուրիշ տեսակ բացատրելու լինես... Եվ այն օրվանից, երբ նորից վերադարձել ենք, մի միտք ունեմ սրտումս,— նրան պիտի ասեմ ամեն բան. նա միակն է, որ գիտի, ինչ ասել է վիշտը. նա քեզ կհասկանա։

— Ասա, ի՞նչ կա էլսբեթ,— խնդրեց նա։

— Նա պիտի մեռնի,— արտասանեց նա բարձրաձայն աղաղակելով։

— Քո մա՞յրը։

— Այո։

— Ո՞վ ասաց քեզ։

— Վիեննայում մի պրոֆեսոր, որը մայրիկիս քննեց։ Պրոֆեսորը մայրիկիս ինքնաբավական դեմք շինեց ու ասաց։— Եթե ձեզ խնայեք, լավ պահեք, կարող եք հարյուր տարի ապրել մինչև,— բայց դրանից հետո ինձ կանչել տվեց և հարցրեց ինձ,— բավականաչափ ուժե՞ղ եք, օրիորդ, կարո՞ղ եք ճշմարտությունը լսել։— Խնդրում եմ, ասացեք,— պատասխանեցի ես։— Ձեզ պետք է ասեմ,— հայտնեց նա,— որովհետև դուք միակն եք, որ նրան հոգ եք տանում այստեղ։— Ապա նա ինձ հայտնեց, որ նա ամեն օր կարող է մեռնել— ապա թե ո՞չ... մի ահագին բազմությամբ զանազան հրահանգներ ու կանոններ ասաց, որոնք բոլորը պետք է գործ դրվին— ուտելուն ու խնամելուն, կլիմային ու տրամադրությանը վե-

բաբերյալ, չհուզել, չթորբոքել... Տես, այն օրից սկսած ես նրա չորս կողմն եմ թրթռում, կանուխ առավոտից մինչև ուշ գիշեր, հոգ եմ տանում, պահպանություն եմ անում և ոչ մի հանգիստ չեմ գտնում։ Հաճախ մեջս մի միտք է գալիս ու ինքս ինձ ասում եմ. «երիտասարդ ես դու և ապրել ես ցանկանում», ու փորձում եմ զվարճանալ ու երգել. բայց ձայնս խեղդվում է կոկորդիս մեջ ու վայր եմ ընկնում հուսահատ։ Իհարկե, մայրիկիս ստիպված եմ միշտ ուրախ դեմք ցույց տալ ու հայրիկիս նույնպես։

— Բայց ինչո՞ւ չես ասում դա հայրիկիդ,— նրա խոսքը կտրեց Պաուլը։

— Որպեսզի նրա կյանքն է՞լ թունավորվի,— պատասխանեց սա։— Ոչ, ավելի սիրով այդ ամբողջը ես մենակ կտանեմ, քան թե նրան էլ տեսնեմ տանջվելիս։ Նա կենսուրախ մարդ է ու սիրում է մայրիկիս յուր ամբողջ հոգով. թեև նա երբեմն դյուրագրգիռ է ու կրակոտ, բայց նրան դեռ ոչ մի վատ խոսք չէ ասել. ո՛չ, թող նա հուսա, ինչքան կարող է, ես ոչինչ չեմ ասի նրան։

Գլուխը հենած յուր երկու ձեռքերին, անթարթ նայում էր նա յուր առաջը։

Պաուլն հիշեց հանկարծ յուր մայրիկի պատմվածքը։ «Հոգսը», «Հոգսը», մրմնջում էր նա ինքն իրեն։

— Այդ ի՞նչ ես ասում,— հարցրեց էլսբեթը ու լայն բաց արած մխիթարություն հայցող աչքերով նայեց նրան։

— Ախ, ոչինչ.— պատասխանեց սա մի տխուր ժպիտով։— Կուզենայի, որ ես քեզ օգնել կարողանայի։

— Հիրավի, եթե մեկը կարողանա՞ր։

— Բայց թերևս ես կարողանամ,— ասաց նա.— քեզ պակաս էր միայն մեկը, որին դու ասել կարողանայիր քո սրտինը։ Դու այնքան էլ վատ վիճակի մեջ չես, ինչպես դու կարծում ես, թեև «Հոգսը» ինչպես երևում է քեզ էլ է օրհնել...

— Ի՞նչ է նշանակում դա,— հարցրեց նա։

Ապա Պաուլը պատմեց նրան այն հեքիաթի սկիզբը, որ մորից լսել էր, այնպես, ինչպես հիշում էր։

— Բայց ինչպե՞ս կարելի է փրկվել այդ օրհնությունից,— հարցրեց այնուհետև էլսբեթը։

— Չգիտեմ,— պատասխանեց Պատլը.— մայրս երբեք չը-ցանկացավ այդ պատմվածքի վերջին մասն ասել։ Չեմ էլ կարծում, որ այդտեղ որևէ իրական բան։ Այնպիսի մարդիկ, ինչպես մենք ենք, պետք է կամավոր կերպով հրաժարվեն բախտից. եթե բախտը նրանց շատ մոտենալու էլ լինի, միևնույն է, նրանք չեն նկատի այդ. միշտ մի տխուր բան կգա մեջ տեղ ու կխանգարի։ Միակ բանը, որ այդպիսի մարդիկ կարող են, այդ այն է, որ բախտից հրաժարվելով, ուրիշներին պահպանություն անեն և հոգ տանեն, որ որքան կարելի է ուրիշների կյանքը լավ, ներդաշնակ դասավորվի։

— Բայց ես էլ կուզեի դառնե մի փոքր բախտավոր լինել,— ասաց Էլսբեթը, աչքերն հավատարիմ կերպով նրան ուղղելով։

— Ես կուզեի այնպես բախտավոր լինել ինչպես դու,— ասաց Պատլը։

— Միայն թե միշտ վախը սրտումս չլիներ,— դանդաղեց Էլսբեթը։

— Այդ վախը... դու պիտի արդեն բարեկամացած լինես դրա հետ. կյանքիս ամբողջ ընթացքում ունեցել եմ այդ վախը. ու երբ չէի իմանում դրա պատճառը, իսկույն մի հիմք էի գտնում։ Այնքան էլ վատ չէ այդ. եթե վախը չլիներ, մարդ չէր իմանա ինչու է ապրում։— Բայց մտածիր, դու ինչքան հիմքեր ունես բավական ու գոհ լինելու։ Շուրջդ միշտ ուրախ է, բավական դեմքեր ես տեսնում. մայրիկդ իրեն բախտավոր է զգում, ինչքան էլ որ ցավեր ունենա. այդ հո այդպե՞ս է։

— Այո, փառք աստուծո,— ասաց Էլսբեթը.— նա երբեք չի կռահում, թե ինչքան վատ է յուր դրությունը։

— Դե՞հ, տեսնո՞ւմ ես։ Իսկ հայրի՞կդ, նա էլ ոչինչ չի՞ կռահում, ոչ մի հոգս չի ճնշում նրանց, նրանք իրար սիրում են. սիրում են և քեզ. ոչ մի չար խոսք չի լսվում ձեր մեջ. և երբ մի օր մայրիկդ աչքերը փակի, թերևս ժպտալով անի այդ. նա հո միշտ ասել կարող է. «ես միշտ բախտավոր ապրեցի»։— Դե՞հ, մի ասա՛, սրանից էլ ավելի ի՞նչ ես ցանկանում։

— Բայց նա չպիտի մեռնի,— բացականչեց Էլսբեթը։

— Ինչու չէ,— հարցրեց սա,— կարծում ես մահն այդքան վա՞տ է։

— Նրա համար չէ, բայց ինձ համար։

— Դա այս դեպքում չի կարելի ի նկատի առնել,— ասաց Պաուլը, շրթունքները պինդ կերպով սեղմելով.— մարդ պիտի լավ գիտենա յուր գործը և հասկանա յուր հետ վարվելու եղանակը։— Մահը միայն այն դեպքումն է վատ, երբ մարդ յուր ամբողջ կյանքում բախտ է սպասել և չէ գտել։ Այդպիսի մարդուն այնպես կթվա, թե սոված վեր է կենում մի ճոխ սեղանից. այդպիսի վիճակն ու զգացմունքը ես չեմ ցանկանա ոչ մի մարդու, որին սիրում եմ։— Տես, ես էլ մայր ունեմ. նա էլ մի ժամանակ ցանկանում էր բախտավոր լինել և այժմս էլ շատ սիրով ցանկանում է դեռ. ես միակն եմ, որ թերևս կարողանայի նրա վզից ազատել հոգսերի այն օղակը և ես կարող չեմ այդ անելու։ Ի՞նչ ես կարծում, ինչ կլինի իմ վիճակը։ Ես տեսնում եմ, ինչպես նա ծերանում է վշտի ու նեղության մեջ... ես կարող եմ նրա ճակատի կնճիռներն համարել և նրա այտերի ծալքերը... Նրա բերանը ներս է ընկնում և ծնոտը երկարում է... արդեն վաղուց է, որ ոչ մի բարձր խոսք չի արտասանում— օրեցօր սակվում է ու խաղաղվում և այդպես խաղաղ ու անխոս էլ մեռնելու է նա մի օր... ու ես պիտի մոտին կանգնեմ ու ասեմ ինքս ինձ՝ դու ես մեղավորը. դու չկարողացար նրա համար ոչ մի բախտավոր օր պատրաստել։

— Խեղճ մարդ,— շշնջաց Էլսբեթը.— ինչո՞վ կարող եմ օգնել քեզ արդյոք։

— Ոչ ոք չի կարող ինձ օգնել... քանի հայրս...— նա կանգ առավ յուր մտքերի ընթացքից սարսափած։

Երկուսն էլ լուռ էին։— Երկար նստել էին նրանք այնտեղ անշարժ, քանամյա գլուխները բազմահոգ կերպով ձեռքներին հենած։ Լուսնի փայլն արծաթազօծել էր նրանց մազերը, որոնք հուշիկ կերպով տարուբերվում էին դաշտի մեղմ հովերից։

Ապա ամսլի մի ստվեր անցավ նրանց վրայով։

Նրանք երկուսն էլ սարսռացին։

Նրանց թվաց, թե յուր մռայլ թևերն է տարածում այն՝ տրխուր ֆեան, որին նրանք «Հոգս» էին անվանում։

— Տուն եմ ուզում գնալ,— ասաց Էլսբեթը վեր կենալով։

— Աստված հետդ լինի,— ասաց նա հանդիսաբար։

Էլսբեթը վերցրեց նրա երկու ձեռքերը.— Շնորհակալ եմ,— ասաց նա մեղմիվ.— դու ինձ շատ, շատ օգնեցիր։

— Եվ եթե դու ինձ նորից պետք ունենաս...

— Այն ժամանակ կգամ քեզ մոտ սուլելու,— ժպտալով լրացրեց Պաուլի մտքերը Էլսբեթը։

Ու ասպա բաժանվեցին։

Երազի մեջ լիներ կարծես, երբ Պաուլը մռայլ անտառի միջով անցնում էր։

Լորենիները մեղմիվ սոսափում էին... դորշ ճահճուտքի վրա լուսնի շողքերը խաղ էին անում։

— Տարօրինակ է իրոք,— մտածում էր նա,— որ բոլորն ինձ են գանգատվում իրենց ցավերը.— և հետևեցրեց դրանից, որ ինքը այդ բոլորից բախտավորն է։

— Կամ ամենաանբախտը,— ավելացրեց նա մտախոհ կերպով, ապա խորհրդավոր ծիծաղեց ու գլխարկը օդի մեջ նետեց։

Երբ նա լուսավոր դաշտը դուրս եկավ, նկատեց, որ երկու ստվերներ սահեցին յուր առջևով և մշուշապատ հեռվում անհայտացան։

Դրանից անմիջապես հետո լսեց նա յուր հետևում թփերի ճաթճաթոցը։

Արագությամբ ետ դարձավ ու նկատեց մի երկրորդ ստվերազույգ, որ մի թփի տակ վայր ընկավ։

— Ամբողջ դաշտը կարծես այսօր կյանք է առել,— մրմնջաց նա ու ժպտալով ավելացրեց.— իհարկե, չէ՞ որ Հավհանիսյան գիշերն է։

Շատ չանցած, նրանցից հետո տուն դարձան երկվորյակները գղղված մազերով ու այրվող երեսներով։ Նրանք հայտնեցին, որ քահանան թուղթ էր բաց անում այդ ամբողջ ժամանակը։ Ու թղթերի միտքն այնպես էր, որ նրանք շուտով ամուսնանալու են։

Խնդմնդալով նրանք սահեցին իրենց ննջարանը։

Ծեր Մայհյոֆերը լողում էր բախտի մեջ։ Հարուստ Դուգլասի համաձայնությունը, որ կմասնակցի նրա ձեռնարկությանը, նրա ակնկալություններն հանկարծակի ահագին բարձրության էին հասցրել։ Այն մարդիկ, որոնք մինչև այդ նրա համար փակված ականջներ էին, սկսեցին այժմ ագահությամբ լսել նրա բացատրություններն ու ծրագրերը և հյուրասենյակում, ուր նա մինչև այդ կիսածաղրական կիսակարեկցական ժպիտով էր ընդունվում, այժմ մեծ մարդ էր համարվում։

— Կես կարողությամբ գործի մեջ է նետվելու,— պատմում էր նա։— Արդեն Բեռլինում Բորոեդի հետ պայման ենք կապել, որ նա ուղարկի մեզ հարկավոր մեքենաները։ Օլդենբուրգից դրել ենք, որ մի մեքենայագետ կառավարիչ դա, ամեն օր հարցումներ ենք ստանում, թե ինչ գնով ենք ծախելու միլիոնավոր տորֆերը։

Դրա հետևանքն այն եղավ, որ նրան խորհուրդ էին տալիս արդեն ակցիաներ բաց թողնել։ Եվ երբ հավաքվում էին նրա շուրջն ու խնդրում, այսքան տորֆ պահել սրա համար, այնքան երկրորդի... գոռոզ կերպով կրծքին էր նայում ու հայտնում, որ այդ թղթերը բոլորը հաստատուն ձեռքերի մեջ կմնան։

Ֆանը նրա զբաղմունքն այն էր, որ ապագա ֆիրմայի նամակագրերի համար էմբլեմներ էր ծրագրում ու նրա բոլոր գրպաններում զնգզնդում էր փոխ առած ոսկին։

Ջորս շաբաթ էր անցել այն Հովհաննիսյան դիշերվանից, երբ Հելենինթալից երկու հրավիրաթղթեր եկան, մեկը երիտասարդ պարոն Մայհյոֆերի, մյուսը երիտասարդ օրիորդների անունով։

«Պարտիզահանդեսի»,— գրված էր այնտեղ։

— Ահա՜, արդեն մեր բարեկամությունն են փնտրում,— բացականչեց ծեր Մայհյոֆերը.— մեծ մկները ճարպի հոտ են առել։

Պաուլը վերցրեց յուր հրավիրաթուղթը, որ Էլսբեթի ձեռքով էր գրված և մարագի հետև անցավ ու այնտեղ մենակության մեջ ժամից ավելի տնտղում էր նրա տառերը։

Ապա բարձրացավ յուր վերնասենյակը և կանգնեց հայելու առաջ։

Նա նկատեց, որ յուր մորուքը մեծացել է ու միայն կողքերի վրա դեռ այնքան առատ չէ։

— Հեշտ է շինելը,— ասաց նա պճնասիրության մի բոպեում. բայց երբ իրեն ժպտալիս տեսավ, զարմացավ այն խոր, տխուր ծալքերի վրա, որոնք աչքերից քթի մոտով բերանի անկյուններն էին ձգվում։

— Ծալքերը հետաքրքիր են դարձնում,— մխիթարեց ինքն իրեն։

Այդ ժամից սկսած նա բացառապես զբաղված էր այն մտքերով, թե ինչ դեր է խաղալու նա հանդիսի ժամանակ։ Հայելու առաջ կանգնած վարժություններ էր անում շարունակ. ամեն առավոտ վերցնում, մանրամասն տնտղում էր յուր կիրակնօրյա շորերը և վերնազգեստի մաշվածությունը աշխատում էր շարունակ սև գույնով խողանակելով քչացնել ու աննկատելի դարձնել։

Այդ հրավերը մի ահագին հեղափոխություն էր մտցրել նրա մեջ։ Կարծես խոստացյալ երկրից մի ողջույն էր, որը նա Մովսեսի նման միայն հեռվից էր տեսել։ Իզուր չէր, որ նա քսան տարեկան էր։

Հանդիսի օրը մոտենում էր։

Քույրերը հագել էին իրենց սպիտակ զգեստները և մուգ վարդեր էին խրել մազերի մեջ. վեր վեր էին թռչում նրանք հայելու առաջ ու իրար հարցնում.— գեղեցիկ չե՞մ։— Եվ թեև այդ հարցին նրանք դրական կերպով էին պատասխանում, բայց գաղափար չունեին, թե ինչքան սիրուն էին իրոք։ Մայրը նստել էր մի անկյունում, նայում էր նրանց ու ժպտում։

Պաուլը ճնշված կերպով այս ու այն կողմ էր վազվզում, ներքուստ զարմացած, որ այդպիսի մի ուրախ դեպքն էլ այդքան մեծ երկյուղ էր ազդում իր վրա։ Ամեն տեսակ գեղեցիկ ճառեր էր պատրաստել այնտեղ ասելու— մարդկանց բարեկեցության, տորֆի մշակության և Հայնեի երգերի մասին։ Մարդիկ տեսնելու էին վերջապես, որ նա կարող էր սիրալիր կերպով խոսակցել և զբաղեցնել կանանց։

Թեթևընթաց բաց կառքով— անցած փառքի մի մնացորդ—

գնացին նրանք դեպի հանդես։ Վերադարձը ոտքով էին անելու։

Ճանապարհին նկատեց Պաուլը պարտիզի վանդակի այն կողմը բաց գույների զգեստներ, որոնք թփերի մեջ փողփողում էին և աղջիկների ուրախ քրքիջի ձայներ լսեց։ Նրա առանց այն էլ անհանդիստ ու անհաճո տրամադրությունը ավելի սաստկացավ։

Վերանդայում նրանց դիմավորեց պարոն Դուգլասը, ուրախ ժպիտը երեսին։ Նա մեղմությամբ կամթեց քույրերի թշերը, խփեց նրա ուսերին ու ասաց.

— Դե՜հ, երիտասարդ ասպետ, այսօր աշխատենք գործը քաջությամբ տանել։

Պաուլը գլխարկը ձեռքում պտտեցնում էր. ապա հանկարծ միամիտ կերպով ծիծաղեց, որի համար վերջը ինքն իր վրա բարկացավ։

— Դե՜հ, այժմ կանանց մոտ գնանք,— բացականչեց պարոն Դուգլասը. վերցրեց քույրերի թևերից ու առաջ անցավ. Պաուլն ստիպված էր նրա հետևից մեծ քայլերով վազել։

Քրքիջը ավելի ու ավելի մոտենում էր. տղամարդկանց ուրախ ձայներ էլ էին հնչում. նրան այնպես էր թվում, թե նրան գլխատելու են տանում։ Ապա կարծես մեկը նրա աչքերից քողը դեն քաշեց, անորոշ կերպով նա նկատեց ահագին քանակությամբ օտար դեմքեր, որոնք կարծես ամպերից էին նրան նայում։ Նա հիշեց հանկարծ յուր ճառը տորֆի մշակության մասին. բայց այդ րոպեին դրա տեղը չէր։

Ապա տեսավ էլսբեթի դեմքը, կարծես մշուշից դուրս գալիս։ Կրծքին կապտավուն մի գոհար էր ամրացրել և նրան սիրալիր կերպով ժպտում էր։ Բայց չնայած այդ ժպտին, նա երբեք Պաուլին այնքան օտար չէր թվացել, որքան այդ վայրկյանին։

— Պարոն Պաուլ Մայհյոֆեր— իմ մանկության ընկերս,— ասաց նա՝ ձեռնելով Պաուլի ձեռքից, տարավ ծանոթացրեց։ Պաուլը, խոնարհվում էր ամեն կողմ և մի անհասկանալի. անորոշ զգացում ուներ, կարծես իրեն ծիծաղելի էր դարձնում։

— Ահա՜ դալիս է մեր տիպար տղան,— կանչեց հորաքրոջորդու ուրախ ձայնը և բոլոր կանայք քրքջացին։

Ապա առաջարկեցին նրան նստել ու մի բաժակ սուրճ մատուցին։

— Մամաս մի փոքր պառկեց,— շշնջաց նրան էլսբեթը.— այսօր լավ չի նա մի փոքր։

— Հա՛,— ասաց նա ու անմիտ կերպով ժպտաց։

Հորաքրոջորդի Լեոն իր շուրջն էր հավաքել երիտասարդ կանանց մի շրջան և նրանց պատմում էր մի երիտասարդ ռեֆերենդատի մասին, որը շատ սիրով քաղցրավենիք էր ուտում և երբ մի անգամ մի տոպրակ քաղցրավենիք է տեսնում, շաքարի գլուխ է դառնում։ Այդ պատմվածքից նրանք ծիծաղներից մեռնում էին։

— Օ՜, ինչպե՞ս ես կարողանում այդպիսի պատմություններ ասել,— մտածեց Պաուլն ինքն իրեն և որովհետև դրանից մի ավելի լավ բան չեկավ միտքը, իրար հետևից սկսեց կարկանդակ ուտել։ Քույրերն իսկույն շրջապատվել էին մի քանի օտար երիտասարդ պարոններով, որոնց ուղղակի աչքերի մեջ էին նայում նրանք համարձակ կերպով ու հարմար պատասխաններով զարմացնում պարոններին։

Քույրերը նրան ներևացին հանկարծ ավելի բարձր աշխարհների արարածներ։

— Արիք մի լավ բան խաղանք,— դարձավ հորաքրոջորդի Լեոն կանանց, ծնկներն իրար քսելով ու բազկաթոռի վրա անհոգ կերպով հենվելով։— Այն խաղը, որ ես առաջարկում եմ, կոչվում է «կողով ստանալ». կանայք գնում են առանձին մաս գալու, տղամարդիկ էլ առանձին։ Պարոնը հարցնում է պատահած կնոջը ֆրանսերեն. «Սիրո՞ւմ եք ինձ». իսկ կինը պատասխանում է կամ «ես ձեզ պաշտում եմ»— այն դեպքում նրա ամուսինն է լինում և կամ թե չէ լուռ կերպով նրան մի կողով է տալիս (մերժում է)։ Ով ամենից շատ կողով ստանա, նրան մի սրածայր գլխարկ կտանք, որ նա ամբողջ երեկոյան դնելու է։

Կանայք գտան, որ դա շատ ուրախ խաղ է և բոլորը վեր կացան իսկույն ևեթ սկսելու Պաուլն էլ վեր կացավ, թեև նա ամենից սիրով իր մթին անկյունում նստած մնալ կուզենար։

— Արդյոք ի՞նչ պիտի նշանակի այդ օտար խոսքերը,— հարցրեց Պաուլն ինքն իրեն այդ ֆրանսերեն հարց պատաս-

խանի մասին. շատ ուրախությամբ պարոններից մեկին կը-հարցներ, բայց ամաչում էր իր տգիտությունը ցույց տալ և այդպիսով խայտառակել քույրերին։ Էլսբեթն էլ մյուս աղ-ջիկների հետ զբոսնելու էր գնացել. ամենից սիրով էլի նրան կհարցներ։

Այսպես, տխուր մտքերով մյուսների հետևից գնաց կա-մացուկ. բայց երբ տեսավ առաջին աղջկան, որը իր դիմաց էր գալիս, այնպիսի մեծ երկյուղի մեջ ընկավ, որ արագությամբ ճանապարհից թեքվեց ու թավ սաղարթների մեջ թաքնվեց։

Նրա թաքստի տեղը մի վայրի բան էր, կարծես խոր ան-տառի մեջ լիներ։ Եղինջներն ու ձարխոտերը բարձրացել էին իրենց բարակ թփերը և անհանգիստ սինձը մրցում էր կարծես մեծատերև կուստովի հետ, թե որին է պատկանում այդտեղ գերիշխանությունը։

Ա՞յդ է որ ուրեմն, որ մարդիկ հաճույք ստանալ, կամ ժա-մանակ անցկացնել են անվանում։ Լավ էր, որ նա գոնե մի անգամ տեսավ, ճանաչեց այդ կյանքը, բայց իհարկե նրան դուր չեկավ։ Համենայն դեպս տանն ավելի լավ էր... և բացի այդ, ով կարող էր իմանալ, թե արդյոք աղախինները հարկա-վոր ժամանակին քաղհանը պրծե՞լ էին... թե արդյոք տորթը հո շատ խոնավ չէ՞ր դարսվել... Տանն այնքան գործ կար ա-նելու, իսկ նա այստեղ քարշ էր գալիս ու հիմար խաղերով էր զբաղվում գիժ Հանսի նման։ Եթե Էլսբեթը եղած չլիներ... բայց հենց նրանից էլ ի՞նչ օգուտ ուներ նա... Էլսբեթը ժըպ-տում էր նրան, ինչպես և յուրաքանչյուրին էր ժպտում, մա-նավանդ երբ հորաքրոջորդի Լեոն իր հանաքներն սկսեր... ինչքա՞ն համարձակն էր նա, ինչպե՞ս նա բոլորին շոյում էր։ Օ՜, վատ է, վատ աշխարհը, բոլորը կեղծ են, բոլորը։

Նա լսեց, որ ճանապարհի կողմից իր անունն են կանչում, բայց իր ապաստարանում ավելի պինդ սեղմվեց, կուչ եկավ. այստեղ նա գոնե ազատ է ամեն տեսակ ծաղրից։— Մի ճըն-ղող, խեղդուկ օդ բռնել էր մթնոլորտը, բուռերը քնեած բզզո-ցով սահում էին գետնի երեսով. երկնակամարում փոթորկի նշաններ էին երևում։

«Ինձ համար միևնույն է,— մտածում էր Պաուլը.— ես

կորցնելու բան չունեմ... աշնանացանն արդեն հնձված, տանն է»։

Դուրսը խաղաղվել էր. հեռվից հնչում էր թեյագդալների ու ապակյա բաժակների շաչյունը, որին երբեմն մի խուլ ծիծաղ էր խառնվում։

Պաուլն իր շունչը պահել էր. քանի երկար էր համառում նա իր թաքստոցում, այնքան ճնշվում էր նրա սիրտը. վերջը նրան թվաց, որ ինքը նմանվում է դպրոցական մի տղայի, որ ուսուցչի պատժից փախել թաքնվել է։ Շուրջն առատությամբ աճած բույսերի հոտը ավելի ու ավելի տանջող, սուր էր դառնում. խոնավ գետնից մի վատ հոտ էր բարձրանում ու նուրբ մշուշի պես տարածվում նրա աչքերի առաջ։ Բարդ ի բարդ ամպերը վեր էին բարձրանում դեպի երկինք, հեռվում որոտն արդեն սկսել էր յուր խուլ թնդյունները։

«Եվ սա հաճույք է կոչվում», մտածում էր Պաուլը։

Ճյուղերի մեջ մի իրարանցում ընկավ. ծանր կաթիլները տերևների վրայից ցած էին ճթթում։ Պաուլն այն ժամանակ վախկոտ ու անհաստատ հանցավորի նման դուրս սահեց իր անկյունից։

Վերանդայից նրան ցնծացող հուհռոցը դիմավորեց։

— Ահա գալիս է Ավգուստը,— ցած ձայնով ասաց պարոններից մեկը, որ Բեռլինում եղել էր և ցիրկը տեսել էր. մյուսներն էլ նրան ձայնակցեցին։

— Հարգելի հասարակություն,— բղավեց Լեոն ցատկելով մի աթոռի վրա.— այս օրինակելի տղան, որի անունը Պաուլ Մայհոֆեր է, անսպառասխանատու վերպով հասարակության դատաստանից խուսափել է։ Որովհետև նա իր ոչնչությունը թափանցող զգացմունքով նախատեսեց, որ ինքը ամենից շատ կողմվներ էր միացնելու իր անարժան գլխի վրա, այդ պատճառով վերին աստիճանի դատապարտելի վախկոտությամբ....

— Չեմ հասկանում, ինչո՞ւ ինձ այդպես վատ եք դուրս բերում,— ասաց Պաուլը նեղացած այդ ամբողջը լուրջ ընդունելով։

Մի նոր, ահագին քրքիջ բարձրացավ նրա հարցին պատասխան։

— Ես առաջարկում եմ ուրեմն նրա հանցանքին որպես

պատիժ նրան հասկացնել սրածայր գլխարկը և դրա համար դատաստանական մի ատյան կազմել...

— Խնդրեմ, առանց դրան էլ կվերցնեմ ես գլխարկը,— գրգռված կերպով պատասխանեց Պաուլը։ Բայց հենց բավական էր, որ նա այժմ բերանը բաց աներ, որ բոլորը նորից թուլանային ծիծաղից։

Հանդիսավոր կերպով նրա գլուխը պսակեցին գիշերվա գլխարկով...— Երևի շատ ծիծաղելի կլինեմ սրանով,— մտածեց Պաուլը, որովհետև բոլորը մեռնում էին ծիծաղից։ Միայն քույրերը չէին ծիծաղում, այլ ամոթից շիկացած գոգերին էին նայում. իսկ էլսբեթն էլ շփոթված կերպով նրան էր նայում, կարծես ուզում էր թողություն խնդրել նրանից։

Դրանից անմիջապես հետո փոթորիկը բրդավ։ Խայտաճամուկ խմբերով բոլորը փախան տուն։ Երիտասարդ կանայք գունատվեցին. շատերը վախենում էին որոտի դղրդյուններից, նույնիսկ մեկն ուշաթափվեց։

Լեոն առաջարկեց մի շրջան կազմել և ամեն մեկն իր գիտցածներից մի պատմություն ասի. ով ոչինչ չասի, պետք է մի գրավ տա։

Բոլորն համաձայնեցին։ Հերթի համար վիճակ ձգեցին և հերթը մի պարոնի ընկավ. սա պատմեց ուսանողների կյանքից մի շատ ուրախ բան և հավատացնում էր, թե իր հետ է պատահել։ Ապա երկու օրիորդ, որոնք չուզեցին բան ասել, գրավ տվին. դրանից հետո հերթը Պաուլին հասավ։

Պարոնները թեթև կերպով ծաղրական ակնարկներով հազացին, իսկ օրիորդներն իրար արմունկներ բոթեցին ու քրքջացին։ Պաուլը ներքին զայրույթից սիրտ առած ու ճակատին ծալքեր բաց անելով այսպես սկսեց անպատրաստից.

— Կար չկար մի մարդ կար, որն այնքան ծիծաղելի էր, որ բավական էր նրան նայելը, որ մարդ ծիծաղից թուլանար։ Բայց նա ինքը չէր իմանում, թե ինչպես էր այդպես լինում, որովհետև նա իր կյանքում դեռ երբեք չէր ծիծաղել...

Շրջանը բոլորովին սսկվել, լռել էր. ժպիտը դեմքերի վրա սառել էր և շատերը գետնին էին նայում։

— Շարունակիր,— կանչեց էլսբեթը նրան մեղմությամբ նշան անելով։

Բայց նա ամաչեց, որ սիրտ էր արել իր ներքին աշխարհը այդ օտար մարդկանց առաջ բաց անել։

— Շարունակությունը չեմ իմանում,— ասաց նա ու վեր եկավ։

Այս անգամ ոչ ոք չծիծաղեց. ճնշող լռությունը տիրել էր մի փոքր ժամանակ. ապա մոտեցավ դրամ հավաքող օրիորդն ու շնորհալի ծնրադրությամբ ասաց.

— Ուրեմն մի գրամ պիտի տաք։

— Ուրախությամբ,— ասաց Պաուլը, ու ժամացույցը շղթայից արձակեց։

— Ի՞նչ անհաճելի մարդ է,— լսեց նա իր շուրջը, որ պարոններից մեկն ասում էր հարևանին. դա այն պարոնն էր, որ այն ծաղրական մականունն էր դրել նրան։

Հերթը Լեոյին հասավ, որը մի չափազանց ծիծաղաշարժ անեկդոտ պատմեց, բայց հասարակության ուրախությունը կարծես չէր ուզում վերադառնալ։

Խուլ կերպով ծեծում էր անձրևը պատուհանների ապակիները... սև թխպերի ստվերները լցրել էին սենյակը... կարծես սպիտակահեր կինը օդի միջով ներս էր սահել ու իր մռայլ թևերով դիպչում էր երիտասարդ ժպտուն դեմքերին, որոնք այժմ լուրջ ու ծեր էին երևում...

Երբ էլսբեթը դաշնամուրը բաց արավ ու մի ուրախ պար սկսեց, սառած ցնծությունը նորից կենդանացավ։

Պաուլը կանգնել էր մի անկյունում և դիտում էր այդ իրարանցումը. նրան բոլորովին հանգիստ էին թողնում, միայն երբեմն սրա նրա հայացքը թեթևակի ընկնում էր վրան։

Երկվորյակները գժի նման դառնում էին դահլիճի մեջ. նրանց գանգուրավոր խոպոպները խճճվել էին ու նրանց աչքերի միջից մի վայրի փայլ էր դուրս շողում։

— Թող ուրախանան,— մտածում էր Պաուլը.— այն էլ բավական է, որ շուտով ճաշակելու են թշվառությունը։— Բայց որ նրանց համար ոչ մի թշվառություն գոյություն չուներ, այդ բանի մասին չէր մտածում Պաուլը։

Երբ էլսբեթը ազատվեց, մոտեցավ նրան ու ասաց.— Ինչպես երևում է, շատ ձանձրալի է քեզ համար այստեղ։

— Ախ չէ,— ասաց սա։— Չէ՞ որ նորություն է այս բոլորն ինձ համար։

— Ուրախ եղիր,— խնդրում էր էլսբեթը.— մի անգամ ենք ապրելու աշխարհիս վրա։

Ու հենց այդ բոպեին վազեց Լեոն վրա պրծնելով, բռնեց նրա մեջքից ու քաշեց տարավ։

— Չէ, նա քեզ օտար է,— մտածեց Պաուլը։

Երբ էլսբեթը նորից Պաուլի մոտով սահեց անցավ, կամացուկ փսփսաց նրա ականջին.— դնա կողքի սենյակը, քեզ բան ունեմ ասելու։

«Նա ի՞նչ կարող է քեզ ասել», մտածեց Պաուլը, բայց և այնպես գնաց։

Վարագույրի հետևում կիսով չափ թաքնված սպասում էր նա. բայց նա չեկավ։ Բոպե առ բոպե դառնությունը ավելանում, աճում էր նրա սրտում։ Հանկարծ նա հիշեց իր գեղեցիկ ճառերը տորֆի մշակության, Երգերի գրքի մասին ու ծաղրական կերպով ուսերը թոթվեց իր սեփական հիմարության վրա շշմած։ Նրան թվաց, որ այդ երեկոյան մի տարով ավելի է հասունացել։

Ու հանկարծ մի հարց եկավ նրա միտքը.— ի՞նչ ես փընտրում դու այստեղ. ի՞նչ կապ ունես դու այդ ուրախ մարդկանց հետ, որոնք ծիծաղելու են ու իրար դուր գալ են աշխատում ու անմիտ կերպով օր են մթնեցնում։ Հիմար, թշվառականի մեկն էիր, երբ կարծում էիր, թե դու էլ իրավունք ունեիր ուրախ լինելու. թե դու էլ կարող էիր նրանց պես լինել։

Գետինն այրվում էր կարծես նրա ոտքերի տակ։ Նրան թվաց, թե նա մեծ հանցանք կանի, եթե այդ տեղում մի հատիկ բոպե էլ ավելի մնա։

Կամացուկ բակն անցավ, որտեղ կախված էր նրա գրլխարկը։

— Ասացեք քոնյերիս,—խնդրեց նա աղախնուն, որ այնտեղ սպասում էր,—ես տուն եմ գնում, նրանց կառք ուղարկելու։

Ինչպիսի՞ թեթևությամբ նա շունչ քաշեց, երբ նրա հետևից դարբասի դուռը փակվեց։

Փոթորիկը խաղաղվել էր. բարակ անձրևը մաղում էր եր-

կընքից, զովարար քամին շաղում տափաստանի վրայով և հորիզոնի ծայրին, որտեղ հենց նոր էր անհայտացել վերջալույսի հետին շողը, բոստրային ամպերից հեռացող մրրիկի շողքն էր փայլփլում։

Անձրևից փափկացրած ճանապարհով անցնում էր նա արագությամբ, կարծես մեկը քշելիս լիներ նրան. շտապում էր անտառին հասնել, որն այժմ խաղաղաբեր սոսափյունով նրա գլխի վերևումն էր։ Խոնավ ճահիճը բուրում էր, և եղևնիների աստղափշերից փայլուն կաթիլները վայր էին ծորում։

Երբ նա դաշտ դուրս եկավ և իր հայացքի առաջ հայրական օջախը աղոտ գծերով տեսավ, թևերը տարածեց և քամու միջով բացականչեց.

— Ահա՛ իմ տեղը. այստեղ եմ ես պատկանում. ես սրիկա լինեմ, եթե ես մեկ էլ իմ ուրախությունը օտար տեղեր որոնեմ։ Սրանով երդվում եմ, որ թոթափելու եմ ամեն տեսակ սնապարծություն և թեթևամտություն և հրաժարվում եմ ամենայն հիմար ձգտումներից։ Ես գիտեմ այժմ, ես ինչ եմ, և ինչ որ ինձ չի սազի, ինձ համար չեղած պետք է լինի։ Ամե՛ն։

Այսպես հրաժեշտ տվեց նա իր երիտասարդությանը և իր երիտասարդական երազանքին։

13

Երբ նա հետևյալ առավոտ զարթնեց, մայրը նրա անկողնի մոտ նստած էր։

— Դու արդեն վե՞ր ես կացել,—հարցրեց նա զարմացած։

— Չկարողացա քնել,— ասաց մայրը իր մեղմ ձայնով, որն այնպես էր հնչում միշտ, որ կարծես արածի համար ներողություն խնդրելիս լիներ։

— Ինչո՞ւ չկարողացար,— հարցրեց նա։

Մայրը չպատասխանեց, բայց շոյեց նրա մազերը և տրխրությամբ ժպտաց նրան, այնպես որ Պաուլն հասկացավ, որ երկվորյակները բաներ էին պատմել երեկվա մասին և որ մոր վիշտը իրա՝ Պաուլի համար էր, որ չէր թողել նրան քնելու։

— Այնքան էլ վատ չէր, մայրիկ,— ասաց նա մխիթարելով.— նրանք ինձ մի փոքր ձեռք առան, ուրիշ ոչինչ...

— Էլսբեթն է՞լ,— հարցրեց նա մեծ, երկյուղի աչքերով։

— Ոչ, նա չէ,—պատասխանեց Պաուլը.—բայց...—նա լռեց և պատի կողմը շուռ եկավ։

— Բայց ի՞նչ,— հարցրեց մայրը։

— Չգիտեմ,— պատասխանեց Պաուլը. բայց այստեղ մի «բայց կա»։

— Դու նրա հետ լավ չես վարվում, կարելի է, Պաուլ,— ասաց մայրը։— Տես նա այս բանը քեզ համար է ուղարկել աղախնի հետ։— Ու դուրս հանեց գրպանից մետաքսյա թղթի մեջ փաթաթած մի առարկա։

Սև եբենոսից շինած մի սրինգ էր դա, արծաթյա փայլուն լեզվակներով։

Պաուլն ուրախությունից և ամոթից կարմրեց. բայց ուրախությունն իսկույն անցավ և երբ գործիքը մի փոքր տնտղեց, մեղմությամբ ասաց.— ի՞նչ պիտի անեմ ես դրանով։

— Ածել կսովորես դրա վրա,— ասաց մայրը հպարտորեն։

— Արդեն ուշ է,— առարկեց Պաուլը տխրությամբ գլուխը շարժելով.— այժմ ինձ ուրիշ բան է զբաղեցնում։— Նրան թվում էր, որ նա այժմ ստիպված է մի ինչ որ մեռած բան գերեզմանից հանել...

— Հը՞, երեկ լավ խայտառակել ես քեզ,—ասաց նրան հայրը, երբ սուրճ էին խմում միասին։

Պաուլը լուռ ժպտաց քթի տակ, իսկ հայրը մի ինչ որ բան էր մմոռում պատվասիրության պակասության մասին։

Երկվորյակները մեծ, ներազուն աչքեր ունեին ու երբ իրար էին նայում, մի երանելի փայլ էր անցնում դեմքերի վրայով։ Գոնե նրանք բախտավոր էին։

Շաբաթներն անցնում էին. հունձքն անվնաս ամբարներն առան շնորհիվ Պաուլի անխոնջ հոգատարության։ Օրհնված տարի էր այդ տարին, որի նմանը վաղուց է չէր եղել։ Բայց ի՞նչ օգուտ. հայրն արդեն հաշիվ էր անում, թե այդ եկամուտը ինչպես կարող է լավագույն կերպով տորֆի շահագործության վրա գործ դնել։

Առաջվա նման նա պոռոտախոսում էր դարձյալ և որքան քիչ էր երևում պարոն Դուգլասը, այնքան ավելի էր սա գինետներում ու գարեջրատներում նրա օրհնված մասնակցության մասին խոսում։

Որովհետև մի անգամ խաբեբայության մեջ էր ընկել, ուստի ստիպված էր այժմ յուրաքանչյուր ստի տակից մի ավելի մեծ ստով դուրս գալ։ Ինչքան էլ որ պարոն Դուգլասը երկայնամիտ և համբերող լիներ, նա էլ վերջ ի վերջո պիտի բարկանար այն խայտառակության համար, որ նրա անվան հետ էր կապվում։

Օգոստոս ամսի վերջին օրերից մեկում ճաշից առաջ էր, երբ Պաուլը Միխել Ռաուդցուի հետ բակում աշխատում էր, մեկ էլ տեսան, որ հեռվից ուղղակի իրենց է շարժվում հարեվանի բարձր հասակը։

Նա վախեցավ. անկարելի էր, որ լավ բանի համար լիներ այս գալուստը։

Պարոն Դուգլասը սիրալիր կերպով մեկնեց ձեռքը Պաուլին, բայց նրա սպիտակ թավ հոնքերի տակից մռայլ կերպով փայլում էին աչքերը։

— Տա՞նն է ձեր հայրը,— հարցրեց նա, ու նրա ձայնը գրգռված ու զայրացած էր հնչում։

— Այո՛, ներսումն է,— պատասխանեց ճնշված կերպով Պաուլը։— Եթե թույլ կտաք, ես կուղեկցեմ ձեզ։

Անսպասելի հյուրին տեսնելով, վեր թռավ հայրը շփոթված կերպով իր աթոռից. բայց էլի իսկույն իրեն հավաքեց ու իր պոռոտախոս եղանակով սկսեց.

— Ա՜հ, լավ է, որ դուք եկել եք, պարոն. շատ հարկավոր բան ունեմ ձեզ հետ խոսելու...

— Ոչ պակաս հարկավոր նաև ես ձեզ հետ,— ասաց պարոն Դուգլասը իր վիթխարի հասակովն ուղղակի կանգնելով նրա առաջ։— Ի՞նչպես եք համարձակվում, սիրելի բարեկամ, իմ անունը շահագործել...

— Ծ՞ս, ձեր անունը... պարոն... ...խնդրեմ... Պաո՛ւլ դուրս գնա։

— Ոչինչ, ուզում է թող մնա,— ասաց Դուգլասը, դառնալով Պաուլի կողմը։

— Բայց նա դուրս պիտի գնա, պարոն,— գոռում էր հայրը.— կարծեմ իմ տանը տերը դեռ ես եմ։

Պաուլը հեռացավ սենյակից։

Տան մռայլ բակում նա պատահեց մորը, որը ձեռքերը ծալել էր ու անթարթ աչքով այն դռանն էր նայում։ Որդուն տեսնելով արտասուքներից փղձկաց ու ձեռքերն էր ջարդում։

— Նա իր հիմարությամբ մեր մի հատիկ բարեկամին էլ խրոնցնելու է— միակը, որ աշխարհիս մեջ մենք ունենք,— հեկեկում էր նա. ու ապա վայր ընկավ որդու թևերի վրա, ուժեղ ջղաձգությունների մեջ, մանավանդ երբ երկու մարդկանց բարձր գոռոցները նրա ականջին էր հասնում։

— Արի գնանք, մայրիկ,— խնդրեց նա,— իզուր հուզվում ես. միևնույն է բան չենք կարող անել։

Ու առանց դիմադրության անձնատուր եղավ նա որդուն, որը նրան համարյա թե քաշելով տարավ ննջարանը։

— Մի փոքր քացախ տուր ինձ,— խնդրեց նա,— եթե ոչ վայր կընկնեմ։

Պաուլը կատարեց խնդիրը. և երբ նա մայրիկի քունքերն էր շփում, շատ բարձր ձայնով խոսում էր նրա հետ, որպեսզի դրանով տղամարդկանց աղաղակը խեղդի։

Հանկարծ դռները դուրս պրծան. մի պահ խաղաղություն, անտանելի խաղաղություն, մեկ էլ շղթաների զնգզնգոցը հընչեց և հոր մոլեգին կոչը՝ «Սուլթան, բռնի՛ր»։

— Ի սեր աստուծո, շանն է արձակում նրա վրա,— կանչեց Պաուլն ու դուրս պրծավ դեպի բակը։

Ճիշտ այն ժամին հասավ, երբ Սուլթանը— մի ահագին կծան գամբռ— թռնում էր Դուգլասի մեջքին, մինչդեռ հայրը մտրակը բարձր թափահարելով վազում էր հևիհև։

Միխել Ռաուդցուսը ձեռքերը շալվարի գրպանները դրած դիտում էր այդ տեսարանը։

— Հայրիկ, ի՞նչ ես անում,— գոռաց Պաուլը. դուրս քաշեց նրա ձեռքից մտրակը և մինչդեռ կովողներին հասնելը, հակայի կարող բռունցքի ուժից ուժասպառ ու խեղդամահ, պառկավ ամեհի գաղանը և մեկնեց յուր ոտքերը։

Դոնգլասն այժմ մեջքից ու թևերից արյունն էր սրբում։ Նրա

զայրույթն իջել էր բոլորովին. նա կանգնած մնաց, թաշկինակով սրբում էր ձեռքերը և բարի ժպիտով ասում էր.

— Խեղճ կենդանին ուրիշ կերպ էր կարծում։

— Դուք վիրավորվել եք, պարոն Դուգլաս,— աղաղակեց Պաուլը ծալելով ձեռքերը։

— Նա իմ վիզը հորթի ազգրի տեղ էր դրել,—շարունակում էր Դուգլասը.— մի փոքր հետս արիք և օգնեցեք ինձ շորերս լվամ, որպեսզի կանայք չվախենան շատ։

— Ներեցեք նրան...— աղերսում էր Պաուլը.— նա չէր հասկանում, ինչ էր անում։

— Չե՞ս ուզում ետ դառնալ, դո՛ւ, հիմա՛ր տղա,— բակից գոռաց հոր ձայնը.— ինչպես երևում է, այդ խոսքապրուժ սրիկայի հետ գործ ես ուզում բռնել։

Հարևանի բառնցքները ջղային կերպով ցնցվեցին, բայց նա իրեն զսպեց ու մի ստիպված ժպիտով ասաց.

— Ետ դարձեք, որդին հոր մոտ պիտի մնա։

— Բայց ես ուզում եմ շտկել,—թոթովում էր նա։

— Խաբեբա, ստահակ,— հնչում էր հոր ձայնը հեռվից Դուգլասի հասցեին։

— Ետ դարձեք,— ասաց Դուգլասը իրար սեղմած ատամներով.— հանգստացրեք, եթե ոչ վատ կլինի։

Այդ ասելով լի թշերով սկսեց բարձր մի քայլերգ սուլել, որպեսզի հայհոյանքը չլսի ու մեծ քայլերով առաջ անցավ։

Ծերունի Մայհյոֆերը խելագարի նման աղմկում էր բակում, քարեր էր դես ու դեն շպրտում, կառքի մի լուծը բռնեց վեր նետեց ու ոտքերով աջ ու ձախ պատահածը հրում, դեն էր վանում։

Երբ Պաուլին տեսավ, ուզում էր կոկորդից բռնել, բայց հենց այդ միջոցին բարձր աղաղակելով դուրս թռավ դռնից մայրը և երկուսի մեջ խառնվեց։ Երկու ձեռքով թևերի տակ առավ Պաուլին, ուզում էր նույնիսկ մի բան ասել, բայց այն վախը, որ նա իր մարդուց ուներ, լեզուն առել էր նրանից։ Հազիվ միայն նրան նայել էր կարողանում։

— Կի՛ն արարածներ,— բացականչեց ծերունին, ուսերը թափ տալով ու արհամարհական շարժումներ անելով. բայց որովհետև յուր կատաղությունը որևէ մեկի վրա թափել էր

ցանկանում, մոտեցավ Միխել Ռաուդցուսին, որ հենց այդ բոպեին պատրաստվում էր աշխատանքի գնալ։

— Դո՛ւ, շո՛ւն. ի՞նչ ես բերանդ բաց արել այստեղ,— բղավեց նա սրան։

— Աշխատում եմ, պարոն,— պատասխանեց սա ու իր սև հոնքերի տակից ծակող մի հայացք ձգեց նրա վրա։

— Ի՞նչն է ինձ արգելում, դո՛ւ, շո՛ւն, որ ես քեզ կտորկտոր անեմ,— բղավում էր ծերունին, բռունցքը նրա քթին պահած։

Մշակը կծկվեց և այդ պահին նրա տիրոջ երկու բռունցքները իջան նրա երեսին։ Նա ետ-ետ օրորվեց. նրա մռայլ դեմքից այրունի հետին կաթիլն անդամ անհետացավ. առանց ծպտուն հանելու ձեռքը ձգեց կացնին...

Բայց հենց այդ միջոցին վրա պրծավ նրան Պաուլը, որ մինչև այդ աճող երկյուղով ականատես էր եղել այդ տեսարանին. դուրս պոկեց նրա ձեռքից դենքը և նետեց ջրհորը։

Հայրը նորից էր ուզում մշակի կրծքին տալ, բայց Պաուլը արագ ու վճռակի բռնեց նրա մեջքից և թեև ծերունին ձեռքերն ու ոտքերը շարունակ շարժում էր, բոլոր ուժերն հավաքած տարավ նրան բնակարանը, որի դռները նա հետո նրա հետևից փակեց։

— Այդ ի՞նչ արեցիր հորդ,— լալագին կերպով ողբում էր մայրը, որն ականատես էր այդ ուժի գործողությանը. որովհետև նրա համար բոլորովին անհասկանալի էր, որ որդին կարող է հորը բռնել։ Նրա հայացքը վախկոտ կերպով որդուն էր նայում. նա նորից կրկնեց իր հարցը լալագին եղանակով.— այդ ի՞նչ արեցիր հորդ։

Պաուլը կռացավ, համբուրեց նրա ձեռքը և ասաց.— լուռ կաց, մայրիկ. չէ՞ որ հարկավոր էր նրա կյանքն ազատել։

— Այժմ փակե՞լ ես նրան, հա՞. Պաո՛ւլ, Պաո՛ւլ։

— Քանի դեռ Միխելը չէ գնացել, նա պիտի նեղստամ մընա,— ասաց Պաուլը.— դուռը բաց չանես, եթե ոչ կարող է դրժբախտություն պատահել։

Ապա նորից դուրս եկավ դեպի բակ։ Մշակը հենվել էր ախոռի դռանը, մորուքի հետ խաղ էր անում ու ծուռ կերպով նրան էր նայում։

— Միխել Ռաուդցուս,— կանչեց նրան Պաուլը։

Մշակը մոտեցավ։ Նրա ճակատի երակները դերձանի կաժեր էին դարձել. Պաուլը պիտի չէր անում նրան նայել։

— Քո ավել աշխատած վարձդ հինգ մարք 40 ֆենիգ է։ Ահա, կարող ես ստանալ. հինգ ռոպեի մեջ ագարակից հեռացած պետք է լինես։

Մշակը մի հայացք նետեց նրան, այնքան մռայլ ու սոսկալի, որ Պաուլը սարսափեց, մտածելով, թե ինչպես է այդ մարդուն այդքան երկար ժամանակ իր մոտ պահել։ Աչքը նրանից չէր հեռացնում Պաուլը, որովհետև կարծում էր, որ ամեն ռոպե կարող է նրա կողմից հարձակման ենթարկվել։

Բայց մշակը լուռ կերպով ետ դարձավ, մտավ ախոռը, որտեղ նա իր կապոցը հավաքեց և երկու ռոպեից հետո դուրս եկավ դարբասի դռնով։— Այդ ամբողջ սարսափելի տեսարանի ընթացքում նա մի ծպտուն չէր հանել։

«Այժմ հորս մոտ», մտածեց Պաուլը հաստատ վճռած հանգստությամբ դիմավորելու նրա բոլոր հարվածներին ու հայհոյանքներին։

Նա բաց արավ դուռը և սպասում էր, թե ահա հայրը պիտի իր վրա հարձակվի։

Բայց սա ընկճված ու խեղճացած նստել էր բազկաթոռի մեջ և անթարթ կերպով ցած էր նայում։ Նա փսկի չշարժվեց էլ, երբ Պաուլը նրան մոտեցավ ու թողությունն խնդրելով ասաց.— Կամքիս հակառակ վարվեցի քեզ հետ այսպես, հայրիկ, բայց պետք էր այդպես անել։

Հայրը միայն մի երկչոտ հայացք նետեց կողքից նրա վրա ու դառն կերպով ասաց նրան.— Ինչ որ ուզես, կարող ես անել... ես մի ծեր մարդ եմ... և դու ինձանից զորեղ ես։

Այնուհետև թուլացած վայր ընկավ։

Այդ օրից սկսած Պաուլը տան տերն էր։

14

Երեք շաբաթ էլ անցավ. Պաուլը ճորտի պես էր աշխատում, բայց և այնպես մի տարօրինակ անհանգստություն

բռնել էր նրան։ Երբ նա հանգստության մի բոպե էր գտնում, չէր կարողանում տանը նստել։ Նրան այնպես էր թվում, կարծես պատերը վրան էին թափվելու։ Նա դուրս էր գալիս մոլոր քայլերով, շրջում էր դաշտում կամ անտառում կամ թափառում էր Հելենինթալի շրջ կողմերը։ Նա ինքն էլ չէր կարողանում հաշիվ տալ, թե այդտեղ ի՞նչ էր ուզում։— Եթե Էլսբեթին պատահեմ, ես կարծում եմ, ամոթից գետինը պիտի մրտնեմ,— ասում էր նա ինքն իրեն ու տակայն ամեն կողմ նրան էր փնտրում և ուրախությունից ու կարոտից դողում էր, երբ հեռվից կանացի մի դեմք էր տեսնում մոտենալիս։

Նա սկսեց անփույթ կերպով անտես առնել նաև գիշերային հանդիսատը։ Հենց որ տանը բոլորը քնում էին, գաղտագողի դուրս էր գալիս այնտեղից և շատ անգամ առավոտ լուսով էր վերադառնում և խառն գլխով ու ջարդված անդամներով աշխատանքի էր գնում։

— Ես ուզում եմ շիտակել...— կմկմում էր նա հաճախ ինքն իրեն և երբ գերանդին հացահատիկների միջով սուրում անցնում էր նրա ձեռքով, նա տակտը՝ «շիտակել, շիտակել» ասելով էր պահում։ Բայց թե, ինչպե՞ս, այդ մասին նա բոլորովին չգիտեր. նա դեռ չգիտեր էլ, թե արդյոք Դուգլասը շան կծոցներից վնաս ստացե՞լ է թե ոչ։

Մի անգամ, երբ կիսախավարի մեջ անտառի այն կողմում թափառում էր նա, տեսավ Միխել Ռաուդցուսին, որ Հելենինթալից այս կողմն էր գալիս. նա ուսին դրել էր մի բահ, որի ծայրին մի կապոց կար։ Պաուլը հաստատուն հայացքով նրան էր նայում, որովհետև սպասում էր թե ահա իր նախկին մշակի կողմից հիմա հարձակման կենթարկվի, բայց մշակը վախկոտ կերպով կողքից նայեց նրա վրա և ահագին շրջան անելով հեռացավ գնաց։

— Կարծես այդ անպիտանը գաղտնի դիտավորություններ ունի,— ասաց Պաուլն ու նրա հետևից նայեց։

Դուգլասն այդ մշակին իր մոտ ծառայության էր վերցրել, ինչպես Պաուլին այդ պատմել էր վարձկաններից մեկը. և երբ հայրը իմացավ այդ, ծիծաղեց ու ասաց.— Այդպես էլ սպասում էի այդ գիշերագնացից։ Այդ մշակից նա լավ-լավ բաներ դուրս կքաշի մեր մասին։

Պաուլի հայրը բոլորովին հավատացած էր, որ Դուգլասը գործը դատարան կհանձնի, նույնիսկ որոշ բավականություն էր գտնում նա այն մտքի մեջ, որ ինքը պիտի դատապարտվի «անարդարորեն,— ըստինքյան հասկանալի էր. և որովհետև գանգատն ամեն օր ուշանում էր և չէր գալիս, ծաղրական կերպով մտածում էր նա. «ողորմած տերը սիրում է կախաղանից առաջ միջոց տալ»։

Բայց ինչպես երևում է, Դուգլասը իրեն եկած խայտառակությունը բոլորովին անտես առնել էր ուզում, նա չուզեց նույնիսկ իր տված դրամապուխը։

Պաուլի սիրտը լի էր խորին շնորհակալությամբ դեպի Դուգլասը և քանի նա մտածում ու այդ իր զգացմունքը մի կերպ արտահայտելու ոչ մի միջոց չէր գտնում, այնքան ավելի մրրկվում էր նրա մեջ ամոթը, այնքան ավելի այս ու այն կոչմն էր քշում նրան վայրի անհանգստությունը։

Մի գիշեր նա դարձյալ Հելենինթալում էր, պարտիզի վանդակի առաջ։

Կանուխ աշնանային մշուշը նստել էր գետնի երեսին և թառամող կանաչը մեղմությամբ դողում էր։— «Սպիտակ տունը» անհայտացել էր գիշերվա ստվերների մեջ, միայն լուսամուտներից մեկում փայլում էր մի աղոտ մթնակարմիր լույս։

«Այնտեղ նա պահպանություն է անում իր մորը», մտածեց Պաուլը։ Եվ որովհետև ոչ մի տուրիշ միջոց չգտավ նրան կանչելու, սկսեց ուստի սուլել... Երկու երեք անգամ կանգ առավ ականջ դնելու... ոչ ոք չէր գալիս... ու երկյուղը պատեց նրա հոգուն։

Նրա շոշափող ձեռքը որոնում էր այն թուլացած ճաղը, որ նրան անցյալում էլսբեթն էր ցույց տվել. և երբ գտավ, դուրս պոկեց ու ներս մտավ դեպի պարտեզ։— Ճյուղերը պատառոտեցին նրա շորերը. կարծես վայրի անտառից դուրս գալու համար նա աշխատում էր մի արահետ, մի շավիղ գտնի։ Վերջապես բաց տեղ դուրս եկավ։ Սպիտակ խիճը մի անորոշ կիսախավար էր տարածում իր շորս կողմը ու հիվանդի սենյակից ավելի լուսավոր կերպով էր փայլում փոքրիկ ճրագը։

Նա մի նստարանի վրա նստեց ու անթարթ աչքերով այն

կողմը նայեց։ Նրան թվաց, թե վարագույրների հետևում մի ինչ-որ ստվեր է շարժվում։

Ապա միանգամից նրա շուրջը լուսավորվեց...

Երևան եկան գիշերվա խավարից վարդենիները... խիճը փայլեց և բնակարանի կատարը, որ մինչև այժմ սև զանգվածի նման բարձրում կանգնել էր, այժմ սկսեց մուգ կարմրագույն լուսավորությամբ փայլել, կարծես արշալույսի ճառագայթներն իր վրա ունենար։

Ապշած ետ նայեց... արյունը սառեց նրա երակներում... բարձր, գիշերային երկնքի երեսին բարձրացել էր մի արյունալի հրդեհ... սև ամպերը լցվել էին բոցավառ առարկաներով, ճերմակավուն բոցերը պտույտներ էին անում նրանց մեջ ու կրակե ճառագայթները վեր էին ելնում, կարծես հյուսիսափայլ լիներ երկնքում...

«Քո հայրական օջախն է այրվում»...

Գլուխը ծանր կերպով ընկավ նստարանի վանդակին. բայց հաջորդ վայրկյանին խսկույն վեր թռավ... ծնկները դողում էին, արյունը աղբյուրի նման խփում էր քունքերում... «Առա՞ջ. փրկի՛ր, ինչ որ փրկելու է»... լսում էր նա յուր ներսից ու այդ ձայնին հլու հնազանդ վայրի մղումով դուրս եկավ թփուտների միջով, մագլցեց անցավ պարտիզի վանդակը ու նրա այն կողմում թուլացած՝ փոսի մեջ ընկավ։

Ծագող արևի պես այրվող ագարակը ծածկել էր իր լուսով ամբողջ դաշտը։ Խոպան դաշտերը փայլում էին և սև անտառը բոստրային գույն էր ստացել...

Բնակարանը դեռ անվնաս էր, նրա պատերը մարմարիոնի պես փայլում էին, նրա լուսամուտները պսպղում էին կարմիր հակինթի պես։ Բակը օրվա պես լույս էր։ Շտեմարանն էր, որ այրվում էր. շտեմարանը, որ մինչև առաստաղը լիքն էր առատ հնձով։ Նրա աշխատանքը, նրա բախտը, նրա հույսերը... բոլորը, բոլորը ծուխ ու բոց էր դառնում...

Նորից վեր թռավ ու վայրի ընթացքով անցավ դաշտը։ Երբ անտառի մոտով անցնում էր, նրան թվաց, թե ինչ-որ մի ստվեր սահեց թաք կացավ, հենց որ Պաուլի մոտենալը նկատեց։ Բայց փ՞նչ ժամանակն էր այդպես բանի վրա ուշք դարձնելու։

Առա՜ջ. փրկի՛ր, ինչ որ փրկելու է...

Բակից խառնաշփոթ աղաղակներ դիպան նրան։ Մշակներն իրար գլխով էին անցել... աղախինները ձեռքերն էին կոտրատում... քույրերը այս ու այն կողմն ընկած նրա անունն էին բղավում։

Գյուղը հենց նոր զարթնել էր... գյուղի ճանապարհը լցվում էր մարդկանցով... հրդեհի վայրն էին բերվել ջրի մի քանի մեծ ամաններ և մի հին փտած ջրբուխ։

— Ո՞ւր է տան տերը,— կանչեց նա ծառաներին։

— Հենց այս րոպեին նրան ներս տարան, ոտքը կոտրվել է,— եղավ պատասխանը։

Դժբախտություն դժբախտության հետևից։

— Թողե՛ք շտեմարանն այրվի,— բղավեց նա մի քանիսներին, որոնք գլուխները բոլորովին կորցրած մի քանի դույլ ջուր էին լցնում բոցերի վրա։

— Տավարն աղատեցեք. նայեցեք, որ անասունները բոցերի մեջ չընկնեն։

Երեք չորս հոգի վազեցին դեպի ախոռը։

— Մյուսներդ դեպի բնակարանը. ոչինչ դուրս չհանեք։

— Ոչինչ դուրս չհանել,— կրկնեց նա մի քանի օտար մարդկանց ձեռքից իրեղենները դուրս կորզելով, որոնք հենց նոր ներսից դուրս էին քաշ տալիս։

— Բայց ուղում ենք աղատել...

— Աղատեցեք տունը...

Նա վազեց դեպի սանդուղը. վեր շտապելիս նկատեց նա մորը, որ համբացած ու անարցունք հոր կողքին նստել էր. իսկ հայրը պառկել էր բազմոցի վրա ու հեծեծում էր։

Նեղ անցքի միջոցով թռավ նա դեպի երդիկը։

— Այս կողմը տվեք կաշեխողովակը,— կանչեց նա։

Ուղածը մի երեքժանու ծայրին ամրացրին ու երկարացրին նրան. ֆշշալով լցվեցին ջրի շողքերը շիկացած աղյուսների վրա։

Ապա վազեց դեպի առաստաղի միջանցքը. շորերն արդեն այրում էին նրան, մազերի մեջ լիքն էին հրաբորբոք հացահատիկներ, որոնք շտեմարանի կողմից էին տարածվում, ձեռքերի ու երեսի վրա փոքրիկ, այրվող ածխավառ վերքեր էին

բացվել։ Նա չէր ղգում ինչ որ իր մարմնին էր վերաբերում, բայց ինչ որ շուրջն էր կատարվում, այդ ամենը լսում և տեսնում էր... նրա զգայարանները կարծես բազմապատկվել, քառապատկվել էին...

Նա տեսնում էր, ինչպես հացաբույսերի որոմները կրակե բոցերի մեջ երկինք էին ելնում ու կարմրաշուք կամարներով էլի վայր ընկնում. նա տեսնում էր, որ ձիերն ու կովերը դուրս էին քշվում ախոռից դեպի ցանկապատի կողմը, որտեղ նրանք ապահով կարող էին մնալ. նա տեսնում էր վերևից իրենց շանը, որը կրակից կիսախանձ շղթայված տեղում կաղկանձում էր։

— Արձակեցեք շանը,— բղավեց նա դեպի ցած։

Նա տեսնում էր փոքրիկ, գույնզգույն բոցեր, կապտավուն շերտերով, որոնք շտեմարանի կտուրից սայլատան կողմն էին թռչում։

— Սայլատունն այրվո՞ւմ է,— գոռաց նա դեպի ցած։— Ազատեցեք, ինչ որ մեջը կա։

Մի քանիսներն այն կողմը վազեցին, կառքերը դուրս քաշելու։

Ու այդ ամբողջ ժամանակը ֆշշում ու թշշում էր ջրի հոսանքը կտուրի վրա, ծակում անցնում էր ձեղունակալի գերանները և հասնում տակի աղյուսներին։— Նրանցից վեր էին բարձրանում սպիտակ փոքրիկ ամպիկներ և անհայտանում էին, որպեսզի մի ուրիշ տեղից նորից երևան գան։

Հանկարծ նա հիշեց «սև Զուզեին», որը սայլատան ամենատեղ անկյունում ջարդոտած ու անպետք բաների մեջ վայր էր ընկած։ Կրծքով մի ծակոց անցավ. մի՞թե դա էլ պիտի գնա կորչի, որը նրա սրտի, նրա հույսերի առարկան է եղել շարունակ...

— Փրկեցեք լոկոմոբիլը,— գոչեց նա դեպի ցած։

Բայց նրան ոչ ոք չհասկացավ։

«Սև Զուզեին» օգնություն հասցնելու տենչն այնպես ուժգին կերպով բռնեց նրան, որ մի ոտպե թվաց նրան, որ դրա համար հարկավոր էր նույնիսկ բնակարանը աչքաթող անել։

— Դեպի այս կողմը, արձակեցեք ջրախողովակը,— գո-

ռաց նա մի խումբ մարդկանց, որոնք մեծ մասամբ անգործ կանգնել էին այդտեղ բերանբաց։

Պնդակաղմ մի որմնադիր դուրս եկավ գյուղացիների միջից, վեր մագլցեց, վերցրեց կղմինդրները ու ճանապարհ բաց արավ այդտեղից մինչև երդիկը։ Պաուլը նրան երկարացրեց ջրախողովակը ու ինքը ցած թռավ, ներքուստ դարմացած, որ չկոտրվեց իր ձեռքը կամ ոտքը։

Ապա դիմեց դեպի սայլատունն, որից նրան խեղդիչ օդը դիմավորեց։

— Ո՞վ կգա հետս,— բղավեց նա։

Գյուղացի երկու վարձկաններ առաջ անցան։

— Առա՞ջ։

Ու բոցերի ու ծխի մեջ մտան։

— Ահա այստեղ է լծափայտը, բռնեցե՛ք. շուտով դուրս։

Ճռռալով ու ջայթելով դուրս բերին այդ երերուն լոկոմոբիլը. լոկոմոբիլի ու նրա աղատիչների հետևից սայլատան կտուրը ճարճատյունով խորտակվեց, վայր թափվեց...

Լուսանում էր։ Աղոտ կապտավուն լուսավորությունը խառնվել էր ավերակների ծխի հետ, որոնցից այս ու այն կողմը կայծեր էին թռչկոտում ու շուտով հոգնած կերպով էլի վայր ընկնում։

Բազմությունը հետզհետե գնացել, հեռացել էր։ Անտանելի խաղաղություն էր տիրել բակում, միայն հրդեհի վայրից դալիս էր երբեմն մի ճարտատյուն և սոսյուն, կարծես բոցերը հանգչելուց առաջ ուզում էին մի անգամ էլ իրար բաներ մրմնջալ...

Բնակարանն ու ախոռը բոլոր շնչավորներով փրկված էին։ Շտեմարանն ու սայլատունը մոխիր էին դարձել։

— Այժմ նույնքան աղքատ ենք, ինչ որ քսան տարի առաջ,— խորհրդածում էր Պաուլը, սրբելով իր վերքերը.— եթե ես աննպատակ թափառելիս չլինեի, թերևս ամեն բան անվնաս մնացած լիներ։

Երբ նա բնակարանի դռան մոտեցավ, տեսավ մորը ձեռքերը ծալած մի անկյունում կուչ եկած։ Նրա այտերի վրայով խոր ակոսներ էին ձգվում դեպի վայր. աչքերը կորցրած ամեն

արտահայտություն ապշել էին— կարծես նա էլի յուր առաջ բոցերի լեզուներն էր տեսնում։

— Մա՜յր,— գոչեց նա լի անձկությամբ. որովհետև նա սարսափում էր, մտածելով, որ մայրը կարող է խելագարության մոտ լինել։

Մայրը մի քանի անգամ նշան արավ գլխով ու ասաց.— Այո, այո, այ դա լավ է։

— Մա՜յր, էլի լավ կլինի,— բացականչեց Պաուլը։

Նա նայեց որդուն և ժպտաց. այդ ժպիտը դանակի պես խոցեց նրա սիրտը։

— Հայրդ ինձ հենց նոր դուրս ձգեց,— ասաց նա.— ես քեզ շատ եմ խնդրում, դու էլ ինձ մի հալածի։

— Մա՜յր, ի սեր Աստուծո, այդպես մի խոսի...

— Տես Պաուլ, ես իրոք մեղավոր չեմ դրա մեջ,— ասաց նա և աղաչական արտահայտությամբ նայեց նրան.— ես երբեք հրադով չեմ գնում շտեմարան։

— Բայց ո՞վ է քեզ բան ասում։

— Հայրդ է ասում, որ ես եմ իրը թե ամեն բանի մեղավորը, լավ էր, ինձ սատանան տաներ։ Բայց նրան բան չանես։ Պաուլ,— աղաչում էր նա երկյուղով լի, երբ տեսավ Պաուլի զայրույթից դունատ դեմքը.— էլ նրան այնպես չբռնես, սաստիկ ցավեր ունի նա։

— Մի ժամից կգա բժիշկը, ես արդեն մարդ եմ ուղարկել։

— Պաուլ, հորդ մոտ գնա ու մխիթարիր նրան... սիրով կուզեի ինքս գնալ, բայց նա ինձ դուրս քշեց,— և նորից կծկվելով մրմնջում էր յուր համար.— նա ինձ դուրս քշեց, դուրս քշեց։

15

Ագարակում անպատմելի թշվառություն էր տիրում այժմ։ Բնակարանում իր անկողնի վրա պառկած էր հայրը, հառաչում ու հայհոյում էր և անիծում իր աշխարհ գալու ժամը։ Մեղմ ժամերին վերցնում էր կնոջ ձեռքը, արտասվագին աչքերով նրանից ներողություն էր խնդրում, որ նրա կյանքը իր պես մի փչացած մարդու բախտի հետ է կապել և խոստանում էր նրան

ապագայում բախտավոր ու հարուստ դարձնել։ Հարո՞ւստ, ամենից առաջ հարուստ։

Բայց արդեն ուշ էր։ Նրա մեղմ խոսքերն այլևս ոչ մի տրպավորություն չէին թողնում կնոջ վրա. այդ խոսքերի միջից սա լսում էր այն բարկության ու հայհոյանքների որոտը, որ սովորաբար հետևելու էր դրանց։ Մայրը թորշոմած այտերով ու մարած աչքերով քաշշ էր տալիս իր կյանքը առանց ձայնի, առանց ծպտունի, լուռ ու անշշուկ ու այդ լռության մեջ կրկնակի տղորմելի։

Բայց նրան ոչ ոք չէր ողորմում, ոչ ասված և ոչ նրա մշտնջենական բախտը։ Նա հոգնում, մաշվում էր օրեցօր. նրա գունատ, կապտավուն երակներով ծածկված ճակատի վրա կարծես արդեն մահվան կնիքը երևում էր և բախտավորությունը, որ նա յուր ամբողջ կյանքում այնպես տենչացել էր, այժմս էլ հեռու էր, քան երբևիցե։

Միակ մարդը, որ նրան օգնել կարող էր, Պաուլն էր. բայց սա էլ հանցավորի նման կարծես ծածուկ էր ապրում. նա հաղիվ էր սիրտ անում իր մորը բարի լույսի ժամանակ ձեռք տալ և երբ մայրը նրան նայում էր, սա աչքերը ցած էր ձգում միշտ։ Եթե նրա մայրը անտանելի վշտից ու ցավերից այդպես բթացած չլիներ, պետք է որ անշուշտ յուր որդու այդքան տարօրինակ շարժումների ու կեցվածքի համար զանազան կասկածներ ծնեցներ յուր սրտում. բայց այն ամենը, որ նա յուր թշվառության մեջ զգում էր, դա յուր որդու մխիթարությունն էր, որ այժմ պակասում էր իրեն։

Մի անգամ երեկոյան կիսախավարին, երբ Պաուլը իր սովորության համեմատ հրդեհավայրի մոխիրներն էր տակն ու վրա անում, մայրը հետևեց նրան, նստեց նրա կողքին մի ջարդոտված տախտակի վրա ու փորձեց նրա հետ խոսակցություն սկսել. բայց նա ինչպես միշտ, այս անգամ էլ նրանից խույս տվեց։

— Պաուլ, ինձ հետ այդպես անսիրտ մի լինի,— խնդրեց մայրն այն ժամանակ ու նրա աչքերը լցվեցին։

— Մայրիկ, ես հո՛ քեզ բան չեմ անում,— ասաց նա ու շրթունքները կծեց։

— Պաուլ, դու իմ դեմ մի բան կունենաս։

— Ոչինչ չունիմ, մայրիկ։

— Կարելի է կարծում ես, որ հրդեհի մեջ ես մեղավո՞ր եմ։

Այդ լսելով բարձր աղաղակեց Պաուլը, գրկեց նրա ծնկները ու երեխայի պես լաց եղավ. բայց երբ մայրը նրա մազերը շոյել էր ուզում, միակ փաղաքշանքը, որ այդ երկուսի մեջ սովորական էր, վեր թռավ Պաուլն հանկարծ ու բացականչեց.— ինձ մի դպիր, մայրիկ, ես արժանի չեմ դրան։

Ապա ետ դարձավ ու դիմեց դեպի դաշտը։

Այն վայրկյանից ի վեր, երբ նա հրդեհից հետո առաջին անգամ զարթնել էր, իր ամբողջ էությանը մի միտք էր տիրապետել, որը նրան այլևս երբեք հանգիստ չէր տալիս. այդ միտքն այն էր, որ նա, միայն նա է այդ բոլորի պատճառը, միակ մեղավորը։

«Եթե ես այն կողմերը չթափառեի,— ասում էր նա ինքն իրեն,— եթե ես մեր տանը պահպանություն անեի, ինչպես որ դա պարտականությունս էր, այդ դժբախտությունը երբեք և ոչ մի դեպքում չէր կարող վրա հասնել»։

Նրա ամբողջ ծածուկ տենչերն ու կարոտն այժմ նրան հանցագործություն էր երևում, որ նա արել էր իր հայրական տան վերաբերմամբ։

Ինչպես Հիսուս Գեթսեմանիում, այնպես էլ Պաուլն այժմ պայքարում էր իր սրտի հետ, ապաշխարություն ու թողություն գտնելու։ Բայց երկյուղը նրան հանգիստ չէր տալիս։ Ամեն ժամանակ կարմիր բոցերն էին, որոնք նրա աչքերի առաջ պարելու էին դուրս գալիս. ու երբ նա երեկոները անկողին էր մտնում ու ճնշված սրտով խավարին էր հառում աչքերը— նրան թվում էր, թե տեսնում է ահա— բոլոր անկյուններից կրակե լեզուներ էին դուրս թռչում, տարածվում, գիշերվա ըստվերների փոխարեն կարծես նրան սև մոխրագույնորշու ամպերն էին պատում։

Հրդեհի պատճառի կամ մեղավորի մասին ոչ մի որոշ բան չգիտեր նա դեռ։ Այն հոգսերը, որոնք իրար հետևից նրա վրա էին գալիս այն գիշերը, այնքան մեծ էին ու ստիպողական, որ նա չէր կարող վրեժի մասին մտածել։ Ամենահարկավոր բաների համար նույնիսկ պակասում էր այժմ փողը. հազիվ էր կարողանում դեղատան պիտույքներր հոգալ։ Գիշեր ցերեկ մը-

տածում, հաշիվներ էր անում ու ծրագրում մեծ պլաններ, որպեսզի կարողանա ամենաանհրաժեշտ բաների համար գոնե առձեռն դրամ գտնել։ Նույնիսկ եղբայրներին էր գրել, թե արդյոք նրանք կարող կլինեի՞ն իրենց ազդեցությունը գործ դնել և չափավոր տոկոսով նրան մի քանի հարյուր թալեր վերցնել։ Խորին տխրությամբ պատասխանել էին նրանք, որ իրենք այնքան ծանրաբեռնված են պարտքերով, որ անկարելի է, որ նորից դրամ գտնել կարողանան։ Գոտֆրիդը—որ այժմ վարժապետ էր, թեև այդ ժամանակներն արդեն նշանվել էր մի ունեվոր երիտասարդ կնոջ հետ և Պաուլը համոզված էր, որ յուր եղբոր համար դժվար չէր լինի նշանածի միջոցով մի փոքրիկ գումար տոկոսով գտնել, բայց եղբայրը կարծում էր, որ յուր արժանիքն ու պատիվը այդ հարցով կարող են ընկնել. նա վախենում էր, որ յուր ընտանիքի իսկական դրությունը հայտնելով իր անհրաժեշտը, նրա առաջ խայտառակվի։

Մեծ բարեբախտություն էր, որ կանճրուկի հունձքը արդեն ծախված ու տեղ էր հասցրված և գետնախնձորներն էլ դեռ մեծ մասամբ գետնի տակ էին։ Այդպիսով դեռ էլի մի փոքր առձեռն փող կար մեջտեղը, որով ամենաստիպողական ծախքերը կարող էին ծածկել։ Իհարկե դեռ խոսք չէր կարող լինել շտեմարանը նորից շինելու մասին։

Տխուր ավերակների, խանձված ու վառված պատերի մեջ տեղում կանգնած էր սևացած ու մրոտ— իր բարակ երկար վիզը դեպի վեր պարզած «սև Զուլեն», միակ առարկան, որ այն սոսկալի կործանումից աղատվել էր— եթե չհաշվենք մի քանի տղորմելի սայլեր։

Երկվորյակները, որոնք այն տխուր օրերում իրենց ղվարթությունից շատ էին կորցրել ու միայն անկյուններումն էին դեռ մի փոքր քրքջում, վախկոտ կերպով «սև Զուլեի» շուրջն էին պտտվում։ Եվ երբ հայրը իր անկողնում առաջին անգամ շիտկվեց ու պատուհանից այդ սև ածդահային ապշած նայեց, բռունցքները սեղմեց ու բղավեց.— ինչո՞ւ դա էլ բոցերին կոպ չգնաց։

Բայց Պաուլի սիրտն ավելի սերտորեն էր կապվել նրա հետ։— «Այժմ ամենալավ ժամանակն է, որ դու նորից կենդանանաս», ասում էր նա, բռնում էր անիվից ու կաթսայի

մեջ նայում. երեկոները նա փոքրիկ մոդելներ էր շինում եղևնու փայտից. մի օր էլ իր եղբորը հետևյալը գրեց. «Ձեր դպրոցական գրադարանից ինձ մի քանի գրքեր ուղարկիր շոգեմեքենաների կազմի մասին։ Ինձ թվում է, որ մեր հայրական օջախը շատ սպասելիքներ ունի դրանից»։ Բայց իզուր էր Գոտֆրիդին խնդրելը. առաջինը նրա սկզբունքին հակասում էր գրադարանից այնպիսի գրքեր վերցնել, որ ինքը չէ գործածելու. երկրորդ էլ որ միևնույն է, այդ գրքերից Պաուլը օգուտ չի ստանալու, որովհետև նա տեսական բնագիտության մեջ վարժ չէ։— Այնուհետև նա Մաքսին գիմեց. հետևյալ պոստով Պաուլն ստանում է եղբորից տասը ֆունտանոց մի ծրար բոլորովին նոր գրքերով, որոնց հետ հիսուն մարքի էլ մի հաշիվ էր գրված։ Նա որոշեց գրքերը ստանալ և հիսուն մարքը քիչ քիչ խնայելով հավաքել ուղարկել։ «Սև Զուլեի» համար թանկ բան չկա», ասում էր նա։

Բայց նոր անախորժություն էր դեռ գալու։

Մի առավոտ նրանց բակը մի կառք մտավ, մեջը մի ժանդարմ երկու օտար պարոնների հետ, որոնցից մեկը՝ համակրելի դեմքով, քառասուն տարեկան, ոսկյա ակնոցները քթին մի պարոն— իրեն ներկայացրեց որպես դատական քննիչ։

Պաուլը սարսափեց, որովհետև նա զգում էր, որ նա շատ բան ունի ծածկելու։

Դատական քննիչն այցելեց ամենից առաջ հրդեհավայրը, նկարեց հիմքը և հարցրեց դռների ու պատուհանների տեղը. ապա կանչել տվեց ծառայողներին, որոնց նա մանրամասնորեն հարցուփորձ արեց, ինչ որ նրանք գիտեին հրդեհից առաջ մինչև հրդեհը։

Պաուլը գունատ ու դողդոջուն կանգնել էր այնտեղ ու երբ քննիչը ծառաներին արձակեց, որպեսզի այժմ Պաուլին հարցուփորձի ենթարկի, սրան թվաց, թե աշխարհի կործանումը ահա մոտենում է։

— Այն օրը, հրդեհից առաջ շտեմարանում եղե՞լ եք,— հարցրեց քննիչը։

— Այո։

— Մխո՞ւմ եք։

— Ոչ։

— Մտաբերո՞ւմ եք, թե արդյոք կրակի, լուցկու կամ դը-ռանց նման առարկաների հետ որևէ կերպ գործ ունեցել եք այն օրը։

— Օ՜, ոչ. ես չափազանց զգույշ եմ այդ բաների մեջ։

— Ե՞րբ եք եղել վերջին անգամ շտեմարանում։

— Երեկոյան ժամը ութին։

— Ի՞նչ էիք անում այնտեղ։

— Իմ սովորական շրջագայությունս էի անում, դռները կողպելուց առաջ։

— Ինքնե՞րդ եք կողպում դռները։

— Այո, միշտ։

— Որևէ բան չե՞ք նկատել այն երեկոյան։

— Ոչ։

— Ոչ ոքի չե՞ք տեսել շրջակայքում։

Հանկարծ կայծակի նման նրա միտքը լուսավորվեց. միայն այդ րոպեին նա հիշեց այն ստվերը, որ նա նկատել էր անտառում հրդեհ սկսվելու ժամանակ։ Բայց դա հո շրջակայքում չէր. ու խոր շունչ քաշելով, պատասխանեց. «ոչ»։

Ահա. հիմա արդեն կգա. մտածում էր նա. հաջորդ հարցը նրա գիշերային թափառումները երևան պիտի հաներ, գաղտնիքը պիտի բաց աներ, այն գաղտնիքը, որ նա մինչև այժմ իր սրտի խորքում փակել պահել էր։

Բայց ոչ. դատական քննիչը իր հարցուփորձն հանկարծ ընդհատեց ու մի փոքր լռությունից հետո հարցրեց.

— Հրդեհից ոչ շատ առաջ ձեզ մոտ ծառայության էր մի մշակ— Միխել Ռաուդցուս անունով— այնպես չէ՞։

— Այո,— պատասխանեց Պատլն ու մեծ աչքերով ապշած նրան նայեց։ Ուրեմն Ռաուդցուսն էր, որի վրա կասկածն ընկնում էր։

— Ինչո՞ւ համար արձակեցիք նրան։

Ու Պատլն ամենայն մանրամասնությամբ պատմեց այն սարսափելի դեպքը, բայց զգուշությամբ անցավ այն տեսարանի վրայով, որ պատահել էր Դուգլասի ու հոր մեջ։ Այժմ նա մի փոքր հանգստացավ, երբ առաջին վտանգն անցել էր արդեն։

Քարտուղարը եռանդով արձանագրում էր. դատական քնն-

նիչը հոնքերը վեր քաշեց ցույց տալով, թե արդեն բանն հասկացել է։ Երբ Պաուլն իր ասելիքը վերջացրեց, քննիչը ժանդարմին նշան արավ. ու սա լուռ դարձավ, Հելենինթալի ճանապարհը բռնելով հեռացավ։

— Այժմ գնանք ձեր հոր մոտ,— ասաց քննիչը։ Արդյոք նրա դրությունը թույլ տալի՞ս է, որ ես նրան հարցաքննեմ։

— Իսկույն գնամ նայեմ,— ասաց Պաուլն ու դիմեց դեպի հիվանդի սենյակը։

Հայրը բարձրացել նստել էր անկողնի մեջ. նրա աչքերը փայլուն էին ու մի ինչ-որ դժվարությամբ ճնշված կատաղության փայլ էր նշմարվում նրա դիմագծերի մեջ։

— Թող մի դա՞,— կանչեց նա Պաուլին.— թեև անմտություն է այդ բոլորը. միևնույն է, նրանք սիրտ չեն անի իսկական մեղավորին բռնելու... բայց թող մի ներս գան.

Դատական քննիչի առաջ սա էլ կռվի տեսարանը պատմեց. բայց հենց այն, որ Պաուլը ամաչելով ծածկել էր ու չէր պատմել— Դուգլասի հետ իր ունեցած կռիվն ու շան նրա վրա կատաղեցնելը— այդ մասն ահա նա ամենայն մեծախոսությամբ ավելորդաբանեց օտարականի առաջ։ Դատավորը մրտախոհ կերպով գլուխն էր քորում, իսկ քարտուղարը եռանդով արձանագրում։

Երբ Մայհյոֆերն այն տեղին հասավ, որ նա պիտի պատմեր, թե ինչպես իր որդին նրան բռնեց, կանգ առավ ու լռեց։ Նրա աչքերից հակառակության ու բարկության կայծեր ուղղվեցին նրա երեսին։

— Հետո ի՞նչ եղավ,— հարցրեց քննիչը։

— Ես մի ծեր մարդ եմ,— մռմռաց նա ատամների մեջ.— ինձ մի ստիպեք իմ սեփական խայտառակությունս խոստովանելու։

Քննիչը գոհ մնաց։ Երբ նա ծերունուն հարցրեց, թե արդյոք առաջուց երբեք չե՞ք կասկածել Միխել Ռաուդցուսի վրա, սա շատ խորհրդավոր կերպով ծիծաղեց ու շշնջաց.— կարող է պատահել, որ նա իր ձեռքը, իր ողորմելի ձեռքը խառնել է դրա մեջ, բայց...— նա կանգ առավ.

— Բա՞յց։

— Ափսոս, պարոն քննիչ, որ Արդարության Դիցուհու աչ-

քերը կապված են,— պատասխանեց սա հեգնական ծաղրով.— Ես էլ ոչինչ չունեմ ասելու։

Քննիչն ու արձանագրողն իրար նայեցին խորհրդավոր կերպով և հարցաքննությունը վերջացավ։

— Միխել Ռաուդցուսին կձերբակալե՞ն,— հարցրեց Պաուլը, երբ օտարականները կառք էին նստում։

— Հավանորեն արդեն ձերբակալված է,— պատասխանեց քննիչը։— Հարբած ժամանակը շատ բաներ է խոսել նա, շատ կասկածելի բաներ. և ինչ որ մենք այժմ նրա մասին գիտենք, ավելի քան բավական է, որ ամբողջ գործը նրա կողմը շուռ տանք։ Իհարկե դեռ շատ բան էլ նոր կբացվի։

Այդ ասելով հեռացան, գնացին։

Երկար նայում էր Պաուլը նրանց կառքի հետևից։

Քննիչի վերջին խոսքերը նրա երկյուղը նորից երևան բերին և մինչդեռ շաբաթներ էին անցնում ու նախնական քննությունները իրենց ճանապարհով առաջ էին գնում, նստում էր նա տանը, վախենալով ու դողդողալով, կարծես դատավորի վճիռը նրան, անպատճառ նրան էր խորտակելու։

Պաուլը մի հրավեր ստացավ մոր ու քույրերի հետ գնալ ներկայանալու երդվյալ ատենականների դատարանին. միայն նրա հորն էր բացառություն արված. նրան վերջին անգամ տանը պիտի լսեին ու երդմնեցնեին։ Բայց նա հայտնեց թե ավելի շուտ կուզենա դատարանի դահլիճում մեռնել, քան տանը նստել այն ժամանակ, երբ նրա տան կործանիչին դատարանում արդարացնելու են։ Թե ում էր հասկանում նա այդպիսի խոսքերով, պարզ չէր, համենայն դեպս նրա միտքը դատապարտված մշակի մասին չէր։

Դատավարության օրն եկավ մոտեցավ։ Պաուլը հոր համար մի հարմարավոր դեսպակ էր շինել տվել, որով նա այլևս ազատվում էր ման գալուց։ Դեսպակով նրան բերին կառք դրին, որտեղ նա փափուկ խոտերի մեջ տեղավորվեց։

Մայհոֆեր ընտանիքին քաղաք տանողը մի խղճալի ճռճռան սայլ էր, որովհետև լավ կառքերը բոլորն այրվել էին։ Կառքի հատակում պառկել էր ընտանիքի տերը, հառաչելով ու հայհոյելով. նրա կինը տեղավորվել էր վերևում, գունատ ու վշտահար, կարծես, այդ ընդհանուր քայքայման հոդին լիներ՝

մշտափթիթ երիտասարդությունը, որ ավերակների միջից նույնիսկ նոր կյանքով դուրս է գալիս. նա ծիծաղում էր յուր զույգ աչքերով ու սովորականի նման ընկճված չէր երևում։ Առջևում նստել էր Պաուլը, որպես այդ տխուր սայլի կառավար. նա թախծապատ կերպով ցած էր նայում, որովհետև ամաչում էր, որ յուրայիններին այդպես խղճալի կերպով է քաշած տանում։

Նոյեմբերյան արևի հոգնած ճառագայթներն ընկել էին շեկ տափաստանի վրա. դեղին, շոր խոտերի մեջ խառնիխուռն կերպով տարածվել էին հավամրգու թփերը, տեղ-տեղ փայլում էին անձրևից մնացած ադամանդյա հատիկներն ու կարճ ծառաստանի մեջ ամառային սատկած թռչունների պես այստեղ այնտեղ մի մի տերևներ էին կախվել։

— Հիշո՞ւմ ես, ինչպես մենք քսան և մեկ տարի առաջ նույն ճանապարհով գնում էինք,— ասաց տիկին Էլսբեթը յուր ամուսնուն ու մի հայացք ձգեց Պաուլի վրա, որին նա այն ժամանակ իր ստինքից էր կերակրում։

Մայհյոֆերը մի ինչ-որ բան մոռաց քթի տակ, որովհետև հիշողություններ պրպտելը չէր սիրում, այն էլ այդ տեսակ հիշողություններ։ Բայց տիկին Էլսբեթը ծալեց իր ձեռքերն ու մտքերի մեջ ընկղմվեց։ Նրա մտքինը տխուր բան չպիտի լիներ, որովհետև նա մտածելիս ժպտում էր։

Քանի կառքն իր նպատակին մոտենում էր, այնքան ավելի ճնշվում էր Պաուլի սիրտը։ Նա տարածվել էր իր նստարանի վրա ու նրա անդամների վրայով շարունակ սարսուռ էր անցնում։

Նրա աչքերի առաջ անտանելի պարզությամբ կանգնել էր այն սոսկալի գիշերը, հրդեհի գիշերը ու այն վախին, որ նա ուներ օտար մարդկանց առաջ կանգնել ու խոսելու համար, խառնվեց մի բախտավոր զգացմունք, երբ նա մտաբերեց, որ հրդեհի ժամանակ ծխի ու բոցերի մեջ կանգնել էր նա այնտեղ բարձրում, թեք ու անհավասար կտուրի վրա ու այնտեղից հրամաններ էր արձակում ու բոլորը հնազանդվում էին նրան. նա միակն էր այն ընդհանուր խառնաշփոթության մեջ, որ գլուխը չէր կորցրել։ «Կարելի է թե դարձյալ ինձ հաջողվի մեր քայքայված գործերը կարգի բերել», մտածում էր նա իրեն

մխիթարելով. բայց տեսնելով իր ներկա խղճալի անուժ ու անհույս կացությունը, ավելի ևս խոր հուսահատության մեջ ընկավ։ «Չէ, ուրիշ կերպ չի լինելու, տարեցտարի ավելի վատանում-է», ասաց նա ու հենց այդ րոպեին լսեց իր հետևում մոր հառաչանքը և ինչ որ նա մտածել էր այդ վայրկյանին, նրան անխիղճ, ապերախտ եսամոլություն թվաց։

— Ինձ համար չեմ մտածում,— մրմնջաց նա. կառքն այդ րոպեին քաղաքի դռնով ներս էր մտնում։

Նա կանգ առավ մի կարմիր, քարե բարձր սանդուղքներով ու կամարաձև պատուհաններով շինության առաջ. դատարանի շինությունն էր դա։ Դրանից ոչ հեռու կանգնել էր նաև մի ուրիշ կառք, որ Պաուլին շատ լավ ծանոթ էր. նրա կառապանը առաջվա նման գլխարկի վրա մի փունջ էր կրում, որ Պաուլի վրա, երբ սա կոնֆերմանդ էր, շատ մեծ տպավորություն էր թողել։

Երբ հայրը իր տեղում շիտկվեց, նա էլ նկատեց այդ կառքն ու բացականչեց.— Հա՜, այդ սրիկան էլ այստեղ է. մի տեսնեմ ինչպես պիտի դիմանա իմ հայացքին։

Պաուլը դատարանի մի ծառայի օգնությամբ հորը սանդուղքներով վեր բարձրացրեց դեպի վկաների սենյակը։ Մայրը ու քույրերը հետևից էին գնում և մարդիկը կանգ էին առնում ու այդ տխուր հուղարկավորությանը ականատես լինում։

Վկաների սենյակը լի էր մարդկանցով, որոնք մեծ մասամբ Հելենինթալից էին եկել։ Անկյուններից մեկում կուչ էին եկել մի քանի ցնցոտիապատ երեխաներ և մի կին ուռուցիկ երեսով, մեջքին կարմրավուն մի կտոր էր կապել, որի մեջ ծծկերը քնել էր։ Նրա երեխաները, որոնք կախ էին ընկել նրա վերնազգեստի փեշերից, գլուխներն էին քորում ու իրար ծածուկ հարվածներ տալիս։ Դատապարտվածի ընտանիքն էր դա, որ եկել էր աբելու, որ իրենց հայրն այն գիշեր տանն էր եղել։

Մայհոֆերը լավ մեկնվել էր իր աթոռի մեջ ու դրգռիչ հայացքներ էր նետում իր չորս կողմը։ Այդ օրն ավելի քան երբևիցե նա իրեն համարում էր մեծ մարդ, դյուցազն ու նահատակ։

Դռները բացվեցին ու Դուգլասը Էլսբեթի հետ շեմքում երևաց։

Մայհյոֆերը մի թունալի հայացք ձգեց նրա վրա ու ապա դառն կերպով քթի տակ ծիծաղեց։ Դուգլասը նրա վրա ուշադրություն չդարձրեց, գնաց հակառակ անկյունում տեղ բռնեց, իր հետ տանելով Էլսբեթին։ Սա գունատ ու թույլ էր երևում, ամաչկոտ ու երկյուղալի, որ երևի օտար, անհարմար հասարակության մեջ գտնվելուն համար էր։

Էլսբեթը մի թեթև ժպիտ ձգեց մոր և քույրերի կողմը ու Պաուլին էլ բազմախորհուրդ ու մտախոհ նայեց, կարծես մի բան էր ուզում հարցնել։

Պաուլն աչքերը ցած ձգեց, որովհետև նա այդ հայացքը տանել չէր կարող։ Մայրը մի շարժում արավ այն կողմն անցնելու, բայց Մայհյոֆերը բռնեց հագուստից ու հարկավոր եղածից բարձր ասաց նրան.

— Լավ կլինի տեղումդ մնաս։

Պաուլը կարծես հաշմանդամ էր դարձել։ Մնկները դողում էին, ճակատի վրա մի խուլ, անորոշ ճնշում էր ծանրացել, որ չէր թողնում նրան մտածելու։

— Խայտառակելու ես դու նրան,— մրմնջում էր Պաուլն ինքն իրեն, առանց հասկանալու յուր ասածը։

Երդվյալների դահլիճում արդեն հարցաքննությունն սկսվել էր։ Մեկը մյուսի հետևից կանչվում էին վկաները։

Սկզբում հերթը վարձկան մշակներինն էր. ապա այն խանութպանը, որի պանդոկում Միխել Ռաուդցուսը զանազան բաներ էր խոսել, ապա անկյունի ցնցոտիապատ ժողովուրդը։— Սենյակն սկսել էր դատարկվել։— Դրանից հետո պարոն Դուգլասի անունը կանչեցին։ Նա իր աղջկա ականջին մի քանի բան շշնջաց, որ պետք է որ Մայհյոֆերներին վերաբերեր ու իր մեծ քայլերով հեռացավ։

Ձեռքերը գոգին, մենակ նստել էր այժմ Էլսբեթը պատի մոտ։ Հուզմունքի խոր կարմրությունը վառվում էր նրա այտերի վրա։ Այդ վիճակի մեջ էլ նա շատ սիրելի ու շնորհալի էր երևում ու նրա պարզ, ճշմարիտ էությունը նկատելի էր նրա ամեն մի գծի մեջ։

Մայրը նրանից աչքը չէր հեռացնում. և երբեմն էլ Պաուլին էր նայում ու կարծես երազում, ժպտում էր։

Քառորդ ժամ անցավ. ապա կանչեցին Էլսբեթին։ Նա մի սիրալիր հայացք ձգեց Պաուլի մոր կողմը, ապա անհայտացավ։ Նրան հարցաքննելը երկար չտևեց։—Պարոն Մայհյոֆեր ավագ,— կանչեց ծառան դահլիճից ու մոտեցավ, որ Պաուլին •գնի հոր պատգարակը տանելիս։ Մերունին թշներն ուռցրեց, ապա նորից հենվեց թեթևակի հառաչելով. նա ներքուստ շատ ուրախ էր, որ մի տպավորիչ դեր է խաղալու։

Երդվյալների ընդարձակ դահլիճը կարմրավուն մշուշի մեջ կորել էր Պաուլի աչքերի առաջ. անորոշ կերպով նա տեսնում էր հետաքրքիր հայացքներ յուր կամ հոր վրա նետված. ապա նա դահլիճը թողեց, դուրս եկավ։

Քույրերը, որոնք մինչև այդ հետաքրքրությամբ չորս կողմերն էին նայում, սկսեցին վախ զգալ։ Երկյուղը մեղմացնելու համար սկսեցին հետները բերած նախաճաշն ուտել։ Պաուլը նրանց քաջալերում էր. նա մերժեց երշիկը վերցնել, որ քույրերը մեծահոգությամբ նրան առաջարկեցին։

Մայրը քաշվել էր մի անկյուն, մեղմությամբ դողդողում էր ու երբեմն, երբեմն մտածում էր. «բայց ինձ ի՞նչ պիտի հարցնեն»։

— Պարոն Մայհյոֆեր կրտսեր,—հնչեց դռնից։

Հաջորդ րոպեին նա արդեն դահլիճումն էր, որ դարձյալ մարդկանցով լցված էր. կանգնած մի բարձրադիր սեղանի առաջ, որի շուրջը մի քանի մարդիկ էին նստած խիստ ու լուրջ դեմքերով. միայն մեկը, որ մի փոքր առանձին էր նստել, միշտ ժպտում էր։ Դա պետության դատախազն էր, որից բոլորը վախենում էին։ Դահլիճի աջ կողմում դարձյալ մի բարձրադիր տեղում մի քանի պատվավոր քաղաքացիներ էին նստել, որոնք շատ ձանձրացած էին երևում և գրչահատների ու թղթի կտորների հետ խաղալով էին ժամանակն անցկացնում։ Դրանք երդվյալներն էին։ Ձախ կողմում կռղպված նստարանի վրա նստել էր դատապարտվածը. աչքը այս ու այն կողմ ձգված, նա այնպես էր ցույց տալիս, որ իբր թե այդ ամբողջ դատավարությունը կարող է ամեն մեկին վերաբերել, միայն

թե ոչ իրեն։ Պաուլն այդ մռայլ մարդուն դեռ երբեք այդքան ուրախ չէր տեսել։

— Դուք կոչվում եք Պաուլ Մայհյոֆեր, ծնվել եք այս ինչ թվին, բողոքական և այլն,— հարցրեց դատավորների միջի մարդը, որ գլուխը բոլորովին կարճ խուզել էր ու սուր քիթ ուներ. նա այդ բոլորը կարդում էր մի տետրակի վրա։ Հանկարծ նրա ձայնը, որ մինչև այդ ժամանակ մեղմ մռմռոցի նման էր, ստոր ու կտրող շեշտ ստացավ ու նրա աչքերից կայծեր թափվեցին Պաուլի վրա։

— Ձեզ լսելուց առաջ, պարոն Պաուլ Մայհյոֆեր, ձեր ուշադրությունն եմ հրավիրում, որ ձեր բոլոր ասածները երդումով հաստատելու եք։

Պաուլը սասանեց. «երդում» խոսքը ծակոցի պես նրա հոգին մտավ։ Նրան թվում էր, թե նա պետք է այժմ երեսի վրա վայր ընկնի ու յուր դեմքը ծածկի այդքան հետաքրքիր աչքերից, որոնք բոլորը նրան էին նայում։

Ապա նա հետզհետե նկատեց, որ յուր մեջ մեծ փոփոխություն է կատարվում։ Պլշած աչքերը անհայտացան, դահլիճը ճշուշի մեջ ընկղմվեց և քանի դատավորի պարզ ստոր ձայնը կպչում էր նրա ականջներին, քանի նա սրան երկրային ու երկնային պատիժներով սպառնում էր, այնքան ավելի Պաուլին թվում էր, թե նա այդ ընդարձակ դահլիճի մեջ այդ մարդու հետ մենակ է և նրա բոլոր մտքերն այն ուղղությամբ էին աշխատում, որ դատավորին այնպես պատասխանի, որ էլսբեթի պատիվը ոչ մի կերպ չվիրավորվի։ «Հիմա է ժամանակը, տղամարդության տեղ է», կանչում էր նրան նրա ներքին ձայնը։ Դա մի նման զգացմունք էր, ինչպես այն ժամանակ, երբ նա կտուրի վրա նստած էր. նրա միտքը բացվեց ու այն անորոշ ճնշումը, որ միշտ ծանրանում էր նրա վրա, այժմ թողեց հեռացավ նրանից ու նա իրեն շղթաներից բոլորովին ազատվածի պես զգաց։

Հանդիստ, պայծառ խոսքերով նա պատմեց այն ամենը, ինչ որ նա դատապարտվածի մասին գիտեր ու նկարագրեց նրա էությունը. այն էլ ասաց, որ ինքը նրան ներքուստ միշտ իրեն հարազատ է զգացել։

Երբ նա այս խոսքերն ասաց, դահլիճի մեջ մի շշուկ բարձ-

բացավ, երդվյալները թողին իրենց թղթի կտորները և երկու թե երեք գրչահատ աղմուկով փակվեցին։

— Ի՞նչ պատահեց, երբ պարոն Դուգլասը ձեր հոր հետ խոսքի բռնվեց,— հարցրեց նախագահը։

— Չեմ կարող ասել,— ասաց Պաուլը հաստատուն ձայնով։

—Ինչո՞ւ համար չեք կարող։

— Իմ հորը հո չեմ վատաբանելու այստեղ,— պատասխանեց նա։

— Ինչպե՞ս թե վատաբանել,— հարցրեց նախագահը.— դրանով ուզում եք երևի ասել, որ երկյուղ եք կրում ձեր հորը պատժական հետապնդման ենթարկել։

— Այո,— պատասխանեց նա մեղմությամբ։

Նորից դահլիճի մեջ շշուկ բարձրացավ. նա իր հետևում լսեց հոր ձայնը.— անպիտան, խայտառակ տղա,— բայց չըփոթվեց։

— Օրենքն այդպիսի դեպքերում ձեզ թույլ է տալիս զլանալ զանազան ցուցմունքներ,— շարունակեց նախագահը։— Բայց ինչպե՞ս պատահեց, որ ձեր հայրը Ռաուդցուսի վրա հարձակվեց հետո։

Առանց կանգ առնելու նա պատմեց ամբողջ միջադեպը. միայն այն տեղում, երբ նա խոստովանելու էր, թե ինչպես հորը գրկած տուն տարավ, ձայնը դողաց ու նա ետ դարձավ, կարծես ներողություն խնդրել էր ուզում։

Ծերունին սեղմել էր բռունցքները ու ատամներն էր կրճըտացնում։ Նա ստիպված էր այդտեղ ականատես լինել, թե ինչպես իր սեփական որդին նրա դյուցազնական փառքը նսեմացնում էր։

— Եվ երբ մշակին արձակեցիք, էլ նրա մասին ոչինչ չլսեցի՞ք, կամ որևէ բան չնկատեցի՞ք,— հարցրեց նախագահը։

— Ո՛չ...

— Երբ հրդեհի գիշերը զարթնեցիք, ի՞նչ տեսաք ամենից առաջ։

Երկար լռություն։ Պաուլը երկու ձեռքերը ճակատին տարավ և երկու քայլ ետ գնաց։

Կարեկցող մի զգացմունք երևաց դահլիճում ներկա եղող-

ների մեջ. կարծում էին, թե այն սոսկալի բոպեի հիշողությունն էր, որ այժմ Պաուլին այդպես ազդել էր։

Լռությունը դեռ շարունակվում էր։

— Դե՞հ, պատասխանեցեք։

— Ես... քնած չէի։

— Ուրեմն դեռ արթուն էիք... Ձեր ննջարանո՞ւմն էիք, երբ առաջին անգամ հրդեհը նկատեցիք։

— Ոչ։

— Հապա ո՞րտեղ էիք։

Երկար լռություն. դահլիճում այնպիսի խաղաղություն էր տիրում, որ մի թղթի կտոր վայր ընկնելիս էլ կլսվեր։

— Ուրեմն ձեր հայրական տան մեջ չէիք, կարելի է։

— Ո՛չ։

— Ուրեմն ո՞րտեղ։

— Հելենինթալի... պարտիզում։

Մի խուլ աղմուկ բարձրացավ, որը հետզհետե սաստկացավ, երբ ծերունի Դուգլասը վեր թռչելով տեղից, դահլիճից ներս գոռաց իր սպառնացող բարկացայտ ձայնով.— ի՞նչ էիք փնտրում դուք այնտեղ։—Ծերունի Մայհյոֆերը ինչ-որ մի անեծք մռթմռթաց, էլսբեթը գունատվեց ու ծանրացած գլխով նստարանի մեջքին հենվեց։

Նախագահը զանգահարեց։

— Վկային հրավիրում եմ հանգստանալ,— ասաց նա.— ես ինքս հարցեր կտամ։ Մեկ էլ որ խանգարեք, դահլիճից հեռացնել կտամ ձեզ։ Ուրեմն պարոն Պաուլ Մայհյոֆեր, ի՞նչ էիք անում Հելենինթալի պարտիզում։

Հենց նույն բոպեին դահլիճի հետևի մասին մի շշուկ բարձրացավ և վկաների սենյակում մարդիկ էլսբեթի շուրջը խմբվեցին։

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց նախագահը։

Պետությանդատախազը, որի աչքից ոչինչ չէր փախչում դահլիճի մեջ, թեքվեց դեպի նա ու խորհրդավոր ժպիտով շշընջաց.

— Վկայուհին ուշաթափվեց։

Այդ իմանալով նախագահն էլ ժպտաց. ժպտաց նաև դատավորների ամբողջ խումբը։

Էլսբեթը հենված հոր թևերին, թողեց դահլիճը...

Այդ ժամանակ տեղից բարձրացավ մաքուր ածիլված երեսով մի փոքրիկ մարդ, որը դատապարտյալի առաջ նստել էր ու ամբողջ ժամանակը բանալիներով խաղում էր և ասաց.— ես առաջարկում եմ պարոն նախագահին քննությունը հինգ րոպեով ընդհատել, որովհետև մասնակից վկայուհու ներկայությունը կարևոր է։

Պաուլը վախկոտ հայացքով նայեց այդ մարդուն։ Հարցաքննությունն ընդհատվեց։

Այդ հինգ րոպեն հավիտենականություն թվաց Պաուլին. Պաուլը վկաների նստարանի վրա նստել էր. հայրը անընդհատ կատաղի աչքերով նրան էր նայում, բայց ոչ մի նշան չէր անում, որով երևար թե նրա հետ խոսել է ուզում։

Էլսբեթին նորից դահլիճ բերին— նա դիակի պես գունատ էր. Պաուլը նորից մոտեցավ դատավորների սեղանին։

— Ես ձեզ նորից եմ հիշեցնում,— սկսեց նախագահը,— ձեր բոլոր խոսքերի մեջ ճշմարտությունից չշեղվել. դուք գիտեք արդեն, որ ձեր յուրաքանչյուր խոսքը երդումով հաստատելու եք։

— Այո, գիտեմ,— ասաց Պաուլը։

— Բայց իհարկե, ինչպես ձեզ հայտնի է, դուք իրավունք ունեք որևէ ցուցմունք պահել, չասել, երբ դուք կարծում եք, որ դրա պատճառով կամ դուք կամ ձերայիններից մեկը պատժի կենթարկվեն։ Ուզո՞ւմ եք այդ իրավունքից օգտվել, ինչպես քիչ առաջ։

— Ո՛չ։

Այդ «ոչը» դուրս եկավ հաստատուն, պարզ ձայնով, որովհետև այժմ բոլորովին համոզված էր, որ եթե նա լռի, Էլսբեթի պատիվն անդառնալի կերպով կորած էր։

«Բայց եթե իմ երդումս սուտ լինի՞», հնչում էր նրա խղճի ձայնը։ Բայց արդեն ուշ էր։

— Ի՞նչ էիք ուզում այգում,— հարցրեց նորից նախագահը։

— Ես ուզում էի նորից շփոթել այն, ինչ որ իմ հայրական տանը Դուգլասի նկատմամբ փոխվել էր։

Հիասթափության ու անհավատության մի շշուկ անցավ դահլիճի միջով։

— Ու դրա՞ համար օտար պարտիզում գաղտագողի մա՞նէիք գալիս։

— Ես ցանկանում էի մեկին պատահել, որին կարողանայի ներողություն խնդրել։

— Եվ դրա համար գիշե՞րն էիք ընտրել ձեզ ժամանակ։

— Ես չէի կարող քնել։

— Ձեր անհանգստությո՞ւնն էր ձեզ այն կողմերը մղել։

— Այո։

— Պարտիզում որևէ մեկին պատահեցի՞ք։

— Ո՛չ։

— Դրանից առաջ էլի նույն ժամին եղե՞լ էիք այնտեղ։

Երկար լռություն. ապա մի երկրորդ «ո՛չ» հետևեց, բայց այս անգամ վարանած ու կամաց, կարծես նրա խղճից պոկվեց...

Դահլիճում տիրող լարվածությունն հետզհետե թուլացավ, նախագահը թերթում էր գործերը, իսկ Էլսբեթը իր մեծ անփայլ աչքերով ապշած նրան էր նայում։

— Ո՞րտեղ էիք, երբ առաջին անգամ հրդեհը նկատեցիք։

— Հելենինթալի բնակարանից մոտ քսան քայլ հեռու։

— Ու ի՞նչ արեցիք իսկույն։

— Շատ վախեցա ու անմիջապես տուն դարձա։

— Ի՞նչ ճանապարհով հեռացաք պարտիզից։

— Պարտիզի վանդակապատի վրայով։

— Ուրեմն դուք բաց չարիք այն դուռը, որ պարտիզից դեպի բակն է տանում։

— Ո՛չ։

— Ու տան ճակատի մոտով չանցաք։

Դահլիճում մի նոր անհանգստություն նկատվեց։ Փոքրիկ մարդը վեր կացավ բանալիների կապոցը ձեռքում ու ասաց.

— Ես խնդրում եմ պարոն նախագահին, նորից հարցաքննել օրիորդ Դուգլասին, թե նա այն գիշեր ինչ է լսել։

— Օրիորդ Դուգլաս, խնդրեմ,— ասաց նախագահը։

Էլսբեթը Պաուլին ձգած երկար հայացքն աչքերին՝ առաջ նկավ. իրար բռլորովին մոտ կանգնել էին նրանք այդ ընդարձակ, մարդաշատ դահլիճում, կարծես իրար պատկանեին։

— Այն քայլերը ո՞ր կողմն ուղղվեցին, որ դուք հրդեհից դարձնելիս լսեցիք։

— Դեպի բակը,— հազիվ լսելի ձայնով պատասխանեց Էլսբեթը։

— Եվ բոլորովին պա՞րզ լսեցիք պարտեզի դռնակի թրխկոցը։

— Այո։

— Լավ մտածեցեք, արդյոք չե՞ք սխալվում։

— Ո՛չ, չեմ սխալվում,— պատասխանեց նա մեղմ, բայց հաստատ։

— Շնորհակալ եմ, կարող եք նստել։

Անհաստատ քայլերով նա իր տեղը դարձավ։ Այն ճակատագրական «ոչ»-ից ի վեր նրա հայացքը շարունակ Պաուլի վրա էր. նա կարծես ամեն բան մոռացել էր, միայն դրա մասին էր մտածում։

— Երբ որ պարտեզի ցանկապատն անցաք, ի՞նչ ճանապարհ բռնեցիք այնուհետև,— հարցրեց նորից Պաուլին նախագահը։

— Դաշտի վրայով։

— Անտառ մտա՞ք։

— Ոչ. մոտ երկու երեք հարյուր քայլ նրանից հեռու էի գնում։

— Որևէ մեկին պատահեցի՞ք ձեր ճանապարհին։

— Մի ասվեր տեսա, որ դեպի անտառն էր շարժվում և ինձ մոտենալիս լսելով, իսկույն անհայտացավ։

Մի երկար անընդհատ շարժում անցավ դահլիճի միջով, դատապարտվածը գույնը ձգեց ու նրա աչքերը ապշած, անթարթ հայացք ընդունեցին։ Պետուիյան դատախազը աչքը բաց չէր թողնում նրանից։

Մի քանի երկրորդական հարցերի պատասխանելուց հետո Պաուլը կարող էր նստել։

Այժմ կանչվեցին մայրն ու քույրերը. բայց նրանց ասածները անարժեք բաներ էին։ Քույրերը հետաքրքիր, նույնիսկ համարձակ հայացքներ էին ձգում շրջանի վրա։ Մայրը լաց եղավ, երբ զարթնելու ոտպեն էր պատմում։

Պաուլն իրեն հպարտ ու բախտավոր էր զգում, որ Էլսբե-

թին չէր մատնել։ Նա ժպտալով առաջ էր նայում և յուր քաջության համար ուրախանում էր։ Բայց երբ վկաները երդվելու կանչվեցին և երբ նա ձեռք պիտի բարձրացներ, այդ րոպեին նրան թվաց, թե ձեռքից մի սոսկալի ծանրություն է կախված, թվաց, թե մի մեղմ, տխուր ձայն կանչում է ականջին. «Չերդվես»։

Բայց նա երդվեց։

Եվ երբ նա եկավ տեղը նստելու, ձայնը նորից նրան ասաց. «Գուցե դու ստ՞ուտ երդվեցիր»։ Ակամայից նա գլուխը բարձրացրեց։ Նրան թվաց, թե մի սպիտակավուն ստվեր անցավ իր մոտով ու մեղմ շնչով դիպավ նրա ճակատին։

Համառ կերպով քաշեց նա իր հոնքերը։ «Եվ եթե նույնիսկ ստուտ եմ երդվել, մի՞թե նրա համար չէր այդ»։ Այդ միտքը մի րոպեով նրա հոգին վայրի ուրախությամբ լցրեց, բայց հաջորդ րոպեին արդեն անորոշ խուլ ճնշումը նստեց նրա կրծքին ու սեղմեց կոկորդը, կապեց կաշկանդեց նրա ձեռքերն ու ոտքերը, այնպես որ նրան թվաց, թե նա այլևս չի կարողանալու շարժվել։

Նա լսում էր խոստոնների միակերպ ճառերը, որոնք սկսել էին դատավճռի շրջան կազմել, բայց նա դրանց վրա ուշք չէր դարձնում։ Մի անգամ միայն նա վեր թռավ, երբ այն փոքրիկ պարոնը բանալիների փունջը ձեռքին դեպի նրան մատնացույց արավ ու իր բարակ, ճղճղան ձայնով կանչեց դահլիճի միջով.

— Պարոններ, մի՞թե հավատալու եք այդ վկայի ցուցմունքներին, որը գիշերները շատ խորհրդավոր կերպով ուրիշների պարտիզներում է թափառում ու հոգեբանորեն ամեն տեսակ արվեստական, բռնազբոսիկ պատրվակներ որոնում իր արկածախնդրության շարժառիթները ծածկելու համար. մի՞թե հավատ եք ընծայելու նրա ասածներին, իբր թե հանկարծ ստվերներ է տեսել, որոնք փակույն անհետացել են— այո, ստվերներ, որոնք արդարությամբ խոսելու որ լինեք, նրա հիվանդոտ երևակայության արդյունքները կարող են լինել։ Պարոն երդվյալներ, ի՞նչ էր որոնում նա պարտիզում. այդ հարցի պատասխանը թողնում եմ ես ձեր փորձառությանն ու սրամտությանը. իսկ ինչ վերաբերում է վկային, դա նրա գործն է, իր երդումն ու խիղճը իրար հետ հաշտեցնելը։

Այդ ժամանակ նա բոլորովին անզորացավ, վայր ընկավ...

Երդվյալներն արտասանեցին իրենց «մեղավորը»— Միխել Ռաուդցոսը հինգ տարով բանտարկության դատապարտվեց։

Այն վայրկյանին, երբ նախագահը դուրս եկավ դահլիճ դատավճիռը կարդալու, դահլիճի միջով մի հեգնական ծիծաղ անցկացավ։ Մայհյոֆերի բերանից էր գալիս դա։ Իր աթոռի վրա շիտակվել էր նա ու իր ծռմռված ձեռքը տարածել դեպի Դուգլասը, կարծես նրա բգից բռնել էր ուզում։

Երբ նրան դուրս տարան, նա շարունակ գոռում էր.

— Փոքրիկ հրդեհաձիգներին կախում են, մեծերին ազատ թողնում։

Ընդարձակ միջանցքներով անտանելիորեն թնդում էր անօգնական մարդու քրքիջը...

16

Ձմեռն եկավ ու անցավ... Դաշտը ձյունով ծածկվեց ու նորից կանաչեց... Ծաղիկները բարձրացրին իրենց ոսկյա գլուխները...Գիհին արձակեց յուր նուրբ բողբոջները և կապույտ երկնքից դեպի ցած հնչում էր դարձյալ արտույտի դայլայլիկները։

Միայն մռայլ ապարակումն էր, որ գարունը չէր ուզում եկած լիներ։ Թեև Պաուլը մի կերպ կարողացել էր սերմնացու գտնել, ավերակների տեղում նույնիսկ փայտածածկ մի շինություն էր բարձրացել, բայց լավագույն ժամանակների հույսը դեռ հեռու էր... Բութ ու անսիրտ կերպով կատարում էր յուր պարտականությունը ու նրա ճակատի կնճիռները ավելի ու ավելի խորն էին ընկնում։ Այժմ ավելի քան երբևիցե փորփրում էր նա յուր ներսը ու ատամ երդում տալու հոգար կապարի ծանրությամբ ընկել էր նրա վրա։

Ամիսներ անցան, մինչև որ նրա համար պարզվեց, որ նրա մտատանջությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ պարապ մտազբաղություն, որ դուրս էր գալիս նրա վախեցած, բառակրկիտ մտքից։ Նորից ու նորից մտածում էր նա այն հարցի մասին, որ նախագահը նրան տվել էր, և գտնում էր, որ ուրիշ կերպ

անկարելի էր պատասխանել։ Չէ՞ որ իրոք առաջին անգամն էր, որ նա օտար պարտեզ էր ներս սահել. ինչ որ երբեմն, մի լուսնկա գիշեր ցանկապատի այս կողմում կատարվել էր, դա հո չէր վերաբերում գործին, չէր կարող նաև այն դատավորներին վերաբերել։

«Ոչ, ես սուտ երդում չեմ արել,— ասում էր ինքն իրեն.— միայն թե ես վախկոտի մեկն եմ, մի պարզամիտ հիմար մարդ, որ որևէ գործի լոկ ստվերից է սարսափում։ Մի՞թե Էլսբեթի համար պատրաստ չէի հպարտ ու ուրախ կերպով նույնիսկ սուտ երդումն տալ։ Այն ժամանակ ես էլի մի բան կլինեի, մի որևէ բան արած կլինեի, մինչդեռ այժմ բութ ու հուսահատ՝ քաշ եմ տալիս կյանքս. մի ճորտ և ուրիշ ոչինչ»։

Ու այս օրինակելի տղայի ուղեղում մի տարօրինակ ցանկություն բարձրացավ— մի մեծ հանցագործ դառնալ, միայն նրա համար, որովհետև նրա «Ես»-ը նրան գործի էր մղում։ Այն երկու ժամերը, երբ նա կտուրի վրա ու դատարանի սեղանի առաջ էր կանգնած, նրան այժմ երկրավոր երանության ամբողջ բովանդակությունն էին երևում և այժմ քանի նա ավելի շատ էր աշխատում ու ստեղծում, այնքան ավելի անօգուտ ու թույլ էր երևում ինքն իրեն։

Հայրը դեռ մեխված էր պատգարակին, որը նա, ինչպես երևում է, այլևս չէր թողնելու, որովհետև կոտրված ոտքը բոլորովին չէր լավացել։ Մոմռան ու պարապ՝ նստում էր նա թոռ անկյունում, բթամիտ կերպով մի հին օրացույցի երեսներն էր թերթում ու հայհոյում ամենքին, ով նրա աչքին էր ընկնում։ Միայն Պաուլից նա քաշվում էր այժմ, թեև հակառակ իր կամքին. հենց որ նրան տեսնում էր, ձայնը ցածրացնում էր ու սիրտ չէր անում նրան հակաճառելու։

Իսկ մա՞յրը։

Նա այժմ ավելի հոգնել էր, ավելի սսկվել. մի ուրիշ, ավելի մեծ փոփոխություն չէր նկատվում նրա վրա արտաքուստ. բայց ով ուշադրությամբ ականջ դներ, նա օդի միջով մի բարակ մրմնջուն կլսեր, կարծես մի անգղ էր ագարակի շուրջը պտույտներ անում ու հետզհետե ավելի ու ավելի նեղացնում էր իր շրջանները, որպեսզի մի օր իր ավարի վրա հարձակվի։

Նա ինքը լավ էր լսում այդ մրմնջոցը, լավ էր հասկանում դրա միտքը, բայց լռում էր, ինչպես ամբողջ կյանքում լռել էր։

Ու բախտը չէր գալիս ու չէր գալիս...

Ապրիլի սկզբներին նա արդեն պառկեց։ «Ընդհանուր թուլություն»— անունն էր տվել բժիշկը ու պատվիրել էր երկաթե վանդա ընդունել։ Մայրը ժպտացել էր ու խնդրել այդ երկաթե վանդայի մասին ոչ ոքի չասել, որովհետև գիտեր, որ Պաուլը ուժասպառ լինելու չափ պիտի աշխատեր, հարկավոր բժշկությունը հնարավոր դարձնելու համար։

Բայց ի՞նչ բժշկություն. նա լավ գիտեր, թե իրեն ինչ էր պակաս— արևի լույսը։ «Հոգսը» չափազանց մոտեցրել էր իր մռայլ քողը ու ոչ մի ճառագայթ այլևս չէր թափանցում նրա հոգու մեջ։

Տնտեսության ամբողջ խնամքը այժմ երկվորյակների վրա էր ընկել. ու նրանք շատ լավ կատարում էին իրենց գործը, նույնիսկ Պաուլը խոստովանում էր այդ։ Երբ մի բան էին կոտրում, ծիծաղում էին ու երբ որևէ զբոսանք արգելվում էր նրանց, լաց էին լինում. բայց այդ լացը շուտով ծիծաղի էր փոխվում։ Սեղանը դեռ երբեք այնպես մաքուր ու պատրաստ չէր եղել, կաթի ամանները երբեք այնպես չէին փայլել...

Մայրն իհարկե տեսնում էր այս ամենը իր պատուհանից ու ասում.— Լավ է, որ ես գնում եմ... աշխարհիս վրա ես էլ պետք չէի գալու ոչ մի բանի։

Հոգեգալստի ժամանակները նրա քունն էլ փախավ, երևաց նաև ջերմը...

— Ա՜խ, քինինը ինչքան թո՜ւնդ է,— հառաչում էր Պաուլը, երբ մշակը դեղատուն էր քշում իր ձին, ու օգնություն հայցողի աչքերով «սև Զուզեին» էր նայում, բայց սա անշարժ կեցած էր։ Հաճախ ստիպված էր ընդհատել դաշտային աշխատանքները, որպեսզի տորֆ կտրել տալով մի փոքր առձեռն դրամ բերեր տնտեսության մեջ։

Մայրն սկսել էր գիշերները վախենալ ու ցանկանում էր, որ իր մոտ մեկը մնա։ Բայց երկվորյակները, որոնք ցերեկները շատ էին աշխատում, երեկոները հիվանդի անկողնի կողքին քնում էին, այնպես որ թույլ պառավ կինն ստիպված

էր երիտասարդ մարմինների ծաղկափթիթ ծանրությունն էլ իր հիվանդ տեղովը տանել։

Պաուլը իր քույրերին քնելու էր ուղարկում և ինքն էր ստանձնում պահպանությունը։

— Գնա՛ քնիր, որդիս,— ասում էր մայրը,— բոլորիցս ավելի շատ դու պիտի հանգստանաս։

Բայց սա մնում էր. ու մայիսյան գիշերները, երբ դրսում պարտեզի մեջ ծաղիկներ էին փափսում ու թանթրվենու բուրմունքը արանքների միջով ներս հոսում, երկուսով նստած էին նրանք հաճախ ժամերով անխոս ու ձեռքերն իրար մեջ, կարծես հրաշալի մի բան ունենային պատմելու։ Մոր ու որդու մեջ արդեն միշտ այդպես էր եղել։ Նրանց զեղուն սերը միշտ խոսքեր էր որոնում, բայց հոգսը հափշտակել էր նրանցից լեզուն։

Առավոտները, երբ արևը ծագում էր, նա գլուխը կոխում էր սառցի նման պաղ ջրի մեջ ու գործի գնում։

Նրա ներկայությունը մորն այն աստիճան խաղաղություն էր բերում, որ սա երբեմն կարողանում էր քնել։ Անմիջապես ոտքի մատների վրա նա կամացուկ անցնում էր յուր սենյակը, բերում էր բնագիտական գրքերը, որոնց մեջ այդքան ուսումնականորեն ու անհասկանալի կերպով նկարագրված էր շոգեշարժ մեքենաների կազմը։ Նրա գլուխը, որ անընդհատ պահպանությունից հոգնել էր ու անսովոր էր որևէ մտավոր աշխատանքի, դժվարությամբ էր ըմբռնում այդ մութը խոսքերի իմաստը... Բայց նա հո ժամանակ շատ ուներ ու անընդհատ շարունակում էր աշխատել, թերթ թերթի հետևից, ինչպես որ երկրագործը մի ապառաժոտ դաշտ հերկելիս։

Երբ մայրն աչքերը բաց աներ, հարցնում էր.

— Ինչքա՞ն կարդացիր, որդիս։

Ապա Պաուլն ստիպված էր նրան պատմել ու մայրն այնպես էր ցույց տալիս, կարծես այդ ամենն հասկանում էր։

Իսկ եթե հարցներ.

— Ինչո՞ւ համար ես սովորում դա,— Պաուլը խորամանկ երես էր շինում ու ասում.

— Ոսկի շինել եմ սովորում։

— Խե՛ղճ տղաս,— ասում էր մայրն ու շոյում նրա մազերը։

Մի գիշեր, Հոգեգալստյան տոներից անմիջապես հետո, նա էլի չէր կարողանում քնել։

— Այդ ռատմնական գրքերից ինձ մի բան կարդա,— ասաց նա,— դրանք լավ ձանձրալի են երևում. թերևս կարողանամ քնել։

Ու նա սկսեց կարդալ. երբ մոտ մի ժամ կարդացել էր, նկատեց որ մայրն իրեն է նայում մեծ, ջերմագին աչքերով ու քնելուց շատ հեռու էր։

— Դրանից ուզում ես ուրեմն ոսկի՞ շինել,— հարցրեց նա։

— Այո, մայրիկ,— ասաց սա ճնշված, որովհետև վախենում էր տենդի կրկնվելուց։

— Ինչպե՞ս պիտի սկսես։

— Կտեսնես,— ասաց նա իր սովորության համաձայն։

Բայց այս անգամ մայրը չէր մխիթարվում։— Զավակս, լավ կանես իսկույն ասես,— խնդրում էր նա.— ասա, իսկույն ասա... Ով գիտե ինչ կարող է պատահել... Ես էլ ինձ մխիթարելու համար գոնե մի չնչին բան եմ ուզում ունենալ— նախքան ննջելս...

— Մայրի՛կ,— գոռաց Պաուլը սարսափած։

— Հանգիստ կաց, զավակս,— ասաց նա.— ի՞նչ կա որ։ Բայց պատմիր, միայն թե պատմիր։— Նա աղերսում էր աճող երկյուղով, կարծես մի փոքր հետո էլ ուշ կլիներ պատմելը։

Հևիհև շնչով ու խառնիխուռն խոսքերով պատմեց Պաուլը իր ծրագրերի մասին, թե ինչպես նա «սև Զուզեին» կյանքի կոչել է ուզում, որպեսզի ճահիճը կարողանա շահագործել մինչև ամենախորքերը... բայց հենց իր խոսքերի կիսում երկյուղը պատեց նրան ու հեծկլտալով վայր ընկավ անկողնի առաջ ծնկների վրա ու երեսը նրա կրծքին ձգեց։

Մայրը պատվիրեց որդուն բարձրանալ ու ասաց.

— Լավ չէր իմ կողմից, որ ես քեզ վախեցրի։ Եթե Աստված կամենա, դեռ կարելի է այլ կերպ լինի։ Ինչ որ ինձ ասացիր, ինձ շատ ուրախացրեց։ Ես գիտեմ, որ եթե դու որևէ

բան ձեռնարկես, չես դադարի, մինչև նպատակիդ չհասնես։ Կցանկանայի, որ ես էլ տեսնեի...

Մեղմ ու անանկատելի կերպով նա որդուն նորից քաջալերեց, որովհետև իր համար արդեն ոչինչ չուներ այլևս։

Մի ուրիշ գիշեր, երբ Պաուլը, սարսափելի հոգնած, աթոռի վրա քնել էր, լսեց իր անունը։

— Մայրիկ, ի՞նչ ես ուզում,— հարցրեց նա վեր թռչելով։

— Ոչինչ,— ասաց նա.— ներիր ես քեզ իսկապես հանգիստ պիտի թողած լինեի... բայց ով է իմանում... ինչքան է մնում, որ մենք իրար հետ խոսել կարողանանք... շատ կուզեի ես այդ ժամանակը շահագործել։

Պաուլն այդ անգամին շատ քնաթաթախ էր, ուստի և նրա խոսքերի իմաստը չհասկացավ։ Նստեց մորը բոլորովին մոտ ու վերցրեց նրա ձեռքը, բայց աչքերը իսկույն նորից փակվեցին։

Մայրը կարծեց թե որդին արթուն է և սկսեց խոսել.— երբեմն ես էլ մի ուրախ երիտասարդ կին էի, համարյա քո քույրերի պես... Զվարթությունից սիրտս դուրս էր թռչում կարծես ու աչքերս շարունակ հեռուն էին նայում, կարծես այնտեղից մի ինչ-որ չափազանց գեղեցիկ բան պիտի գար—մի իշխան կամ դրա նման մի բան։ Մի անգամ նույնիսկ սկսեցի սիրել— ուրիշ, մեծ ու երկնային սիրով, որը ճակատագրի նման մարդու վրա գալիս է։ Բայց իմ սիրածը ինձ չէր ուզում ունենալ. նա բարակ ու խարտյաշ էր ու կզակի վրա մի խալ ուներ։ Ես միշտ ուզում էի այդ խալն համբուրել, բայց երբեք չհաջողվեց դա ինձ... նա տեսնում էր իմ աչերը. նույնիսկ մի օր, երբ նա շատ հպարտ էր, ինձ իր գիրկն առավ, շոյեց ու փայփայեց, բայց էլի բաց թողեց։ Բայց ես ուրախ էի և ուրախանում էի, որ նա ինձ գոնե մի անգամ իր գիրկն է առել։

Նա կանգ առավ. նրա աչքը փայլում էր, նրա թուշը լցվել էր մի վարդագույն, համարյա առասպելական շողքով— զարմանալի կերպով երիտասարդացել էր նա։ Նա տեսավ, որ որդին նիրհել է ու տխրությամբ լռեց։

Երբ նա զարթնեց, ասաց.

— Մայրիկ, ինձ թվում էր, որ դու ինձ մի բան էիր պատմում։

— Երազած կլինես, որդիս,— ասաց մայրն ու ժպտաց. բայց նրա մտքերն այդ միջոցին հեռու և հեռու էին թռել և յուր ամբողջ կյանքի ընթացքը առել էին իրենց մեջ ու բոլոր անկյուններից ուրախության փոքրիկ փշրանքներ էին հավաքել, որոնք այստեղ այնտեղ ծածկված էին։

— Իսկապես ես լավ չեմ հասկանում,— ասաց նա,— ինչու ամբողջ կյանքում տխուր եմ եղել։ Երբ մտածում եմ, տեսնում եմ, որ իրոք ոչ մի մեծ դժբախտություն չէ եկել մեզ։ Իհարկե մեր կյանքը այնքան լավ չէր, երբ մենք Հելենինթալից ստիպված էինք դուրս գալ կամ երբ շտեմարանը արյունաներկ կըրակով լուսավորվեց, բայց ընդհանուր առմամբ իմ կյանքը, կարելի է ասել, միշտ լավ է եղել։ Բոլոր որդիներիս մեծացրի և ոչ մեկին չկորցրի... ուտելն ու խմելն էլ միշտ ունեցել ենք։ Հայրիկդ թեև շատ անգամ տրտնջացել, որոտացել է, բայց ուրիշ կերպ չի կարելի ամուսնության մեջ— այդ կյանքը դու էլ կճաշակես մի անգամ։ Զավակներս բոլորն ինձ սիրել են։ Տղերքս բոլորը շնորհալի մարդիկ եք դառել ու աղջիկներս շնորհալի կանայք կլինեն— եթե աստված ցանկանա և եթե դու նրանց աչքից չթողնես։ Դրանից էլ ավելի ի՞նչ եմ ուզում իսկապես։

Եվ այդպես տանջվում էր այդ խեղճ, մահվան դատապարտված կինը իմանալու համար, թե ինչու է մահվան դուռը ընկել։ Դանդաղ կերպով վեր էր բարձրացնում «Հոգսը» նրա գլխից քողը, որպեսզի մահը կարողանար նրա երեսին շնչել...

Ու մի երեկո մեռավ... Աչքերը փակվեցին, ինքն էլ չհասկացավ ինչպես։ Կանչված բժիշկը խոսեց ինչ-որ ուժասպառության, անեմիայի մասին. միայն զգացմունք ունեցողները այդպիսի դեպքերում ասում են՝ նրա խորտակված սիրտն էր, որ նրան սպանեց։

Դառնագին արտասվելով ծունկ էին չոքել երկվսրյակները նրա անկողնի առաջ. հայրը, որ իր աթոռով մոտ էր բերվել, բարձր հեծկլտում էր ու զորով կամենում էր նրան կյանք տալ... Պատկը գլխավերևում կանգնել էր ու շրթունքներն էր կծում։

«Չէ, ես ճիշտ էի գուշակում,— մտածում էր նա.— նա մեռավ նախքան բախտի գալը։ Նա ստիպված էր կյանքի ճոխ

խնջույքից քաղցած վեր կենալ, իմ ասածին բոլորովին նման»։

Նա զարմանում էր, որ ինքն այնքան մեծ ցավ չէր զգում, ինչպես նրան թվացել էր։ Միայն զանազան հիմար՝ խառնիխուռն բաները, որ նրա միտքն էին գալիս, ինչպես օրինակ կիսախավարի մեջ չղջիկի երազը... ցույց էին տալիս, որ նրա գլուխը շատ խառն էր։

Կեսգիշեր եղավ. այդ ժամանակ հայրն ասաց.—այժմ հարկավոր է հանգստանալու գնալ, երեխեք. ով կարող է քընել, թող քնի... ծանր օրեր կան դեռ մեր առաջ։

Նա գրկեց ապա երկվորյակներին, թոթվեց Պաուլի ձեռքը ու պատվիրեց իրեն տանել յուր սենյակը։

— Ինչքան բարի է այսօր հայրս,— մտածեց Պաուլը.— մայրիկիս ամբողջ կյանքի ընթացքում նա երբեք այդպես բարի չեղավ։—Քույրերը նրա վզով ընկան ու հեծկլտալով խընդրեցին, որ իրենց մոտ մնա։ Շատ էին վախենում իբրև թե։

Պաուլը նրանց միխիթարեց, տարավ նրանց ննջարան ու խոստացավ մի ժամից հետո դարձյալ վերադառնալ։

Ու երբ նա մի փոքր հետո կամացուկ մոտեցավ նրանց մահճակալին, տեսավ, նրանք արդեն քնել էին, պինդ փաթաթվել էին իրար ու քնել, ու նրանց կարմիր թշերի վրա արտասուքները դեռ չէին չորացել։

Ապա ճրագը ձեռքին անցավ հոր սենյակի առաջ ականջ դնելու և երբ այստեղից էլ ոչ մի ծպտուն չլսեց, մատների ծայրերին կամացուկ մտավ ննջեցյալի սենյակը։ Նա ցանկանում էր վերջին անգամ նրա կողքին պահպանություն անել։

Քույրերը քնելուց առաջ մի ապիտակ կտոր էին գցել նրա երեսին. Պաուլը վերցրեց դա, ձեռքերը ծալեց ու նայում էր, թե ինչպես ճրագի ճարճատուն լույսը նրա մոմեղեն դիմագծերի հետ խաղում էր։ Նա շատ էր փոխվել, միայն քունքերի կապույտ երակներն ավելի էին դուրս ընկել և կոպերը խոր ստվերներ էին ձգում մաշված այտերի վրա։

Պաուլը վառեց գիշերվա փոքրիկ լամպը, որ մոր հիվանդության ժամանակ ամեն գիշեր նրա տեղում վառվում էր, նստեց այն աթոռի վրա, որի վրա նա շարունակ նստում էր ու ցանկացավ այդ եղանակով մի քանի աղոթք մրմնջալ։

Բայց հանկարծ մտաբերեց, որ մոռացել է խառատի հետե-

վից ուղարկելու, որ նա ժամանակին գա չափը առնի։ Եղևնյա մի պարզ դագաղ էր շինելու, սև ներկած ու շուրջը հավամբրգի ծաղիկներից մի պսակ. որովհետև մայրը շատ էր սիրում այդ խաղաղ նուրբ բույսը։

— Արդյոք ի՞նչ կարժենա դագաղը,— մտածեց նա և հանկարծ իր հոգու խորքում սարսափեց, որովհետև ոչինչ չուներ, որով կարողանար ննջեցյալին թաղել։ Նա սկսեց հաշվել ու համարել, բայց ոչ մի եզրակացության չէր կարողանում գալ։

«Առաջին անգամն է, որ նա յուր անձի համար մի բանի պետք է զգում», ասաց նա ինքն իրեն ու հիշեց այն մաշված շորերը, որ մայրը միշտ հագնում էր։

Նա հաշվեց նաև այն բոլոր ապառիկները, որ նա կարող էր ստանալ, բայց ստացվելիք գումարը փոքր էր և բոլորովին անբավարար հուղարկավորության ծախքը ծածկելու։ Նույնիսկ երեք սայլ տորֆը, որ նա վաղն ու մյուս օրը քաղաք ուղարկել կարող էր, շատ բան չէին ավելացնելու։

Ապա նա մի թղթի կտոր վերցրեց ու սկսեց ծախքերը հաշվել։

Դագաղ— 15 թալեր։

Գերեզմանատանը մի տեղ— 10 թալեր

Եկեղեցական ծառայողներին— 5 թալեր

Կտավը— 2 թալեր

Ապա թաղման ծախքերը, որ նրա կարծիքով հայրը ըստ կարելվույն շքեղ կուզենար տեսնել.

10 շիշ գինի— 10 թալեր

1 արկղ սիգար— 2 թալեր

2 ութերորդ գարեջուր— 2 թալեր

Ապա զանազան մանր մունր բաներ խոհանոցի համար, ցորենի ալյուր ունեին տանը. բայց հարկավոր էր առնել շաքար, չամիչ, նուշ, վարդաջուր և այլն։ Ի՞նչ կարժեր արդյոք այդ բոլորը... Հանդով հաշվում էր նա, բայց գները իրար չէին բռնում։ «Մայրիկս վիմանա անշուշտ», մտածեց նա ու ուզում էր իսկույն խորհուրդ հարցնել, ու հանկարծ տեսավ, որ նա մեռած էր...

Ուժգին կերպով սարսափեց. միայն այժմ, երբ նրա երևակայության մեջ մայրը դարձյալ կենդանացել էր, նա հասկա-

ցավ, որ անդարձ կորցրել էր նրան։ Նա ուզում էր բարձր բղավել, բայց իրեն զսպեց ու պահեց, որովհետև դեռ հաշվելու բան ուներ։

— Ներիր ինձ, սիրելի մայրիկս,— ասաց նա աջ ձեռքով շոյելով նրա սառն այտերը.— քեզ համար ես դեռ չեմ կարող սուգ անել. նախ պետք է ես քեզ թաղեմ...

Թաղումը տեղի պիտի ունենար երեք օրից հետո։

Ինչպես Պաուլն արդեն նախատեսել էր, նրա հայրը ցան կանում էր մեծ հրավեր սարքել։ Քաղաքում ունեցած յուր բոլոր բարեկամներին հրավիրագրեր էր ուղարկել գրված փայլուն թղթի վրա, չորս կողմը մատի լայնությամբ սևով։ Իր վիշտն արտահայտել էր այդտեղ գեղեցիկ ընտիր բառերով և երբեք չէր մոռացել իր ստորագրությունը դնելիս մի ահագին պոչ էլ տակը քաշել։

Այն երեկոն, երբ դիակը դագաղի մեջ դրին, երկու եղբայրները ագարակ ժամանեցին։ Տարիներից ի վեր նրանք տանը չէին եղել, և Պաուլը քիչ էր մնացել, որ նրանց չճանաչեր։ Գոտֆրիդը, գիմնազիայի ուսուցիչ՝ մի պատկառելի մարդ, խիստ դիմագծերով ու մի փոքր դուրս ընկած փորով առաջնորդում էր մի մանկամարդ սևազգեստ կնոջ. դա նրա նշանածն էր, որը զարմացած հայացքով չափում էր այդ ցածլիկ ողորմելի շինությունները ու աշխատում էր միաժամանակ սիրալիր ու տխրահույզ դեմք ցույց տալ, որովհետև իր վիճակը երկուսն էլ ցանկալի էր դարձնում... Մաքսը, մի վաճառական, հետևում էր եղբորը։ Մա մի փոքր թույլ էր երևում։ Նրա համարձակ սուր բեղերը կարծես երբեք չէին հնազանդվում հենց նոր որբացած տղու հոգեկան համապատասխան դրությունն առաջ բերելու ու նրա տխրությունն ավելի շատ շրջապատի անհարմարության մեջ էր արտահայտվում, քան ցավերի մեջ։

Երկու եղբայրները հանդիսավորապես գրկախառնվեցին հոր հետ, ու օտարական կինը խոնարհվեց ու համբուրեց նրա ձախ ձեռքը, ապա և ճակատը։ Ապա բարևեցին երկվորյակներին, որոնք սգազգեստներով ավելի թարմ ու սիրելի էին երևում։ Նրանք չտեսան Պաուլին, որը դռան առաջ կանգնել էր ու շփոթված գլխարկն էր շուռ ու մուռ տալիս...

Վերջապես Գոտֆրիդը հարցրեց.

— Ո՞ւր է ապա մեր եղբայրը։—Այն ժամանակ առաջ եկավ նա վախկոտ կերպով ու ձեռքը մեկնեց...

Երեք զույգ աչքեր չափում էին նրան քննելով...

«Ինչքան լավ կլիներ, որ դրսումը լիներ», մտածում էր նա ու հենց որ հարմար բոպե գտավ, դուրս եկավ ու ախոռ մտավ։

Գոտֆրիդը հետևեց նրան։ Պաուլը սարսափեց, երբ նրան մոտենալիս տեսավ. որովհետև նա չէր իմանում, թե ինչ է խոսելու այդ պատվավոր մարդու հետ։

— Սիրելի եղբայր,— ասաց սա,— ես մի խնդիր ունեմ քեզ։ Չե՞ս կարող արդյոք իմ նշանածի համար մի ավելի հարմար գիշերանոց գտնել։ Նա իրեն մի փոքր նեղված է զգում աղջիկների սենյակում։

— Իմ վերնատենյակը կպատրաստեմ նրա համար,— ասաց Պաուլը։

— Ինձ շատ կպարտավորեցնես, եթե այդ անես։

Ապա մի քանի հարցեր էլ տվեց մոր տանջանքների, ցավերի մասին, անասունների մասին ու իրենց կալվածքի վրա եղած պարտքի չափի մասին։

— Խեղճեր,— ասաց նա,— շատ հոգսեր եք ունեցել, բայց իհարկե դու աշխատած կլինես, որ մեր ողորմած հոգի մոր վերջին օրերը որքան կարելի է թեթև անցնեին։

Պաուլը ապահովեցրեց նրան, որ յուր ձեռքից եկածը արել է։

— Շատ ուրախ եմ,— ասաց եղբայրը խիստ եղանակով։ —Ծանր պարտազանցություն կլիներ քո կողմից, եթե արած չլիներիր։ Այժմ արի բոլորովին միասին գնանք ննջեցյալի դիակի մոտ, որպեսզի նա երկնքից յուրայիններին միասին տեսնի։

Ձեռքը մեկնեց Պաուլին ու քաշեց տարավ այն սենյակը, որտեղ մայրը ծաղիկների ու մոմերի մեջ խաղաղ կերպով հանգստանում էր։ Բոլորն արդեն այնտեղ էին։

Պաուլը ճնշված սրտով դռան մոտ կանգ առավ։ Նա շատ բան կտար, եթե կարելի լիներ մի վայրկյան ննջեցյալի հետ մենակ մնալ. բայց որովհետև դա անկարելի էր, մեղմորեն դուրս գնաց ու դրսից ներս էր նայում պատուհանի միջով, որի առաջ գյուղից ահագին մարդիկ էին հավաքվել,— հե-

տաքրքիր օտարականներ, կարծես թե նրանցից մեկը լիներ նա...

Մի փոքր հետո Մաքսը մոտեցավ նրան ու մտերմորեն մի կողմ քաշեց։

— Միրելիս, մի խնդիր ունեմ ես քեզ,— ասաց նա,— կոկորդս բոլորովին չորացել է ճանապարհի փոշուց ու լաց լինելուց. չե՞ս կարող ինձ համար մի կում գարեջուր գտնել։

Պաուլը պատասխանեց, թե թեև երկու ամբողջ ուռնյակներ պատրաստ կան, բայց դրանք վաղը պիտի բացվեն, թաղման ճաշկերույթի ժամանակ։

— Մորակը դու ինձ տուր, ես գիտեմ ինչպես պետք է անել,— ասաց Մաքսը.— գարեջուրը վաղն էլ նույնքան թարմ կլինի ամանի մեջ, ինչպես այսօր։

Ու երբ Պաուլը կատարեց նրա կամքը նա շուռ եկավ ու հեռացավ։

Ժամը տասնմեկին դագաղի մոմերը հանգցրին ու հանգստանալու գնացին։

Պաուլը տեսավ, որ իր համար այլևս ոչ մի անկողին չէր մնացել ու մագլցելով բարձրացավ մարագը, խոտերի վրա, որտեղ նա ամբողջ գիշերը նստած խորհում ու խորհում էր։

Առավոտյան ժամը տասին երևացին առաջին հյուրերը, այն էլ այնպիսի հյուրեր, որոնք ոչ համաձայնություն էին տալիս, ոչ էլ ընդհանրապես սպասվում էին։ Երբ Պաուլը նրանց գալիս տեսավ, նրա առաջին միտքը հետևյալն էր. «կերակուրն ու խմիչքը բավական կլինի՞ արդյոք». ու քանի շատ կառքեր էին բակը մտնում, քանի շատ սև ձեռնոցապատ ձեռքեր էին մեկնվում յուրայիններին, այնքան ավելի մեծանում էր նրա երկյուղը, այնքան ավելի լսելի կերպով հնչում էին նրա ավանջներում՝ «բավական չի լինելու»։

Հոր համար դարձյալ մի մեծ օր էր դա։ Յուր պատգարակի վրա բազմել էր, կարծես գահի վրա լիներ. նրա երկու մեծ որդիքը ավատական իշխանների պես երկու կողմը։

Երբ մի հյուր էր մոտենում նրան ու յուր աջը մեկնում, նա վերցնում էր երկու ձեռքով պինդ սեղմում էր, կարծես նա ցավակցություն հայտնողը լիներ, վշտահար կերպով գլուխը խոնարհում էր ու ցավատանջ ձայնով հետևյալ կցկտուր խոս-

քերն էր ասում. «Այո, նա էլ չկա... չկա... էլ չկա... Սրտի վերքերի համար ոչ մի ապեղանի չկա. երանի երկինքը տա նրան այն, ինչ որ նա երկրի վրա չտեսավ»... ու դրանց նման շատ ուրիշ բաներ։

Ժամանակ առ ժամանակ էլ կանչում էր Պաուլին.

— Որդիս, գինու համար հոգ տար։ Որդիս, պարոն Վեգմանը մի սիգար է ցանկանում։ Որդիս, ուշք դարձրու, որ մեր հյուրերը լավ պատիվ ստանան։

Պաուլը ծառայի նման մեկից մյուսին էր անցնում, երկյուղով լի՝ հաշվում էր շշերը, որոնք սաստիկ արագությամբ դատարկվում էին ու նախանձում էր քույրերին, որոնք իրենց սև ու գեղեցիկ շորերով հանգիստ վերպով մի անկյունում նստել էին ու ամբողջ սրտով կարող էին լաց լինել, մինչդեռ օտարական կինը նրանց միխիթարում էր։ Սգազգեստների մասին նա իր հաշիվն անելիս, երբեք չէր մտածել, և նրա բախտին էր, որ վաճառականը ապառիկ տվել էր, եթե ոչ քույրերը չէին կարող ամենևին առաջ գալ։

Նա ինքը երբեք չէր երևում թե սգավոր է. ու հյուրերից շատերը, որոնք նրան չէին ճանաչում, բոլորովին հանգիստ կողքից անցնում էին ու նրա գոյության մասին այն ժամանակ էին հետաքրքրվում, երբ նա նրանց գինի կամ սիգար էր առաջարկում։

Բակում հավաքվել էին մի խումբ օտար կանայք, որոնք Պաուլի մայրիկին սիրում էին նրա պարզ ու խաղաղ բնավորության համար և այժմ ցանկանում էին հուղարկավորությանը մասնակցել առանց ճաշկերույթին ներկա լինել ցանկանալու։

Հոր զորավարի հայացքը իսկույն նկատեց նրանց։

— Պաուլ, որդիս,—կանչեց նա.—դուրս գնա ու այդ կանանց ստիպիր ներս գան։

Վարանելով ու հապաղելով հետևեց Պաուլը հրամանին, որովհետև նա չէր իմանում ինչ խոսքերով նրանց հրավիրի։ Երբ նա շեմքը դուրս եկավ, առաջին հայացքն ընկավ էլաբեթի վրա, որը պարզ ագազգեստով գյուղի կանանց մեջ կանգնել էր, ձեռքին ճերմակ վարդերի մի պսակ բռնած։ Ու երբ էլաբեթը Պաուլին տեսավ, աչքերը արտասուքով լցվեցին։

Մի րոպե նրան թվաց, թե նա գլուխը իր հագուստի ծալքերի մեջ պիտի սեղմի, որ մի լավ լաց լինի, բայց նրա կողքին կանգնել էին մյուսներն ու ապշած նայում էին։ Նա մի անձև շարժում արեց ու ասաց.— Հայրս խնդրում է՝ արդյոք չէիք ցանկանա ներս գալ ննջեցյալին տեսնելու։

Կանայք դանդաղ կերպով ներս գնացին, միայն Էլսբեթն էր դեռ վարանում։

— Դու էլ չե՞ս գա ներս,— հարցրեց նա։

— Իմ սիրելի խեղճ Պաուլս,— ասաց նա ու բռնեց նրա ձեռքը։

Պաուլը փակեց աչքերը ու երկու քայլ ետ ետ գնաց։

— Դե՞հ, արի,— ասաց Պաուլը դարձյալ ուշքի գալով.— արի մի նրան տես. նա քեզ միշտ սիրում էր։

— Պաուլ, որդիս, ո՞րտեղ ես,— հնչեց ներսից հոր ձայնը։

— Պաուլ,— ասաց Էլսբեթը աղբյուրի պես հոսող արտասուքների միջով.— մի հուսահատվիր, էլի մարդիկ կան, որոնք քեզ սիրում են։

— Օ՜, այո, ես լավ գիտեմ— բայց արի. ես պիտի գինի բաժանեմ։

Էլսբեթը ծանր ու խոր հառաչեց, ապա երկյուղած կերպով հետևեց նրան ու ներսում նորից օտար կանանց մեջ խառնվեց։

— Պաուլ, որդիս, այստեղ արի,— կանչեց հայրը, որ այսօր կարծես իր հին իշխանությունը վերադարձած էր զգում. ու երբ Պաուլը մոտեցավ, նրա ականջին շշնջաց.

— Լսում եմ, թե գինին ապառվելու վրա է. ի՞նչ է նշանակում այս, խայտառակելո՞ւ ես մեզ այստեղ։

— Կարծեմ դեռ մի քանի շիշ էլ պետք է լինի,— պատասխանեց Պաուլը։

— Հոգ տար, որ բավականանա մինչև քահանայի գալը. բայց կանանց էլ հարկավոր է մի-մի բաժակ տալ. լսո՞ւմ ես։

— Ա՜խ, երանի՜ քահանան շուտով գար,— հառաչեց Պաուլը ու աշխատեց բաժակները կես կես լցնել։

Վերջապես եկավ և քահանան։ Հասարակությունը նրա հետևից մտավ այն սենյակը, որտեղ դրված էր ննջեցյալը։ Ամբողջ սենյակը արևի ճառագայթների տակ շողշողում էր,

որոնք մոմերի փայլերի հետ միասին ուրախ ու պայծառ խաղ էին բռնել գունատ, մարմարիոնյա դեմքի վրա։

Պաուլն օգնեց հոր աթոռը դագաղի գլխավերևը բերելու, ապա քաշվեց մի հանգիստ անկյուն, որտեղից հասարակության մեջքն էր տեսնում միայն և որտեղ մի փոքր կարող էր հանգստանալ, որովհետև սարսափելի հոգնած էր...

Բայց նրան բաց չէին թողնում.

— Ո՞ւր է կրտսեր որդին,— հարցրեց քահանան, որը ցանկանում էր ամբողջ ընտանիքը իր շուրջը հավաքել։

— Պաուլ, որդիս, տ՞րտեղ ես,— կանչեց հայրը։

Նա ստիպված էր դուրս գալ դեպի առաջ։ Դագաղի ծայրում տեղ տվին նրան— հոր աթոռի կողքին։

Սգավոր հասարակության միջով մի շշուկ անցավ և մի քանիսները խորհրդավոր կերպով իրար նայեցին, կարծես թե ուզում էին ասել. «Սա է՞լ ուրեմն որդիներից մեկն է. ուրեմն սխալվել ենք մենք»...

Արևի շողքերի խաղը քահանայի աչքերն էլ էր ընկել. ուստի և նա բնաբան վերցրեց իր քարոզին։ Երկրային արևը այդպես լուսավոր ու սիրալիր փայլում է, բայց դա ոչինչ դեռ չի նշանակում. դա կատարյալ խավար է, համեմատած երկնային արևի հետ։ Ապա գովեց նա ննջեցյալին ու նրա մերձավորներին, հատկապես հավատարիմ ամուսնուն ու երկու ավագ որդիներին, որպես տան հպարտ սյուներին. Պաուլին էլ մի փշրանք բաժին ընկավ։

Ապա մի խմբերգ ասացին ու դագաղի կափարիչը վերցրին։ Այդ վայրկյանին հետին շարքերից սասանեցնող մի աղաղակ լսվեց. «մայրի՛կ, մայրի՛կ»։

Սարսափած ու զարմացած նայեցին բոլորը։ Էլսբեթ Դուգլասն էր աղաղակողը։ Հարևանուհու ձեռքերի մեջ ուշաթափ վայր էր ընկել նա։

Պաուլը շատ լավ էր հասկանում նրան։ Էլսբեթն իրեն պատկերացրել է այն վայրկյանը, երբ յուր հարազատ մայրիկի դագաղի վրա կափարիչ կդնեն... Ու Պաուլը երդվեց ինքն իրեն այն վայրկյանին հավատարիմ ու մխիթարող կերպով նրան օգնել։ Հայրն էլ այն կողմը նայեց ու նրա դիմագծերի մեջ կարդալ կարելի էր. «Դա է՞լ այստեղ է»։

Էլսբեթին տարան կողքի սենյակներից մեկը ու կանանցից երկուսը մնացին նրա մոտ. մինչև որ նա դարձյալ ուշքի եկավ, բայց դագաղը օրորվելով, տատանվելով բարձր բռնած դուրս բերվեց դռնից ու դիակառքի վրա դրվեց։

Պաուլը գլխարկը վերցրեց։ Գոտֆրիդը մոտեցավ նրան մի ինչ-որ սև, փափուկ բան կոխեց նրա ձեռքը։

— Գոնե այս կտորը թևիդ կապիր,— շշնջաց նա։

— Ինչո՞ւ համար։

— Կարող են կարծել, թե չես ուզում ստուգ կրել։

Պաուլը սարսափեց այդ մտքից ու կտորը կապեց թևին։ Դրանից հետո էլ շարունակ այն մասին էր մտածում, թե ինչու այնպես վարվեց, որ եղբայրների մոտ ստիպված էր ամաչելու. ու միայն շատ հետո նրա համար պարզվեց, թե այդ երեք եղբայրներից ով ամենից սաստիկ էր ղգում ստուգը։

Գերեզմանատունը մենակ ու առանձին փռվել էր դաշտի մեջտեղում։ Ջոկ կանգնած երեք եղևնիներ հեռվից արդեն իմաց էին տալիս, որ այդտեղ է նա։ Նրա շուրջը պարիսպ էր քաշված, որի տակերին փշատերև թփեր էին աճել։

Տխուր գնացքն ուղղվեց դեպի այդ կողմը։ Որդիքը անմիջապես դագաղից հետո էին գնում, հայրը եկորյակների հետ հետևում էր բավական հեռվից՝ մի փոքր կառքի մեջ։

Պաուլը ապշած ցած էր նայում. արդյոք նա ավազի վրա էր մտածում, որի վրայով գնում էր, գինու վրա, թե՞ Էլսբեթի մասին, կամ հոր պատգարակի... թերևս հավամրգի պսակի, որը դագաղից մի փոքր քանդվել էր ու կախ էր ընկել։ Նա միտքը դրեց, որ լավ ուշադրություն դարձնի որ այդ պսակն էլ գերեզմանի մեջ չգեն։

Գերեզմանի մոտ ուրիշ բան չէր ղգում, բացի մի ինչ-որ ուժգին կրակից, որ այրում էր նրա քունքերը. և երբ քահանան կարդաց օրհնությունը, նա մտածեց, որ չէ՞ որ գինու փոխարեն բոլորովին հանգիստ սլտով դարեջուր կարող էր տալ։ Ապա նա ստիպված էր ուշադրություն դարձնել երկվորյակների վրա, որոնք ցավից խելագար՝ հիմարություններ էին անում ու դագաղի հետևից ուզում էին թռչել։ Թևերի տակ առավ նրանց, համբուրեց նրանց ու խորհուրդ տվեց գլուխները նրա

ուսերին դնել։ Նրանք այդպես արին, աչքերը փակեցին ու սկսեցին շնչել, կարծես քնի մեջ լինեին։

Երբ հողի առաջին կտորները դղրդյունով վայր գլորվեցին, նա մի անհաճո զգացմունք նկատեց իր մեջ, կարծես մեկը նրա գլխի մեջ կեգելի գնդակներով խաղ է անում ու երբ փոքրիկ բլրակը իր մերկությամբ հետզհետե բարձրանալ սկսեց, Պաուլը մտածեց. «Առավոտ սրա շուրջը դալար կանաչ պիտի բուսնի»...

Բազմությունը ցրվեց, հորը տարան կառք դրին և երեք որդիքը տարով ճանապարհ ընկան դեպի տուն։ Մաքսն ու Գոտֆրիդը խոսում էին ճանապարհին մեղմ հանդիսավոր եղանակով մոր մասին ունեցած իրենց ամենավաղ հիշողություններից, բայց Պաուլը լուռ էր ու մտածում էր. «Փառք աստծու, որ նա այժմ գետնի տակն է...»։

Նրա հիվանդագին ուղեղը դեռ լի էր ամբողջովին այդ մանր-մունր հաշիվներով, նա դեռ մինչև այդ ժամանակը չէր հասկացել... չէր ուզում հասկանալ կատարված իրողությունը... բայց երբ այժմ բակ ներս մտավ, որ բարակ տախտակներով ծածկված ախոռներ ու հրդեհի հետքերը անմխիթար ու տխուր նրա առաջ բաց արավ... հանկարծ կայծակի արագությամբ բոլորովին մի նոր զգացմունք համակեց նրան. «Մայրը էլ չկա՞»։

Շուռ եկավ, ձեռքերը տարածեց օդի մեջ ու շանթահարի նման վայր ընկավ...

17

Ամառն անցկացավ. աշունը եկավ ու իր մշուշի թևերով տարածվեց տափաստանի վրա։ Արևի կարմիր ճառագայթները հոգնած անտառի ծայրերով անցան ու հավամրգին կախ ձգեց իր բոսորային գլուխը։ Այդ ժամանակները մի տարօրինակ աղմուկ, ինչ-որ արտասովոր ձայներ սկսեցին լսվել ագարակից, որ մինչև այդ սակվել, խաղաղվել էր։ Մուրճի հարվածների ու զանգի զողանջի նման բռնել էին այդ ձայները ամբողջ տափաստանը. նրանք հնչում էին երբեմն

տուր, երբեմն խուլ, բայց միշտ չափով, միշտ մի ներդաշնակ եղանակով, որ օդի մեջ դողդողում, թրթռում էր։

Գյուղի բնակիչները զարմացած կանգ էին առնում ճանապարհին։

Մեկը հարցնում էր. «ի՞նչ պետք է լինի արդյոք Մայհյոֆերների մոտ»։

Երկրորդն ասում էր. «Այնպես է հնչում, կարծես նա մի դարբնոց է շինում այնտեղ»։

«Ձուր բախտն այլևս չի դարբնի», ասում էր երրորդը ու ծիծաղելով գնում հեռանում էին։

Հայրը, որ յուր սովորության համաձայն հորանջելով և մռմրոալով անկյունում նստում էր, առաջին ձայները լսելիս շփոթվել էր յուր տեղում ու երկվորյակներին կանչել տվեց, որպեսզի տեղեկություն տան։ Բայց սրանք էլ ավելի բան չգիտեին, քան այն, որ այդ օրն առավոտ կանուխ քաղաքից մի արհեստավոր էր եկել շատ խարտոցներով, մուրճերով ու այլ գործիքներով, բազմաթիվ պլաններ ու նկարներ ձեռքին, որը Պաուլի հետ երկար խոսակցություն էր ունեցել։ Նրանք վազեցին իմանալու բանի եղելությունը և ի՞նչ գտան...

Սայլատան հետևում կանգնած էր «սև Զուզեն»— մի տախտակամածով պճնված, ինչպես մի կին, իր շրջազգեստով. տախտակամածի վրա Պաուլն ու արհեստավորը եռանդուն շարժումներ էին անում, թխթխկացնում էին, պտուտակներին էին խփում, ամրացնում...

Ասլշած իրար նայեցին երկվորյակները, որովհետև զգում էին, որ այստեղ մի ինչ-որ մեծ բան է պատրաստվում. բայց կարևոր չհամարեցին հայրիկին տեղեկություն տանել. նրանք հիշեցին, որ հարկավոր էր իրենց գրած երկու փոքրիկ նամակները աղախնի միջոցով շտապով ու ծածուկ պոստատուն ուղարկել։

Բայց Պաուլը կանգնել էր «սև Զուզեի» կլոր մարմնի վերևում. հենվել էր բարակ ծխնելույզի վրա ու տենչանքով ճահճին էր նայում, ինչպես մի Կոլումբոս, որ մի նոր աշխարհ գտնել էր ցանկանում։

Հանդուգն ճանապարհի առաջին քայլն արդեն արվել էր։ Մոր մահվանը հետևող այն երկար անքուն գիշերներին, երբ

վիշտը պողպատե մագիլներով նրա հոգին սեղմում, կուչ էր բերում, ննջեցյալի գանգատավոր պատկերից նա գրքերի մեջ էր ապաստարան որոնել։ Խլուրդի պես նա ճանապարհ էր բաց անում մութ ու խրթին տեսությունների միջով ու երբ գլուխը դժժում էր ու մարմինը հոգնած՝ հանգստանալ էր ցանկանում, ինքն իրեն կանչում էր. «Մորս վերջին հույսը չպիտի անկատար մնա»։ Ապա նորից տարածվում էին նրա անդամները, եռանդի կայծեր էին անցնում նրա գլխով ու առաջ էր տանում իր անխոնջ աշխատանքը, առաջ, միշտ առաջ, մինչև որ վերջապես այդ երկաթե հանելուկի խառնիխուռն կերպարանքը մի ներդաշնակ խաղ դարձավ նրա համար, մինչև որ յուրաքանչյուր լծակը մի մկան դարձավ, յուրաքանչյուր խողովակը մի երակ՝ որոնք բոլորը հեռատես ու իմաստուն ծրագրով շինված էին, ինչպես մարդկային մարմինը՝ ստեղծողի կողմից։

Շաբաթներ ու ամիսներ անցան։ Նա այնպես խորացել, ընկղմվել էր իմացական ծարավի ու ստեղծագործության մըղումի մեջ, որ այն ամենը, ինչ որ նրան առաջ հետաքրքրել էր, այժմ կորել, նրա մտքից հեռացել էին։ Մոր պատկերը սկսել էր ավելի խաղաղ ու հանգիստ երևալ ու նույնիսկ ժըպտալ։ Հունձը կարծես աներևույթ հոգիների օգնությամբ դիզվում էր ամբարներում. և երբ վարսակի վերջին մնացորդներն էլ ներս առան, Պաուլը ձեռքը գլխին խփեց ու երաղողի նման ասաց. «Ինձ թվում է, թե երեկ էր, երբ քաղն սկսեցինք, ե՞րբ այսքան շուտ վերջացրինք»։

Բայց քանի նրա միտքն հաստնանում էր ու իմացությունը ամբողջանում, այնքան ավելի գործի հաջողության համար նըրա սրտում ծնունդ առած երկյուղը ուռչում, մեծանում էր։ Երբ նա մի դարբին կանչելու համար նամակ էր գրում, սիրտն այնպես էր խփում, կարծես թե դոկտորության թեկնածու լիներ քննությունից առաջ։ Նրա գործը վախենում էր լույսից, կարծես հանցագործություն լիներ, որովհետև նա վախենում էր ծաղրի առարկա լինի։ Բայց վարպետն եկավ և մուրճի հարվածներն իմաց արին աշխարհին գործի սկիզբը։

Օտարական վարպետը տնեցոց հետ միասին պիտի ճաշի նստեր. և հայրն իր տհաճությունը նրանով էր արտահայտում, որ զլացավ նրա բարևին պատասխանել. ամեն տեսակ խոսքեր

էր մոթմոթում յուր ափսեի մեջ, ինչպես օրինակ՝ հիմար, հաց-կատակ և այլն։

Բայց ոչ ոք ուշք չդարձրեց դրա վրա և աշխատանքն առաջ էր գնում անընդհատ։

Պաուլի առաջարկությամբ մեքենան բոլորովին քանդեցին ու մինչև ամենափոքրիկ մասերը հիմնական քննության ենթարկեցին։ Այն, ինչ որ մասնագետ մեքենայագործը առաջին իսկ վայրկյանին կարող էր իսկույն նկատել, այս երկուսը երկար ու անխոնջ աշխատանքից հետո կարող էին միայն նշմարել։ Հաճախ ժամերով վեճ էր բացվում երկուսի մեջ, կարծես ժողով լիներ։

Մի անգամ վարպետը անհամբեր կերպով հարց տվեց.

— Ի՞նչու այս սատանայի տարածը չէք ուղարկել որևէ արհեստանոց նորոգել տալու։

Պաուլը սարսափեց։ Իհարկե, լավ միտք էր դա, որ այդ օրը նրան բոլորովին նոր թվաց, բայց ինչքան անգամ նրա միտքը եկել էր առաջ։ Բայց նա երբեք չէր իրագործել այդ միտքը. դա շատ համարձակ, շատ եռանդուն էր թվում նրան. բացի այդ, շատ մեծ երկյուղ էր կրում, թե «սև Զուզեին» ետ կուղարկեն արհեստանոցից, որպես աննորոգելի, մի անհույս առարկա։ Նա էլ այն վիճակի մեջ էր, ինչպես այն գեղջուկ կինը, որն ուրախությամբ համաձայնում էր յուր մարդուն բժշկելով մեռցնել, քան թե թույլ տա, որ բժիշկը ասի. «Փրկել չի կարելի դրան»։

Երբ մութը կոխում էր ու վարպետը մշակների հետ գործն ընդհատում, նա դեռ մի ժամ էլ մնում էր աշխատավայրում, իսկապես առանց նպատակի ու պատճառի, թերևս նրա համար, որ չէր կամենում «սև Զուզեին» մենակ թողնել։ Ամենայն ուրախությամբ մինչև առավոտ կկանգներ նրա կողքին գիշերային պահապանի պես։ Սիրով կուզենար թևի տակ մի քանի նկարներ ու կամ գրքեր ունենալ— այդ էլ առանց նպատակի, որովհետև մութ էր, կարդալ չէր կարող, բայց նա ուզում էր բոլորն իրար մոտ ունենալ։ Մեծ գաղտնապահությամբ էր անում այդ բոլորը, որովհետև ոչ ոք իսկապես այնպես խոր կերպով համոզված չէր, քան հենց ինքը Պաուլը, որ նա մի կատարյալ հիմար է։

Մի երեկո, երբ մթան մեջ շարչարվում էր մի գիրք ցած բերել, յուր դարակի հետին մասերում նրա ձեռքին մի երկարավուն կոշտ ու կլոր բան ընկավ, որ մետաքսյա թղթի մեջ փաթաթված էր։

Նա զգաց խավարի մեջ, թե ինչպես կարմրեց. Էլսբեթի տրված սրինգն էր։ Ինչպե՞ս կարելի է, որ Պաուլն այդքան ուշ-ուշ էր հիշում սրինգն ու նրա տվողին։ Յուր վշտի ստվերները կըլանել, խավարեցրել էին այն լուսավոր կերպարանքը, որը նրան ամենամռայլ օրերից մեկում վերջին անգամ երևացել էր ու այժմ շրջակա տանջանքների ու հոգսերի մեջ ստվեր էր դարձել նրա համար։ Առաջին վայրկյանին հազիվ կարողացավ վերհիշել նրա դիմագծերը, բայց հետզհետե բարձրացավ նրա հոգու մեջ այն նազելի հոյակապ պատկերը։

Գրքի վերխարեն սրինգը թևի տակ դնելով անցավ սայլատան հետևը ու շոգեկաթսայի վրա նստեց։ Հետաքրքրությամբ շարժում էր լեզվակները, նույնիսկ ծայրը բերանին դրեց, բայց սիրտ չարեց մի հնչյուն դուրս բերել, որովհետև չէր ցանկանում քնածներին արթնացնել։

«Շատ լավ կլիներ իհարկե,—ասաց նա ինքը իրեն, որ ես սիրուն եղանակներ փչեի ու Էլսբեթի մասին մտածեի։ Այդ դեպքում էլի մի անգամ կարող կլինեի ինձ հետ խոսել ու իմանալ, որ ես ինձ համար էլ եմ ապրում աշխարհքի վրա։ Բայց մի՞թե ես ինձ համար էլ եմ ապրում աշխարհքիս վրա,— հարցրեց նա ինքն իրեն ու մտախոհ բռնեց մեքենայի կոթերից մեկը։— Ինչպես որ այս կոթը դառնում է ու դառնում առանց իմանալու ինչո՛ւ և ինքը յուր համար ավելի չէ, քան մի անշունչ երկաթի կտոր, այդպես ես էլ պետք է դառնամ ու դառնամ և չհարցնեմ ինչո՛ւ... Չէ՞ որ աշխարհքի վրա մարդիկ պետք է լինեն, որոնք իրավունք ունենան իրենց համար ապրել ու իրենց ցանկացածի համար երևակայել աշխարհը. բայց նրանք այլ կերպ են կազմված, քան ես. նրանք, նրանք գեղեցիկ են, հպարտ ու համարձակ և արևի փայլը միշտ իրենց շուրջն ունին։ Նրանք կարող են իրենց թույլ տալ սիրտ ունենալ ու այդ սրտի համաձայն շարժվել։ Բայց ե՛ս... ե՛ս...»։ Նա կանգ առավ ու տխուր մտքերի մեջ ընկած դիտեց սրինգը, որի

լեզվակները կիսախավարի կաթնավուն լույսի տակ փայլում էին։

«Եթե ես այդպիսիներից մեկը լինեի,— շարունակեց նա փոքր միջոցից հետո,— նշանավոր երաժիշտ կլինեի անշուշտ... Ես լավ գիտեմ, որ սրա ներսում շատ եղանակներ կան, որ դեռ ոչ ոք չի սուլել. ու երբ նպատակիս հասնեի, այն ժամանակ կամուսնանայի էլսբեթի հետ... հայրս էլ կհարստանար, մայրս բախտավոր կզգար իրեն... Բայց այժմ մայրս մեռել է. հայրս մի ողորմելի հաշմանդամ... էլսբեթը ուրիշի հետ կամուսնանա, իսկ ես նայում եմ սրնգին ու չեմ կարող ածել»։

Բարձր ծիծաղեց ու անցավ մեքենայի առջևի մասը, ծխնելույզի մոտ, փաղաքշեց սրան ու ասաց. «Բայց այս սրինգը... անպատճառ կսովորեմ ածել... մեծ ուրախություն կբերի դա»։

Այնուհետև նստեց այդտեղ։ Այդ րոպեին նրան թվաց, թե պարտեզից զոպված քրքիջի ու խոսակցության ձայներ կան նրա ականջին։ Ականջ դրեց. կասկած չկար մոտերքում մի սիրազույգ կար, կամ ավելի քան մի, որովհետև զանազան ձայներ էին իրար խառնվում, կարծես ճնճղուկների խումբ լիներ։

«Աղախինները սիրական են պահում,— մտածեց նա.— բոլորին կարձակեմ»։

Վերցրեց մի մտրակ, որը գոմի դռանը քաշ էր տված ու կամացուկ հասավ պարտեզի հեռին ցանկապատին, որպեսզի այդպիսով օտար կատուների ճանապարհը կտրի։

Ու հանկարծ քարացածի պես կանգ առավ. աչքերը կարծես դուրս էին թռչելու, մտրակը դողդողաց նրա ձեռքերին։ Քույրերի ձայները կպան նրա ականջին։

Մի ծառին հենված ականջ դրեց նա։

— Նա այժմ ձեզ հանգի՞ստ է թողնում,— հարցնում էր սիրականներից մեկը շշնջալով։

— Նա այժմ չափազանց շատ է զբաղված իր մեքենայով,— պատասխանեց Գրետեի ձայնը,— նույնիսկ իր անհամ քարոզներն էլ խնայում է մեզանից...

— Միևնույն է, դուք շատ ուշադրություն չէիք էլ դարձնում։

Գրետեն քրքջաց։

— Չնայած իր մեծությանն ու պատկառելիությանը հիմար տղայի մեկն է։ Սիրուց էլ ոչինչ չի հասկանում։ Երբ դեռ ես երեխա էի, նա դեռ այն ժամանակվանից պտույտ էր գալիս Էլսբեթ Դուգլասի շուրջը. բայց երբեք չեմ կարծում, որ համարձակված լինի երբևիցե աչքը նրա վրա բարձրացնել։ Էլսբեթն իհարկե չի էլ մտածի այդպիսի քծնող մեկին իրեն ամուսին վերցնել. չէ՞ որ նրա հորաքրոջ որդին այնտեղ է, Լեոն, որ բոլորովին այլ տղա է։

Պաուլի սիրտը պոկ էր գալիս տեղից, բայց շարունակեց ականջ դնել։

— Չեմ հասկանում իսկապես, ինչո՞ւ եք նրան հնազանդվում,— հարցրեց սիրականի ձայնը։— Մենք նրան միշտ լավ ծեծել ենք ու այնպես արձակել և վերջը նա է եկել մեզանից ներողություն խնդրել։ Այդպիսի հիմարին մարդ չպիտի ուշադրություն դարձնի։

— Դե՜հ, սպասիր, դո՛ւ, գրգռիչ,— մտածեց Պաուլը, որ այժմ գիտեր նրա տվ լինելը։

Բայց Գրետեն եռանդով վրա բերեց.

— Ֆո՛ւ, նա արժանի չէ այդ խոսքերին։ Նա մեզ այնքան շատ է սիրում, որ մենք իսկապես պիտի ամաչեինք, որ նրան խաբում ենք. ինչ որ կարող է, նվիրում է նա մեզ և ես կարող եմ երդվել, որ համակ սիրուցն է, որ նա այդպես շարունակ տխուր է։ Վնաս էլ չունի երբ երբեմն բարոյական քարոզներ է կարդում մեզ, մանավանդ որ էլի կարելի է ուղածն անել։

«Լավ է, որ դա էլ իմացա», մտածեց Պաուլն ու կիսաշրջան անելով անցավ մյուս կողմը, որտեղ երկրորդ զույգն էր բուն դրել։

Այստեղ ավելի սուս էին. երբեմն երբեմն համբույրի մի ձայն էր հնչում, կամ մի քրքիջ. ապա նա լսեց Կետեի ձայնը։

— Իսկ ինչո՞ւ դու անցած կիրակի օրը Մաթիլդայի հետ այդքան պար եկար։

— Զզվելի զրպարտություն է դա,— պատասխանեց եղբայրներից երկրորդը։— Ո՞ր թշնամի բերանն է քեզ դա պատմել։

— Քահանայենց Հեդվիգը պատմեց։

— Նա քեզ նախանձում է, այդ է ամբողջ պատմությունը։ Անցած կիրակի երբ նա ինձ նայեց այնպես...ինձ թվաց թե մազերս հիմա կխանձվեին։

— Ա՜հ այդ կեղծավորը։

— Դե՜հ, ոչինչ. մի տրամի շատ. դուք բոլորդ էլ կեղծ եք։ Իմ սիրունիկս, իմ անուշ արտուտիկս, իմ արև... գլուխդ գոգըս դիր, ուզում եմ մազերդ մի փոքր քաշքշել։

— Հա՞։

— Բայց ոչ. ժամացույցիս շղթայի վրա պառկիր. ահա այսպես. այժմ մի բան երգիր։

— Ի՞նչ երգեմ։

— Սիրո մասին։

— Նախ ցույց տուր, որ արժանի ես դրան, անպիտանս։

Ապա մի պահ լռություն տիրեց, հետո Կետեի մեղմիկ գեղգեղանքը հնչեց.

— Թանթրվենու մեջ երգում էր սոխակը
Մինչև առավոտյան երկուս և կեսը.
Մի մեղմ շառաչով պատուհանս բացվեց.
Առավոտը երկուս և կեսին
Գնացի տեսնելու դժբախտությունը.
Տեսա այնտեղ մի սանդուղ
Ու մի մարդ էլ վրան... լա լա լա...

— Շարունակիր դե՜հ երգել։

— Ա՜խ ոչ. իսկապես անվայելուչ է։

— Հապա ինչո՞ւ սկսեցիր։

Սա քրքջաց ու լռեց։

— Մի ուրիշ բան երգիր։

— Նախքան երգելս մի համբույր տուր ինձ։—Մի կարճատև պայքար, ապա տղայի ձայնը.

— Ի՞նչպես, սկզբում ուզում ես, և հետո չես թողնում, այդու կատու։

— Այստեղ եմ ես։

— Թող, ի՞նչ ես անում, դու չանդուրում ես։

— Եթե դու մի ուրիշին վերցնես, աչքերդ կհանեմ։

— Ուրիշ ոչի՞նչ.

— Ո՛չ. կպառկեմ գիհու տակ ու սովածությունից կմեռ-

նեմ։ Թաղմանս դու էլ պիտի ներկա լինես։ Ախ, հիանալի բան կլինի. բայց մի նայի՛ր, մի լավ բան դիտեմ.

Դիտես, քեզ ի՞նչպես եմ ես սիրում...
Դաշտի մեջ ամայի մի շիրիմ կա.
Նրա մեջ մեռած մի երգիչ է քնած
Սերն էր նրան մեռցրել։
Խավար տան մեջ քնած է նա ու քնած
Ու երբեք չի կարող կշտանալ սիրուց.
Կեսգիշերին դաշտի շիրիմի մոտ սպասիր,
Մինչև նա կարթնանա։
Նա իմանում է, ինչ ասել է երգել, համբուրել...
Նա կիմանա այդ բոլորը...

— *Մի՞թե գեղեցիկ չէր սա։*

— *Շատ գեղեցիկ. ո՞ւմից ես սովորել դա, կատուս։*

— *Մի երգարանի մեջ եմ գտել, որ մայրիկիս էր պատկանում. նույնիսկ կարծում եմ, որ նա ինքն է շինել...*

Այդ ամբողջ խոսակցության ընթացքում ցավատանջ ընդարմացման վիճակի մեջ կանգնել էր Պաուլը. բայց երբ մոր անունը լսեց, ղայրությից կարմրեց ու մտրակով թափահարեց զույգի գլխավերևի օդը, այնպես որ թառամած տերևները շառաչելով վայր թափվեցին։

Բարձր աղաղակով վեր թռան բոլորը։ Հենց որ եղբայրները նրան ճանաչեցին, աշխատեցին իսկույն հեռանալ, բայց աղջիկները կախ ընկան նրանցից. նրանք պաշտպանություն էին փնտրում իրենց հարազատ եղբոր երեսից։

— *Այս կողմը,— կանչեց սա նրանց. ու նրանք թողին իրենց սիրականներին ու իրար մոտ վազեցին փոխադարձապես իրար ծածկելու։*

Երկու էրդմանները շարունակ ետ-ետ էին գնում։

— *Տեղներդ մնացե՛ք,— գոռաց նա։*

— *Ի՞նչ ես ուզում դու մեզանից,— ասաց ավագը, որ մյուս եղբորից առաջ էր տեր դարձել դարձյալ իր հանդգնությանը։*

— *Դուք լնձ հաշիվ պիտի տաք։*

— Դու հո գիտես մեր տեղը,— ասաց կրտսեր եղբայրը ու մյուսի շորից ձիգ տվեց, որ նրան էլ դուրս տանի հետը։ Բայց հենց այդ վայրկյանին Պաուլը նրա կրծքից պինդ բռնեց...

— Բաց թող,— գոչեց նա։

— Մեզ հետ տուն պիտի գաք։

— Օ՜, ոչ անկարելի է,— ասաց ավագը։

— Չեմ հասկանում իսկապես, ինչ ես ուզում մեզանից,— ասաց կրտսերը, որը սաստիկ վախենում էր Պաուլի երկաթե բռունցքներից։— Մենք քո քույրերին սիրում ենք և քեզ հետ գործ չունենք ամենևին։

— Եթե նրանց սիրում եք, չե՞ք իմանում դռան ճանապարհը, որ գաք ու նրանց ձեռքը խնդրեք, դո՛ւք ավազակներ։

Այդ միջոցին Պաուլի ձեռքից Ուլրիխը իր եղբորն ազատեց. երկուսով թողին փախան պարտեզի միջով, ցանկապատի վրայով թռան ու դաշտի խավարի մեջ անհայտացան։

Բոլորովին շվարած նա շուռ եկավ և տեսավ իր քույրերին, որոնք ծառի բնի տակ կուչ էին եկել։

— Գնանք,— ասաց նա, ցույց տալով տունը ու նրանք հեծկլտալով հետևեցին նրան։

Ու երբ նրանք իրենց առանձնասենյակն էին ուղում մտնել, ասաց Պաուլը բաց անելով բնակարանի դուռը՝ «Այս կողմը»։ Դողդոջալով կծկվեցին մի անկյունում, որովհետև չէին իմանում, թե եղբայրն ինչ պատիժ պետք է իրենց թելադրեր։

Պաուլը ճրագ վառեց, վերցրեց ընտանիքի ալբոմը և դուրս քաշեց այդտեղից մի պատկեր։

— Այժմ՝ գնանք առանձնասենյակ։— Երկու ապաշխարող ոչխարների նման հետևեցին նրան։

— Ո՞վ է սա,— ցույց տալով պատկերը հարցրեց նա իր ամենախիստ ձևով։ Մայրիկի երիտասարդական պատկերներից մեկն էր դա, տարիների աղդեցությունից համարյա բոլորովին խավարած։ Բայց նրանք լավ ճանաչեցին ով լինելը, ձեռքերը ջարդելով մահճակալի առաջ ծնկների վրա վայր ընկան ու կողկողագին հեծկլտում էին բարձերի մեջ...

Ու այնուհետև ամեն բան խոստովանեցին։ Բանն ավելի վատ էր, քան որ Պաուլը կարող էր երևակայել...

Տիրեց սոսկալի լռություն։ Պաուլը մոտեցավ պատուհանին ու դուրս նայեց գիշերվա միջով։

— Փառք աստծու, որ դու մեռել ես, մայրիկ,— ասաց նա ծալելով ձեռքերը։

Այդ լսելով նրանք բարձրաձայն լաց եղան, նրա առաջ ծունկ չոքեցին ու ուզում էին ձեռքերն համբուրել։ Նա փայփայեց նրանց մազերը. նա չափազանց շատ էր սիրում նրանց։

— Երեխաներ, երեխաներ,— ասաց նա ու նույնքան անօգնական վայր ընկավ աթոռի վրա։

— Բարկացիր մեր վրա, Պաուլ,— հեծկլտում էր Կետեն։

— Ոչ, խփիր, սպանիր մեզ,— աղաղակում էր Գրետեն,— մենք արժանի ենք դրան։

Պաուլը ճակատն էր տրորում. նրան թվում էր այդ ամենը իբրև մի շար երազ։

— Ի՞նչպես կարող էր դա պատահել,— մրմնջում էր նա։— Մի՞թե այդքան վատ էի ուշք դարձնում նրանց վրա։

— Նրանք ասացին, թե ուզում են մեզ հետ.... ամուսնանալ,— հազիվ լսելի կերպով ասաց Կետեն։

— Երբ սգի տարին անցնի... հարսանիքը պիտի լինի...— ավելացրեց Գրետեն։

— Եթե ասել են, ուրեմն և կանեն,— բացականչեց նա ինքն իրեն մխիթարելով։— Ծունկ մի չոքեք առաջս... երեխեք, ծունկ չոքեցեք միայն ամենաբարի աստծու առաջ... ձեզ համար անհրաժեշտ է դա։ Այսօրվանից սկսած ամեն գիշեր ձեր գիշերվա սեղանի վրա է մնալու այս պատկերը. արդյոք այն ժամանակ էլ քաջություն կունենա՞ք խայտառակության ճանապարհով գնալ. բարի գիշեր։

Քույրերը նրա հետևից ընկան ու խնդրեցին այդ գիշեր իրենց մոտ մնալ, շատ էին վախենում. բայց մեղմությամբ նա աղաչեց նրանցից ու դիմեց դեպի իր վերնասենյակը, որտեղ խավարի մեջ նստեց ու մտածմունքի մեջ ընկավ։ Նա այնքան էր ամաչում, որ կարծում էր, թե այլևս չի կարողանալու օրվա լույսը տանել։

Առավոտյան կանչել տվեց վարպետին ու վարձքը տալով ճանապարհ դցեց։

Կորովամիտ մարդը սարսափած նրան նայեց.

— Սակայն ա՞յժմ, պարոն Մայհյոֆեր, երբ համարյա արդեն ամեն ինչ պատրաստ է,— ասաց նա։

— Այո՛, ամեն ինչ պատրաստ է,— մրմնջում էր նա քթի տակ։ Դժբախտաբար նախատինքն էր պատրաստ, վարպետը ճիշտ էր ասում։

— Գործերս մի փոքր անհաջող են գնում,— ասաց նա,— ու աշխատելուս ցանկությունը խլում։ Առայժմ թողնենք. և երբ ժամանակ լինի, ես էլի իմաց կանեմ քեզ։

Հայրը դառն կերպով գանգատվում էր գիշերվա աղմուկի համար.

— Ի՞նչ էիր պարտիզում թրև գալիս,— հարցրեց նա,— քո ձայնն էի լսում։

— Ոչինչ, խնձորագողեր էին եկել,— պատասխանեց Պաուլը։

Երկվորյակները լացակոծ աչքեր ունեին ու սիրտ չէին անում աչքերը գետնից բարձրացնել։

«Այս է ուրեմն երկու ընկածների վիճակը», ասաց Պաուլը և խոստացավ ինքն իրեն այդ բանտարկյալների խիստ պահապանը լինել։ Բայց երբ նա քույրերին առաջին անգամ իշխել ուզեց և երբ նրանք ցածից նրան նայեցին տանջանքից այդքան խոնարհացած ու ցավագար, նրա սիրտը փափկացավ, մի անսահման կարեկցություն եկավ վրան, այնպես որ լաց լինելով իր գիրկն առավ նրանց ու ասաց.

— Հանգիստ կացեք, երեխեք, դարձյալ լավ կլինի շուտով։

Նա այն համոզմունքին էր, որ երկու էրդմանները հետևյալ օրն և եթ գալու են իսկույն ագարակ։ «Իրենց խղճից քշված կգան», մտածում էր նա։ Նա այնքան հաստատ համոզված էր դրա մեջ, որ այդ օրը ճաշից հետո ստիպել էր հորը, որ ծուլությունից կեղտոտվել անպետքացել էր բոլորովին, որ նոր վերնազգեստ հագնի, որովհետև կարևոր այցելություն էր սպասվում։ Հայրը մոմոալով միայն համակերպվեց և վերջը կրկնակի բարկացավ, երբ տեսավ, որ այդ մեծ աշխատանքն իզուր անցավ։

— Վաղը կգան,— ասաց Պաուլը քնելու գնալիս.— այսօր նրանք քաջություն չեն ունեցել։

Բայց հետևյալ օրն էլ անցավ ու ոչ ոք չեկավ. անցավ նաև մի ամբողջ շաբաթ։

Պաուլը խելագարի պես պտույտ էր գալիս տան մեջ։ Ամեն տասը րոպեն մի անգամ նրան կարելի էր դարբասի դռան մոտ կանգնած դեպի դաշտը նայելիս տեսնել, այնպես որ մշակները ծածուկ կերպով իրար աղղր էին բռթում ու ուրիշ բաներ մտածում...

— Ափսոս,— ասում էր նա ինքն իրեն,— որ ես այդքան անփորձ ու անմեղ եմ ու սիրո բաների մեջ կատարյալ երեխա եմ, եթե ոչ կիմանայի իմ անելիքս։— Մի շաբաթանջ երկյուղ սկսեց նրան շարշարել ու անքուն կերպով շուռ էր գալիս շաբունակ յուր մահճի մեջ։

— Ես ուզում եմ ձեր բանը մի փոքր թեթևացնել,— ասաց նա մի առավոտ, պատվիրեց դեղին կողովակաքը լծել ու քըշեց դեպի էրդման եղբայրների կալվածքը՝ Լոտքայմ, որը նրանք ծնողների մահից հետո իրար հետ կառավարում էին։

Ամոթից ու բարկությունից նրա սիրտը կծկվեց, երբ նա խնդրողի դերում նրանց տան ճանապարհը բռնեց, որոնք նրա կյանքի ընթացքում այդքան շարիք էին հասցրել նրան։ Նա դարձյալ ետ կդառնար գլխավոր դարբասին հասնելուց հետո, բայց բռունցքներով պինդ սեղմեց սանձերը և նրա շրթունքները մրմնջացին. «Խնդիրը քեզ հո չի վերաբերում»։

Անցավ կանաչապատ բակի միջով, որտեղ փշատերև մեծ բույսեր էին բարձրացել առատորեն և որը շրջապատված էր ամայացած, բայց ընդարձակ տնտեսաշենքերով ու կանգ առավ բնակարանի առաջ, որի լուսամուտների փեղկերը սև ու ճերմակ շրջանակներ էին կրում։

— Այնքան էլ մեծ պատիվ չէ քույրերին այստեղ մարդու տալ. բայց սրանից էլ մեծ պատիվ նրանք չեն կարող պահանջել,— մտածում էր նա։ Զին կապեց սանդղակների սյունին, որովհետև ոչ ոք չէր երևում, որը կարողանար ձիուն գոմ տանել. հեռվից միայն ծեծող մեքենայի ներդաշնակ թիկթիկոցն էր գալիս։

Նույն վայրկյանին, երբ նա բակ մտավ, թվաց նրան, թե լսում է մի ինչ որ մեղմ փսփսոց ու ապա հետևի դռների բաց

ու խուփ անելը։ Ու տպա հանկարծ ամեն բան խաղաղվեց դարձյալ։

Նա մտավ սեղանատուն, որտեղ դրված էին դեռ նախաճաշի կտորները և որը սիգարի ծխով դեռ լիքն էր։ Սպասելով կանգնեց նա մի փոքր ժամանակ։ Ապա երևան եկավ մի բարակ պառավ կին հեգնական ծիծաղը դեմքին։

— Պարոնները տանը չեն,— ասաց նա առանց հարցի ըսպասելու,— առավոտ կանուխ դուրս են եկել նրանք ու շուտով էլ չեն վերադառնա։

— Վնաս չունի, ես կսպասեմ։

Պառավը սկսեց յուր շատախոսությունները, թե սպասելը բոլորովին միտք չունի, անհայտ է, թե նրանք երբ տուն կդառնան, շատ անգամ նրանք ամբողջ գիշերներով դուրս են մնում ու այդ տեսակ շատ բաներ։ Նրա շատախոսության միջոցին Պաուլին թվաց, որ արագ գնացքով մի կառք դուրս թռավ բակից. սարսափած վեր թռավ նա ու մոտեցավ պատուհանին, որովհետև կարծում էր, թե յուր ձին է խրտնել ու փախել. բայց ձին իր տեղում հանգիստ կանգնած էր, ու նրա մեջ մի կասկած բարձրացավ, մի կանկած, որը նա մի րոպե առաջ բարկացած ետ էր մղել։

Պառավ տնտեսուհին սիրտ շարավ նրան դուռը ցույց տալ և հանգիստ ու անխռով, առանց կեր ու խումի, անընդհատ սպասելով նստեց այդտեղ Պաուլը մինչև երեկո։ Երբ մութը կոխեց, խեղճացած ու հուսահատ՝ տան ճանապարհը բռնեց։

Հետևյալ առավոտը դարձյալ եկավ... այժմ էլ անօգուտ։ Երրորդ օրը նա տեսավ, որ դարբասը պինդ փակված է, բոլորովին նոր մի կողպեքով. երևում էր, որ կողպեքը հատկապես նրա համար էր առնված։

Ու այլևս կասկած չմնաց նրա մեջ, որ եղբայրները դիտավորյալ կերպով խույս են տալիս նրանից. «Վախենում են աչքիս նայեն,— ասաց ինքն իրեն.— լավ կլինի գրեմ նրանց»։

Բայց երբ գրիչը վերցրեց սիրալիր հաշտեցուցիչ խոսքեր գրելու, այնպիսի մի զզվանք եկավ նրա վրա այդ անպատիվ արարմունքի համար, որ գրիչը ջարդ ու կտոր արավ ու հառաչելով սենյակի մեջ վազվզել սկսեց։

«Հարկավոր է, որ նախ գնամ, ուժ հավաքեմ», ասաց նա

ու անշշուկ կերպով մտավ աղջիկների սենյակը։ Սրանք նստել էին պատուհանի առաջ, անխոս, գունատ դեմքերով հեռուն էին նայում. ապա քույրերից մեկը գլուխը խոնարհեց մյուսի ուսերին տխրությամբ ու մեղմորեն ասաց.

— Նրանք էլ չեն գա։

— Վախենում են նրանից,— հառաչեց մյուսը։

Ու այնուհետև դարձյալ խորասուզվեցին մտատանջության մեջ։

«Ահա այսպես»,— ասաց Պաուլը խոր շունչ քաշելով ու իր սենյակը ետ դառնալով.—«ես գիտեի, որ դա կօգներ»։ Ապա վերցրեց մի նոր թուղթ ու մի լավ նամակ գրեց, որտեղ նա եղբայրներին բացատրում էր, որ ինքն այլևս նրանց վրա չի բարկանա, որ նրանց բոլորովին կների, եթե նրանք քույրերին կորցրած պատիվը ետ դարձնեն։

— Առավոտ այստեղ կլինեն,— ասաց նա թերևացման մի հառաչ հանելով, երբ նամակը նամակարկղը ձգեց։ Օրվա մընացած մասը անցկացրեց դաշտում թափառելով, որովհետև սիրտ չէր անում որևէ մեկի երեսին նայել— այդքան ամաչում էր...

Բայց էրդմանները չեկան։

Մենդյան երեկոն էր, մութը կոխելուց մի փոքր առաջ։ Դաշտը ծածկվել էր թարմ ձյունով. դորշ երկնքից թափվում էին դեռ ձյունի փաթիլները։ Պաուլը նկատեց, որ քույրերը ծածուկ կերպով վերցրին գլխարկ ու վերարկու ու ցանկանում էին հետևի դռնով դուրս պրծնել։

Շտապով վրա հասավ ու հարցրեց.

— Ո՞ւր։

Նրանք սկսեցին լաց լինել և Կետեն ասաց.

— Խնդրում եմ, շատ եմ խնդրում, մի հարցնի։— Բայց Պաուլը սարսափելի մի վախ էր զգում իր մեջ. նա բռնեց քույրերի թևերից ու ասաց.

— Ես ձեզանից չեմ հեռանա, եթե ինձ չասեք։

Այդ ժամանակ Գրետեն ասաց դժվարությամբ.

— Գնում ենք մայրիկի գերեզմանին...

Մի տոկում անցավ նրա մարմնով, երբ նա զգաց, որ սը-

բանք այդ դրության մեջ պետք է տոք կոխեն այն սուրբ տեղը. բայց զգուշացավ, որ իր ներքինը չնկատեն քույրերը։

— Ոչ, երեխեք,—ասաց նա շոյելով նրանց այտերը.—այդ անկարելի է. դուք շատ կհուզվեք. ձյունն էլ այնքան հաստ նստել է դաշտում. մութն էլ վրա է հասնելու շուտով։

— Բայց այսօր պետք է որ մեկը լինի այնտեղ— այսօր, ծննդյան երեկոն,— ասաց Կետեն վախկոտ կերպով։

— Ճիշտ ես ասում, քույրիկ,— պատասխանեց Պաուլը.— ես ինքս կերթամ. մնացեք հայրիկի մոտ ու մի քանի մոմ վառեցեք նրա համար։ Ես կերթամ և եթե աստված կամենա, ձեզ համար մխիթարություն կբերեմ։

Նրանք համոզվեցին ու տուն դարձան։ Իսկ Պաուլը տաք շորեր հագավ, գլխարկը դրեց գլխին ու դուրս եկավ երեկոյան կիսախավարի մեջ։

—Այսօր դռները լավ փակեցեք,— ասաց նա դուրս գալիս. որովհետև զգոմ էր, որ այդ գիշեր շատ ուշ պիտի վերադառնա։ Եվ եթե բուքի ու բորանի մեջ ճանապարհը մոլորվեր...

Սպիտակ տափաստանը անխոս անշշուկ տարածվել էր նրա առաջ։ Ձյունի խորին խորքերում հանգստանում էին թորշոմած ծաղիկները և որտեղ առաջ գիհու թփեր էին բուսած, այժմ մի ճերմակ դեզ էր երևում, կարծես խլուրդների բույն լիներ։ Նույնիսկ կարճ անտառի բներն էլ ճերմակ ծածկոց էին առել իրենց վրա, միայն թե լոկ այն կողմից, որտեղից քամին փչում էր։

Դժվարությամբ առաջ էր գնում ձյունածածկ տափաստանով, յուրաքանչյուր քայլին մինչև կոճերը ձյունի մեջ խրվելով։ Օդի մեջ այստեղ այնտեղ նկատելի էր մի ագռավ, որը կռվելով ճերմակ փաթիլների հետ, ճանապարհ էր բաց անում յուր համար։

Ոչ մի ճանապարհ, ոչ մի շավիղ չէր երևում։ Այն երեք մենակյաց եղևնիները, որոնք հեռվում ուրվականների պես երկինք էին ցցվել, միակ նշանն էին, որոնց ուղղությամբ Պաուլը առաջ էր գնում....

Բոսորային կրակե գունդը, որ մի քանի ամիս առաջ հորիզոնի ծայրում հրավառվում էր, այժմ հանգել էր, ստվերներն ավելի խորացել էին ու երբ Պաուլը գերեզմանատան փոսին

հասավ, որը ցնորական պարսպի նման ցցվել էր այժմ նրա առաջ, բոլորովին մութ էր արդեն. բայց նոր եկած ձյունը մի որոշ կիսախավար էր տարածում յուր շուրջը, այնպես որ նա հույս ուներ մոր գերեզմանը շուտով գտնել...

Գերեզմանատան դուռը ձյան մեջ կորել, անհայտացել էր. չէր երևում ոչ մի մուտք։

Դժվարությամբ առաջ անցավ մացառածածկ ցանկապատի երկարությամբ, որից տեղ-տեղ սևագույն ոստեր ու ճղներ էին դուրս ցցվել ընդհանուր սպիտակ սավանից, մինչև որ նրա բազուկը խոր կերպով ընկղմեց ձյունի մեջ առանց դիմադրություն գտնելու։

Այդտեղ ահա ներս մտնելու մի հնար կար։

Խուլ սոսափյունով եղևնիները ողջունեցին նրան ու մի ադռավ, որ ձյունի մեջ խրվել մնացել էր, թևերը պարզելով վեր բարձրացավ ու սկսեց շրջաններ անել։ Նման թշվառ մի հոգու, որ հանգիստ չունի...

Երբ նա յուր առաջ այդ միակերպ, ձյունածածկ գետինը փռված տեսավ, սարսափը պատեց նրա հոգին, որովհետև ոչ մի նշան չկար, որով հնարավոր լիներ մոր շիրիմը գտնել։ Գերեզմանի վրա խաչ չէր դրված դեռ, որովհետև նա դեռ միջոց չէր ունեցել. իսկ գերեզմանները բոլորը հանգչում էին խոր ձյունի տակ...

Տանջող երկյուղը պատեց նրա հոգին ու նրան թվաց, թե նա այժմ կորցրեց նաև այն վերջինը, որ նա աշխարհիս վրա ուներ...

Ու դողդոջուն ձեռքերով սկսեց նա ձյունը ետ անել շիրիմներից, մի գերեզմանից մյուսին անցնելով... երկար ճանապարհ, որտեղից այստեղ այնտեղ գերեզմանի մի ծայր էր երևում, կամ կիսախավարի մեջ պսակի պես մի բան փայլում։

«Այստեղ ննջում է սա, այստեղ ննջում է նա...»։ Նա համարյա բոլոր գերեզմանները ճանաչում էր։

Ու վերջապես նրա որոնող ու փորփրող ձեռքը ապակու կտորների դիպավ, որոնք խորքից երևան եկան... Նա կանգ առավ ու զգուշությամբ շոշափեց... Դա այն ապակին էր անշուշտ, որ Գրետեն աշնանն ուզում էր գերեզմանի վրա դնել աստղածաղիկները վրան. ծաղիկների թառամած մասերը դեռ

վրան էին... Այո, դա էր։ Ու դրա կողքին ընկած էր հավամրգի պսակը, որը սառել փետացել էր. նա ինքն էր այդ պսակը բերել, երբ նա վերջին անգամ այցելել էր մոր գերեզմանը։

Ու երբ նա այժմ տեսավ այդ ձյունը ՃերմակՃերմակ ու խաղաղ, որ յուր ամենաթանկագինը աշխարհիս երեսին ծածկած պատել էր, ծնկներին ընկավ ու յուր այրվող երեսը թաղեց զով, փափուկ փաթիլների փրփուրի մեջ։

— Բոլորի մեղավորը ես եմ, մայրիկ,— գանգատվում էր նա։ —Ես նրանց լավ ուշադրություն չդարձրի, թույլ տվի, որ այդպես դուրս ընկնեն, վայրիանան... Մի դատիր նրանց, մայրիկ։ Նրանք չեն իմանում, ինչ են անում... Բայց ես աղաչում եմ քեզ, մայրիկ, ասա, ինչպես վարվեմ, ինչ անեմ ես... Գերեզմանիցդ մի հատիկ խոսք ուղարկիր ինձ... տես, այստեղ ծունկ չոքած առաջիդ... աղաչում եմ քեզ... անելիքս չեմ իմանում։

Ու հանկարծ նրան թվաց, թե ինքն էլ իրավունք չունի այդտեղում մնալու, որ իրեն էլ բաժին է հասնում այն խայտառակությունից, որի մեջ քույրերն էին ընկած։ Նա իրեն վախկոտ, եսասեր ու ծույլ անվանեց, որ նա այդքան երկար անգործ մնացել է, առանց սիրտ անելու ամենահանդուգն ձեռնարկությունը...

— Կանեմ... մայրիկ, հենց այս գիշեր,— աղաղակեց նա վեր թռչելով,— խնդիրն իմ անձիս չի վերաբերվում, որ ես տատանվեմ. հպարտությանս վերջին մնացորդը գործ կդնեմ, եթե դրանով քույրերիս օգնել կարող եմ։— Բարձրացրած ձեռքերով երդվեց նա ու շտապով դաշտ դուրս եկավ։

Երեք ժամի չափ թափառեց նա ձյունակորույս դաշտի մեջ։ Ժամը ութը կլիներ, երբ շնչասպառ ու հոգնած Լոտքայմի դարբասի մոտ կանգ առավ։

— Այսօր նրանք չեն պրծնի ձեռքիցս,— ասաց նա. և որովհետև դարբասը դարձյալ փակված գտավ, փորի վրա տղայով անց կացավ տակով, ինչպես շատ անգամ շներին էր տեսել անցնելիս...

Տերերի տան պատուհանները պայծառ լուսավորված էին, բայց որովհետև վարագույրները ցած էին ձգված, ուստի չէր

կարելի որևէ բան նկատել ներսում. միայն բեկբեկ երգի ու կարճատև ծիծաղի ձայներն էին դուրս գալիս։

Տան դուռը բաց էր. մութ բակի մեջ նա մի ոտք դրեց։ կանգառավ հանգստացնելու համար արտի արագ բաբախյունը և ապա ծեծեց դուռը։

— Համեցեք,— կանչեց ներսից Ուլրիխի ձայնը։

Երկու եղբայրները տարածվել էին երկար բազմոցի վրա՝ մեկի ոտքերը մյուսի գլխի մոտ — խղճի հանգստության ու հոգեկան զվարթության մի ապահով պատկեր։ Նրանցից յուրաքանչյուրի ձեռքում գրոգի բաժակ կար ու նրանց առաջ սեղանի վրա դրված էր գոլորշիածածկ փունջի ամանը։

Նրան այդ դրությամբ տեսնելով երկուսն էլ այնպես վախեցան, որ մոռացան նույնիսկ վեր կենալ, քարացածի նման մնացին տեղներում ու ապշած նրան էին նայում։

— Հը՞, ի՞նչ կա,— բացականչեց Ուլրիխը, որը եղբորից առաջ էր ուշքի եկել. իսկ Ֆրիցի ձեռքից բաժակը շառաչելով վայր ընկավ։ Ապա նա կռացավ ու մեծ եռանդով սկսեց ապակու կտորները հավաքել։

— Դուք անշուշտ լավ կհասկանաք, թե ինչու համար եմ եկել,— ասաց Պաուլը՝ ձյունածածկ շորերով դանդաղորեն սեղանի հետևն անցնելով։

— Ոչ,— ասաց Ուլրիխը, որ քիչ-քիչ վեր էր բարձրանում։

— Ամենևին չգիտենք,— վրա բերեց Ֆրիցը, որը խոհեմությամբ եղբոր մեջքի կողմն անցավ։

— Նամակս անշուշտ ստացած կլինեք,— հարցրեց Պաուլը։

— Ոչ մի նամակ չենք ստացել,— առարկեց ավագ եղբայրը, ժպիրհ կերպով նրա աչքերին նայելով։

— Երևի փոստումն է կորել,— վրա բերեց կրտսերը շտապով։

— Լավ մտածեցեք. նոյեմբերի 16-ին էր,— ասաց Պաուլը։

Այն ժամանակ նրանք մութ կերպով հիշեցին, որ մի ինչ որ նամակ, այո՛, եկել էր։

— Բայց այդ նամակից բան չհասկացանք ու կրակը ձգեցինք,— ասաց Ուլրիխը։

— Թողե՛ք այդ ձևերը,— ասաց Պաուլը.— դուք շատ լավ գիտեք, թե ինչ պիտի անեք։

Նրանք ուսերը վեր քաշեցին ու իրար նայեցին, կարծես թե սա իսպաներեն էր խոսում։

— Ես կատակերգություն խաղալու չեմ եկել ձեզ հետ,— շարունակեց Պաուլը.— քույրերիս պատիվը խլել եք դուք և պետք է ետ տաք։

Ուլրիխը գլուխը քորեց ու ասաց.

— Սիրելի Մայհոֆեր, մի վատ պատմություն է դա. ու ոչ ես, ոչ դուք չենք կարող այդտեղ որևէ բան փոխել... Նստիր մեզ հետ մի բաժակ փունջ խմիր... կարելի է այդպիսով ավելի շուտ նպատակներիս հասնենք։

— Այո, շուտ ու հաճելի կերպով,— վրա բերեց Ֆրիցը ու վեր կացավ երկու նոր բաժակ բերելու։

— Շնորհակալ եմ,— ասաց Պաուլը.— ծարավ չեմ։— Նրա մեջ մի խուլ դգացմունք կար, կարծես այդ եղբայրները նրան այժմ էլ ծաղրում էին, ինչպես ծաղրել են նրա ամբողջ կյանքի ընթացքում։

Նրա ամբողջ մարմինը կարծես երկաթե կապանքներով կաշկանդվել էր. ինքն իրեն երևում էր բոլորովին թուլացած, անզեն, անպաշտպան...

— Այո, եթե դու մեզ մոտ այդ եղանակով ես գալիս, չենք խոսի քեզ հետ,— ասաց Ուլրիխը ցույց տալով իրեն նեղացած.— ես մտադիր չեմ ծննդյան երեկոն փչացնել։

— Ու փունջը թողնել որ սառչի, —վրա բերեց Ֆրիցը։

Անթարթ հայացքով մերթ մեկին էր չափում Պաուլը, մերթ մյուսին։ Ի՞նչպես կարելի էր, որ նրանք, որոնք այդքան ծանր մեղավոր էին, նրա առաջ հպարտ ու հանդուգն կանգնեին, մինչդեռ նա, որ իր արդարացի իրավունքն էր պահանջում, հանցավորի նման դողում ու դողդոջում էր։

«Ու եթե դու առանց մխիթարության ետ դառնա՞ս,—աղաղակեց նրա մեջ մի հուսահատ ձայն։—Մի բարկացնի դրանց, մտածիր, որ մայրիկիդ երդվեցիր. քո մասին չպիտի մտածես...»։

— Հը՞, կխմես, թե չես խմի,—կանչեց Ուլրիխը բարկացած։

«Քո մասին չպիտի մտածես», կանչեց կրկին ձայնը. ապա նա խոնարհեցրեց գլուխը և բորբոքված ձայնով ասաց.

— Այո, խնդրեմ։

Երկու եղբայրները ժպտուն հայացքներ նետեցին իրար ու Ֆրիցը բարձրացրեց բաժակն ու ասաց.

— Շնորհավոր տոն։

— Շնորհավոր տոն,— թոթովեց նա ու կուլ տվեց տաք խմիչքը, թեև զզվանքը մինչև կոկորդը հասավ։

Այժմ նստել էր եղբայրների հետ, որպես մի լավ ընկեր, սեղանի շուրջը... Նա որ վրեժ հանելու էր եկել...

— Հա, վերջացնենք պատմությունը սիրելի Մայհյոֆեր,— ակսեց Ուլրիխը նորից։— Ինչ որ պատահել է, պատահել է, նորից փոխել չի կարելի։ Ես այստեղ էլ չեմ քննի, թե ով ում հետևից շատ է ընկել, մենք քո քույրերի, թե քո քույրերը մեր... համենայն դեպս նրանք նույնքան մեղավոր են, որքան և մենք։ Ամբողջ սրտով սիրում ենք նրանց. բոլոր շրջակայքում նրանք ամենագեղեցիկ ու սիրուն աղջիկներն են. ու սրտանց ցավում ենք, երբ մտածում ենք, որ մենք նրանց կորցրինք. բայց... որ մենք այժմ ամուսնանանք նրանց հետ, անշուշտ չես ցանկանա մեզանից։

Պաուլը մի վախկոտ հայացք նետեց նրա վրա ու ցած ձայնով ասաց.

— Դա ամենափոքրն է, որ...— էլ չկարողացավ բան ասել, նրան թվաց, թե արյունը երակների մեջ սառչում է։

— Ծիծաղելի բաներ մի անի,— ասաց Ֆրիցը և Ուլրիխը շարունակեց.

— Տես, այդ էլ կանեինք ուրախությամբ. մենք նրանց էլի սիրում ենք. թեև նրանք իրենց շատ բաներ են թույլ տրվել, որ...—Պաուլի ուղեղը ցնցվեց կարծես, բայց նա իրեն զսպեց.— մենք իսկույն կհամաձայնվեինք քեզ հետ, բայց նախ մի ասա, ի՞նչ ես տալու նրանց հետ։

— Ես... ոչինչ չունեմ,— թոթովեց նա։

— Տեսնո՞ւմ ես,— մեջ ընկավ Ֆրիցը։

— Բայց մենք փողի կարիք ունենք, փողի,— շարունակեց Ուլրիխը։— Ես ավագն եմ և եթե ցանկանամ կալվածքն ստանձնել մենակ, պետք է Ֆրիցի բաժնի փոխարեն նրան այնքան փող տամ, որ նա մի նորը գնել կարողանա։

— Ես... կաշխատեմ,— հազիվ լսելի արտասանեց Պաուլը և խոնարհ խնդրողի պես նայեց եղբայրներին։

— Տասը տարի է աշխատում ես և ոչինչ չես ետ ձգել։

— Հրդեհը մեջ եկավ,— թոթովեց Պաուլը, կարծես թե այն դժբախտության համար, որ նրան էր հասել, ներողություն էր խնդրում այժմ։

—Եկող տարի էլ մի ուրիշ բան մեջ կգա. չէ, սիրելի բարեկամս. դրա վրա հույս ունենալ չենք կարող։

Այն երկյուղը, թե նա ստիպված պիտի լինի առանց մխիթարության քույրերի մոտ դառնալու, աճում ու աճում էր նրա հոգու մեջ։ Այդ երկյուղը նրան այն աստիճան տիրեց, որ բացվեցին նրա լեզվի կապանքները ու նա բացականչեց.

— Բայց ի սեր աստուծո, խելքի եկեք... Ես հո բացի աշխատելուց ուրիշ բան չեմ կարող անել... Եզան նման կաշխատեմ, կաշխատեմ գիշեր ու ցերեկ. կխնայեմ... քաղցած կմընամ ու բոլորը, ինչ որ ետ կձգեմ, ինչ որ կվաստակեմ... բոլորը, բոլորը ձեզ կտամ... տեսեք... ուղիղ եմ ասում, լավ ակնկալություններ ունեմ ես... լոկոմոբիլը շուտով կարգի կընկնի... իսկ ճահիճը մեծ եկամուտ կբերի... տասնևհինգ ոտնաչափ խորությամբ տորֆ է պարունակում նա, ճիշտ եմ ասում, կարող եք չափել... մի սայլ տորֆը տասը մարկ արժի, ու քույրերիս օժիտը տարեցտարի ֆենիգ առ ֆենիգ կհանձնեմ ձեզ։

Նա մի հայացք գցեց իր դուրս ընկած աչքերով նրանց երեսին, որովհետև այժմ սպասում էր, որ նրանք արդեն կհամոզվեն։ Ու երբ նրանք էլի լուռ էին, բոլորովին հուսահատ՝ ճակատը բռնեց, որից սառը քրտինքը ցած էր գլորվում ու մրմնջաց.

— Հա՜, էլ ի՞նչ կարող եմ... ճիշտ որ, դեռ էլի բան կարող եմ... Ագարակը հորիցս իմ վրա գրել կտամ ու հետո ձեզ կհանձնեմ, այնպես որ... Երբ հայրս... կմեռնի, երկուսիցդ մեկը տեր կդառնա... Ես դուրս կգամ ագարակից առանց որևէ բանի, բոլորովին դատարկ։ Բավական չէ՞ սա ձեզ։

Բայց նրանք լուռ էին։

Ու նրան թվաց, թե ամեն բան կործանվում է, ինչի որ նա այդպես հաստատ հավատում էր, թե գետինը հեռանում է

նրա ոտքերի տակից ու ինքը անհուն դատարկության մեջ է ձգվում։ Ձեռքերը ծալեց... ատամները կրճտում էին ու անշնչացածի պես ապշած նայում էր նրանց.

— Մի՞թե կարելի բան է այս։ Չե՞ք ցանկանում. իրո՞ք չեք ցանկանում։ Մի՞թե չեք հասկանում, որ դա ձեր պարտականությունն է շիտակելու այն, ինչ որ դուք փչացրել եք... Մի՞թե ձեր պատվի զգացումը ձեզ չի ասում, որ դուք իրավունք չունիք ուրիշներին անպատիվ դարձնելու... մի՞թե ձեր խիղճը թույլ է տալիս ձեզ հանգիստ քնել...

— Դե՞հ, բավական է...— ասաց Ուլրիխը, որն արդեն սնահարմար վիճակի մեջ լինելու զգացմունքից զայրացել էր։

— Ոչ, ես չեմ դադարի. ես չեմ կարող այս կերպ տուն գնալ... ճիշտ եմ ասում, չեմ կարող... մի՞թե իրոք չեք հասկանում ձեր արածը, մի՞թե չեք հասկանում ինչ թշվառ վիճակ եք ստեղծել մեզ մոտ, տանը։— Ու նա դողաց, սասանեց, հիշելով այն, ինչ որ տանն էր թողել։— Եթե գիտենայիք այդ... այդպես անսիրտ չէիք լինի... Տեսեք, Ֆրից ու Ուլրիխ... ես ձեզ վաղուց ի վեր ճանաչում եմ... միասին դպրոցական նստարանի վրա մենք նստել... սեղանի առաջ մոտեցել... Դուք ինձ միշտ շար եք կամեցել ու ձեր պատճառով ես շատ ցավեր ու տանջանքներ եմ ունեցել, բայց... բայց ես կմոռանամ այդ բոլորը, եթե դուք միայն այս մեկը շիտակեք... Դուք թեթևամիտ եք, բայց վատ չեք... չեք կարող լինել, չէ՞ որ դուք էլ եք մայր ունեցել... ես նրան տեսել եմ... մեր օրհնության ժամանակ նա երրորդ այունի մոտ ձախ կողմում կանգնել ու լաց էր լինում... ինչպես և իմ մայրն էր լալիս... ու իմ մայրը... Ֆո՛ւ,— ընդհատեց ինքն իրեն, որովհետև նա ամաչեց, որ ննջեցյալի անունը այդ մոլորեցնողների մոտ արտասանում է. բայց նրա երկյուղը, թե առանց մխիթարանքի ստիպված կլինի տուն դառնալ, խելագարության չափ աճել էր նրա մեջ. այդ էլ կոպ տվեց... ու նորից սկսեց, մինչդեռ նրա մտքերը վայրի կերպով պտույտներ էին արել.— մտածեցեք, դուք այժմ գերեզմանատուն եք գնում... ու քույրեր ունեք... որոնք խաբված են... ու դուք լավ ուշք չեք դարձրել նրանց վրա... ու սիրտ չեք անի գերեզմանի վրա նստած ձյանը ձեռք տալ... ու ես

էլ մոլորեցնողն եմ... ի՞նչ... ի՞նչ կանեիք դուք այդ դեպքում...

— Կսպանեինք քեզ,— ասաց Ուլրիխը արհամարհական հայացք նետելով նրան։

Մի տուր հնչող ճիչ արձակեց նա, որովհետև այժմ միայն զգաց, ինչ աստիճան իրեն ստորացրել էր, ինչպես յուր հրապարտությունը, պատիվը ցեխի մեջ էր ձգել... սեղմած բռունցքներով վրա պրծավ Ուլրիխին. բայց սա սեղանի հետևում պաշտպանվեց, մինչև որ Ֆրիցը հարևան սենյակն անցավ ծառաներին կանչելու։

Պաուլը օրորվեց դեպի դուրս։

Դարբասի դուռը առաջվա նման կողպած էր։ Նա սիրտ չարավ ետ դառնալ, որ բաց անել տա ու փտրի վրա սողալով դուրս ելավ... ինչպես շուն...

Ինչպես շուն...

18

— Երիտասարդ պարոնը միանգամից սկսել է տուրախ կյանք վարել,— ասում էին մշակները և որովհետև տնտեսության մեջ վերահասու աչքը պակասել էր, իրար հետևից գողանում էին շարունակ։

Իսկ Պաուլը քաշ էր գալիս ու մասնակցում այն բոլոր ուրախություններին ու պարահանդեսներին, որ տեղի էին ունենում շրջակայքում։ Ով նրան մռայլ ճակատի ծալքերով ու երկյուղոտ, քնոտ հայացքով նկատում էր տուրախ դեմքերի մեջ, ակամայից ասում էր անպատճառ. «Ի՞նչ է ուզում սա այստեղ»։ Շատերն էլ մի կողմ էին քաշվում ու հեռանում նրանից, կարծես նրանց ուրախության վրա ստվեր էր ձգում նա։

Բայց Պաուլը շատ լավ գիտեր այն ճանապարհը, որն այժմ բռնել էր։ Նա լսել էր որ էրդմանները տոն ու հանդես բաց չեն թողնի, որ չմասնակցեն։ «Ես նրանց կպատահեմ անպատճառ,— ասում էր նա.— գիշերը մռայլ է ու դաշտը ամայի։ Աստծո բաց ազատ երկնքի տակ թող նրանք իմ ու մահվան երեսին նայեն»։

Լոտքայմի վերջին այցելությունից երկու օր հետո նա քաղաք էր գնացել ու մի ատրճանակ գնել. մի սիրուն, վեց բացվող ատրճանակ, երկար, բարակ փողով։ Ու այժմ վայրի գազանի նման դարան էր մտնում գիշերները թփերի ու կիրճերի մեջ, երբ կարծում էր, թե ահա կանցնեն նրանք։

Բայց նրանք չէին գալիս։ Թվում է, թե նրանք էլ չէին վրստահում դուրս գալ. կամ թե որ ավելի հավանական էր, նրանց փողը սպառվել էր։ «Ես կարող եմ սպասել», ասում էր նա ու շարունակում էր իր այդ ընթացքը։

Ու երբ մի օր տանը մնաց և քույրերի հետ միասին ընթրիքի նստեց — լուռ ու տխուր ընթրիքի — յուրաքանչյուր անգամ սարսռում էր նա, երբ աչքերը բարձրացնելիս այդ երկու գունատ վշտահար դեմքերի մեջ մոր դիմագծերն էր տեսնում։ Այդպիսի ժամանակները միշտ կարծես նրան դուրս էին քշում, տանը նստել չէր կարող...

Բուն բարեկենդանի երեկոն էր, շրջակայքի գյուղատնտեսները քաղաքացիների միությանը դահլիճում մի մեծ պարահանդես էին տալիս։

«Այնտեղ նրանց կբռնեմ», ասաց ինքն իրեն, որովհետև լսել էր, որ երկու եղբայրները հանդեսի հանձնաժողովի մեջ էին։

Երբ մութը կոխեց, պատվիրեց սահնակը լծել, ատրճանակը պահեց նստարանի արկղի մեջ ու ճանապարհ ընկավ դեպի քաղաք։

Ամբողջ օրը փայլել էր արևը ու այժմ երկինքը բռնվել էր վերջալույսի բոցերով։ Կապտավուն քողով բարուրված էր դաշտը ու ձմեռվա պաղ օդի միջով այս ու այն կողմն էին շարժվում լուսավոր սառցաբյուրեղներ։

Երբ նա Հելենինթալով էր անցնում, նկատեց երկու սահնակ լիքը եղևնու ճյուղերով։

— Ինձ թվում է, թե այնտեղ էլ մի հանդես պիտի լինի,— մրմնջաց նա — նայելով սահնակների հետևից ու մի մռայլ ժպիտով ավելացրեց.— նախանձելու կարիք չունիմ, չէ՞ որ այսօր ես էլ իմ տոնն եմ տոնելու։

Ժամը վեցին քաղաք հասավ, պարահանդեսի համար մի տոմսակ գնեց ու մինչև սկսվելը — մինչև ժամի ինը մի

պանդոկի անկյունում մռայլ ու մթագնած կուչ եկավ նստեց։

Երբ հանդեսի դահլիճը մտավ, որի մեջ ընդարմացնող խառնաշփոթ էր տիրում, ամաչկոտ ու վախկոտ կերպով սյուներից մեկի ստվերի տակ թաքնվեց, որովհետև նրան թվում էր, թե յուր ճակատին բոլորի համար պարզ ընթեռնելի կերպով գրված էր այն սպանության մտքերը, որոնք նրա հոգին լցնում էին այդ րոպեին։

Ու հանկարծ կարծես դանակ կոխեցին նրա կուրծքը։ Եղբայրներին գտավ նա. դահլիճի մեջտեղում կանգնել էին հպարտ ու փայլուն, ուսերին ձգած մետաքսե բարակ շալը, շուշանները կոճակների ծակերին խրած ու դիտում էին հաղթական ժպիտով սպիտակազգեստ օրիորդների այն շարքերը, որոնք բռնել էին պատերը։

— Այդպես ահա, այժմ չեք պրծնի ձեռքիցս,—մրմնջաց նա խոր հառաչելով։ Նա կդաց, որ իր համար այլևս ոչ մի «դարձ» չկար։ Ապա քաշվեց մի բոլորովին լուռ անկյուն, որտեղից կարողանար յուր զոհերին աչքից չթողնել։ Մոմերի փայլը արևի պես ճառագայթել էր նրա վրա, բայց նա այդ չէր նկատում. երաժշտությունը ներդաշնակ ակորդներով դիպչում էր նրա ականջներին, բայց նա չէր լսում. նրա բոլոր զգայարանները կլանվել էին մի վայրի, արյունոտ տենչանքի մեջ։

Ու երբ նա այդ ժխորին էր նայում ապշած, հետևում երկու մարդկանց հետևյալ խոսակցությունը լսեց.

— Դու էլ գնալո՞ւ ես վաղվա հուղարկավորությանը։

— Այո, երևի մեծ հանդես կլինի։ Հարկավոր է գնալ։

— Երկա՞ր ժամանակ էր հիվանդ նա։

— Օ՜, շատ երկար։ Մեր ծերունի դոկտորը տարիներ առաջ դեռ ձեռք էր քաշել նրանից։ Ապա նա յուր աղջկա հետ հարավ էր գնացել ու վերադարձից հետո էլ... չեմ իմանում ինչքան— երկար դիմացել է։

Պառուլը ականջ էր դնում։ Խուլ կերպով կարծես գլխի էր ընկնում։ Եղևնու ճյուղքե՞րը... Եղևնու ճյուղքե՞րը...

Ու ձայներից մեկը շարունակեց.

— Ասա մի տեսնեմ. կարծեմ նրա աղջիկը արդեն հասած պետք է լինի... չի՞ նշանվել դեռ։

— Նա հո լավ հայտնի է իր այն կողովներով (մերժումներով), որ աջ ու ձախ բաժանում է,— պատասխանեց մյուս ձայնը.— մի քանիսներն ասում են, այդպես է վարվում, որպեսզի հիվանդ մորը մենակ չթողնի, ոմանք էլ դրա պատճառն այն են համարում, որ նա իբր թե ծածուկ սիրում է իր հորաքրոջ որդուն՝ Լեո Հելերին. դու հո ճանաչու՞մ ես նրան։

— Օ՜, ա՛յդ քերծեն,— ասաց նորից առաջին ձայնը։— Անցած շաբաթվա ընթացքում խաղի մեջ ութ հարյուր մարք էլի կորցրեց, մինչև կոկորդը թաղված է պարտքի մեջ ու դրա վրա էլ դեռ սիրուհի է պահում։ Բայց այնքան ճարպիկ է անպիտանը, որ նույնիսկ ոսկի ձուկ բռնելու ընդունակ է։— Ու ձայները հեռացան։

Պաուլը մի անորոշ, խուլ զգացմունք ուներ, որ իբր թե գետին պետք է ընկներ ու երեսը հող ու մոխրին քսեր... կոկորդը սեղմվում էր շարունակ... կարմիր քողերը նրա աչքերի առջևով վեր ու վայր էին անում... Այդպես ուրեմն, այն խեղճ գունատ ու շնորհալի տիկինը վերջապես ազատվել է տանջանքներից, նա, որ բարի հրեշտակի նման էր երևացել շարունակ ագարակում, նա, որին նա սիրել էր ու սիրում էր, քանի ապրելու էր...

Ու այժմ երբ նա արդեն մեռած էր, կորուստի ու հանցագործության ճանապարհը բաց էր։

Եվ Էլսբե՞թը... ի՞նչպես նա դողդողացել էր այդ սոսկալի ժամի համար... ի՞նչպես ինքը երդվել էր այդ բոպեին նրան մենակ չթողնել։ Ու դրա փոխարեն դարան էր մտել այժմ նա— գիշատիչ գազանի նման— արյունոտ մտքերը հոգու մեջ, նա, միակը, որի առաջ Էլսբեթի մաքուր հոգին երբեմն բացվում էր...

Մի սոսկում անցավ նրա մարմնով։ «Բայց ի՞նչ արած. մխիթարիչներ շատ կունենա անշուշտ, այնտեղ է ուրախ Լեոն, որի հետ ծածուկ սեր ունի նա— ինչպես ասում են։ նա կարող է այնտեղ իր վարպետությունը գործ դնել»։ Նա բարձր ու հեգնաբար ծիծաղեց ու երբ համոզվեց, որ էրդմանները այլևս նրանից փախչել չեն կարող, եթե նա ճանապարհին նրանց սպասի, թողեց դահլիճն հեռացավ։

Երբ նա ձմեռվա լուսնկա գիշերվա լռության միջով ա-

ռաջ էր քշում, նրա հոգու մեջ հետզհետե տիրում էր խաղաղությունը. երբ արծաթանման դաշտի վրայով «Սպիտակ տունը» մարմարիոնյա շիրիմի նման վեր բարձրացավ, դառնագին լաց եղավ։

— Բռռա՛, դու, բռռա՛, դո՛ւ, պառավ կնիկ,— մրմնջում էր նա ու ձիուն մտրակում, որ զանգերի ձայնն ավելի բարձր հնչեն։ Հուղարկավորության զանգի զողանջի նման էին հնչում այդ ձայները նրա ականջին։

Նա կանգ առավ անտառի մեջ՝ որտեղ ճանապարհը բաժանվում էր դեպի Լոտքայմ, ձին կապեց հեռվում մենակ ընկած մի ծառաբնի ու բոժոժները վայր առավ, որպէսզի ժամանակից առաջ չմատնվի զանգակների զողանջի միջոցով։ Ապա ատրճանակը հանեց նստարանի արկղից ու գնդակները փորձեց... վեց գնդակ... յուրաքանչյուրին երկու... կրկնակին չի վրիպի։

Սարսափելի ցուրտ էր ու նրա տոքերը սառչում էին։ Մահնակի հատակում կուչ եկավ նա ու բոլորովին ծածկվեց մորթե վերարկուի տակ։ Այդպես տաք ու դուրեկան էր. հետզհետե նա զգաց, որ վրան մի մեծ թուլություն է գալիս, որ կարող է նրան քնեցնել։ Բայց ամեն անգամ վեր էր թռչում քունը փախցնելու։

— Իսկի չի երևում, որ դու նրանց սպանել ես ուզում,— մրմնջում էր նա.— եթե ոչ՝ ուրիշ պետք է լիներ քո հոգեկան դրությունը։

Հանկարծ վեր թռավ նա ու կանչեց գիշերվա միջով.

— Ես ուզում եմ... երդվում եմ քեզ, մայրիկ, ես ուզում եմ։— Ու սիրտ առնելու համար մի գնդակ արձակեց օդի մեջ ու արձագանքը զարհուրելի կերպով տարուբերվեց այդ սոսկալի լռության մեջ, ու ագռավները հոգնած կռկռոցով բներից վեր թռան...

Քանի ավելի էր մոտենում այն ժամը, երբ եղբայրները տուն պիտի դառնային, այնքան ավելի աճում էր նրա երկյուղը. բայց այդ երկյուղը արյունոտ գործի համար չէր. նա դողում էր, որ հանկարծ չլինի թե վերջին վայրկյանին նրա ձեռքն ընդարմանա, նրա արիությունը կորչի, հեռանա, չէ՞ որ նրան շարունակ «վախկոտ» էին անվանում։

Կարող էր ժամի չորսը լինել, լուսինն էլ արդեն մայր մտնելու վրա էր, հանկարծ հեռվում զանգակի ձայներ լսվեցին — սկզբում կամաց ու մեղմ, ապա բարձր ու ավելի բարձր։ Նա թռավ ցածի ճանապարհի վրա, որը բավական դատարկվել էր փչող քամու պատճառով ու պառկեց գետնի վրա։ Սահնակը մոտենում էր անտառի ճանապարհին— նրա մեջ նստել էին մուշտակների մեջ փաթաթված երկու պարոններ,— նրանք էին... բայց ի՞նչ երկար էր տևում...

Սահնակը դանդաղորեն, քայլ առ քայլ մոտենում էր։ Բուժոժները թույլ կերպով էին զնգզնգում ու սանձերը ձիու լանջով թույլ կերպով ընկել մնացել էին։ Եղբայրները խոմփացնում էին... անզեն ու անպաշտպան նրա ձեռքն էին մատնված։

Արագությամբ առաջ թռավ նա, սանձերի մեջ մտավ ու փոկը լծափայտից արձակեց։ Սահնակը կանգ առավ— բայց նրա տերերը շարունակում էին քնել։

Նա կանգնեց նրանց առաջ ու անթարթ նրանց էր նայում։ Այն ձեռքը, որով ատրճանակը բռնել էր, ուժգնորեն դողում էր։

— Ի՞նչ անեմ հիմա ես սրանց,— մրմնջաց նա.— քնած տեղերը հո չեմ կարող սպանել։ Երևի հարբած էլ կլինեն, եթե ոչ վաղուց արթնացած կլինեին։ Ամենալավն այն է, որ այսօր թողնեմ գնան ու մի ուրիշ անգամվա սպասեմ։

Հենց ուզում էր ձին դարձնել լծափայտին կապել, մեկ էլ գնդակի նման ծակեց նրա գլուխը այն միտքը, որ նա մայրիկին խոստացել է նրանց սպանել...

«Ես գիտեի, որ ողորմելի վախկոտի մեկն եմ,— մտածեց ինքն իրեն,— ու երբեք չեմ ունենալու պահանջված քաջությունը։— Նույնիսկ մեկին սպանելու համար անպետք եմ»։

— Բայց չէ՛, այժմ պետք է որ անեմ,— մրմնջաց նա, երկու քայլ ետ ետ գնաց ու նշան բռնեց ուղղակի Ուլրիխի կրծքին, բայց լեզվակը չլարեց, որովհետև ներքուստ վախենում էր, որ նրան չվիրավորի հանկարծ։

«Արդյոք կկարողանա՞մ սիրտ անել», մտածում էր նա, այդ դիրքի մեջ մի պահ կանգնած։ Ու ապա սկսեց պատկերացնել թե ինչ կլինի, եթե նա անի ու այդ երկուսը մեռած

իր առջևն ընկած լինեն։ «Այն ժամանակ կամ ես ինձ էլ կգընդակահարեմ ու թշվառության մեջ կթողնեմ հորս ու քույրերիս, կամ թե ես ինձ չեմ գնդակահարի, այլ արդարադատության ձեռքը կհանձնեմ. այդ դեպքում մեր տան թշվառությունը նույնքան մեծ կլինի։ Երկու դեպքում էլ խելագարություն է,— այսպես վերջացրեց նա իր խորհրդածությունը.— բայց պիտի անեմ...»։

Ու հանկարծ Ուլրիխի մուշտակի տակից նկատեց նրա կրծքի վրա փայլուն օրդեններ, որոնք նա ստացել էր կանանցից կոտիլլոն պարի ժամանակ։

«Ուրիշներից օրդեններ են ստանում,— մտածեց նա,— մինչդեռ քույրերս տանը ամոթի ու թշվառության մեջ են նստած»։

Նրա ներսում եռալ սկսեց կարծես ու նա սկսեց զգալ, որ համենայն դեպս անելու է։

— Բայց ամենից առաջ ես ուզում եմ նրանց հետ դեռ մի խոսել,— շշնջաց նա. բռնեց Ուլրիխի թևից ու այնպիսի ուժգրնությամբ թափահարեց նրան, որ նրա գլուխն այս ու այն կողմը տատանվեց։

Ուլրիխն իսկույն զարթնեց ու երբ Պաուլի մռայլ կերպարանքը իրեն բոլորովին մոտ՝ ատրճանակը ձեռքին նկատեց, սկսեց կողկողագին ու բարձր աղաղակել։ Այժմ զարթնեց նաև մյուս եղբայրը ու երկուսով իրենց պաշտպանելու համար թևերը դեմ պահեցին։

— Ի՞նչ ես ուզում,— գոչեց մեկը։

— Մի սպանիր մեզ,— աղաղակեց մյուսը։

— Ատրճանակը մի կողմ ձգիր. խղճա մեզ, խղճա։

Ձեռքերը ծալած ուզում էին ծնկաչոք աղաչել, եթե մուշտակները չխանգարեին նրանց։

Պաուլն ապշած չափում էր նրանց։ Ցուր ամբողջ կյանքի ընթացքում նա նրանց հանդուգն ու խիզախ էր տեսել միշտ, այնպես որ այժմվա ողորմելի վիճակով նրանք բոլորովին՝ անծանոթ մարդիկ թվացին նրան։ Ներքուստ ցանկանում էր, որ նրանք էլ դանակ հանեին նրա դեմ, որպեսզի պատվավոր կռվի մեջ կարողանա ատրճանակը բանեցնել։ Ու հանկարծ նրա գլուխն հետևյալ միտքն եկավ. «Եթե դու նրանց հետ ա-

ռաջ դոնե մի անգամ այս կերպ վարված լինեիր, շատ դառն ժամեր չէիր ունեցած լինի, և ամենից առաջ չէր լինի քույրերիդ այս խայտառակությունը»։

Այդ միջոցին Ուլրիխն աշխատում էր նրա ծնկներին փաթաթվել, իսկ Ֆրիցը շարունակ բղավում էր.

— Խղճա մեզ, խղճա։

— Դուք շատ լավ գիտեք, թե ինչ եմ ուզում ձեզանից,— ասաց Պաուլը, որն իրեն աղատված էր զգում այժմ ամենայն տեսակի վարանումներից ու տատանումներից ու սառն վճռականությամբ հետևում էր նպատակին։

— Ի՞նչ ես ուզում, ասա՛, ի՞նչ ես ուզում. կկատարենք ամեն բան, ինչ որ ցանկանաս,— բղավում էր Ուլրիխը, և Ֆրիցը, որ խելացի կերպով եղբոր հետևում պատսպարվել էր, կարծես լեզուն կորցրել էր։

— Դուք պետք է ձեր խոսքը կատարեք, ինչպես որ ես եմ կատարելու,— ասաց Պաուլը,— ես շատ կուզեի, որ դուք մի փոքր արիություն ունենաիք ձեզ պաշտպանելու, որպեսզի վերջապես մի անգամ մաքրել կարողանայի ձեզ հետ իմ հաշիվները... բայց կարելի է այսպես ավելի լավ է... ու այժմ կրկնեցեք, ինչ որ ես ձեզ կթելադրեմ.— Երդվում ենք աստուծով և մեր մոր հիշատակով, որ մենք երեք օրվա ընթացքում կկատարենք մեր խոստումը, որ մենք քո քույրերին տվել ենք։

Դողդողալով ու կակազելով կրկնեցին այդ խոսքերը։

— Ես էլ ձեզ երդվում եմ աստուծով ու իմ մոր հիշատակով,— ասաց Պաուլը,— որ ես ձեզ կգնդակահարեմ որտեղ և ինչպես որ ձեզ պատահելու լինեմ, եթե դուք ձեր երդումը սուրբ կերպով չպահեք։ Այդպես... այժմ կարող եք գնալ... Նստած մնացեք. ես ինքս կլծեմ ձին... Նստած մնա՛լ,— կրկնեց Պաուլը, երբ նրանք այնուամենայնիվ ուզում էին նրան օգնել։

Նրանք այլևս չշարժվեցին, այնքան հնազանդ էին այժմ։ Ու երբ ամեն բան պատրաստ էր, մեծ քաղաքավարությամբ ասացին նրան «բարի դիշեր» ու հեռացան։

— Այդպես լավ կլինի,— մրմնջաց նա ու դնդակները ձյունի մեջ նետեց ու սահնակի հետևից նայեց։— Եթե ար-

դարությանն ու պատվազգացությանն ճանապարհով գնալու լինես ու աշխատես ամեն բանի բարությամբ պատասխանել, քեզ վախկոտ կանվանեն ու քեզ հետ կվարվեն իբրև շան հետ։ Բայց եթե դու ինքդ ուրիշների հետ վարվես, իբրև շների, հենց առաջուց առանց մտածելու անգամ թե իրավացի կամ անիրավ տեղը, քեզ քաջ կանվանեն ու արի, ամեն բան կհաջողվի քեզ ու դյուցազն կլինես դու։ Այդպես լավ եղավ... այդպես լավ կլինի։

Հետևյալ առավոտը սայլատան հետևում ձյունի մեջ կանգնել էր նա ու դեպի Հելենինթալի կողմն էր նայում, որտեղ մի տխուր հուղարկավորություն էր պատրաստվում։ Երկու անգամ ախոռ գնաց, որ ծառաներին պատվիրի սահնակը լծել ու երկու անգամն էլ խոսքը կոկորդումն էր մնացել։

Ու այժմ նա կանգնել էր այնտեղ, ձեռքերը ծալած նայում էր ինչպես սպիտակածածկ դաշտի միջով մի սև երկար օձանման գիծ էր բացվել, որ ավելի ու ավելի փոքրանում էր ու վերջապես անտառի հետևում անհայտացավ, որովհետև Հելենինթալի գերեզմանատունը բավականին հեռու էր ընկած՝ քաղաքի ճանապարհի վրա։

«Ինչքա՜ն լավ կլիներ,— մտածեց նա,— եթե նրան էլ երեք եղևնիների տակ թաղեին. այն ժամանակ մայրիկս լավ հարևան կունենար...»։

Նա սարսափեց, որովհետև կայծակի արագությամբ սկսեց երևակայել, թե այդ դեպքում ինչպես նա գարնանային երեկոները ամեն օր Էլսբեթի հետ կարող էր պատահել—չէ՞ որ նա էլ կգար այցելելու իր մոր գերեզմանը, ինչպես որ ինքը։

«Բայց հենց այսպես լավ է, ինչպես որ է,— ասաց ինքն իրեն.— ինչպե՞ս կարող էի սիրտ անել նրա երեսին նայել... ես, որ գիշերները դարան եմ մտնում ճանապարհներին, որ իմ անպիտան քույրերին մարդու տամ»։

Այդ միջոցին իսկույն վրա պրծան երկվորյակները շնչասպառ. նրանք ամբողջ մարմնով դողում էին ու կարծես խոսք էին որոնում։

— Ի՞նչ կա, երեխեք։

Գրետեն գլուխը պահեց նրա ուսերի հետևում, իսկ Կետեն

խոր շունչ քաշեց, նման մի երեխայի, որ ուզում է լաց լինել։

— Նրանք եկել են,— թոթովեց նա, ու ապա երկուսով սկսեցին հեկեկալ։

— Լավ,— ասաց Պաուլը ու համբուրեց նրանց։

— Դու չե՞ս ուզում ներս գալ,— ասաց Կետեն ծծելով գոգնոցը։

— Ո՞րտեղ տեսաք նրանց։

— Նրանք հայրիկի հետ խոսում են։

— Ա՜հ, այդ արդեն այլ բան է։ Գնացեք ձեր սենյակը ես իսկույն կգամ։

— Ու այդ ամենը ի՞նչ գնով,— մրմնջում էր նա, նայելով քույրերի հետևից. ապա մի հայացք էլ նետեց դեպի Հելենինթալ ու դիմեց դեպի սայլատուն, որտեղ կանգնած էր «սև Զուզեն»։— Ժամանակն է այժմ, որ դու կյանք առնես,— ասաց նա, շոյելով նրա սև մարմինը. մենք պիտի լավ աշխատենք, անխոնջ ու անհանգիստ— դու և ես, եթե դրանց օժիտը տալ ենք ուզում։

Երբ տուն մտավ, հոր բարձրագոչ ձայնը ականջին կը պավ։

— Հետաքրքիր է, տեսնեմ նրանք իրենց ինչպես կպահեն,— ասաց նա ու ականջ դրեց։

— Այո, պարոններ, նա անպիտանի մեկն է, անպիտան էլ կմնա։ Ինչ որ ես հոյակապորեն ու մեծ ծրագրել եմ, նա իր մանրավաճառի ու փոքր եղանակով է կատարում միայն։ Սիրտս ուզում էր դուրս գալ մարմնիցս, երբ տեսա, թե նա ինչպես մեքենայի չորս բորոտը շուռումուռ է գալիս, առանց բան հասկանալու։ Ու տնտեսությունն էլ օրեցօր ետ է գնում։ Օ՜, պարոններ, տեսնում եք, ես այժմ լոկ մի հաշմանդամ եմ, մի խեղճ, կորստի մատնված հաշմանդամ. բայց կառավարության ղեկը եթե էլի ձեռս անցներ, հաղարներ կհանեի գետնից, ինչպես Վանդերբիլդը, այն ամերիկացին, որի կենսագրությունը ահա այս օրացույցի մեջ այդքան խրատի եղանակով նկարագրված է։

— Չե՞ք կարող միթե դարձյալ ձեր աթոռից վարել բոլոր գործերը,— հարցրեց Ուլրիխի ձայնը։

— Օ՜, պարոններ, տեսեք իմ արտասուքները։ Ես այդ արցունքները թափում եմ ամենաանշնորհակալ, ամենաանխոհեմ որդու վրա, որ աշխարհում գոյություն ունի։ Այս օրացույցի մեջ մի որդու պատմությունը կա, որը անապատի մեջ ծարավից մեռնող իր ծնողների համար կյանքի վտանգով ավազակների ձեռքից մի քիչ ջուր է խլում ու տանում նրանց տալիս։ Բայց ի՞նչ է անում սա... իմ որդին։ Պարոններ, որովհետև այստեղից չեմ կարող վեր կենալ, որ ձեզ գոնե մի բաժակ օղի առաջարկեմ, չամանի ու կոճապղպեղի օղի, որ ես այդքան սիրով խմում եմ։

— Մի ուրիշ անգամ գալերուս կբերենք ձեզ,— հավատացրեց Ֆրիցը։

— Օ, ինչու ասված ինձ էլ երկու այդպիսի որդիք չէ՞ ընորհել, ինչպես դուք եք։ Տեսեք, նա ինձ երբեք բան չի հարցնում, խոհանոցը փակում է առաջս, զարմանում եմ, որ ես դեռ քաղցածությունից չեմ մեռել։ Բայց դե դուք նրան երեխայությունից գիտեք, չէ՞ որ նա միշտ մռայլ, նենգ մարդու մեկն էր։

— Օ, այո, նա իր մեջ միշտ ինչ-որ մի կատաղի անզուսպ բան ուներ,— ասաց Ուլրիխը։

— Ու ատրճանակներով ու մտրակներով էր գործում,— վրա բերեց Ֆրիցը,— մանավանդ հետևից։

— Մանավանդ հետևից, հա, հա, հա... դա նրան շատ հարմար է գալիս, դա հենց նրա ձևն է։ Օ՜, պարոններ, ուրիշին հոր փորողը ինքը մեջը կընկնի— ասում է մի առած այս օրացույցի մեջ. ու եթե երկինքը ինձ մեկ էլ առողջացնի, այն ժամանակ կտեսնեք, թե ես ինչպես վրեժ կհանեմ, նախ այն սրիկայից, այն հրդեհածիգից, այն ստահակից, որ իմ ամբողջ դժբախտությանս իսկական պատճառն է և ապա իմ պարոն որդուցս, որ իր հորն այդպես վատ է նայում... Պիտի նրան ժառանգությունից զրկեմ, ագարակից դուրս վռնդեմ... իրավացի չե՞մ լինի, եթե այդպես վարվեմ, պարոններ։

— Բոլորովին իրավացի,— հայտարարեցին երկուսով։

— Բարև ձեզ,— ասաց Պաուլը առաջ գալով...

Երեքով էլ տեղներում սարսափեցին։ Հայրը վախկոտ կերպով կծկվեց իր բազմոցի մեջ— նման մի շան, որ ծեծից է

վախենում— եղբայրները շատ հուզված ու խոնարհացած մեկնեցին ձեռքերը ու խնդրեցին ամեն բան մոռացված հաշվել։

— Ինչո՞ւ չէ,— ասաց նա իր զայրույթը զսպելով,— այժմ դուք հո իսկական ճանապարհը գիտեք։

Երբ երկու եղբայրները աղջիկների ձեռքը խնդրեցին, Ծերունի Մայհյոֆերի մեծամոլության տենչը էլի բռնեց նրան։

— Պարոններ,— ասաց նա ձայնը կոկորդի մեջ սեղմելով, որպեսզի ավելի վայելուչ հնչի,— ձեր առաջարկությունը, ինչ խոսք, որ ինձ համար մեծ պատիվ է, բայց ես չեմ կարող գրան այո-ով պատասխանել։ Նախ խնդրում եմ ձեզ, որ ինձ կատարյալ երաշխավորություն տաք, որպեսզի իմանամ, թե ինչ է լինելու իմ աղջիկներիս ապագան. իմ աղջիկներս իրենց գեղեցկությամբ, սիրալիրությամբ, ինչպես և անբիծ առաքինությամբ փայլուն ապագայի համար են ստեղծված։ Ես նրանց այնպես խնամքով եմ մեծացրել ու այնպես սիրով պահպանություն արել, որ իմ հայրական սիրտը չի կարող վճռել՝ նրանց դուրս թողնել առանց այլևայլության։

Ու այդ եղանակով պոռոտախոսում էր նա, մինչև որ Պաուլը հանգիստ կերպով ասաց.

— Թող, հայրիկ, խնդիրն արդեն վերջացել է։— Ու նա լռեց, ներքուստ չափազանց բավական, որ այդպիսի մի փայլուն ճառ է ասել...

Ճաշից հետո քույրերի առանձնասենյակը գնաց ու ասաց նրանց.

— Երեխեք, մի «Հայր մեր» ասացեք. տիկին Դուզլասին թաղեցին այսօր։

Քույրերը նայեցին նրան իրենց մեծ, ուրախությունից փայլող աչքերով, ու նրանց շրթունքներով մի երազանման ժպիտ անցավ։

— Չհասկացա՞ք ինձ,— հարցրեց Պաուլը։

— Այո,— ասացին նրանք մեղմությամբ ու սարսափեցին ու իրար կպան, կարծես ճիպոտից էին վախենում։ Նա մենակ թողեց նրանց իրենց բախտի հետ ու ինքը դուրս եկավ պարզ ու սառը ձմեռվա դաշտը։ «Ի՞նչպես բացատրել, որ այժմ բոլորն ինձանից վախենում են,— մտածեց նա.— ու ոչ ոք չի հասկանում, թե ինչ եմ ասում ես»։

Նույն օրը նա գրեց վարպետին, որ առավոտը գա, աշխատանքը վերսկսի...

Նույն շաբաթվա մեջ հալքն ընկավ սառած դաշտերում ու այդպիսով գործի հաջողությանը մեծ զարկ տվեց։ Մարտի սկզբներին մի ուրբաթ երեկո «սև Զուզեն» արդեն բոլորովին պատրաստ կանգնեց իր նոր տարազով։ Հետևյալ առավոտը կաթսան պիտի փորձեին, դրա համար էլ սայլատան պատերի մոտ արդեն դարսված, պատրաստված էր հարկավոր փայտն ու քարածուխը։

Անքուն կերպով շուտումուտ էր գալիս Պաուլն յուր անկողնի մեջ։ Ծանր, անտանելի ծանր էին անցնում ժամերը, դանդաղ տանջանքների մի ամբողջ հավիտենականություն կար կարծես կեսգիշերվա ու արշալույսի մեջ...

«Արդյոք սա պիտի կենդանանա՞, արդյո՞ք...»։

Ժամը մեկը խփեց ու Պաուլը այլևս չկարողացավ համբերել. հագնվեց ու լապտերը ձեռքին դուրս եկավ դեպի խոնավ սառը բակը։ Քամին խփում էր նրա շորերին ու մանր անձրևը նրա երեսին։

Մութ սայլատնից նրան էր նայում «սև Զուզեն», կարծես զարկացած, որ գալիս են յուր վերջին հանգիստը խանգարելու։ Ճրագի լույսը ուրվականի ստվերներ էր առաջ բերել բակում, որոնք վայրի պարով խաղում էին նրա աչքերի առաջ։

«Արդյոք զարթեցնե՞մ վարպետին,— մտածեց Պաուլը.— ոչ. թող նա քնի. ես ուզում եմ միայն ինձ համար լինի առաջին տրախությունը կամ առաջին ցավը»։

Շառաչելով քարածուխը թափվեց սև կրակարանը։ Կապտավուն մի բոց դուրս թռավ, լեզուներ կազմեց շորս կողմը ու շուտով կարմիր փայլը բռնեց ամբողջ տարածությունը... Աղոտ կերպով փայլում էր պատից կախված ճրագը, կարծես նախանձելիս լիներ այդ տաք ուրախ կրակին։

Պաուլը նստեց քարածուխի կույտի վրա ու դիտում էր բոցերի այդ խաղը... կրակարանի դուռը սկսեց շիկանալ ու երկաթի փտած կտորները ժանգաձև վայր թափվեցին։

Պաուլը յուր սրտի բաբախյունը լսում էր ու երբ ուզում էր ձեռքը կրծքին դնելով մի փոքր հանգստացնել սիրտը,

այնտեղ, կրծքի գրպանում զգաց էլսբեթի սրինգը։ Աշխատանքը վերսկսելու օրը սրինգը ընկած էր եղել լոկոմոբիլի վրա ու Պաուլը վերցրել, դրել էր գրպանը. այդ օրվանից շարունակ գրպանումն էր պահում։

«Արդյոք սա էլ պիտի սովորե՞մ ածել», հարցրեց նա, մինչև այժմ ձեռք բերածի համար երկչոտ կերպով ուրախանալով։ Սրինգը դրեց բերանին և ուզում էր փչել... բոպեներն անսահմանորեն դանդաղ էին անցնում, ժամանակը մի կերպ պետք է աննկատելի դարձներ։ Բայց նրա դուրս բերած հընչյունները ճչող ու աններդաշնակ էին ու ոչ մի եղանակ չէր հաջողվում։

«Չէ՛, էլ չեմ կարող սովորել,— մտածեց նա։— Ինչ որ ինձ համար եմ անում, չի հաջողվում. դա արդեն օրենք է իմ կյանքի համար։ Ուրիշների համար պիտի ցանեմ, եթե ուզում եմ հնձել ինձ համար»։

Բայց և այնպես սրինգը դարձյալ շրթունքներին դրեց «Ինչքա՞ն լավ կլիներ, եթե ես արվեստավոր դարձած լինեի, ինչպես որ էլսբեթը գուշակել էր— փոխանակ այստեղ մեքենաներ տաքացնելու»։ Հուզմունքի մի սարսուռ անցավ նրա մարմնով։

«Արդյոք պիտի կենդանանա՞, արդյո՞ք»...

Մի նոր գոռացող հնչյուն դուրս բերեց նա սրնգի միջից։ «Չէ,— ասաց նա,— սա իմ բանը չէ. սիրելն ու սրինգ ածելը ուրիշներին պիտի թողնեմ»։

Ու այդ բոպեին «սև Զուզեի» ներսում բարձրացավ մի խորհրդավոր երգ, որը այդքան տարիների ընթացքում հավատարիմ կերպով նրա հիշողության մեջ էր մնացել։ Կարծես բախտի քույրերն էին հացեն ու տակ երգում։

— Հա՞, սա ավելի լավ երաժշտություն է,— բացականչեց նա վեր ցատկելով ու սրինգը մի կողմ նետեց...— Երկաթե դուռը գոգոում էր... Շիկացած կրակի մեջ ածուխի նոր շերտեր լցվեցին... թիակը շառաչելով թռավ մեքենայից։

— Տնեցիք հիմա կզարթնեն,— ասաց նա մի բոպե սարսափած։— Բայց թող զարթնեն, թող զարթնեն... չէ՞ որ նրանց բախտի, նրանց ապագայի համար է...

Մեքենայի երգը գնալով բարձր ու ավելի բարձր էր հընչ-

լում, ու նրա վրա հանկարծ այնպիսի մի ոգևորություն եկավ, որ նա բարձր սուլել սկսեց.

— Ինչքա՜ն լավ է հնչում այսպես... մենք լավ երաժիշտներ ենք, չէ՞, Զուզե։

Ծիանելուզից սև գոլորշու ամպեր էին, որ վեր էին բարձրանում, որոնք հովանոցի պես կտուրի տակ տարածվում էին... Պատուհաններից մեկը կարծես մի մեղմ— ճչան ձայն հանեց... ու մի ճերմակ շոգեամպ վեր թռավ, որ արագությամբ սև ծխի հետ միացավ... Ճիչը ավելի ու ավելի էր բարձրանում ու շոգեշափը ավելի ու ավելի բարձր էր ցույց տալիս...

— Այժմ արդեն ժամանակն է...

Դողդոջուն ձեռքերով կպավ նա լծակին... մի ոստյուն... մի ճոճում... ու անիվը փոթորկելով— կարծես հոգիներից քշված— սկսեց իր պտույտը...

— Հաղթությո՜ւն, կենդանի՞ է... ապրո՞ւմ է։

Այժմ թող գան. թող լսեն... նրա ձեռքը պինդ դրած է շոգեսուլոցի լեզվակին ու շոգու աղաղակը լուռ գիշերվա մեջ հայտարարում է.

— Ես կենդանի՞ եմ, ես ապրո՞ւմ եմ։

Նա ծալեց ձեռքերն ու մեղմ մրմնջաց.

— Օ՜, մայր իմ, դու տեսած պիտի լինեիր։— Ու երբ նա այս խոսքերն արտասանեց, նրան թվաց հանկարծ, որ այս էլ ավելորդ է, որ դրա մեջ էլ թաքնված է մահն ու շշնջում է նրա ականջին։

— Դու կմեռնես, դու կմեռնես... առանց ապրած լինելու։

— Ես դեռ անելու բան շատ ունեմ,— ասաց նա խոնավ աչքերով։— Նախ ուզում եմ քույրերիս բախտավորեցնել... Դրովհետև եթե աղքատ մնան, անսիրտ կերպով կվարվեն մարդիկ նրանց հետ, ապա ուզում եմ ագարակը պերճացնել, փառավորեցնել... թող այն ժամանակ նա գա...

Ու նրա չորս կողմի սև ամպերի նման նրա հայացքների առաջն ելան բարձրացան հոգսի, ստրկության, տառապանքի տարիները։

Տան ծառաներն ու կենդանները քնած աչքերով հետզհետե երևան եկան սայլատան դռան առաջ. երևացին և քույրերը,

որոնք ծխի ու բոցերի փայլի տակ վախեցած իրար էին սեղմված, կարծես մի ցողունի վրա բուսած երկու դժգույն վարդեր լինեին։

— Այստեղ ձեր ապագան է պատրաստվում, դուք, խեղճեր,— մրմնջաց Պաուլը նրանց նայելով։

Երբ վարպետն եկավ դարձի գլուխ անցավ, Պաուլը գնաց հոր ննջարանը։

— Հայրիկ,— ասաց նա համեստորեն, թեև հպարտությունից ուռել էր նրա սիրտը.— լոկոմոբիլը արդեն կարգի է բերված, հենց որ հողը աղատվի սառույցից, աշխատանքները կարող ենք սկսել։

Մերունին պատասխանեց.

— Հանգիստ թող ինձ,— ու շուռ եկավ մյուս կողմը...

Երբ հետևյալ օրը լոկոմոբիլը դուրս բերին, սայլատան շեմքին մի ճռռոց լսվեց։

— Անիվների տակ մի բան է մնացել,— ասաց վարպետը

Պաուլը նայեց, տեսավ որ այնտեղ ընկած էր, ջարդուփշուր եղած, Էլսբեթի սրինգը։

Մի դառն ժպիտ անցավ նրա դեմքով, կարծես ուզում էր ասել։ «Այժմ արդեն իմ ունեցած վերջին բանս էլ քեզ զոհ բերեցի, այժմ կարող ես գոհ լինել ինձանից, դու, անգութ հոգս»։

Այդ օրվանից նրան թվում էր, որ Էլսբեթի ու յուր մեջ եղած վերջին կապն էլ կտրվել էր։ Էլսբեթին էլ նա կորցրել էր, ինչպես յուր երազները, յուր հույսերը, յուր արժանիքը... յուր սերը...

Աղմուկ աղաղակով դուրս բերին «սև Ջուզեին» դեպի ճահիճը։

19

Տարիներ անցան։ Քույրերը վաղուց արդեն ապրում էին ինչպես բախտավոր կանայք են ապրում. նրանց օժիտն էլ արդեն վճարված էր. իսկ փեսաներն էլ Պաուլից սկսել էին փոխառություններ անել։

Ինչքա՞ն հանգիստ ու լռակյաց էր դարձել այժմ ագա-

ռակը. հայրը թեև նեցուկի վրա հենված տան ու պարտիզի չորս կողմերը ման էր գալիս, բայց սաստիկ թուլացել ու ծուլացել էր, որ մեկ էլ ղեկը ձեռքը առներ։ Պաուլը նրա համար ուրիշ բան չէր անում — բայց եթե նրա սիրած կերակուրներն էր պատրաստել տալիս — չամանի ու կոճապղպեղի օղին բավականին առատությամբ դնել էր տալիս նրա առաջը ու յուրաքանչյուր Ծննդյան տոնին նրան մի նոր օրացույց էր ընծայում։ Դրանով էլ կարող էր իսկապես գոհ մնալ այդ ծերունին, որովհետև իրոք կարիք չուներ ուրիշ բանի — նույնիսկ ծուլանում էր մի անգամ քաղաք գնալ, բայց քանի նա հաստատում, փարթամանում էր, այնքան նրա տրամադրությունը դառնանում, մռայլվում էր։ Ժամերով նստած մնում էր միևնույն տեղում ու զարհուրելի էր տեսնել, թե նա ինչպես ատամները կրճտացնում է ու բռունցքները սեղմում։ Նրա մեջ մտել արմատացել էր այն միտքը, թե յուր հարազատ որդին նրան դիտավորյալ կերպով ճնշում է, որպեսզի նրա մեծ ծրագրերի փաթը ինքը վաստակի. ու քանի մեծ եկամուտ էր բերում ճահիճը, այնքան կատաղած հաշվում էր նա, թե ինչքան մեծ օգուտ կարող էր ստանալ նա յուր ակցիոներական ընկերության միջոցով։

Բայց նրա հոգու ամենամթին խորքերում մի ուրիշ բան էլ էր աճում — մի վրեժի ծրագիր Դուգլասի դեմ, որը նա ծածկարար մտածում էր ու յուր ամենամեծ գաղտնիքն էր համարում։ Նույնիսկ նրա փեսաները, որոնց նա ուրախությամբ յուր սիրտը բաց էր անում, բան չգիտեին այդ գաղտնիքի մասին։ Ուլրիխը մի անգամ Պաուլին ասաց.

— Ուշադրություն դարձրու, մեր ծերը Դուգլասի դեմ ինչ որ մի բան է նյութում։

— Ախ, ինչ պիտի լինի, — պատասխանեց Պաուլը ըստ երևույթին անհոգ կերպով. բայց նա էլ այդ մասին շատ էր մտածել։

Բութ ու անկգա ապրում էր Պաուլն յուր օրերը։ Նրա ամբողջ կյանքը կլանվել էր փող ու ինչք ձեռք բերելու հոգսերի մեջ, բայց ձեռք բերածի մեջ երբեք ուրախություն չէր գտնում։ Այժմ չկար նրա համար մեկը, որին նա բախտավոր դարձնելու պարտավոր զգար իրեն. բայց և այնպես աշխա-

տում էր, առանց իմանալու ինչու, ինչպես երկրագործի ձին, որ քաշում է փոկից առանց իմանալու ինչ է անում այն գութանը, որից նա ձգում է։ Շատ անգամ ամիսներ էին անցնում ու նա ոչ մի հայացք չէր ձգում յուր ներսը։ Չէր էլ սուլում այլևս։ Նա երկյուղ էր կրում այն տանջանքներից, որ նա ստանալու էր հիշողություններից. ու այն ժամանակները, երբ նա եղանակներով ու հնչյուններով ինքը յուր հետ խոսում էր. նրան թվում էին այժմ մի կորսված դրախտ...

Շատ անգամ մի անտանելի դառնություն էր գալիս վրան, երբ համեմատում էր յուր անքուն գիշերների, յուր հոգսերի, յուր աշխատանքի նպատակը յուր արած զոհաբերության հետ։ Նրան թվում էր, թե դա անսահմանորեն մի մեծ, հրաշարտ ու բախտ բերող բան պիտի եղած լիներ, միայն թե դրա համար հարմար անուն չէր կարող գտնել։

Ու այս մտատանջություններից ավելի լավ նա ազատվում էր ամբողջ գլխով նետվելով աշխատանքի մեջ ու երկար ժամանակ էր անցնում, մինչև որ այդ հիվանդությունը նրան նորից բռներ։

Ագարակը տարեցտարի ճոխանում, առաջ էր գալիս։ Դուգլասի պարտքը վաղուց տրվել էր, դաշտերը, արտերը ծաղկած վիճակի մեջ էին ու մարգերում ազնիվ տեսակի տավարն էր արածում։ Ամբողջ ագարակը նոր տարազ պիտի ընդուներ։ Բնակարանը, գոմն ու շտեմարանը, բոլորը հիմքից պետք է վերաշինվեին։— Ու մի գարուն օր ագարակի բոլոր ծայրերում եռանդուն աշխատանքն սկսվեց. բնակարանը քանդեցին. Պաուլն յուր համար ժամանակավոր փայտյա մի տնակ շինել տվեց, իսկ հորը հեշտությամբ համոզեց փեսաների մոտ գնալ։

— Ես էլ ետ չեմ դառնա,— ասաց նա մնաս բարովի ժամանակ.—ես էլ չեմ կարող քո խելագար գործերը տանել։— Բայց առաջինը, որ աշնանը վերադարձավ, էլի նա էր։ Հարմարավոր կերպով նա դարձյալ տեղավորվեց իր բազկաթոռի մեջ ու դրանից հետո իր հայհոյանքների ցանկի մեջ փեսաների անուններն էլ ավելացրեց։ Իհարկե, փեսաները չէին կարող այդ աղտոտ ծերունուն երկար համբերել։

— Այժմ աշխարհի վրա այլևս տեղ չունեմ, որտեղ կա-

բողանամ ալևոր գլուխս հանգստացնել,— մռմռում էր նա ծույլ կերպով մեկնվելով փափուկ բարձերի մեջ։

Հաջորդ գարնանը հերթը հասավ տնտեսատներին, հատկապես շտեմարանը պետք է փառահեղորեն շինվեր, իբրև կենդանի հուշարձան այն ստսկալի գիշերվան, որը մոր մահվան ամենամեծ հարվածն էր տվել։

Դաշտով անցնող գյուղացին կանգ էր առնում մոտիկից դիտելու այն մաքուր գեղեցիկ շենքերը, որոնց աղյուսածածկ կտուրները հեռվից արդեն փայլում էին. շատերը խորհրդավոր կերպով թափահարում էին գլուխներն ու հին առածը հիշում.

Շինել և փոխ առնել.
Հազար հոգսերի դուռ բաց անել։

Դրսում, ճահիճի վրա «սև Զուգին» ժայթքում էր յուր սև ամպերը, կտրիչ մեքենայի դանակները խոր թափանցում էին գետնի մեջ ու ճնշիչը դանդաղորեն ու լուռ առաջ էր տանում յուր գործը, բարի անասունի նման։ Նորաշեն սայլատունը իր ճերմակ պատերով փայլում էր արևի ճառագայթների տակ ու չորս բոլորը բարձրանում էին պատրաստի տորֆի երկար, սև պատերը։ Աղյուսները պինդ էին ու ծանր և մեծ քանակությամբ ածուխ էին պարունակում իրենց մեջ։ Հեշտությամբ նտ էին վանում ամեն մի մրցակցություն ու մեծ անուն էին ձեռք բերել մինչև նույնիսկ Քյոնիկսբերգում։

Պաուլը, որ այժմ յուր գործերի համար արած ճանապարհորդությունների միջոցին շատ օտար մարդկանց հետ էր ծանոթանում, պատվավոր, խելացի մարդու հռչակ էր ձեռք բերել ու պատկառելի մեծանուն կալվածատերերի կողմից հարգվում էր, իբրև իրենց հավասարներից մեկը։ Բայց դա նրան չէր ուրախացնում։

Երբ բարեկամաբար նրան ձեռք էին տալիս ու գործերի, ձեռնարկությունների մեջ հաջողություն ցանկանում կամ խնդրում, որ իրենց այցելի, լուռ կերպով ինքն իրեն հարցնում էր. «արդյոք չի՞ ծաղրում ինձ»։ Ու թեև շատ լավ էր տեսնում, որ լուրջ էր այդ բոլորը, բայց և այնպես իրեն մրցակցավանջից ազատվածի պես էր զգում, երբ նրանք հեռանում էին։

«Հապա ո՞ւր էին դրանք առաջ, ինչո՞ւ չէին գալիս այդ բարեկամները,— ասում էր ինքն իրեն.— այն ժամանակ երբ ես կարիքի մեջ էի, երբ յուրաքանչյուր լավ խոսքից կարող էի օգտվել... այժմ ես արդեն մեռած եմ, ինչպես մի փայտ... այժմ շատ ուշ է»։

Բայց նրա փառասիրությունը ավելի ու ավելի առաջ էր գնում։

Այդ տարին, դա մոր մահվան յոթերորդ տարին էր, երկինքն այնպես առատությամբ թափեց յուր ողորմությունը դաշտերի ու մարգերի վրա, արևն ու անձրևը այնպիսի շռայլությամբ շնորհեց, ամեն մեկը իր ժամանակին, որ մարդիկ այդքան բարիքներից գլուխները կորցրած ներքին մի խուլ երկյուղով հարցնում էին իրար. «մի՞թե կարող է այս ամենը բարի բանի նշան լինել»։

«Էլի մի բան կգա անպատճառ, կարկուտ կամ դրա նման մի այլ բան», մտածում էր Պաուլը, որի միտքը միշտ պատրաստ էր ամենավատ հնարավորությունների համար։ Բայց ոչ. աշնարակի նման բարձած սայլերը մեկը մյուսի հետևից դաշտից շտեմարան էին դիմում ու ոսկեգույն հասկերը մեքենայի տակ հատիկների դեզերի էին փոխվում, մինչև շտեմարանը մինչև կտուրը լցվեց։

Բայց Պաուլն այստեղ էլ չէր գտնում ուրախություն։ Քանի դիզվում, կուտակվում էին նրա ինչքն ու ստացվածքը, քանի նրա աշխատող ձեռքերի պտուղները շատանում, բազմապատկվում էին, այնքան ավելի սաստիկ էր բռնում նրա սիրտը մի անհերևելի, անբացատրելի հոգսով։ Ով նրան բազմակնճիռ ճակատով ու խոնարհած գլխով բակում դանդաղ մաս գալիս տեսներ, կկարծեր թե այդ խեղճը պարտքերի մեջ մինչև կոկորդը թաղվել է։

Այդ ժամանակներն էր, որ նա լրագրում կարդաց, որ Էլսբեթը նշանվել է։ Էլսբեթ Դուգլասի ու Լեո Հերիերի անունները գեղեցիկ ծաղկագրերով իրար կողքի էին տպած։ Ոչ մի ծակող ցավ չզգաց նա, նույնիսկ չհուզվեց էլ, միայն թախծալի բավականության մի ժպիտ եկավ նրա բերնին, երբ ինքն իրեն մրմնջաց.

— Այդպես էլ գիտեի։

Ու ապա հիշեց այն գրությունը, որ կրտսեր Էրդմանը դպրոցում շրջեցնում էր տղաների մեջ նրան բարկացնելու համար և որ բոլորովին նման բովանդակություն ուներ, միայն թե յուր հարազատ անունն էր այդ օտարականի փոխարեն. համենայն դեպս դա էլ մի տարբերություն էր։

Տարիներից ի վեր Էլսբեթին չէր տեսել նա. թեև այդքան իրար մոտ էին երկուսի կալվածքները, բայց իրար չէին պատահում։ «Սպիտակ տունը» հեռվից նույնպես էլի փայլում էր դաշտի վրա, լուսամուտից ներս, ինչպես երբեմն, երբ նրա մանուկ հոգու մեջ բուռն տենչանքը բուն էր դրել ուխտագնացության գնալ այն կողմը. բայց մոգական այն փայլը, որ այն ժամանակ կար և որը դեռ շարունակում էր դրանից հետո էլ տասնևհինգ տարի, այժմ անհայտացել էր... առօրյա հոգսերի խոնարհվող ստվերներից խավարել, մարել էր։

— Երանի՜ բախտավոր լինի,— ասաց նա ու կարծեց թե դրանով մխիթարված զգաց։

Հետևյալ կիրակի օրը եկեղեցում հունձքի տոն էին կատարում։ Պաուլը նստել էր յուր անկյունում. լսում էր երգեհոնի մեղեդիները, քահանայի գոհունակությունն ու շնորհակալությունը, որ նա երկինք էր վերառաքում։ Արևը լուսամուտների գույնզգույն ապակիների միջով հազարավոր գույներ էր ցանել եկեղեցու մեջ— ճիշտ այնպես, ինչպես նրա ու Էլսբեթի օրհնության օրը— բայց դեռ այնտեղ էր այն սպիտակահեր կինը յուր մոխրագույն շորերով ու յուր մեծ, դուրս ընկած աչքերով անթարթ նրան էր նայում...

«Ես էլ հունձքի տոն եմ կատարում այսօր, իմ երիտասարդությանս հունձքի տոնը,— մտածեց նա,— բայց սա այնքան էլ ուրախալից չէ»...

Ժամերգությունը վերջացավ։ Մի հաղթական օրհներգով երգեհոնը արձակեց զվարթ աղոթողներին, որոնք կաղնու ստվերոտ տեղում խոնվեցին իրար շնորհավորելու համար։

Երբ Պաուլը սանդուղքներով ցած էր իջնում, մոտ իրենից հինգ քայլ հեռավորությամբ տեսավ տխուր Էլսբեթին յուր նշանածի թևն անցած։

Պառաված ու դժգույն էր երևում. ու երբ նրա հայացքը Պաուլի աչքերին առավ, ավելի գունատվեց։

Պաուլը դողում էր ամբողջ մարմնով, բայց նա հայացքը չթեքեց նրա դեմքից։ Շփոթված ձեռքը գլխարկին տարավ ու այն տեղից, որտեղ նրանք տասնհինգ տարի առաջ առաջին անգամ խոսել էին իրար հետ, լուռ ու օտարացած հեռացան իրարից...

20

— Այդ ի՞նչ կարող է հայրիկն այնտեղ անել,— հարցրեց տիկին Կետե Էրդմանը տիկին Գրետե Էրդմանին, որոնց երկուսն էլ իրենց հայրական տան ճանապարհն էին բռնել— այցելություն անելու նրան ու առիթից օգտվելով սրտերը մի լավ թափ տալու իրենց եղբոր առաջ։

Ծերունին շտեմարանի հետևի անկյուններից մեկում կուչ էր եկել ու մի ինչ-որ բան էր անում հարդի դեզի մեջ, որ այնտեղ թափված էր։ Երբ նա կառքի գոգոցը լսեց, սարսափած կանգ առավ ու ճակատը սրբեց, նման մի մարդու, որ ուզում է աներկյուղ երևալ։

Երկու քույրերն իրար նայեցին ու Գրետեն ասաց.

— Իսկապես հարկավոր էր Պաուլին իմաց անել։

Օ, նրանք այժմ շատ շատ խելացի էին դարձել— այդ երկու վայրենիները— խելացի արտաքուստ և ներքուստ։ Նրանց թխահեր վայրի գանգուրները մաքուր, հարթ կերպով սանրված էին ականջի հետևում ու վառվող աչքերը մի հոգնած փայլ էին ստացել, կարծես այժմ գիտեին այն հոգեկան վիճակը, երբ մարդ ստիպված է լինում սենյակում նստել ու մի կուշտ լաց լինել։ Տիկին Կետեն ուներ նաև երեք առողջ լավ երեխաներ իսկ տիկին Գրետեն պատրաստվում էր արդեն չորրորդն ունենալ... ու հայտնի է թե ինչպես խամրեցնում է մայր լինելը։

Պաուլը տանը չէր, նա դրսում ճահճանոցումն էր. բայց ծերունի հայրը խորամանկ ժպիտով մոտեցավ նրանց ու նեցուկի փայտերը ճոճելով բացականչեց.

— Տեսեք, էլի ջահել տղի նման վազում եմ դարձյալ, չէ՞։

Տիկին Կետեն իր զարմանքն արտահայտեց և տիկին Գրետեն էլ համաձայնեց։

— Շատ հեշտ է,— շարունակեց ծերունին.— Երեկ չէ առաջի օրը նույնիսկ մի զբոսանք կատարեցի դեպի Հելենինթալ։

Ապշած, համարյա սարսափած իրար նայեցին երկու քույրերը, որովհետև նրանց հայրը այնտեղից դուրս գալու օրից էլ չէր եղել Հելենինթալ։

— Ինչպե՞ս ընդունեցին քեզ այնտեղ,— հարցրեց տիկին Դրետեն։

— Ո՞վ, ի՞նչը... երևի դուք մտածում եք, թե հարևանական այցելությո՞ւն եմ արել։ Բարով եք եկել. ավելի շուտ կհամաձայնեի ձեր բակի շան մոտ հյուր գնալ ու նրա առաջը թափած ոսկորները կվերցնեի։

— Հապա ի՞նչ բան ունեիր այնտեղ։

— Դարբասի դռնից ներս նայեցի ու ժամացույցին նայեցի ու դարձյալ վերադարձա տուն, ի՞նչ եք կարծում, ի՞նչքան տևեց այդ ամենը, ապա դեհ գուշակեցեք։

Նրանք չէին կարող ասել։

— Միմիայն ժամ ու կես. իսկը արագընթաց սուրհանդակի պես եմ գնացել, այնպես չէ՞...

— Ու հենց միայն այդ իմանալու համա՞ր էր, որ գնացիր...

— Այո հենց դրա համար, սիրելիս, հենց միայն դրա համար,— ու նրա աչքերը օտարոտի կերպով փայլեցին։

Ապա նստեցին Երեքով վերանդայի մեջ, որ Պաուլը «Մպիտակ տան» օրինակով իրենց տան առաջը շինել էր տվել։ Պաուլ տնտեսուհին, որը առաջ Էրդման եղբայրների մոտ էր եղել ու նրանց ամուսնությունից հետո Մայհոֆերների մոտ տեղափոխվել, խոհանոց գնաց սուրճ ու կարկանդակ պատրաստելու. հայրը, որովհետև յուր աղջիկների հետ մի ավելի լավ բան չուներ և չգիտեր խոսելու, ուստի սկսեց հայհոյել և բարկանալ Պաուլի և յուր փեսաների վրա։ Բայց այդ հայհոյանքներն այդ օրը կարծես թե ավելի շատ սովորությունից էին բխում, քան թե նրա ցանկությունից, որովհետև նրա մտքերը բոլորովին այլ բանով էին զբաղված երևում ու երբ նա խոսում էր, աթոռի մեջ անտվոր անհանգստությամբ շարունակ այս ու այն կողմն էր դառնում։

— Արիք ներս գնանք,— ասաց Կետեն,— հարկավոր է մի փոքր տնտեսությունը աչքի անցկացնել. և բացի դրանից այստեղ սաստիկ քամի է։

— Գիշերը երևի փոթորիկ կլինի,— ասաց Գրետեն. և ապա երկուսով հանկարծակի սարսափած շուռ եկան, որովհետև Ծերունին վերին աստիճանի տարօրինակ կերպով ծիծաղեց այդ խոսքերը լսելիս։

— Թող միայն փոթորիկ լինի,— ասաց հայրը մի փոքր չփոթված.— ամենևին վնաս չունի։ Ձեր ամուսնական կյանքի մեջ հաճախակի փոթրիկներ չունե՞ք։

Կետեն չարաճճի կերպով ժպտաց ու նրա աչքերը փայլեցին, իսկ Գրետեի բերանի անկյունները ձգվեցին, կարծես այդ լինել էր ուզում. թվում էր, թե նրա վերջին փոթորիկը դեռ բոլորովին չէր սպիացել։

— Այո՛, աշունը վաղ է վրա հասնում այս տարի,— ասաց նա մելամաղձոտ կերպով։

Ծերունին սկսեց շվացնել «Երբ ծիծեռնակները տուն դառնան» երգը, իսկ Կետեն ասաց.

— Ոչինչ, թող գա աշունը. ամբարները հո լիքն են։

— Փառք աստուծո,— ասաց ծերունին,— լիքն են։

Քույրերը իրար գրկած ու ճակատները պատուհանին հենած դուրս էին նայում դեպի արևառ բակը, որտեղ ավազի ու հողի ամպերը ջրերեն սյուների նման երկինք էին բարձրանում։

Մութը կոխելուն պես Պաուլը տուն եկավ. արաբի պես սևացել էր, որովհետև տորֆի փոշին սաստիկ քամուց հողմահարվելով նստել էր նրա երեսի ու մորուքի վրա։

Լուռ ու անխոս ձեռք մեկնեց քույրերին, սուր կերպով նրանց աչքերին նայեց ու ասաց.

— Հետո կգանգատվեք ինձ։

Գրետեն Կետեին նայեց, Կետեն էլ Գրետեին ու երկուսով հանկարծ հնչյուն կերպով ծիծաղեցին, բռնեցին նրա ուսերից ու սկսեցին սենյակումը պար գալ։

— Կսևանաք, Երեխեք,— ասաց նա։

— «Իմ սիրելիս ծիծեռնյուզ մաքրող է»,— գեղգեղեց Գրե-

տեն. իսկ Կետեն էլ այդ երգի երկրորդ տողը դայլայլեց,— «իմ սիրելին արաքների աշխարհից է»։

Ապա նրան համբուրեցին ու վազեցին հայելու առաջ, տեսնելու համբույրի թողած հետքերը։

Երբ Պաուլը դուրս գնաց մաքրվելու, Գրետեն ասաց.

— Զարմանալի է. բավական է, որ նա մեկին նայի, և ամեն բան դարձյալ լավ է լինում։

Իսկ Կետեն ավելացրեց.

— Բայց նա այսօր շատ լռակյաց է, քան երբևիցե։

— Պաուլ, դե մի փոքր ուրախացիր,— փայփայում էին նրան քույրերը, երբ նրանք բոլորով միասին ընթրիքի սեղանի շուրջը բոլորված էին։— Տարին մի անգամ ենք գալիս այստեղ... Դեհ մի ուրախ երես ցույց տուր մեզ։

— Մոռացե՞լ եք, թե այսօր ինչ օր է,— ասաց Պաուլը շոյելով նրանց մազերը։

Նրանք սարսափեցին, որովհետև իսկույն մտքներով անցավ մայրիկի մահվան օրը, բայց իսկույն թեթևությամբ շունչ քաշեցին, որովհետև նա Հովհաննու տոնի օրերն էր մեռել։

— Ի՞նչ օր է,— հարցրին նրանք։

— Ուղիղ ութ տարի առաջ այրվեց մեր շտեմարանը։

Բոլորը լուռ էին, միայն հայրն էր մռմռում ու քթի տակ ծիծաղում...

Խավարը իջավ, տարածվեց չորս կողմ. դաշտի հեռվում դեռ շիկագույն վառվռում էր երկինքը սպիտակածածկ սեղանի վրա փայլեր ձգելով։ Փոթորիկն արդեն ծեծկում էր պատուհանի ապակիները։

Լավ էր, որ տնտեսուհին տենչակ մտավ... այդ շատախոս պառավը միշտ հետաքրքիր բաներ է գտնում զրաղեցնելու

— Հը՞, տիկին Յանկուս, ի՞նչ նորություն,— կանչեց Կետեն նրան դիմավորելով, ներքուստ ուրախանալով, որ ազատվում է հիշողությունների ծանրությունից։

— Օ, սիրելի տիկին, մի՞թե դեռ չեք իմանում... Եկեղեցին այսօր լիքն է... ամբողջ գյուղը պսակներ է հյուսում... սեղանի շուրջը մի մեծ ծաղկեպսակ է գրված... վարդերով ու

մանուշակներով զարդարած... և երկու կողմերից էլ ամենագեղեցիկ դափնիները...

— Ի՞նչի համար, ի՞նչ կա որ։

— Պսակ կա... վաղը օրիորդ Դուգլասի հարսանիքն է։

Երկու քույրերը սարսեցին... մի արագ հայացք փոխանակեցին իրար հետ ու ապա Պաուլին նայեցին։ Բայց նա շուռ ու մուռ էր տալիս մատների արանքում հացի միջուկը ու այնպես էր ցույց տալիս, թե այդ պատմությունն իրեն ամենևին չի վերաբերում։

Քույրերը նորից նայեցին նրան ու խորհրդավոր կերպով գլխով արին. ապա միօրինակ զորեղ մղումով բռնեցին նրա երկու ձեռքերը։

— Երեխեք, շորերս կպատռեք...— ասաց նա մի թույլ ժպիտով։

— Ա՜հ, ուրեմն այսօր այնտեղ հարսնահանդես կլինի,— ասաց հայրը, որ հանկարծ մեծ աշխույժի էր եկել։

— Հավանական է, հավանական է,— պատասխանեց տնտեսուհին.— մի փոքր առաջ ահագին խմբով երեխաներ տեսա, որոնք ամեն տեսակ ամաններով ու պռատուկներով ծանրաբեռնված այն կողմն էին գնում։

— Մեր հարսանիքի ժամանակ բավականին շափավոր էր,— ասաց Գրետեն ու երկու քույրերն իրար նայեցին ու երազական կերպով ժպտացին։

— Լավ հարմար է գալիս,—շշնջաց ծերը և ձեռքերը շփեց։

— Ի՞նչը...— հարցրեց Պաուլը։

— Ա՜խ, ոչինչ... ասում եմ... թե պատահմունք է... որ նույն օրն էր, երբ նրանք մեր շտեմարանն այրեցին։ Պաուլ, մի ասա տեսնեմ... ժամի քանի՞սը կլիներ, երբ որ դու բոցը առաջին անգամ տեսար։

— Կարող էր մեկը լինել։

— Դե՜հ, դու պետք է որ գիտենաս. թե ինչ ուներիր դու Հելենինթալում, իսկապես ինձ մինչև այժմ էլ անհասկանալի է մնում... բայց այսպես լավ է... շատ լավ է... այժմ ես բոլորովին ճիշտ գիտեմ, ժամի քանիսն էր։

— Մի մե՜ծ բան պիտես,— ծիծաղեց Գրետեն։

— Այո՛, մեծ բան,— առարկեց հայրը համառությամբ։— Կտեսնես, աղջիկս, կտեսնես։

Կետեն տեղում էր քրոջն օգնության գալ, բայց Պաուլը ծածուկ նշան արավ նրանց, որ ծերունուն հանգիստ թողնեն։

Մի փոքր հետո քույրերը մեկնեցին։

— Ճիշտ, դու տեղում էիր Պաուլին ասել, որ հայրիկը շտեմարանի հետևում ինչ որ բաներ էր անում...— ասաց Կետեն, երբ արդեն երկուսով կառքի մեջ էին։

— Հա՜, լավ միտս գցեցիր,— ասաց Գրետեն, պատվիրեց կառապանին կանգ առնել ու Պաուլին նշան արավ մոտենալ։ Բայց ծերունին, որ կասկածամիտ կերպով ամենայն կողմ ման էր գալիս ականջները սրած, այստեղ էլ վրա հասավ ու այդպիսով գործը խանգարեց։

Երբ Պաուլը ամեն երեկո շրջագայություն անելիս խոհանոց մտավ, տեսավ, որ հայրը տնտեսուհու հետ մի հոդեպուտուկի համար բանակցություններ է սկսել։

— Ի՞նչ պիտի անեք պուտուկը, պարոն Մայհյոֆեր,— հարցնում էր պառավը։

— Ես էլ եմ ուզում հարսնահանդեսը տոնելու գնալ, տիկին Ցանկուս,— ասաց նա մի հեգնական ծիծաղով.— կարելի է թե ինձ էլ հարսանիքի կարկանդակներից մի բան նվիրեն։

Պառավը քիչ էր մնում ծիծաղից մեռներ, իսկ հայրը պուտուկը առնելով մտավ յուր ննջարանը ու դուռը պինդ փակեց...

Ամբողջ տունն արդեն հանդստանալու էր գնացել, միայն Պաուլն էր, որ դեռ բակում թափառում էր։

— Այդպես ուրեմն, առավոտ նրա հարսանիքն է,— ասաց ձեռքերը ծալելով։— Եթե ես մի լավ քրիստոնյա լինեի, նրան բախտավորություն ցանկանալու համար պետք է մի «Հայր մեր» ասեի... բայց դեռ այնքան էլ թույլ չեմ... Ես կարծում եմ, որ ես նրան երբեմն շատ սիրում էի... ավելի էի սիրում, քան թե այդ ես ինքս գիտեի... ինչպես պատահեց, որ այդքան օտարացանք,— նա մտածում էր ու մտածում, բայց ոչ մի եզրակացության չէր հասնում։

Տափաստանի վրա երևան եկավ լուսնի բոլորակը, որը մի աղոտ անորոշ փայլով պատեց ամբողջ դաշտը... Փոթորիկը

գնալով սաստկանում էր... փչում էր անկյուններում ու սուլում ծառի կատարներում...

«Եթե այսօր հրդեհ ծագելու լինի, միայն շտեմարանով չի բավականանա,— մտածեց Պաուլը ու իսկույն մտաբերեց, որ հարկավոր էր ապահովագրող ընկերության գործակալին մի ազդարարություն ուղարկել, որ շուտ անի կալվածքն ապահովագրի։—Որովհետև ո՞վ է իմանում, ինչ կարող է պատահել.... գնամ քնելու,— եզրափակեց նա իր խորհրդածությունները.— վաղն էլ օր է և այն էլ հարսանիքի օր»։

Մատների ծայրերով նա սահեց իր ննջարանը, որը գտնվում էր հոր ննջարանի մոտ, որպեսզի հարկավոր դեպքերում Պաուլը իսկույն օգնության հասնել կարողանա։ Ճրագ չվառեց, որովհետև բոլորակ լուսնի լույսն արդեն լուսավորել էր սենյակը։

«Արդյոք կարող կլինի՞ս այսօր քնել...», մտածում էր Պաուլը մի ժամ հետո։ Փոթորկից հոդմահարվող տերևների սովերները պար էին բռնել նրա վերմակի վրա ու երբեմնակի լուսնի շողերը կայծակի նման փայլում էին։

«Հովհաննիսյան այն գիշերը լուսինը էլի այդպես պայծառ էր փայլում», մտածեց նա ու հանկարծ հիշեց, թե էլսբեթի գիշերային զգեստը ինչքան ճերմակ էր փայլել գիշերվա խավարի մեջ։

— Ամենալավ գիշերն էր դա իմ կյանքիս մեջ...— մրմնջաց նա մի խոր հառաչով ու ապա վճռեց քնել ու խոսքը կատարելու համար վերմակը քաշեց ականջներին...

Մի փոքր հետո նրան թվաց, թե լսում է, ինչպես հարևան սենյակում հայրը կամացուկ վեր կացավ ու դռնից կաղալով դուրս ելավ... Պարզ կերպով նա լսեց հոր ձեռնափայտերի ձայները։

«Երևի շուտով կվերադառնա», մտածեց Պաուլը, որովհետև հաճախ էր պատահում, որ հայրը գիշերը մի անգամ էլ էր վեր կենում։

Այդ մտքերի մեջ էր, որ նիրհը բռնեց նրան ու նա կես քուն դրության մեջ ընկավ, տանջվելով ամեն տեսակ սարսափելի երազներից։ Երբ նա մեկ էլ բոլորովին զարթնեց, լուսինն արդեն երկնքի մեջտեղն էր հասել ու նրա շողերը հազիվ էին

թափանցում սենյակի մեջ։ Բայց պարտեզն ու ամբողջ բակը լողում էին կաթնանման լույսի մեջ։

— Տարօրինակ է, ինձ թվում է, թե հայրիկիս վերադառնալը չսեցի,— ասաց նա։ Ուղղվեց ու գրպանի ժամացույցին նայեց։

Մեկին ութ րոպե էր պակաս... երկու ժամ էր անցել նրա դուրս գնալուց։

— Լավ քնած եմ եղել երևի,— ասաց Պաուլն ու ցանկանում էր նորից ականջի վրա ընկնել, մեկ էլ տան դռան դղրդյունը լսեց, որ փոթորկից տարուբերվում էր, ամբողջ տունը կարծես հիմքից շարժվեց։

Սարսափած վեր թռավ...— Այս ի՞նչ է... Տան դուռը բա՞ց... հայրիկս դեռ չի՞ ետ եկել...— Իսկույն անդրավարտիքն ու վերնազգեստը վրան քաշեց ու ոտաբոբիկ... գլխաբաց դուրս վազեց...

Հոր ննջարանից դեպի բակ դուրս բերող դռուը բոլորովին բաց էր։ Երկյուղից գունատ մոտեցավ հոր անկողնին, որը բոլորովին պատրաստ, կարծես մարդ չէր քնել այդտեղ... միայն վերմակի մի անկյունը մի փոքր սեղմված էր. հայրն այդտեղ նստել էր անշուշտ առանց հանգստանալու, ժամուկեսից ավելի սպասելով, որ Պաուլը գնա քնի։

Ի սեր աստուծո, ի՞նչ է նշանակում այս ամենը։

Նրա որոնող հայացքը շրջում էր հոր սենյակում։ Մի անկյունում իրար փաթաթված ընկած էին նրա բրդյա ոտնամանները, որոնցով հայրը շրջում էր ամբողջ օրը. բայց կոշիկները, որ ամիսներով ընկած էին լինում մի անկյունում, որովհետև հայրը չէր գործածում, այժմ չկային...

Ինչպե՞ս, կաղ հայրը գիշերային զբոսանքների էր դուրս եկել... Կարծես նրա սիրտը դադարելու էր գործելուց... Նա դուրս պրծավ դեպի բակ։

Օրվա լույսի պես պայծառ էր բակը... միայն շտեմարանի ձգած ստվերների շրջանում իշխում էր գիշերը...

Մրրիկը շաղում էր ծառերի մեջ... ավազը փայլելով պրոտոյտներ էր կազմում... բայց հենց այդքանը, մնացածը լուռ էր, ամայի...

Նա անցավ պարտիզով, ոչ մի հետք. նայեց գոմի հե-

տևը, ոչ մի հետք... ի՞նչ է նշանակում սա։ Դարբասի դուռը բաց... Ո՞ւր է գնացել...

Շունը կաղկանձում էր իր շղթաների մեջ. արագությամբ ազատեց նրան։

— Գտիր պարոնին, Տուրկ, պարոնին։

Ու շունը հոտմտաց գետինը ու վազեց դեպի շտեմարանի վերնահարկի կողմը, որտեղ լցված էին հարդի դեզերը, որոնք ավազի թույլ սարերի նման պատերի մոտ կուտակված էին։ Լուսնի լույսը շլացնող կերպով ընկել էր պատերի ծեփի վրա ու փայլում էր դեղնագույն գետնի վրա։ Նույնիսկ ասեղը կարելի էր գտնել... Ոչինչ չէր նկատվում... միայն մի տեղում հարդի դեզը տրորված էր երևում...

Բայց սպասիր. այս ինչպե՞ս է սանդուղքը այստեղ եկել, դա հո երկու ժամ առաջ ցանկապատի երկարությամբ գետնի վրա էր դրված։

Ո՞վ է բերել այստեղ...

Եվ... Տեր աստված... այս ի՞նչ է...

Ո՞վ է վերնահարկի անցքը բաց արել... նա ինքն էր այդ անցքը ներսից փակել...

Սանդուղքի տակ գետինը թաց էր երևում, կարծես թե հեղուկ էր թափված... նավթի հոտ էր գալիս լճացած տեղից։

Դողդոջուն ձեռքերով գետնի վրայի հասկերը քրքրեց. այո, թաց էին ու վատ հոտը նրա մատներին անցավ։

Զգում էր, թե ինչպես ծնկները դողում են, մի խուլ, զարհուրելի նախազգացում պատեց նրա միտքը. դժվարությամբ վեր ելավ ու հասավ մինչև անցքին....

Ցածում կաղկանձում էր շունը։

— Գտիր պարոնին, Տուրկ, պարոնին։

Շունն սկսեց ուրախությամբ ոռնալ ու հոտմտալով շրջաններ արեց, մինչև որ ճանապարհի թելը գտավ։

Պաուլը ապշած նրան էր նայում. տենդային կերպով դողդողում էր նրա մարմինը, չարատանջ սպասումների մեջ...

Շունը դարբասն էր դիմում... Ուրեմն ճիշտ է. հայրն էր, որ դուռը բաց էր արել...

Հետո, հետո... ո՞ւր պիտի գնացած լիներ...

— Գտիր պարոնին, Տուրկ, պարոնին։

Շունը մի անգամ էլ կարճ կերպով ոռնաց ու ապա ուղղակի դեպի Հելենինթալ դիմեց...

«Դեպի Հելենինթալ... ի՞նչ է փնտրում Հելենինթալում հայրը... հա, նա խոսում էր, թե ինչպես այնտեղ մոտ օրերս մի անգամ եղել է... «փորձելու», ինչպես նա ասում էր։ Փորձելո՞ւ... ինչպես տարօրինակ ու անտանելի կերպով ծիծաղեց այդ ասելով... ինչո՞ւ...»։

«Եվ հենց այսօր էլ... ինչքան տարօրինակ էր նրա ամբողջ շարժվածքը... ու երբ շտեմարանի հրդեհի մասին խոսք ընկավ... ի՞նչ էր ասում նա, ի՞նչ էր հասկանում, երբ ինչ որ հարմար գալու մասին էր խոսում... ինչո՞ւ հենց այսօր...»։

Հարկավոր էր այս հանելուկը լուծել, քանի դեռ ուշ չէր։

Օգնություն փնտրելով կանգնած էր նա ու անթարթ շորս կողմն էր դիտում։

Մեքենայորեն ձեռքը դիպավ անցքի բացվածքին ու թիթեղյա ամանից բռնեց, որն այնտեղ սրահների մեջ պահված էր... Նավթի ամանն էր դա, որ նա երեկ էր դեռ լիքը լցնել տվել... Եվ ո՞ւմ խորհրդով... ո՞վ էր եկել ու առել...

— Հա՛յր, հա՛յր, ի սեր աստուծո, ի՞նչ ես ուզում անել Հելենինթալում...

Ու երբ ուշքը կորցրած դեռ շոշափում էր, լուցկիների մի կապոց գտավ, որ ամանի շորս կողմը դրված էր...

Այն ժամանակ միայն վայր ընկան նրա աչքի կապանքները... Տանջալի մի աղաղակ բարձրացրեց...— Հելենինթալն այրելու է գնացել։

Կարծես աշխարհը մթնեց նրա շուրջը, ամեն բան պտույտ էր գալիս ու նրա զգայարանները կարծես թողնում էին նրան. ջղաձգորեն պատի տախտակի ծայրից բռնեց, եթե ոչ գլուխն ի վայր ցած էր գլորվելու...

Այժմ ամեն բան պարզ էր։ Հոր խառն խոսքերը... նրա ծիծաղը... նրա սպառնալիքները... նրա դղրդյուն...

Բայց դեռ ժամանակ կար։ Մերունին կաղալով կարող էր միայն գնացած լինել... իսկ եթե ինքը ձիով հասնելու լիներ...

— Գոմից մի ձի,— գոռաց նա փոթորկի միջով ու սանդուղքն ի վար ցատկեց... Բայց հանկարծ վեր թռավ...

— Ինչու էր հայրս ճիշտ ժամի մասին հարցնում, երբ

տարիներ առաջ... թերևս ուզում է նա յուր վրեժը նույն ռոպեին լուծել... աստված իմ... ուրեմն ամեն ինչ կորած է. ժամի մեկն էր, ասացի ես նրան... ու այժմ էլ ժամի մեկը է...

Մի խելագար սարսափ տիրեց նրան ու նորից վազեց սանդուղքով դեպի վեր։

Ուրեմն իսկույն բոցերը երկինք են բարձրանալու...

Ա՞յն ինչ է, մի՞թե հրդեհի կրակները չեն... ո՛չ, լուսինն է, որ «Սպիտակ տան» պատուհանների հետ խաղ է անում... երկնավոր հայր, մի՞թե չկա ոչ մի օգնություն, եթե աղոթքը կամ անեծքը որևէ ուժ ունի, ապա թող բարձրացրած ձեռքը քարացնի... ո՞վ կզգուշացնի նրան, ով նրան նշան կտա, որ նա ետ դառնա այդ ճանապարհից...

Բայց ահա բոցերն արդեն... ոչ, դեռ ոչ. թերևս մի վայրկյանից հետո երկինքը ծածկվի կարմիր լեզուներով...

— Զարթիր, էլսբեթ...

Ճիշտ այնպես կվառվի, ինչպես ութ տարի առաջ, երբ նա Հելենինթալի պարտիզում դարան էր մտել ու երբ նրա անպամներն ընդարմացան բոցերը տեսնելիս... Զորանոցը հորս ձեռքը եղեռնագործ ձեռնարկության հենց միջոցին...

Աստված իմ, մի հրաշք կատարիր, թող դաշտի վրա կրակե մի սյուն բարձրանա, ինչպես այն ժամանակ, ինչպես այն ժամանակ...

Պետք է բոցավառվի... այստե՛ղ պետք է բոցավառվի։ Հայրական օջախի կորստին մի կայծակ պիտի վրա հասնի ու բոցերը երկինք բարձրացնի, որոնք հորս կանչեն. «ե՛տ կաց, ե՛տ կաց»։ Ու մի՞թե ամեն բան պարզ ու պայծառ է... ո՞ւր են փոթորկաբեր սև թխպերը, չկա՞ն միթե... Կարելի է նա այժմ արդեն գործի է կպել... կարելի է լուցկին է վառվում... մի ռոպե հետո ուշ կլինի ամեն մի հորդոր, ամեն զգուշացում։

Պետք է բոցավառվի... այստե՛ղ պետք է բոցավառվի։

Մի՞թե ոչ մի կերոն չկա, որ ես ճոճեմ— նրան զգուշացնելու համար...

Պետք է բոցավառվի... այստե՛ղ պետք է բոցավառվի։

Ու երբ չորացած, դուրս ընկած աչքերով իզուր օգնություն

էր հայցում, հանկարծ նրա ցանկացած բոցերի նման, կարծես մի կրակ վառվեց նրա ուղեղում։

Բարձր աղաղակեց ուրախությունից։

— Այո՛, հենց այդ է... սարսափը նրան կքարացնի։

Փրկություն, փրկություն— ինչ գնով էլ դա լինի։

Երկու ձեռքերով վերցրեց ամանն ու ուժգին ճոճանքով թափեց նրա միջինը դիզացած որաների վրա...

Ապա լուցկիները... մի թեթև շաչյուն... փոթորիկը շառաչում է անցքով դեպի ներս... ու բոցը ելնում դիպչում է նրա երեսին...

Մի վայրի ճչոց, աղաղակ... Աչքերը մթնում են... մի հենարան է փնտրում ու կուրորեն կրակի մեջ ընկնում... ու ինչ որ ձեռքն է անցնում, նետում է բոցերի մեջ ու մի բոպե հետո մի բոցավառ որայից բռնած, սանդուղքի հետ այրվող հարդերի մեջ է նետվում...

Բոցը մեծանում, տարածվում է ու մի վայրկյանից հետո ամեն բան իր մեջ առնում։

Ու փոթորիկը շաչում է ու շառաչում. օդը սուլում է, ճչում ու երգում... արդեն կտուրին է հասնում...

Ապա դիմում է դեպի բակը, որը նրա հետևում խաղաղ ու հանգիստ կեցած է։

— Հրդե՜հ, հրդե՜հ, հրդե՜հ...—բարձր հնչում է նրա աղաղակը՝ քնածներին զարթեցնելու համար...

Գոմերը, որտեղ մշակներն են պառկած, վենդանանում են, սենյակներից իրարանցումի ձայն է գալիս...

Կրակե ծածկոցը բռնել է արդեն կտուրը։ Կտուրի սյուներն ու գերանները ճարճատում են ու ճոճալով գետին տապալվում. ու որտեղ մի անցք է բացվում, բոցն իսկույն նրա միջով երկինք է հասնում...

Մինչև այդ ժամանակ բակում կանգնել էր նա բոլորովին մենակ ու ծալած ձեռքերով դիտում էր այդ զարհուրելի գործը. այժմ դռներից դուրս են պրծնում մշակներն ու աղախինները, աղմուկ աղաղակը բռնում է բակը։

Խոր ու թեթևացած հառաչում է նա այժմ, կարծես օրվա աշխատանքից խոնջացած ու դանդաղորեն դիմում է դեպի պարտեզը, առանց որևէ մեկին պատահելու...

— Բավական երկար աշխատեցի,— մրմնջաց նա ցանկապատի դուռը փակելով.— այսօր ուզում եմ հանգստանալ։

Դանդաղ քայլերով գնում էր խճուղու վրայով, կարծես մահու չափ հոգնած ու անդադար կրկնում էր՝ «հանգստանա՜լ, հանգստանա՜լ»։

Թուլացած հայացքը չորս կողմը ձգեց. լուսնի կաթնանման փայլի ու հրդեհի բոցերի լույսի մեջ կորել էր պարտեզը, իսկ փոթորկից տարուբերվող տերևների ստվերները ուրվականի տեսքերով պատկերանում էին նրա հայացքների առաջ։ Նրա ճանապարհի վրա այստեղ այնտեղ պեծին էին տալիս կայծեր... Նա քաշվեց կծկվեց պարտիզի ամենամութ անկյուններից մեկը... Այստեղ կանաչի վրա նստեց ու ձեռքերով ծածկեց երեսը... Չէր ուզում այլևս որևէ բան լսել կամ տեսնել...

Բայց հետաքրքրության մի բութ զգացում նրան վեր կացրեց մի փոքր հետո։ Ու երբ աչքերը բաց արեց, բոցերը հայրական տան շուրջը ծիրանագույն — սպիտակափրփուր հովանոցի նման պար էին բռնել արդեն, որովհետև փոթորիկն արդեն այն կողմն էր քշում կրակե լեզուները։

Ու հասկացավ, որ արդեն ամեն ինչ վերջացած էր։

Ձեռքերը ծալած, կանգնած էր. նրան թվում էր, թե հարկավոր էր աղոթել։

— Մա՜յր, մա՜յր,— կանչեց նա աչքերը լի արտասուքով ու ձեռքերը տարածեց դեպի երկինք։

Ու հանակարծ նրա մեջ մի նշանավոր փոփոխություն կատարվեց։ Միտքն ու սիրտը բոլորովին թեթևացան, այն ճնշումը, որ տարիներ շարունակ ծանրացել էր նրա գլխի վրա, անհայտացավ այժմ. ու բարձր շունչ քաշելով, թափ տվեց ուսերն ու բազուկները, կարծես ուզում էր վայր ընկնող շղթաները բոլորովին թոթափել։

— Ահա, այսպե՜ս,— ասաց նա, կարծես մի հսկայական բեռ սրտից վայր գլորելով.— այժմ այլևս ոչինչ չունեմ. այժմ չունեմ նաև հոգս անելու որևէ մի բան։ Ազատ եմ այժմ, ինչպես թռչունը օդի մեջ։

Բռունցքներով ճակատին խփեց, լաց եղավ, ծիծաղեց։

Նրան թվում էր, թե երկնքից նրա վրա մի անլուր, շատ մեծ բախտավորություն է իջել, որին նա արժանի չէ։

— Մա՜յր, մա՜յր,— կանչում էր նա վայրի ցնծությամբ։— Այժմ գիտեմ, ինչպես է վերջանում քո պատմությունը... փրկված եմ ես, փրկված եմ։

Ու այդ րոպեին նրա ականջին անասունների ողորմելի ձայներ հասան ու նրան նորից ուշքի բերին.

— Ո՛չ, իմ պատճառով չպիտի կորչեք դուք, խեղճ կենդանիներ,— կանչեց նա վեր թռչելով.— ավելի շուտ կհավատամ, որ ես ինքս...

Ապա շտապեց դեպի տան հետևի դուռը, որտեղ մշակներն ու աղախինները կահ-կարասի էին դուրս բերում։

— Տեսե՞ք պարոնին,— կանչեցին նրանք լաց լինելով ու մեկմեկու մատնացույց էին անում նրա բորիկ ոտքերը...

— Թողեք, մնան,— բղավեց նա,— ազատեցեք տավարը։

Մի կացին կար ընկած. դրանով կոտրում է գոմի հետևի դուռը, որ դուրս էր բերում դեպի դաշտ, որովհետև բակն արգեն բոցերի մեջ էր։

Երազի պես տեսնում է, թե ինչպես պարտեզն ու մարգագետինը մարդկանցով լցվում են։ Գյուղի ջրցանը առաջ են բերում, կենդանանում է նույնպես Հելենինթալի ճանապարհը դեպի ագարակ։

Երեք չորս անգամ մտնում է բոցերի մեջ, մշակները հետևում են նրան ու ապա ցավերից ուշաթափ այրվող գոմի մեջ վեր է ընկնում...

Կանացի մի սոսկալի աղաղակ նրա աչքերը մի անգամ էլ բանալ է տալիս...

Նրան թվաց այդ րոպեին, որ Էլսբեթի դեմքը տեսավ, մշուշի մեջ ծածկված. ապա գիշեր է լինում նորից չորս կողմը...

21

Արշալույսի առաջին շողերի հետ մի տխուր գնացք ճանապարհ ընկավ աշնանային դաշտի վրայով դեպի Հելենինթալ։ Երկու թույլ ու խարխուլ կառքեր, որոնք դանդաղորեն

քաշ էին գալիս իրար հետևից։ Ագարակից ինչ որ մնացել էր, բոլորը դարսված էր այդ երկու սայլերի վրա։

Առաջինի վրա, հարդերի մեջ դրված, վերմակներով ու ծածկոցներով պատած պառկել էր նրա տերը... վիրավոր, անզգա... Գունատ, դողդոջուն կինը, որ վշտահար ու երկյուղոտ կերպով կռացել էր նրա վրա, նրա մանկության խաղընկերուհին էր...

Այսպես էր նա նրան տուն տանում...

— Հարկավոր է սրան քույրերից մեկի մոտ տանել,— ասել էր պարոն Դուգլասը. բայց էլսբեթը ձեռքերը դրել էր Պատլի կրծքի վրա, որից այրված ու խանձված հագուստի կտորներն էին կախ ընկած, կամենալով կարծես նրան մըշտապես իրենն համարել ու ասել էր.

— Ո՛չ, հայրիկ, նա մեզ մոտ է գալու։

— Բայց քո հարսանի՞քը, զավակս... հյուրե՞րը...

— Հարսանիքն ինձ չի վերաբերում,— պատասխանել էր աղջիկը... ու ուրախ փեսացուն շշմած կանգնել էր նրա կողքին։

Երկրորդ կառքի մեջ աղատված մի քանի կահ-կարասիքն էին տեղավորված, մի հին պահարան, մի երկու դարակավոր սեղաններ, գրքերով ու սպիտակեղենով... կավե մի քանի ամաններ, կաթի մի դույլ ու հոր երկայն ծխամորճը։

Բայց ո՞ւր է հայրը։

Միակը, որ այդ մասին տեղեկություն տալ կարող էր, անզգա պառկած էր, թերևս և մահվան հետ պայքարելով...

Փախե՞լ էր... Բոցերի մե՞ջ էր զոհ գնացել... աղախինները գատարկ էին գտել նրա ննջարանը... ու նրանից ոչ մի հետք չկար...

— Լավ հոտ չի գալիս այստեղից.— ասաց ծերունի Դուգլասը. — խելագարության հակումներ նա միշտ ունեցել է. և եթե մենք վաղը նրա ոսկորները մոխիրների տակ գտնենք, այն ժամանակ ինձ համար կպարզվի, որ նա ինքն է շտեմարանն ու ամբողջ տունը հրդեհել ու ինքն էլ բոցերի զոհ գնացել։

Բայց երբ նրանք Հելենինթալի դարբասով ներս էին ուզում մտնել, շտեմարանի կողմից մի շան ողորմելի ոռնոց լսեցին ու մի օտարական շուն տեսան այնտեղ, որը իր առա-

ջին թաթերը դրել էր մի ինչ-որ մութ զանգվածի վրա ու ժամանակ առ ժամանակ մի ինչ-որ բան էր կոծում, կարծես շորի մի կտոր լիներ...

Սարսափած պատվիրեց Դուգլասը կանգ առնել ու քշել այն կողմը։ Ու այնտեղ գտավ իր փնտրածը... որպես դիակ։ Սարսափելի այլանդակվել էին նրա դիմագծերը ու նրա մի բազուկը դեռ կիսով չափ բարձրացած էր, կարծես հանկարծ քարացել էր։ Նրա մոտ ընկած էր մի ջարդված պուտուկ ու լուցկիների մի արկղիկ լողում էր նավթից գոյացած մի փոքրիկ լճակի մեջ...

Այլեհեր հսկան ծալեց ձեռքերն ու մի աղոթք մրմնջաց. . ու երբ նորից կառքին դարձավ, դողում էր նրա ամբողջ մարմինը ու աչքերը լիքն էին արտասուքներով։

— Էլսբեթ, նայիր այն կողմը,— ասաց նա. այնտեղ ծերունի Մայհյոֆերի դիակն է ընկած։ Նա ուզեցել է մեր կալվածքն հրդեհել, ու աստված հարվածել է նրան։

— Աստված շտեմարաններ չի հրդեհի,— ասաց Էլսբեթն ու նորից ետ նայեց այրվող ագարակին, որից մի մռայլ ամպ էր բարձրանում պղտոր առավոտյան երկնքով։

— Մի՞թե դու աստուծո նախախնամությունը չես համարում, որ մենք ազատվել ենք։

— Եթե որևէ մեկն ազատել է մեզ, ապա ուրեմն այդ ազատիչը սա է եղել,— ասաց Էլսբեթը։

— Ի՞նչպես... նա բոլորը զոհած պետք է լինի նույնիսկ հրդեհածիգ եղած պետք է լինի միայն նրա համար...

— Հարցրու նրան,— ասաց Էլսբեթը թուլացած ու աճող երկյուղով ձեռքերը կրծքին դրեց ու բարձր հեծկլտաց։

— Տա աստված, որ նա մի անգամ էլ կարողանա պատասխանել,— մրմնջաց Դուգլասը։ Ապա մի քանի ծառաների պատվիրեց, որ ծերունու մարմինը բնակարան բերեն։ Բժշկի հետևից ղրկված էր արդեն, նա ինքն ուզում էր քույրերի մոտ գնալ, նրանց տեղեկություն տալու։

Շփոթված դեմքերով հյուրերը դիմավորեցին այդ երկու ողորմելի կառքերին, որոնք ծաղիկներով զարդարված վերանգայի առաջ կանգ առան։

— Էլսբեթ, այդ ի՞նչ է քո դրությունը. Էլսբեթ, խնայիր

քեզ,—բացականչեցին նրա հորաքույրերը և ցանկանում էին նրան առնել տանել։

— Հեռո՛ւ գնացեք,— ասաց սա ու բարձրացող ձեռքերը սոսկումով ետ մղեց։

Նույնիսկ ուրախ փեսացուն, որ այդ ամբողջ գիշերվա ընթացքում շատ ողորմելի դեր էր խաղացել, մոտեցավ նրան ոչ աշխատում էր համոզել, որ այդ անհույս ու անօգուտ մարմնից հեռանա։ Բայց Էլսբեթը մոլոր հայացքով նայեց նրան ոտքից մինչև գլուխ, կարծես չէր հիշում, թե նրան երբևիցե տեսել էր։ Ու փեսացուի մեջ հետզհետե իր անարժեք լինելու մի զորեղ զգացմունք բարձրացավ... ճնշված ու ամաչելով հեռացավ նրանից։

Հորաքույրերը ձեռքերը ջարդելով շտապեցին ծերունի Դուգլասի մոտ, որը գոմի դռան առաջ ման էր գալիս, մի կառքի սպասելով։ Նրա զորեղ կուրծքը ծանրությամբ էր աշխատում, նրա սպիտակ թավ հոնքերը իրար էին կպել ու նրա աչքերից կայծեր էին դուրս թռչում։ Երևում էր, որ նրա հոգու մեջ փոթորիկ կար...

— Խղճա,— կանչեցին կանայք,— Էլսբեթին տար հանգստացրու. նա պետք է կազդուրվի... կարծես գժվելու է։

— Եթե իրոք այնպես է, ինչպես նա ասում է,— մրմնջաց նա քթի տակ,— եթե նա իր ինչքն ու ստացվածքը զոհել է... Ա՜խ, տեր աստված, ինձ հանգիստ թողեք,— կանչեց նա այդ կանանց որոնք նրան արդեն շրջապատել էին։

— Բայց մտածիր Էլսբեթի վրա,— աղաղակեցին նրանք. — ժամը տասնևերկուսին քահանան գալու է... ի՞նչ կլինի նրա դրությունը...

— Դա Էլսբեթի իրա գործն է,— բղավեց նա.— նրան ազատ թողեք. նա շատ լավ գիտե, ինչ է անում։

Այն րոպեին, երբ Պաուլին կառքից ցած էին բերում, դարբասից մի քանի մշակներ ներս բերին նրա հոր դիակը...

Կողք կողքի, ներս տարան դեպի «Սպիտակ տունը» հոր ոչ որդու մարմինները ու շունը կաղկանձելով ու լաց լինելով գնում էր հետևից։ Տխուր հուղարկավորություն էր...

Էլսբեթը Պաուլին տանել տվեց յուր ննջարանը, դուռը փակեց ու նստեց նրա մոտ։

Իզուր էին հորաքույրները խնդրում, որ ներս թողնի իրենց։

Ժամը տասնմեկին եկավ բժիշկը և հայտնեց, որ ցանկանում է մինչև հետևյալ առավոտ հիվանդի մոտ մնալ։ Նա Դուգլասի հին բարեկամներից էր և հարսանիքի հրավիրված հյուրերից մեկը։ Հարկավոր էր նաև մի պահող կին գտնել։

— Արդյոք չէի՞ կարող ես մնալ սրա մոտ,— հարցրեց էլսբեթը։

— Եթե ուզում եք...— պատասխանեց սա զարմացած։

— Ես կարող եմ և ուզում եմ,— ասաց աղջիկը մի խորհրդավոր ժպիտով։

Հորաքույրները նորից բախեցին դուռը.

— Խղճա քեզ, աղջի՛կ,— կանչեցին նրանք դռան արանքից,— դու պետք է հագնվես, զարդարվես... քահանան արդեն եկել է։

— Քահանան կարող է էլի գնալ,— պատասխանեց նա։

Դրսում ինչ-որ մռմռոց ընկավ, փեսացուն էլ էր շշմել ու անօգնական կանգնել։

— Ի՞նչ եք մտածում, աղջիկս,— հարցրեց զառամյալ բժիշկը ու քննական հայացքով նրա աչքերին նայեց։ Այդ ժամանակ արտասվալից աչքերով անկողնի առաջ ծունկ չոքեց էլսբեթը, բռնեց Պաուլի թուլացած, կախ ընկած ձեռքերը ու սեղմեց իր աչքերին ու բերանին։

— Դա ձեր հաստատ կա՞մքն է,— հարցրեց ծերունին։

Նա գլխով արեց։

— Իսկ եթե նա մեռնի...

— Նա չի մեռնի...— ասաց նա.— նա չպիտի մեռնի։

Բժիշկը տխրությամբ ժպտաց։

— Լավ,— ասաց նա։— Մի փոքր մնացեք սրա մոտ ու յուրաքանչյուր երկու րոպեն մի անգամ փոխեցեք քաթանը։ Այդ միջոցին ես կհանգստացնեմ դուրսը։

Ապա լսվեց, թե ինչպես կառքերը մեկը մյուսի հետևից հեռացան բակից։ Մի ժամ հետո բժիշկը նորից ներս մտավ ու հայտնեց, որ տունը շուտով կդատարկվի բոլորովին.— հանդեսը հետաձգված է։

— Հետաձգվա՞ծ,— հարցրեց էլսբեթը երկյուղոտ։

Ծերունի բժիշկը նրան նայեց ու գլուխը թափահարեց։

Մարդկային սիրտը նրան ամեն օր նորանոր հանելուկներ էր ցուցադրում...

Շաբաթներ շարունակ հիվանդը մարտնչում էր մահվան ու կյանքի մեջ։

Նյարդային տենդը թվում էր, թե ամեն բան անհույս էր դարձնելու։

Էլսբեթը համարյա չէր հեռանում նրա մահճից։ Նա չէր ուտում, չէր քնում, նրա ամբողջ կյանքը սիրածին պահպանելու, առողջացնելու հոգսերի մեջ էր կլանվել։

Հայրը թույլ էր տալիս ամեն բան։

— Նա պիտի առողջացնի նրան— ասում էր նա,— որպեսզի ես նրան հարցնեմ։

Ուրախ հորաքրոջորդին սկսեց զգալ, որ յուր դրությունը այնքան էլ նախանձելի չէ ու երբ յուր արած բոլոր պարտքերի հատուցումն ստացավ մորեղբորից, թողեց հեռացավ Հելենինթալից։

Երկվորյակները հրդեհի հետևյալ օրն փոկ եկել, տարել էին իրենց հոր մարմինը։ Նրա խորհրդավոր մահը մեծ հետաքրքրություն էր առաջ բերել։ Նույնիսկ մայրաքաղաքի լրագրերը տեղեկություններ տպեցին այդ մասին. ու ինչ որ նա իր ամբողջ կյանքում ձեռք չբերեց— որպես հերոս ու դյուցազն տոնվել— մահվանից հետո բաժին ընկավ նրան։

Իսկ Պաուլի առողջանալու մասին լուրերը դնալով շատանում էին։

22

Պաշտպանող փաստաբանը վերջացրեց։ Մի փոփոց անցավ ընդարձակ դահլիճում, որի օթյակներն ու պատշգամբները լիքն էին հանդիսականներով։

Եթե մեղադրյալը փառավոր պաշտպանության տպավորությունը մի անզգույշ խոսքով չփչացներ, ազատված էր արդեն։

Պետության դատախազի առարկողական պատասխանն համարյա անլսելի անցավ։

Այժմ լոռնետներն ու հեռադիտակները— բոլոր աչքերը—

դարձան դեպի գունաթափ, պարզ հագնված մարդուն, որը մեղադրյալի նույն նստարանի վրա էր նստած, որի վրա ութ տարի առաջ այն նենգ մշակն էր նստած եղել։

Նախագահը հարցրեց, թե արդյոք մեղադրյալը իր անմեղությունն հաստատող մի ուրիշ նոր բան ունի՞ ասելու։

— Լռել, լռել,— մրմնջալով լսվեց դահլիճի մեջ։

Բայց Պատլը վեր կացավ ու խոսեց, նախ մեղմ ու կակազելով, բայց որպես առ որպես ավելի հաստատուն և ապահով։

— Սրտանց ցավում եմ, որ պարոն փաստաբանի ջանքերը՝ ինձ ազատելու, իզուր անցկացրած պիտի համարվին։ Ես այնքան էլ անմեղ չեմ այդ գործի մեջ, ինչպես նա ինձ ներկայացրեց։

Դատավորներն իրար նայեցին։— Ինչպե՞ս, ինքն յուր դե՞մ է խոսելու։

— Նա ասաց, որ իբր թե երկյուղից ես ուշաթափվել ու անզգայացել էի։ Որ իբր թե ես ինչ որ արել եմ, մի տեսակ խելագարությունից է բխել, որն ինձ այն որպեսին արածներս կշռադատելու անընդունակ էր դարձնում։ Բայց այդպես չէ բանը։

— Ցուր սեփական գլուխը կրակի մեջ է ձգելու,— լսվեց հանդիսականների մեջ։

— Ամբողջ կյանքիս ընթացքում ես վախկոտ ու ամոթխած քաշ եմ տվել իմ ճնշված գոյությունը ու միշտ կարծել եմ, թե ես չեմ կարող ոչ ոքի աչքին ուղիղ նայել, թեև ոչինչ չեմ ունեցել ծածկելու, ու եթե ես այս անգամ էլ վախկոտ ցույց տալու լինեմ, կարծում եմ երբեք չէ հաջողվելու դա ինձ։ Իմ նախկին կյանքս պարոն փաստաբանը այնպես պատկերացրեց, որ կարծես բոլոր առաքինությունից հյուսված մի օրինակելի կյանք լինի։ Բայց այդ ճիշտ չէ։ Ինձ պակասել է շարունակ ինքնադիտակցությունն ու արժանիքը։ Ես շատ, չափազանց շատ էի ներում մարդկանց։ Ու դա ինձ միշտ տանջել է, թեև երբեք չեմ կարողացել այդ մասին մի որոշ իմացության հասնել։ Իմ վրա չափազանց շատ էր ծանրությունը բեռնվել, որ ես հնար ու միջոց ունենայի ազատ շնչելու— եթե ուզում էի մարդ լինել և ոչ թե բթանալ ու վշտանալ։

Բայց այս գործն ինձ ազատ դարձրեց ու պարգևեց ինձ

այն, որ ինձ այդքան երկար պակասում էր. այդ գործը ինձ համար մեծ բախտավորություն եղավ. ու ես մի՞թե այնքան անշնորհակալ պետք է լինեմ, որ այսօր ուրանամ ու պահեմ։ Ո՛չ. այդ չեմ անի ես։ Կարող եք ինձ բանտարկել ինչքան ուզենաք. ես կարող կլինեմ տանել այդ ժամանակը ու մի նոր կյանք սկսել։ Այդպես ուրեմն, ես ձեզ պիտի ասեմ, որ ես ինչքա՛ն ու ստացվածքս կատարյալ գիտակից դրության մեջ ինքս հրդեհեցի։ Երբեք այնքան գիտակից չէի եղել ես, ինչպես այն րոպեին, երբ ես նավթի սրվակը իմ հացահատիկների վրա էի դատարկում. ու եթե ես այսօր էլ նույն դրության մեջ լինեի, ասուած գիտե, որ նույնպես կվարվեի... Եվ ինչո՞ւ չպիտի անեի։ Ինչ որ ես հրդեհում, փչացնում էի, իմ ձեռքերիս աշխատանքի արդյունքն էր. երկար տարիների դժվարին, չարքաշ աշխատանքով էի ձեռք բերել ես դա. ու կարող էի դրա հետ վարվել, ինչպես ցանկանայի։ Ես լավ գիտեմ, որ դատարանը ուրիշ կարծիք ունի այդ մասին ու դրա համար էլ հանդիսաւ կերպով կտանեմ բանտարկությունը։— Սակայն բացի ինձանից ո՞վ է վնաս կրել դրանից։ Քույրերս երկուսն էլ բոլորովին ապահովված էին ու հայրս...— Նա կանգ առավ մի րոպե ու երբ շարունակեց, ձայնը դողդողում էր։— Այո, մի՞թե ավելի լավ չէր լինի, որ իմ ծերունի հայրս իր կյանքի վերջին տարիները խաղաղ ու հանգիստ կերպով իր աղջիկներից մեկի մոտ անցկացներ, քան այնտեղ, ուր ես եմ գնում այժմ։

Բայց ճակատագիրն այնպես չցանկացավ։ Հարվածը խրտեց նրան... իսկ իմ եղբայրները ինձ են նրան սպանողը համարում... Բայց իմ եղբայրներն ամենևին իրավունք չունեն այդ մասին որևէ դատողություն տալ. նրանք ո՛չ ինձ են ճանաչում, ո՛չ էլ իմ հորս։ Իրենց կյանքի ամբողջ ընթացքում նրանք իրենց մասին են միայն հոգ տարել ու միայնակ ինձ են թողել հոգ տանելու թե՛ հորս համար թե՛ մորս, թե՛ քույրերիս, թե՛ տան և թե՛ ամբողջ ագարակի համար. ու ինձանով հետաքրքրվել են միայն այն ժամանակ, երբ ինձանից որևէ սպասելիք են ունեցել։ Այժմ նրանք ինձանից շուտ են դալիս, բայց ապագայում նրանք ինձ համար երբեք ավելի օտար ու հեռու չեն կարող լինել, ինչ որ միշտ եղել են։

Իսկ իմ քույրերը,— նա դարձավ դեպի վկաների նստա-

բանը, որտեղ նստել էին Գրեհտեն ու Կեստեն արտասվաթոր աչքերով ու ծածկված դեմքերով ու նրա ձայնը փափկացավ, կարծես արտասուքը զոռով էր պահում,— իմ քույրերս էլ չեն ցանկանում իմ մասին այլևս որևէ բան լսել. բայց ես սիրով ներում եմ դրանց այդ վարմունքը. նրանք կին են ու ավելի նուրբ, ավելի քնքուշ... բացի այդ, օտար մարդկանց ձեռքի տակ են, որոնց համար շատ հեշտ է իմ անտանելի արարքի համար զայրանալու։ Նրանք այժմ բոլորն ինձանից հեռացել, ինձ թողել են... ոչ, ո՛չ բոլորը...— նրա դեմքով մի լուսավոր փայլ անցավ,— բայց դրա տեղը չէ այստեղ։ Բայց ես ուզում եմ դեռ մի բան էլ ասել, թեկուզ ինձ մարդիկ մարդասպանի տեղ էլ դնելու լինին։ Ես չեմ զղջում, որ հայրս իմ արարքի պատճառով է մեռել։ Ես նրան ավելի էի սիրում այն րոպեին, երբ նրան սպանում էի, քան երբ նրան կենդանի թողնեի։ Նա ծեր ու թույլ էր և ինչ որ նրան սպասում էր, ամոթ ու խայտառակություն էր... Նա ապրում էր այնպես խաղաղ ու անվրդով ու այնպես ողորմելի կերպով պետք է հյուծամահ լիներ... Շատ լավ էր այդպես— կայծակի պես մահը վրա հասավ ու նրան բախտավոր ժամին բռնեց։ Այդ է իմ կարծիքը. այժմ մաքուր է խիղճս. ես կարիք չեմ զգում որևէ մեկին հաշիվ տալ, բացի աստծուց ու ինձանից։ Այժմ կարող եք ինձ դատապարտել։

— Բռավո,— թնդացրեց ամբողջ դահլիճը վկաների նստարանից եկած ձայնը։

Դուգլասն էր։

Ջառամյալ հսկան կանգնել էր իր ամբողջ պարթև հասակով, նրա աչքերը պսպղում էին թավ հոնքերի տակից. ու երբ նախագահը նրան կարգի հրավիրեց, խրոխտ կերպով տեղը նստեց ու իր հարևանին ասաց. «Նրանով կարող եմ պարծենալ, չէ՞»։

23

Երկու տարի հետո, հունիսյան մի զվարթ առավոտ էր, երբ բանտի կարմրագույն դարբասի դուռը բացվեց ու մի բանտարկյալ դուրս թողեց, որը ժպտուն երեսով արևին էր նա-

յում ու աչքերը բաց ու խուփ անում, կարծես սովորել էր ուղում նրա փայլին նորից դիմանալ։ Ձեռքի կապոցը ճոճում էր օդի մեջ ու անհոգ կերպով աջ ու ձախ էր նայում նման մի մարդու, որ դեռ լավ չի իմանում ուր է տանում իր ճանապարհը, բայց որին բոլորովին միևնույն է երևում վերջ ի վերջո, ուր էլ որ նա տանելու լինի։

Երբ նա դատարանի շենքն անց էր կենում, մի կառք նկատեց, որ նրան շատ ծանոթ թվաց. նա կանգ առավ, նայեց ու ապա դիմեց կառապանին, որը իր մորթե գլխարկով հպարտ կերպով նստել էր կառանստարանի վրա։

— Հելենինթալից որևէ մարդ կա՞ այստեղ,— հարցրեց նա։

— Այո, պարոնն ու օրիորդը։ Եկել են պարոն Մայհյոֆերին տանեն։

Ու դրանից հետո անմիջապես վերնագավթից հնչեց. «Հե՞յ, ահա՛... նա այստեղ է արդեն... Էլսբեթ, նայի՛ր... նա այստեղ է արդեն»։

Պաուլը սանդուղքներից վեր թռավ ու երկու տղամարդիկը գրկեցին իրար։

Այդ միջոցին մեղմ ու անհամարձակ կերպով բացվեց երկփեղկանի դուռն ու մի նրբակազմ, սևազգեստ կանացի կերպարանք դուրս թողեց, որը թախծալի ժպիտը դեմքին պատին հենվեց մնաց ու հանգիստ սպասում էր, մինչև տղամարդիկն ազատվեին իրարից։

— Ահա, այժմ քեզ լինի, Էլսբեթ,— բացականչեց ծերը։ Ձեռք ձեռքի տված կանգնած էին նրանք այժմ ու իրար աչքերի էին նայում, ապա Էլսբեթը գլուխը հենեց նրա կրծքին ու շշնջաց.— փառք Աստուծո, որ ես դարձյալ քեզ մոտ եմ։

— Ու տրպեսզի դուք բոլորովին ձեզ համար մենակ մնաք,— ասաց ծերը,— երկուսով կառք նստեք ու գեղեցիկ կերպով տուն գնացեք. ու ես էլ այդ միջոցին ուղում եմ գնալ իմ հաջորդիս կենացը մի շիշ ոտտսպոն դատարկել։ Այսպես շատ լավ է, այսօրվանից ես արդեն հանգստանալու եմ։

— Պարոն Դուգլաս,— բացականչեց Պաուլը ահաբեկ։

— Հայր եմ քեզ համար, հասկացա՞ր։ Երեկոյան դեմ

կաւք ղրկիր ինձ համար. չէ՞ որ այժմ դու ես տան տերը... ցտեսութիւն։

Ու հսկա քայլերով անցաւ սանդուղքներից, հեռացաւ։

— Արի,— ասաց Պաուլը մեղմորեն, ցած ձգած աչքերով։

Էլսբեթն հետևեց նրան ամոթխած ժպիտը բերանին, որովհետև այժմ, երբ նրանք երկուսով մենակ էին, ոչ ոք սիրտ չէր անում մյուսին մոտենալ։

Ու ապա լուռ ու անխոս դուրս եկան դեպի ծաղկաշատ արևոտ դաշտը։ Մեխակներն ու մանիշակները ու ամեն տեսակ բաղեղները առասպելական փորգ էին հյուսել դաշտի մեջ... Անուշահոտ ծաղիկների թերթիկները մեղմությամբ սոսափում էին, տաք օդը թրթռում էր ու դեղին թիթեռները զույգ զույգ վեր ու վար էին անում։

Պաուլը խոր կերպով ետ էր հենվել կառքի բարձերին ու կիսաբաց աչքերով բնության այդ լիակատար հրաշքին էր նայում։

— Բախտավո՞ր ես,— հարցրեց Էլսբեթը կռանալով նրա վրա։

— Չգիտեմ,— ասաց նա.— սիրտս սաստիկ ճմլվում է։

Էլսբեթը ժպտաց. նա շատ լավ էր հասկանում նրան։

— Նայիր այն կողմը, մեր հայրենիքը...— ասաց Էլսբեթը ցույց տալով «Սպիտակ տունը», որը հեռվում փայլում էր։ Պաուլը սեղմեց նրա ձեռքը, բայց չկարողացավ ձայն հանել։

Անտառի ծայրին կառքը կանգ էր առնելու։

Երկուսով ցած իջան և ոտքով առաջ գնացին։ Պաուլը նոր նկատեց, որ Էլսբեթի ձեռքում մի սպիտակ փոքրիկ կապոց կա, որ նա առաջ չէր նկատել։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա։

— Կտեսնես, սպասիր,— ասաց Էլսբեթը ու նրա երեսով մի լուրջ ժպիտ անցավ։

— Մի անակնկա՞լ։

— Մի հիշատակ։

Երբ անտառ մտան, կարմրավուն փայլակ բռնված ծառաբների մեջ Պաուլը մի սև բան նկատեց, որը պսակներով զարդարված էր։

— Այս ի՞նչ է նշանակում,— հարցրեց նա, ձեռքը մեկնելով։

— Քո ընկերուհուն էլ չե՞ս ճանաչում,— պատասխանեց էլսբեթը.— նա ցանկացել է առաջինը լինել քեզ ողջունողների մեջ։

— Սև Զուզեն,— ցնծաց նա ու սկսեց վազել։

— Ինձ էլ հետդ վերցրու,— ծիծաղեց էլսբեթը քոքռալով.— դու մոռանում ես, որ մենք այժմ երկուսով ենք այսուհետև։

Նա բռնեց էլսբեթի ձեռքը ու այդպես մոտեցան այն հավատարիմ անճոռնի հսկային, որը ճանապարհին պահպանություն էր անում։

— Իմ հին բարեկամս,— ասաց նա ու շոյեց նրա սևացած կաթսան։ Ու երբ հեռացան, ամեն երեք քայլին մեկ էլ ետ էր նայում, կարծես չէր կարող նրանից բաժանվել։

— Ես լավ եմ պահել դրան,— ասաց էլսբեթը.— իմ պատուհանիս տակն է նրա մշտական տեղը. քո հոր ժառանգության հետ դա էլ բերինք մեզ մոտ, որպեսզի չզրկվես դրանից։

Երբ նրանք անտառի մյուս ծայրը հասան, Պաուլը ցույց տալով ճանապարհից, քսան քայլաչափ հեռու ընկած երկու ծառաբներ, ասաց.

— Ա՛յն տեղն է, որտեղ ես քեզ ճոճքի մեջ պառկած գտա։

— Այո,— ասաց էլսբեթը.— նույնպես այստեղ էր, որտեղ ես առաջին անգամ նկատեցի, որ ես առանց քեզ այլևս երբեք չեմ կարողանալու ապրել։

— Այստեղ է ահա նաև դիհին, այն թռփը, որտեղ մենք...— ասաց Պաուլը, երբ նրանք ազատ դաշտ դուրս եկան ու ապա դեռ խոսքը չվերջացրած հանկարծ բարձր աղաղակեց ու ձեռքերը տարածեց օդի մեջ։

— Ի՞նչ պատահեց,— կանչեց նրան էլսբեթը երկյուղով լցված։ Պաուլը մահվան գունատություն էր ստացել, նրա շրթունքները դողդողում էին։

— Ո՞ւր է, էլ չկա նա,— թոթոփում էր նա։

— Ո՞վ։

— Իմ... իմ... սեփականու...

Այնտեղ, ուր երբեմն ագարակի փայլուն շենքերն էին բարձրանում, այժմ հարթ տարածություն էր, միայն հատ հատ ծառերն էին, որոնք իրենց ճյուղերը այս ու այն կողմն էին սփռել։

Այդ տեսիլին անսովոր էր նա, ուստի և երևաը ծածկեց ձեռքերով, ու մարմնով սարսուռ էր անցնում շարունակ։

— Մի տխրի,— աղաչում էր էլսբեթը։— Պապաս դիտմամբ չի վերաշինել քո կալվածքը, մինչև որ դու գաս ու քո ցանկությունների համեմատ կարգադրես։

— Գնանք այն կողմը,— ասաց Պաուլը։

— Ախ խնդրում եմ, չէ,— պատասխանեց էլսբեթը,— այժմ այնտեղ ոչինչ չկա տեսանելու, բացի մի քանի մոխրակույտերից... մի ուրիշ անգամ, երբ որ դու այդքան հուզված չես լինի...

— Բայց ո՞րտեղ պիտի քնեմ ես։

— Հենց նույն այն սենյակի մեջ՝ որտեղ դու ծնվել ես... Քեզ համար հատկապես պատրաստել եմ տվել ես ու քո մոր կահ-կարասին էլ այնտեղ դրել։ Դեհ, ասա տեսնեմ, էլ կարո՞ղ ես ասել, թե հայրական տունդ կորցրել ես։

Պաուլը շնորհակալ կերպով սեղմեց նրա ձեռքը, բայց սա ցույց տվեց կրկին այն թուփը, որի մասին մի փոքր առաջ Պաուլը խոսք էր բաց արել։

— Ավելի լավ է արի այն կողմ գնանք,— ասաց նա,— գլուխդ դիր խլուրդների բլրի վրա ու մի բան սուլիր։ Կարող ես դեռ, չէ՞։

— Արդյո՞ք։

— Ի՞նչքան ժամանակ առաջ էր։

— Տասնհյոթ տարի։

— Ա՜խ, ասուած իմ, այդքան երկար ժամանակ է սիրում եմ քեզ ու քեզ սիրելով արդեն պառավել եմ... Ու քեզ սպասել եմ տարեցտարի... Բայց դու չես ցանկացել երբեք տեսնել, նկատել այդ։ Վերջապես նա կգա, նա պիտի որ գա, մտածում էի ինքս ինձ, բայց դու չէիր գալիս... Ու ես հուսահատվեցի ու մտածեցի. «Նրան ստիպել չես կարող հո. թերևս երբեք չի ցանկանում քեզ ունենալ։ Խնդիրը պիտի պարզես քեզ համար»։ Ու իմ բոլոր տենչանքներիս վերջ դնելու հա-

մար համաձայնություն տվի իմ հորաքրոջ որդուն, որը տասը տարուց ավելի շուտ է գալիս չորս բոլորքս։ Նա ինձ հաճախ ծիծաղեցնում էր ու կարծում էր, թե նա կկարողանա... բայց լո՛ւռ այդ մասին...— ու սարսափ անցավ նրա մարմնով։ —Արի գնանք, պառկիր ու սուլիր։

Նա թափ տվեց գլուխն ու լուռ անխոս ցույց տվեց ձեռքով դաշտում երևացող երեք եղևնիները, որոնք առանձնակի ու մենակյաց երկինք էին բարձրացել։

— Դեպի այն կողմ,— ասաց Պաուլը.— ես հանգիստ չեմ ունենա, մինչև այնտեղ չլինեմ։

— Ճիշտ ես ասում,— ասաց էլսբեթը, ու ձեռք ձեռքի տված քայլեցին դաշտի միջով, որտեղ հոտավետ ու գույնզգույն ծաղիկների մեջ լսելի էր վայրի մեղուների քնեած տզզոցը։

Երբ գերեզմանատուն մտան, «Սպիտակ տնից» ժամի տասներկուսը խփեց։ Տասն և երկու անգամ կարճ ու սուր կերպով հնչեց զանգը ու օդի մեջ ամեն անգամ մի թույլ արձագանք առաջ բերեց ու ապա խաղաղությունը նորից տիրեց. միայն մեղմ տզզոցն ու երգը դեռ շարունակվում էր։

Մոր գերեզմանի վրան ու չորս կողմը խիտ առ խիտ աճել էին բաղեղն ու մրտենին ու շնախաղողը բարձր ցցել էր յուր պսակաձև ծաղիկները։ Տերևների մեջ վխտում էին ժանգագույն մրջյունները, իսկ մի մողես շառաչելով սահում էր դեպի կանաչների խորքը։

Լուռ կանգնել էին երկուսով և Պաուլը դողում էր։ Նրանցից ոչ ոք սիրտ չէր անում սրբազան լռությունը խանգարել։

— Ո՞րտեղ թաղեցիք հորս,— հարցրեց վերջապես Պաուլը։

— Քույրերդ եկան ու նրա դիակը Լոնդայմ տարան,— պատասխանեց էլսբեթը։

— Լավ է եղել այդպես,— ասաց Պաուլը.— ամբողջ կյանքում մենակ էր մայրս, կարող է մահվան մեջ էլ մենակ լինել։ Սակայն առավոտ գնանք և նրա մոտ։

— Ուզում ես քույրերիդ մո՞տ վերադառնալ։

Պաուլը տխրությամբ գլխով բացասական նշան տվեց։

Ապա նորից սիրեց լռությունը։ Գլուխը հենած երկու ձեռքերին, լաց էր լինում Պաուլը։

— Լաց մի լինի,— ասաց Էլսբեթը.— այժմ ձեզանից յուրաքանչյուրն հո յուր տուն ու տեղն ունի։— Ու ապա թևի տակից վերցրեց փոքրիկ կապոցը, դեն ձգեց վրայի ապիտակ թուղթը ու երևան հանեց մի հին տետրակ, մաշված կողով ու դեղնած թերթերով։

— Նայիր. այս տետրակը նա քեզ է ուղարկում,— ասաց Էլսբեթը,— ու բարևում է քեզ։

— Ո՞րտեղից է սա քո ձեռքն ընկել,— հարցրեց Պաուլը վախեցած, որովհետև յուր մոր ձեռագիրը ճանաչեց։

— Այն հին պահարանի մեջ էր ընկած այս տետրակը, որը հրդեհի ժամանակ ազատվեց, թվում է, թե նրա մահից է վեր այնտեղ ընկած, մնացած է եղել։

Այնուհետև երկուսով նստեցին գերեզմանի վրա, իրար կողքի, տետրակը դրին մեջտեղը, Էլսբեթի ծնկների վրա ու սկսեցին ուսումնասիրել։ Պաուլն այժմ հիշեց, որ Կետեն մի ժամանակ ինչ-որ մոր երգարանի մասին էր խոսում յուր սիրականին, բայց նա երբեք սիրտ չէր արել քրոջն այդ մասին հարցուփորձ անել հետո, չուզենալով այն շար ժամի հիշողությունը մի անգամ էլ կենդանի դարձնել։

Տետրակի մեջ ամեն տեսակ հին երգեր կային, աշխատասեր ձեռքով արտագրված. կային և այնպիսիները, որոնք կիսով չափ ջնջված էին ու արբագրված։ Այս վերջինները, երևում էր, որ նա հիշողությամբ էր գրել, կամ թերևս հենց ինքն էր ստեղծել։ Այնտեղ էր նաև երգչի երգը, որ Կետեն այն ժամանակ ասում էր։

Կար մի ուրիշ ոտանավոր, որի մեջ սրտաճմլիկ կերպով պատկերացրած էր մի սիրող օրիորդի, որին նրա փեսացուն դժբախտացնելուց հետո թողել հեռացել էր, թողնելով աղջկան յուր ցավի հետ։

Պաուլն ակամա հիշեց յուր երկու քույրերին ու նրան թվաց, թե մայրն ակզբից գիտեր այդ ամենն ու հենց ակզբից ներել էր նրանց։

Ու գրանից հետո անմիջապես մեծ տառերով գրված էր.

«Հոգի հեքիաթը»։

Կար չկար մի մայր կար։ Բարի աստվածը նրան մի որդի էր պարգևել. բայց նա այնքան աղքատ ու միայնակ էր, որ ոչ ոք չուներ, որ նրա զավակի կնքահայր լիներ։ Ու նա հառաչում էր ու մտածում. «Ինչպես դտնեմ արդյոք մի կնքահայր»։ Մի երեկո, երբ մութը վրա հասավ, նրա մոտ մի կին եկավ։ Նա սպիտակ մազեր ուներ և մի սև փաթթոց էր քաշել գլխին. նա ասաց. «Ես ուզում եմ քո որդու կնքահայրը լինել. ու ես պետք է հոգ տանեմ և աշխատեմ, որ նա լավ մարդ դառնա ու ծնողներին քաղցած չթողնի մեռնելու։ Բայց դրա փոխարեն դու պիտի նրա հոգին ինձ նվիրես»։

Մայրը դողդողաց ու ասաց.

— Ո՞վ ես դու։

— Ես Հոգան եմ,— ասաց սպիտակահեր կինը։

Ու մայրը շատ լաց եղավ. բայց որովհետև մեծ կարիքի մեջ էր, ուստի և յուր որդու հոգին տվեց կնոջը, դրա համար էլ կինը նրա որդու կնքամայրը դարձավ։

Ու նրա որդին աճեց, մեծացավ ու չարքաշ կերպով աշխատում էր յուր ապրուստն հայթայթելու համար։ Բայց որովհետև հոգի չուներ, ուստի չուներ նաև ո՛չ ուրախություն, ո՛չ երիտասարդություն. ու հաճախ նայում էր յուր մորը լի կըշտամբանքի աչքերով կարծես ուզում էր նրան ասել. «Մայր, ո՞ւր է իմ հոգին»։

Ու տխրեց մայրը ու դուրս եկավ, որ որդու համար մի հոգի գտնի։ Նա հարցրեց երկնքի աստղերին.— Չե՞ք ուզում նրան մի հոգի տալ,— բայց նրան ասացին.— Չարժե, նա շատ ցած է։

Ու նա դաշտի ծաղիկներին հարց տվեց. նրանք ասացին.

— Չարժե, շատ տգեղ է։

Ու հարց տվեց ծառերի թռչուններին. նրանք ասացին.

— Չարժե, շատ տխուր է։

Ու հարց տվեց բարձր ծառերին. նրանք ասացին.

— Չարժե, շատ խոնարհ է։

Ու հարց տվեց խորամանկ օձերին. նրանք ասացին.

— Չարժե, շատ հիմար է։

Ու լաց լինելով գնաց իր ճանապարհով։ Անտառի մեջ

նրան մի մատաղահաս, գեղեցիկ իշխանուհի պատահեց, որը շրջապատված էր պալատական մեծ շքախմբով։

Ու որովհետև նա մորը լաց լինելով տեսավ, ցած եկավ յուր նժույգից ու վերցրեց նրան յուր հետ տարավ արքունիք, որը համակ ոսկուց և արծաթից էր շինված։

Այնտեղ հարցրեց նրան.

— Ասա, ինչո՞ւ ես լաց լինում։

Ու մայրը պատմեց իշխանուհուն յուր ցավը, թե յուր որդուն չի կարողանում ոչ մի հոգի գտնել, ու ոչ մի ուրախություն, ու ոչ մի երիտասարդություն։

Ապա ասաց իշխանուհին.

— Ես չեմ կարող մարդկանց լաց լինելով տեսնել. գիտե՞ս ինչ. իմ հոգին կտամ նրան։

Մայրը խոնարհվեց ու համբուրեց նրա ձեռքերը։

— Բայց ես առանց պայմանի չեմ անի այդ. նա ինքը պետք է գա ու խնդրի ինձ դրա մասին,— ասաց իշխանուհին։ Մայրը շտապեց յուր որդու մոտ, բայց Հոգսը յուր սև քողը քաշել էր որդու գլխով, այնպես, որ նա կուրացել էր ու իշխանուհուն չէր տեսնում։

Ու մայրը խնդրեց.

— Սիրելի Հոգս, թող, ազատիր նրան։

Բայց Հոգսը ժպտում էր... ու ով նրան ժպտալիս տեսներ, ստիպված էր լաց լինել.

— Նա ինքն իրեն պիտի ազատի։

— Նա ի՞նչպես կարող է այդ,— հարց տվեց մայրը։

— Ինձ պետք է զոհ բերի ամեն բան, ինչ որ նա սիրում է,— ասաց Հոգսը։ Վշտացավ մայրը... անկողին մտավ... ու մեռավ։— Բայց իշխանուհին մինչև այժմ սպասում է յուր փեսացուին...

— Մա՛յր, մա՛յր,— աղաղակեց Պառվն ու ընկավ մոր գերեզմանի վրա։

— Վե՛ր կաց,— ասաց Էլսբեթը, կռվելով յուր արտասուքների հետ ու ձեռքը նրա ուսերին դրեց.— հանգիստ թող մայրիկիդ. նա խաղաղ հանգչում է. իսկ մեզ այլևս ոչինչ չի կարող անել քո այդ չար Հոգսը։

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Հերման Զուդերմանը (ծնված 1857) գերմանացոց նոր-ագույն գրողների մեջ նշանավորներից է: Նրա բազմաթիվ ռոմանների մեջ ամենից գեղարվեստականն ու ամբողջական գործը «Հոգսն» է, որի թարգմանությունն այսօր հանձնում ենք հայ ընթերցող հասարակության: Զուդերմանի ֆենադատները տարբեր կարծիք ունին բանաստեղծի տաղանդի, ընդունակությունների և ընդհանրապես նրա գործերի նկատմամբ: Բայց նրանք բոլորն էլ մի կետում իրար համաձայն են. «Հոգսը» բոլորի կողմից ևս համարվում է Զուդերմանի ամենանշանավոր գործը, որը գնալով ավելի ու ավելի մեծ ընթերցող հասարակություն է գրավել, թարգմանվել բոլոր կուլտուրական լեզուներով և դարձել համաշխարհային գրականության մեջ ամենաշատ կարդացվող գրքերից մեկը: Այդ կարծիքն են հայտնում Բեռլինի համալսարանի գրականության-պատմության պրոֆեսոր Ռիխարդ Մայերն ու Կարլ Վայբրեխտը. հայտնի ֆենադատ Գեորգ Բրանդեսն ու Թեոդոր Ցիգլերը: Ավելորդ չէր լինի մի քանի տող բերել Պաուլ Հայնցեից, որը Զուդերմանի այս ռոմանի մասին նույնպես շատ մեծ համակրանքով է խոսում. նա ասում է ի միջի այլոց. «Նրա առաջին մեծ պրոզա ստեղծագործությունը — «Հոգսը», որը լույս է տեսել 1886-ին, մինչև այսօր էլ Զուդերմանի ամենանշանավոր գործն է մնում, չնայած որ Զուդերմանը դրանից հետո շատ ռոմաններ է գրել: Այս ստեղծագործությունը կենսական հաղիշտակող ճշմարտությամբ, գյուղական, տեղական կոլորիտի վարպետ և գեղազանց պատկերացումով, անձնական մտերիմ մասնակցու-

թյամբ կյանքի խոր և լուրջ գնահատությամբ — արժանի է նորագույն ռոմանի մեջ ամենաօրինակելի և ընտիր գործերից համարվել: Բանաստեղծն յուր ներքին աշխարհի խորքերում ապրում է յուր հերոս Պաուլ Մայնյոֆերի կյանքի բոլոր ոգեները, նրա բախտի բոլոր ելևէջները: Զգացված ու սրտառուչ կերպով նա մեզ ներկայացնում է յուր հերոսին, ընտանեկան շահերի այդ մեծագույն նահատակին, որը յուր սեփական անձի ուրացությամբ, յուր բոլոր ցանկությունների և ապագայի ծրագրերի զոհաբերությամբ, յուր լավագույն երիտասարդական ուժի, յուր ամենագեղեցիկ տարիների և երազանքների մոռացումով դարբնում է յուրայինների բախտը... Զուդերմանը վարպետ կերպով է նկարագրում միջավայրը. նրա հերոսի բնավորությունը հուզիչ խորություն և մտերմություն ունի. ռոմանի մեջ բազմաթիվ են գեղարվեստական բարձր արժանիքներ ունեցող վիճակներ և բնավորություններ, որոնք բոլորն էլ ռեալիզմով հագեցած են»...

Թերևս Զուդերմանի «Հոգսը» հայ հասարակության մեջ ևս բարեկամներ շահի:

Մարտի 10, 1910:
Բեռլին:

Գ. ԱԼԹՈՒՆՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
Նկարիչ՝ Գ. ԿՈԽԱՆ
Գեղ. խմբագիր՝ Աշ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Պատվեր 896 Տիրաժ 20 000

Հանձնված է արտադրության 21.VI 1958 թ.։
Ստորագրված է տպագրության 30/IX 1958 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32 Տպագր. 15 մամ.=12,3 պայմ. մամ.,
հրատ. 10,6 մամ.։
Գինը՝ 4 ռ. 15 կ.

Հայկ. ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։